


ԷԶՄԻԱԾԻՆ



Դ
2004



1702 1710
ДУБРЕТ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



Ե Պ Ե Լ
2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պարգամը Սուրբ Յարութեան տոնի առիթով	3
ՀԵՂԻՆԵ ՄՐԻՏՅԱՆ - Ավագ Շաբաթը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	6
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ռոջույնի և բարեմադրանքների նամակներն ու հեռագրերը	9
Այցելություն Ծիծեռնակաբերդ և Սուրբ Պատարագ Մայր Աթոռում ի հիշատակ Ապրիլյան նահապետների	13
Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	14
Հայտարարություն	15
Հաղորդագրություն	16

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳՄՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Վիփալի Գրիգորյանցին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	17
ԳՄՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ալեքսանդր Հարությունյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	19
ԳՄՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տիգրան Մանսուրյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	21
Հայրապետական գնահատություն	23
Կարգալույծ են հռչակվել Տ. Մաշտոց արևդա ժողովանը և Տ. Նարեկ քսեանա Ահարոնյանը	23
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձն Ավետման տոնի և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով	24
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մանուկների օրհնության օրվա առիթով	25
Վեհափառ Հայրապետի գնահատանքի խոսքը Կանադայի Խորհրդարանին Հայոց Յնդասպանության ճանաչման համար	26
«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ՝ Ալեքսանդր Հարությունյանին և Տիգրան Մանսուրյանին	27

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց մեծատաղանդ երգչուհի Իզաբել Բայրաքդարյանին	28
---	----

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

S. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ծաղկազարդի փոփոխ մատուցված Ս. Պատարագին . . .	29
S. Արտակ վարդապետ Տիգրանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Հարության ճրագալույցին	31
S. Ասողիկ քահանա Կարապետյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Զարկի Մեռելուցին մատուցված Ս. Պատարագին	34
S. Մոմիկ վարդապետ Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Կրկնազարկին մատուցված Ս. Պատարագին	37
S. Արշակ վարդապետ Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Մեծ եղեռնի 89-րդ տարեկիցի առիթով մատուցված Ս. Պատարագին	39
S. Իգնատիոս աքեղա Մալխասյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Աշխարհամատարան կիրակիին մատուցված Ս. Պատարագին	43
S. Շահան քահանա Մովսիսյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Գայանե եկեղեցում Ծաղկազարդի փոփոխ մատուցված Ս. Պատարագին	46
S. Կորին քահանա Դևեճյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Հովսիսիմն եկեղեցում Ծաղկազարդի փոփոխ մատուցված Ս. Պատարագին	50

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՄԵՇ ԵՂԵՌՆԻ ՆԱԿԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՆԸ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ - Համիդյան կոտորածները և Պիեռ Քիյեռը . . .	55
ՏԻՐԱՆ ԼՈՋՄԱԳՅՈՋՅԱՆ - Կոմիտաս Վարդապետի թուրքերեն ստեղծագործությունները	68
ՀՐԱՅՅԱՆ ԱՇՈՏԻ ՄՍՄԱՐՅԱՆ - Իտալական ազատամարտը Միքայել Վարունդյանի «Բողոքը Նորագույն պատմության մեջ» գործում	77
ԵՎԳԵՆԻՅԱ ՔԱՄԻՆՔՅԱՆ - Ժամանակի և տարածության ընկալումը մանկվան և հոգու հավերժության համատեքստում	82

Կիլիկյան գրվածքներ

ՄԻՍԱԶ Ն. ՃԵՎԱԿԻՐՏՅԱՆ - Գոնեթի վանքը	87
---	----

Հրապարակում

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈՔՅԱՆ - Աղեպի առաջին վկայագրությունը	97
ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ - Անիծյալ տարիներ (1914-1919)	99

Արվեստագիտական

ԱՐՄԵՆ ՀՈՎԵՍՅԱՆ - Գաղտնի իր արվեստի մասին	105
---	-----

Գրախոսական

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱՂՅԱՆ - «Պարզեն տումարի» (Է-ԺԵ դարեր) պարտավորեցնող հրապարակություն	111
---	-----

Գիտական կյանք

ԱԶԵՏ ԲՈԶՈՅԱՆ - Գիտաժողով «Միաձնի իջման վայրը. Հայոց Եկեղեցին դարերի միջով» թեմայով	114
--	-----

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Վերածովեց Գուգարաց թեմի Մարգահովիտ գյուղի եկեղեցին	118
Յ. ՊՕՂՈՍԵԱՆ - Լուրեր Հոլլանդայի հայ համայնքին	120

Ամերիկայի Արևելեան թեմեն ներս

Ասազ Շաբթուան եւ Սուրբ Զարկի արարողութիւնները	
Սուրբ Վարդան Մայր Տաճարին մէջ	121
Բրշ. Առէն սրկ. Ճեպէճեան կուսակցի քահանայ ձեռնադրուեցաւ	
Սուրբ Վարդան Մայր Տաճարին մէջ	123
Տ. Առնն արեղա Ճեպէճյան	126

Ամերիկայի Արևմտեան թեմեն ներս

Հայկական ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկ	127
Առաջնորդ Սրբազան Հայրը կը մասնակցի Հայկական Համագումարի համաժողովին	127
Արեւմտեան թեմի օժանդակութիւնը Միացեալ Հայկական Ֆոնդին	128
Սուրբ Պարարագ եւ հոգեհանգիստ հայ նահապաղներուն համար	128

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն հայոց տաթողիկոսն ընդունեց	
Լիբանանի հանրապետության վարչապետ Ռաֆիկ Նարիրիին	130
Վեհափառ հայրապետն ընդունեց ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին .	131
Վեհափառ հայրապետն ընդունեց «Վասպուրական» հայրենակցական	
Միության անդամներին	132
Վեհափառ հայրապետն ընդունեց «Մաքենադարանի բարեկամներ»	
բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրինությանը	132
Եկեղեցական բնմ. լուրեր	134

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата . .	137
“Eichmiadzin” official monthly of Holy Eichmiadzin	141

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
“Эчмиадзин”

ԴԱՄԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ
ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
 (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004 թ. ապրիլի 11)

«Ջաջալերուցարուք, Ես եմ, մի վախեցիք»:
 (Մարկ. Զ. 50)

Միրելի մողովուրդ.

Այսպես դիմեց Ջրիստոս իր աշակերտներին, ովքեր բաց ծովում նաակի մէջ էին՝ ուժգին քամոց ու ալեկոծումից անհանգիստ ու վախեցած: Եւ տեսան Յիսուսին, որ ալիքների վրայով մօտեցաւ ու մտաւ նաւակ: Ես եմ, — ասաց, — քաջալերուցե՛ք ու մի վախեցե՛ք: Նոյն պահին քամին դադարեց: Մահաշունչ տարերքը փոխուեց խաղաղութեան, եւ կեանքը շողաց տաքանքով հոգիներին:

Նաւակի մէջ Տիրոջով կեանքն իսկ էր երանց կողքին, բայց դեռ չէին ճանաչում: Դեռ շատ էին քայլելու իրենց Վարդապետի հետ, տեսնելու էին անթիւ թճկութիւններ, լսելու էին Նրան, նանու՛ աչն մասին, որ չարչարուելու է ու մահուան մատնուելու: Վախեցած ու յուսահար՝ դեռ տեսնելու էին գերեզմանը, ուր դրել էին իրենց խաչնալ Վարդապետին: Դեռ պիտի տեսնէին Նրան՝ Յարուցեալ իրենց մէջ կանգնած, կրկին լսէին «Ես եմ, մի վախեցե՛ք» Տէրութեան պատգամը: Այդքան պիտի բացուէր նրանց մտքերը, եւ պիտի ճանաչէին, որ Փրկիչն է աշխարհի, ու հաւատարիս, որ ընդմիշտ խորպակուած է մահը, եւ մենք ունենք Յարութիւն ու Կեանք: Ունենք յոյսը ետրոգուելու, Յարուցեալին կերպարանակից լինելու, Նրանով Աստուծոյ որդիներ կոչուելու եւ ժառանգակից լինելու երկնային թագաւորութեան:

Ջալովական այս սուրբ առաւօր Յարութեան խորհուրդը մեր ետրոգուած յոյսի ու հաւատի միջից վերստին կոչում է մեզ՝ «Ջաջալերուցե՛ք, Ես եմ»: Տիրոջ այս պատգամը մարդկային մեր հոգիներին կենդանաբեր ու գութաթացնող երկնային ցողի պէս է իջնում այսօր, երբ անհանգիստ ենք աշխարհի տաքանքով անցուղարձերից, երբ յաճախ տկար ենք ներկայ կեանքի հրամայականների առջեւ, տկար՝ մեր երկիւղներով, մտաւտանք ու երկմտած՝ մեզ հուզող հարցականներից: Եւս է փոխուել աշխարհը Ջրիստոսի ժամանակներից ի վեր, փոխուել են մարդու հնարաւորութիւնները, մարդկութիւնը լրացրել ու շարունակում է լրացնել իր կեանքի բազմաթիւ պակասութիւններ, սակայն շարունակում է պակաս մնալ ամենակարեւորը՝ մարդկային հոգու արձագանքը խաղաղութեան ու մարդկանց մէջ հաճութեան աստուածային հրաւերին: Գիտարեւելանքի կարգի սերկայ ժամանակներում մարդկութիւնը ճեղքել է հիպոս, նուաճում է տեղերը, ի գործ է մշակովի դարձնել անապատը, սակայն չի յաջողել լռեցնել պատերազմի ձայները, վերացնել կարիքն ու տղբաւորութիւնը:

Ամեն օր հազարաւոր թերթեր ու ամսագրեր, ռադիօ, հեռուստատեսութիւն, գրքեր խօսք են ասում՝ խօսք, որով մարդը պսակն է արարչութեան, սակայն պաշտպանութեան կարիք

են զգում համամարդկային, անանց բարոյական արժեքները, և մանաւանդ՝ մարդասիրությունը: Արդարեւ, ինչ կարող ենք յուսալ, եթե մարդկանց սրբերից բազմակային բարոյական օրենք, սրբութիւն և մարդասիրութիւն, եթե մարդիկ չունենան երկիւղը Աստուծոյ: Ինքն Աստուած էր արեւ մեզ ճշմարիտ մարդասիրութեան անգերազանցելի օրինակը՝ մեր փրկութեան համար Իր Միածին Որդուն աշխարհ առաքելով: Նրանով ճանաչեցինք սիրը, ըսեմք մեզ համար խաղճ յաւնն առաւ, որպէսզի յարութիւն ունենանք: Աստուծոն սիրող հոգիներից պիտի բխի մարդասիրութիւնը՝ իբրեւ բոլոր ժամանակների, բոլոր հասարակութիւնների մեծագոյն նուաճում:

Այսօր վերստին փնտրում ենք երկինքը շնորհով բացում և մարդասէր Աստուծոյ դմքը դէպի մեզ խոնարհուած: Այսօր Յարութեաւ-Քրիստոս գալիս է մեր հոգսերը վերցնելու, մեր վշտերը փարատելու, մեր փարակոյտները գրելու, ազատելու մեզ մահաբեր նախապաշտօններից ու խաղաղ երկինքը մեզանից վեր պարգեւելու: Նա կարգել է մեզ մարդկանց ծառայելու Իրեն գործակիցներ: Արդ, ամեն գործ որ ձեռնարկենք, գործենք այնպէս, կարծես Աստուծոյ համար ենք անում (Կող. Գ. 23), և Քրիստոս Իր օրհնութեամբ կրօնցնի մնացեալը, ինչ որ վեր է մարդկային մեր ուժերից:

Սիրելի ժողովուրդ հայոց, Իր օրհնաբեր ներկայութեամբ, Իր փրկագործ գործութեամբ մեր կողքին է եղել Տէրը, ուր էլ ուղղորդուել է մեր կեանքի նաղ մեր պատմութեան դժուարին, թէ հեշտընթաց ուղիներում: Մեր կողքին է եղել և չի լքել մեզ Աստուած մահաբերսիւ օրհասների մէջ, երբ մարդկանցից յոյսներս կորած միայնակ ենք մնացել: Յարութեան լոյսն է մեր բոլոր Աւարայրներից ու Սարդարապատներից վեր, Յարութեամբ են լուսնալսակ լոյսն է մեր բոլոր Աւարայրներից ու Սարդարապատներից վեր, Յարութեամբ են լուսնալսակ հայոց Գողգոթաների ճանապարհները, որ սփռեցին մեզ աշխարհէ աշխարհ: Յարութեամբ է այսօր մեր պետականութիւնը, և կեանքի բոլոր յանգրտաններում սպասում է մեզ Տէրը՝ սփռելու մեզ վրայ Իր լոյսն ու խաղաղութիւնը, օրհնելու, արդիւնատուրելու մեր ջանքերն ու աշխատանքը: Միայն թէ մեր լաւին վատութիւն չխառնենք, չխառնենք ճշմարտին՝ կեղծիք: ճշմարտիւրը անկախ Հայաստանն ու ազատ Արցախն է և մեր հայրենասիրութիւնը, մեր համերաշխութիւնը և միաբանութիւնը: Չլինի, որ պարտական մնանք նոսրական այս ճշմարտութիւնների առջեւ, չլինի, որ պարտական մնանք մեր պատմութեան, Եռարկուրտմ հանգչող մեր մարտիրոս գաւակների, մեր սերունդների առջեւ: Անեղծ պահենք մեր համագգային միաբանութիւնը, նրանով է պայծառ մեր կեանքի, մեր հաւատի աստուածաբան լոյսը: Չկայ, արդարեւ, հաւատի անկի մեծ արտայայտութիւն, բան միաբանութիւնը, և չկայ անկի մեծ բաջալերութիւն, բան հաւատը, որ մեզ հենք է Աստուած Իր փրկագործող գործութեամբ:

Այսօրուայ վերափոխում ու վերափոխող մեր իրականութեան մէջ աննիւթներ շար ունենք: Դեռ անցնելիք ճանապարհ ունենք, որ պիտի անցնենք միասնաբար, մեր հայրերից ժառանգութիւն ստացած միաբանութեան սուրբ ուխտով, որպէսզի շէնհանայ ու գորանայ Հայաստանն ու Արցախ հայրենի մեր երկիրը, որպէսզի մեր բոլոր գաղթօջախներում ծաղկի հայ կեանքը: Ուր էլ ապրենք՝ Հայրենիքով ու Սուրբ Էջմիածնով պիտի ապրենք, ազգային արժեքներով ու հայրենի ժառանգութեամբ, որպէսզի մեր կեանքից ենք թափանցող, ներսից ու դրսից պարտադրող սին և թիւր գաղափարներից, անհարազատ արժեքներից հեռու մնան մեր գաւակները: Հոգեւորական, ձեռող, պաշտօնեայ, մտաւորական և ուսուցիչ, ամենքս սիրոյ ու հոգի պիտի ներդնենք, որպէսզի հաւստով նորոգուի ու նախնեաց սրբու-

թիւներով շողողայ հայի հոգին, և Հայրենիքում ու Սփիւռքում մեր գաւակների աչքերի մէջ միշտ ճանաչենք Աստուածապետ հայնացքը հաւատի մեր 'Հօր եւ Լուսաւորչի' Սուրբ Գրիգորի, փսեսներ Աստուծով շնորհալի ղեմքերը Սուրբ Սահակ և Մաշտոց մեր մեծ Վարդապետների, Աստուծով աներկիւղ զուարթուն ոգին Սուրբ Վարդանի ու Վարդանանց:

Սիրելի հայրողիներ ի Սփիւռս աշխարհի, Դուք, որ մօտիկից եւ կամ հեռուից Արարապին նայող աչքեր ունէք, փսեսում էք նրա փապանակիր հայնացքի փակ փարածուող հայոց փրկութեան փապանը՝ Հայաստանն ու Արցախը: Դուք, որ Արագածի բարձունքից վեր փսեսում էք Լուսաւորչի Կանթեղից ճառագող անմար լոյսը, հաւատացէք, որ մեր հայրերի Աստուած գործելու է մեր հողում մեր հաւատի միջոցով, գործելու է հանութ ազգային մեր կենսքում, որի վրայ Յարութեան յոյսն է այսօր թնւածում:

Քրիստոսի սքանչելի Սուրբ Յարութեան մեծ անփոխով համայն հայոց Միաձնանչ Մայր Աթոռից Մեր ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապապիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսոյ հայոց Պատրիարք Ամենապապիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանին և քրիստոնէական բոլոր Եկեղեցիների Առաջնորդներին: Մեր օրհնութիւնն ենք ընրում մեր Եկեղեցու ուխտաւրան ողջ հոգևոր դասին, թեմական եւ եկեղեցական վարչութեանց նուիրեալ անդամներին:

Ողջունում եւ օրհնում ենք հայոց պետական աւագանուն՝ զխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական ներկայացուցիչներին եւ հանութ մեր ժողովրդին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

Լոյսի եւ յոյսի, քաջալերութեան այս բարի առաւօր աղօթենք եւ հայցենք միաձայն, հաղաղութեամբ Քո Քրիստոս, Փրկիչ մեր, ապահով ու անխռով պահիր աշխարհը համայն եւ օրհնութիւնը սփոլոր բոլոր ազգերի վրայ: Քո շնորհի ներքոյ պահպանիր եւ ազգս հայոց ու լուսաւոր արա նոր ճանապարհը եւ նոր յոյսերը մեր Հայրենիքի: Շնորհի մեզ, Տէր, հոգի իմաստութեան եւ հաշտութեան, այլեւ՝ «Քաջալերունցէք, Ես եմ» խօսքիդ համաձայն պարգեւիր Քո յարուցեալ ներկայութիւնից զօրացած սիրտ, որպէսզի նրանով ապրենք մեզ վերականգնուած կենսքը ու կենսք ունենանք յաւիտենական՝ մեր սուրբ հայրերի հետ յաւիտեանս փոստաւորելով Քեզ՝ Միաձին Որդուդ ընդ Հօր եւ Սուրբ Հոգու. ամեն:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի**

ԱՎԱԳ ՇԽԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄԻՆՈՒՄ

Ամեն փարի յուրաքանչյուր հայ հավատարմային հավատքի զորացման, ինքնախոսկումի ու ինքնապաշխարման յոթ շաբաթներ է ապրում պատրաստվելով քրիստոնեական մեծագույն փոխին Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարությունը:

Մեծ պահքի այս յոթ շաբաթների կիզակերտն է Ավագ Շաբաթը, որն ամբողջությամբ շնչում է Հիսուս Քրիստոսի նրկային կյանքի վերջին օրերի խորհրդով. Քրիստոսի ուսուցումները, չարճարանքները, խաչելությունը և Հրաշափառ Հարությունը:

Ավագ Շաբաթվա սկիզբն ազդարարում է Ծաղկազարդի կիրակին՝ խորհրդանշելով Հիսուս Քրիստոսի մուրքը երուսաղեմ:

Այս օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնտրիկությամբ հռչակված է որպես Մանուկների օրհնության օր:

Ծաղկազարդի կիրակի, ապրիլի 4-ին, առավոտյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարի արևմտյան բակում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդաստանի արարողություն, հընթացս որի Նորին Սրբությունն իր օրհնությունը փվեց մանուկներին. «Ինչպես ժողովուրդն ընդամառ էլավ ու ողջուենց Հիսուսին կանաչ ճյուղերով, նույնպես այսօր դուք ձեր ծնողների ու հարազատների հետ ծաղկած ճյուղեր առած, զվարթ հոգով և աղոթքը ձեր շուրթերին գնում եք եկեղեցիներ՝ սրանալու օրհնությունը Քրիստոսի՝ մեր Փրկչի ու Տիրոջ» (փնս էջ 25):

Ավագ Երկուշաբթին խորհրդանշում է Արարչագործությունը, հիշատակվում է նաև Անպարտ թգնեսու առակն ու երուսաղեմի Տաճարի մաքրագործումը: Մայր Տաճարում առավոտյան և երեկոյան ժամերգությունների ընթացքում Ս. Գրային ընթերցումները հիշատակվում էին Հիսուս Քրիստոսի այս ուսուցումները՝ անպարտ կյանքով չապրելու պատգամով:

Ավագ Երեքշաբթի հիշատակվում է Տասը կույսերի առակը՝ համաձայն Ավետարանական պատգամի, թե՛ «Արթուն կացե՛ք, որովհետև չգիտե՛ք ո՞չ օրը և ո՞չ էլ ժամը» (Մատթ. ԻԵ 13):

Ընդունված կարգով Ավագ Երեքշաբթի, երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարի արլյան դուրս եկան փասը մանուկներ՝ խորհրդանշելով փասը կույսերին: Չորեքրին ունենալով մոմեր՝ հինգը վառվող, հինգը՝ հանգած, մանուկները խորհրդանշում են հինգ իմաստուն և հինգ հիմար կույսերին:

Ավագ Չորեքշաբթի հիշատակվում է Բեթանիայում մեղավոր կնոջ կողմից թանկագին յուղով Հիսուսի օծման պատմությունը՝ որպես խորհրդանշող Քրիստոսի խաչելության ու մոտավոր մահվան: Այս օրը խորհրդանշում է նաև Հիսուսի մատնությունը:

Այս փարի, սակայն, Ավագ Չորեքշաբթին համընկավ ապրիլի 7-ի Ավետման փոխին, երբ հնչում է Գալիլի հրեշտակապետի կողմից Սուրբ Աստվածածնին փրկած Ավետիքը.



תחתיו מוטב שיהיו ממוקמים





«הנהגת הכתר והכתובת של הכתר»

«Մուրք հոգին կգուք ու վրա, և Բաղձրյալի զորությունը հովանի կլինի Ձեզ, որովհետև Նա, Ով քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» (Ղուկ. Ա 35):

Ապրիլի 7-ին Մայր Տաճարում մատուցվեց Ա. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Թադևոս վրդ. Զիրեկյանը:

Արդեն մի քանի տարի է, որ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ավետման տունը հռչակվել է Մայրության օրհնության օր: Այս կապակցությամբ այդ օրը Հայաստանի բոլոր եկեղեցիներում կատարվեց նաև մայրության օրհնության կարգ:

Ավագ Հինգշաբթին խորհրդանշում է վերջին ընթերցը՝ որպես Ա. Հաղորդության խորհրդի հաստատում, և Ուրեվան՝ որպես սիրտ և խոնարհաբար ծառայելու Տերունավանդ օրինակ:

Առավուրյան Մայրավանքում, որպես հիշատակություն Հաղորդության խորհրդի հաստատման, մատուցվեց Ա. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Կյուրեղ արքեպ. Վարդանյանը:

Նույն օրը, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ուրեվայի կարգը: Վեհափառ Հայրապետը խաչով ու Ավետարանով օրհնեց խորանում դրված ջուրը և յուղը: Այս «Պահպանիչ» աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հիսուս Զրիստոսի օրինակով՝ ծունկի գալով լվաց և օծեց տասներկու հոգևորականների և աշխարհականների ոտքերը: Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվեց օրհնված յուղը, որը հավատացյալները գործածում են հիվանդությունների դեպքում կամ խառնում տան օրհնված յուղին:

Երեկոյան կատարվեց հավարման կարգը՝ որպես խորհրդանշիչ Հիսուսի չարչարանքների և խաչելության:

Ավագ Ուրբաթը Տիրոջ խաչելության և թաղման խորհուրդն ունի: Կեսօրին Մայր Տաճարում կատարվեց խաչելության կարգ, իսկ երեկոյան, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Թաղման կարգ: Այս արարողության ընթացքում Հիսուս Զրիստոսի խորհրդանշական գերեզմանը, զարդարված ծաղիկներով, դուրս բերվեց Մայր Տաճարից և հանդիսավոր թափոռով պարեցվեց Մայր Տաճարի շուրջը:

Ավագ Շաբաթը խորհրդանշում է Դժոխքի ավերումը:

Երեկոյան Մայր Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Ա. Պատարագ, որի ընթացքում տրվեց Զրիստոսի հարության ավերիսը և ավարտվեց Մեծ պահքը: Պատարագիչն էր Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

Հավարդ Ա. Պատարագի եկեղեցական թափոռը շարժվեց Վեհարան, ուր Նորին Արքունիության հանդիսապետությամբ կատարվեց Տնօրինների արարողություն:

Կիրակի, ապրիլի 11-ին, Պետու Քրիստոսի Հարության փոքն էր:

Առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ՆԱՕՍՏ. Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծահանդես թափառի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Մայր Տաճար՝ մատուցելու Ս. Պատարագ և Հայրապետական իր պատգամը հղելու համայն հայությանը (փոքն էջ 3):

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային ժողովի Նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, Նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի իսկախոսությունները սրահում փնդի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետ ամենաբնական վերջապիսի ուղղեց Քրիստոսի Հրաշափառ Հարության ավերիսը:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի

ՆԵՂԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱԹ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹՎ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԶՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱՆՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱԳՐԵՐԸ**

Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հոռմ)

Կոստանդնուպոլսի Հոռուց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒՂԻՄՆՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՍԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղազրի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒՂԱ Գ (Կահիրե)

Աստիտի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԲԷԱ Ա ԻՎԼԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻՈՍ (Ադիս Աբեբա)

Նեղկաստրանի Ատրի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պեպ, Նորին Սրբություն
ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՏԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Ջենթրենդիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈՒԻՆ ՎԻԼՅԱՄՄ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱԶՄԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հուսաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՂՈՒՈՍ (Աթենք)

Վարչապալայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՄԱՎՎԱ (Վարչապալա)

Միսսկի և Սլովեկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարք,
 Նորին Սրբություն
ՃԻՄԵՐԵՏ (Միսսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՋՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՂԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

•
•

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օմություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապապություն
ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապապություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սփամբուլ)

**Հայոց Եկեղեցու թեմակալ առաջնորդներին և թեմական խորհուրդներին
 ու համայնքներին:**

Եկեղեցական պնդումներին, բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել
 նաև բույր Եկեղեցիների հոգևոր հայրերին՝ կարդինալներին, միտրոպոլիտներին և
 մյուս առաջնորդներին ու հոգևոր սպասավորներին, Էկումենիկ կազմակերպություն-
 ների ներկայացուցիչներին:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ԱՌԲԵՐՏ ԲՈԶԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՐԻ ԴԱՎԻԴՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծարգո

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, զինության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և ատանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլաենկյան հաստատությունից, Կարազյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների և ներկայացուցիչները, արտասահմանյան ներկրներում Հայտնակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

ՃԻՇԵՆԱԿԱՐԵՐՈՒՄ



הרב חיים יוסף אבינעו, ראש ישיבת תלמידי חכמים
אשכנזי, עם חתני חתונתו, ביום חתונתו, ביום חתונתו



ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՈՂԱԿԱՐԵՐԴ ԵՎ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՊՐԻԼՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ

Ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի նահապետների հիշատակի ոգևորման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի իսկողնությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահապետների:

Նորին Սրբությանն թղեկցում էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ Նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական այրեր և օդաորհրկրյա դիվանագետներ:

Այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագից էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ խաչատրյանը: Հընթացս Սրբազան արարողության պատարագից Հայր Սուրբը իսկուր պապշաճի քաղոք խոսեց:

«Մենք ամենասարսափելին չե՛, որ պիտի պատահի մարդու որդիներին, ավելի սարսափելին մոռացումն է, մահվան լցանքը: Մոռացումով մոռացվում են թե՛ մոռացվածը և թե՛ մոռացողը: Արդ, ապրիլ 24-ի նահապետների հիշատակով հիշվում ենք նաև մենք, որ ուխտադիր ենք ապրելու համար մեռնել և ընդհանուր շահի առջև մոռանալ մեր անձնականն ու այն ամենը, որ մեզ հնոացնում և շնդում է ճշմարիտ ուղուց», - նշեց Արշակ վարդապետն իր բարոգում (տե՛ս էջ 39):

Պատարագի Սրբազան արարողությունից հետո Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Մեծ եղեռնի նահապետների հիշատակին կանգնեցված աղոթքի և ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Հոգեհանգստին ներկա էին բարձրաստիճան հոգեորականներ, Անդրկովկասում Վարիկյանի դեսպան և պապական նվիրակ Կլաուդիո արքեպիս, Գաջջերուրին և բազմաթիվ իսկավազայաներ:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄԻՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 31-ից ապրիլի 2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական լիազումար ժողովը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոսի:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով և Նորին Սրբության ողջույնի ու բարեմաղթանքի խոսքով: Ժողովականներն աղոթք բարձրացրեցին առ Աստված ի Տեր հանգուցյալ ԳՀԽ անդամ և եպիսկոպոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Զավեն արքեպիսկոպոս Չինչիկյանի, Երուսաղեմի Սրբոց հակոբյանց վանքի միաբաններ Ս. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի, Ս. Մանուել վարդապետ երկաթյանի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Աջճյանի և Ս. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի հոգիների հանգստության համար:

Օրակարգի և նախորդ ժողովի արձանագրության ընթերցումից ու հաստատումից հետո, արենապետությամբ ԳՀԽ երիցագույն անդամներ Ս. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի և Ս. Գյուր արքեպիսկոպոս Նազգաշյանի, ժողովը քննության առավ ազգային-եկեղեցական կյանքին վերաբերող խնդիրներ:

Թեմական հարցերի շարքում Գերագույն Հոգևոր խորհուրդը զոհուխակությամբ արձանագրեց, որ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում սրբեղծված անցանկալի կացությունն այլևս վերացել է և թեմը, գլխավորությամբ առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, կազմակերպում է ազգային-եկեղեցական իր բնականոն կյանքը:

Այնուհետև հեղինակ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Ս. Գյուր արքեպիսկոպոս Նազգաշյանի ղեկավարությամբ հայ եկեղեցու թեմական կառույցների վերակազմավորման մասին: Սրբազան հայրը հայտնեց, որ կանոնադրությունը ներկայացված է Ամենայն հայոց հայրապետին առ ի փոփոխություն: Գերագույն Հոգևոր խորհրդում Վեհափառ հայրապետի առաջադրմամբ կանոնադրության ուսումնասիրման համար սրբեղծվեց հատուկ հանձնախումբ:

Գերագույն Հոգևոր խորհրդում քննության առնվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից Կանադայի հայոց թեմում հակապանոսական թեմական գոյգահեռ կառույց հաստատելու խնդիրը: Գերագույն Հոգևոր խորհուրդն իր վերաբերմունքը խնդրի նկատմամբ արտահայտեց ընդունված հայտարարությամբ (տե՛ս ստորև):

Ժողովի ընթացքում քննարկվեցին եկող տարի Գրեթի գյուղի 1600-ամյակի տոնակատարության և Եղեռնի 90-ամյակի տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպական խնդիրներ: Որոշվեց մասնավոր հանդիսություններով նաև նշել Վազգեն Ա երջանկահիշարակ Կաթողիկոսի վախճանման 10-ամյա տարելիցը:

Ժողովի ավարտին ԳՀԽ անդամներն աղոթք բարձրացրեցին՝ հայցելով, որ Տերը խաղաղություն պարգևի հայոց աշխարհին, սիրո, եղբայրության ու հաշտության մեջ հաստատուն պահի աշխարհափառ համայն հայ ժողովրդին՝ Փրկչի հրաշափառ հարության խորհրդով ընդառաջ զնալու հայրենիքի գորացման և ժողովրդի բարօրության:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն Հոգևոր խորհուրդը Կանադայի հայոց թեմի Թեմական խորհրդից խորին մտախոհությամբ փնտրելագավ, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ցավալի իր վախճանին է հասցրել Ամենայն Հայոց Հայրապետության կանոնական տարածք հանդիսացող Կանադայի հայոց թեմում զուգահեռ վարչական կառույց հաստատելու գործընթացը՝ հակառակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Գերագույն Հոգևոր խորհրդի նորայրական հորդորներին:

Սույն քայլը եկեղեցաբանական և եկեղեցափայտական առումներով, ինչպես և հայ ժողովրդի հոգևոր միասնության անխաթարության պահպանության իմաստով չունի որևէ արդարացի բացատրություն և հիմնավորում:

Երևույթն ավելին է, քան հակականոնական ևս մեկ թեմի ծնունդը: Այն հաստատում է, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը պարզապես չէ վերանայելու 1956 թվականին որոշեցրած պատկերողական ոգին և Մայր Աթոռի հետ համախորհուրդ վերականգնելու կանոնական վիճակը Հայ Եկեղեցուց ներս: «Մեկ ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի» կարգախոսին իր եկեղեցական հավաստիացումներին հակառակ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը «նոր վերադասավորումներով» հեղափոխականորեն փորձում է ընդարձակվել և ամրագրվել սառը պատերազմի օրերին քաղաքական շարժառիթներով Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից զրաված թեմերում՝ խորացնելով բաժանումը Հայ Եկեղեցու մեջ և վրանգելով 1988 թվականից ի վեր Մայր Աթոռի հետ բարելավված հարաբերությունները:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը չի ցանկանում տեսնել արդի աշխարհում փոփոխված իրավիճակները, Հայրենիքի անկախության իրողությամբ պայմանավորված հրամայականները և արժեքները նոր ժամանակների ոգին, որ պահանջ է առաջադրում վերականգնել ու անխաթար պահել Հայ Եկեղեցու և ազգի միությունը:

Հայ եկեղեցու գերագույն և անասց արժեք հանդիսացող աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությունն ու միությունը խախտելու ցանկացած փորձի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հակադրելու է այդ միությունն անխախտ ու անսասան պահելու վճռական իր հաստատվածությունը:

Սուրբ Էջմիածինը դիմում է Կանադայի և Մայր Աթոռից զրավված բոլոր թեմերի հավատարմորդ զավակներին՝ հայրենելով, որ անփոփոխ է իր հայրական սերը բոլորի հանդեպ, քանզի ինչ ձևակերպումներով և առ «ժողովրդի կամք» վաղուց հայտնի հղումներով էլ փորձ արվի արդարացնել սման քայլերը, անտարակույս է, որ ոչ մի ժողովուրդ չի կարող ունենալ պատակված լինելու ցանկություն:

Մայր Աթոռը վերստին նորայրաբար ողջախոհության է կոչում Կիլիկիո Կաթողիկոսությանը և ողջունում ամեն քայլ՝ ուղղված երկփեղկվածության հաղթահարմանը և կանոնական վիճակի վերահաստատմանը Հայ Եկեղեցում, և հրավիրում է իր զավակներին՝ նախանձախնդիր ու միասնական լինելու բարդ ժամանակների թելադրանքով ծնունդ առած երկպառակության՝ շուրջ կնադարյա խնդրի կարգավորման ճանապարհին: «Սիրո գերազանցություն»՝ ահա Մայր Աթոռի գերազանցության խորհուրդը ինչպես երեկ, այնպես էլ այսօր և հավիտյան:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Էջմիածին,
2 ապրիլի 2004 թ.

ՆԱԶՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղտնի Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ ապրիլի 20-ին Կոնգրեսի 2-րդ նիստի 2-րդ օրվա աշխատանքները փակվեցին։

Հայաստանի թիմակալ ստաջներդներս մրահողության ենք հայտնում սրդեղծված հերքադաքտկան լուրվածության շարահանություն առնչությամբ և անընդունելի համարում հայրկապին տարածաշրջանում վճարող զարգացումների հերկա իրավիճակում քաղաքական ցնցումների ուղին, որը ստանկապումների ստաջներդդով խորացնում է անհանդուրժողության ոգին ու պատակիրումը ժողովրդի մեջ և վրահգում կայունությունը Հայրենիքում ու անվրանգությունը մեր պիտակմունքում:

Այսպիսի 24-յան խորհրդի առջև կոչում ենք համայն մեր ժողովրդին, պետական կառույցներին, բաղադրական ուժերին ու հասարակական կազմակերպություններին՝ հավատարմի մնալ Մեծ Եղեռնի մեր գոհերի հիշատակն հիշարարկի լուսն-դին խորհրդին, որն ամբողջացում է ազգային անկախ պետականության և ազգայր ու ապահով կյանքի մեր ժողովրդի դարավոր ձգպումն, որով միշտ գոյացել է ազգային միաբանություն մեր ոգին:

Մենև Էշահը Նայրենիթի ու ժողովրդի, հերոսաբար կարողանալով հաջողությամբ ոգով ունկնդիր լինել միմյանց որպեսզի գրենք հայրենաշինության ամհյուսժիշտ ճանապարհները: Մեր բոլոր հայրենիքի ու խնդիրների ու պատասխանները պիտի փնտրենք օրինակականության պահպանման հախանձախնդրությամբ՝ համդոյոժողության, փոխադարձ հարգանքի ու ջանքերողության հրակնքերից՝ զերազոյն նպաստել ունենալով մեր Նայրենիթի ներքին անդորրն ու կայունությունը ու ժողովրդի միաբանությունը:

Մինք հավատում ենք, որ զարկական այս հոգեհորոգ շրջանում, երբ Հայրուցյալ Փրկիչն էր խաղաղությունն ու սիրն է տարածում մեզ վրա, կկարողանանք հաղթահարել ներքաղաքական այս անհունցիսը վիճակը ևս՝ հուրախությամբ մեզ և մեր բարեկամները ժողովրդի ի Հայաստան և ի Սփյուռք աշխարհի:



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ ԿԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՅԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵՄՆ ԵՒ ԳՆՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻՄՐ ԿԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆՅ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱՅ, ՈՂ-**

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատու զաւակիդ: Յարգարժան պրն Գրիգորեանց,

Անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ այսօր առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր բարի գործերին, որոնք միտում են Ռուսաստանում բնակաող մեր ժողովրդի զաւակների ազգային-եկեղեցական կեանքը զօրացնելու ազնիւ նպատակին: Մենք տեղեկ ենք, թէ որքան մեծ աջակցութիւն էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի եւրոպայի թեմին եւ յարկապէս Մոսկուայի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման աստուածահաճոյ գործին, որը լինելու է առաջնորդանիստ եկեղեցին Տիրախեւում թեմի: Ռուսաստանում եւ մասնաւորաբար երա մայրաքաղաք Մոսկուայում բնակող մեր ժողովրդի բազմահազար զաւակներ, որ աղօթքի ու պիտի կանգնեն երաւաւորեց եկեղեցում, մշտապէս երախտագիտութեամբ պիտի յիշեն Ձեզ եւ պատուարժան բոլոր հայորդիներին, ովքեր ջանք ու ենդրում ունեն եկեղեցու կառուցման ազգօգուտ գործում:

Այսօր արժան է յիշել նաեւ, որ Ձեր ազնիւ հովանաւորութեամբ յոյս ընծայուեց «Հայաստան, 1700-ամեայ հաւատարմութիւն» աշխատութիւնը, որը ծառայել է լեզուով արժեքաւոր



ուսումնասիրություն է նուիրում Հայրենի մեր երկրին, ժողովրդին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ամենակարող Աստուծոյ օրհնութեամբ Դուք Ձեր կարողութիւնները ծառայեցրել էք նաև Լուսաւորչապետական մեր Սուրբ Աթոռի՝ համայն մեր ժողովրդի հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը: Դուք, արդարեւ, բարեգործ եւ հաւատարմոր զաւակն էք բարեպաշտ մեր ժողովրդի և արժանի Հայրապետական բարձր գնահատանքի:

Յարգարժան պրն Գրիգորեանց,

Ընդառաջելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնւի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով գոհունակ սրտով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պապուոյ բարձրագոյն շքանշանը:

«Աստի եւք, որ Մայր Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնատուել աստուածահաճոյ ձեռնարկներով՝ ի պայծառութիւն Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի եւ ի բարօրութիւն ուսաստանաւարնակ հաւատարմոր Մեր զաւակների:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջատոգջ արեւշարութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լիւրուք ի Տէր, գորացիայ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւելոյ օրհնեալ ի Մենջ ամէն:

Օրհնութեամբ՝

ԳՎՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 21-ն Ապրիլի

յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ

ի Մայրավանս Արքայ Էջմիածնի

ընդ համարաւ 224

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱԼԵԽՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ԱԽՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱԼԵԽՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵՒԱՆ**

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ զաւակիդ:

Յարգարժան սրբ Յարությունեան, անդրադառնալով ստեղծագործական Ձեր բեղուն գործունեութեանն ու առաք վաստակին, գոհաբանական աղօթք ենք առ Աստուած բարձրացնում, որ օրհնել է օրհնում է ազգս հայոց Ձեզ պէս շնորհաշատ ու արժանատու զաւակներով: Ձեր կեանքը ամբողջական նուիրում ու ծառայություն է երաժշտական արուեստին: Բազմաժանր Ձեր գործերը իրենց զգացմունքայնութեամբ ու մեղեդայնութեամբ, իւրօրինակ եւ նրբաճաշակ մրաժողութեամբ հնչել են աշխարհի եշանաւոր բազմաթիւ բեմերից եւ զնահալուած են հայրենական ու միջազգային պարգեւներով: Մեծ կրաւի գործերի կողքին Դուք հեղինակել էք նաեւ բազմաթիւ երգեր, որոնք այսօր ճանաչուած են ու սիրուած եւ շուրթերին են մեր ժողովրդի: Սնունդ առնելով ազգային երաժշտութեան մաքուր ակունքներից եւ շարունակելով մեր անուանի երգահանների հարուստ աւանդները՝ Ձեր ստեղծագործությունները միաժամանակ կրում են կնիքը հայրենասնունդի եւ եկեղեցասէր Ձեր հոգու: Ձեր անունը առմիշտ շաղկապուած է նաեւ հոգեւոր երաժշտութեան հետ: «Գթա Տեր»-ի Ձեր անգուգական մշակումը յաճախ է հնչում մեր եկեղեցիներում՝ հոգեհանգստեան արարողութեան ընթացքին մխիթարութեան զգացումով լցնելով հաւաքացեալների հոգիները:

Ձեր գործունեութեան ծիրի մեջ Դուք կարեւորել էք նաեւ երաժիշտների նոր սերունդի պատրաստման շնորհակալ առաքելությունը՝ փաստամեակներ շարունակ նախանձաւոր սիրով ու նուիրումով ուսուցանելով հարիւրաւոր ուսանողների Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերւատորիայում, որի շնորհալի սաներից էք ինչպէս նաեւ Դուք:

Յարգարժան պրն Յարությունեան, մեր ժողովրդի երախտաւորների շարքում առմիշտ եւ արժանապէս արձանագրուած է փառանդաւոր հայորդոց անունը, եւ Մենք ուրախ ենք ի

զնահարություն հայ մշակույթին Ձեր մատուցած բազմաթիվ ծառայություն, Հայրապետական այսու հոնդակով շնորհելու Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնատըր Տէրը Իր Հայրական սիրոյ եւ խնամքի մէջ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով երկնատուր ամենայն բարիք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ:

Ողջ լիլուզ ի Տէր, գորացիս շնորհօք Սուրբ Հոգւոյն ի յաւեր օրհնես ի Մէնջ ամեն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 21-ն Ապրիլի

Թամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆՅԳ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարս 223

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՆԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՌԻՐԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵԻԱՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սկսն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու փաղանդաշար ու արժանաւոր զաւակիդ:

Մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում սրբղծագործական Ձեր գործունեութեանը եւ փարիկների թեղմնատոր վաստակին: Տակաւին պատանի հասակում հազարաւոր հայորդեաց ու հարազատների հեղ զաւով Մայր Հայրենիք՝ երաժշտական կրթութիւն ստացաք՝ աստուածաւոր Ձեր շնորհները զարգացնելով Ռոմանոս Մելիքեանի անուան ռուսումնարանում եւ Երեւանի Կոնսերուստորիայում: Սրբղծագործական ուղին լստաջնորդեց Ձեզ մեծ արուեստի ճանապարհ: Արուեստի այլ գործիչների հեղ սկիզբ դրեցիք Հայաստանի մշակութային եւր զարթոնքին՝ կերպելով դասական երաժշտութեան անզուգական սրբղծագործութիւններ, որոնց մէջ ներդաշնակօրէն միաձուլուած են ազգային ու համաշխարհայինը: Համարտապէս արժեւորելով հայ մեծանուն երաժիշտների փորձառութիւնն ու նուաճումները երաժշտութեան ասպարեզում՝ հեղեւել էք մանաւանդ Մեծն Կոմիտասի երաժշտական աւանդներին եւ ձօն էք հնչեցրել նրա անմահ եւ սուրբ յիշատակին: Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ արդիւնաշար Ձեր կեանքի ընթացքում յատուկ ուշադրութիւն էք դարձրել հոգեւոր թեմային նուիրում գործերին, որոնցից այսօր կուգէինք յիշել յատկապէս Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» խորագրով աղօթքների հիման վրայ գրուած նոյնանուն երաժշտական սրբղծագործութիւնը: Ձեր անունն ու երաժշտութիւնը հանրաճանաչ են արուեստասէր լայն շրջանակներում եւ սիրելի ու գնահատելի՝ այլ ժողովուրդների զաւակների կողմից:

Երկար փարիկների բազմաթիւն ռուսացագործութեամբ սրբղծագործական անսպառնիկ կորով ու նռանդ էք ներդրել նաեւ երաժիշտների եւր սերնդի պատրաստման շնորհակալ գործում՝ դասաւանդելով Կոնսերուստորիայում:

Միծարգոյ Տիար Մանսուրեան, հայ երաժշտութեան եւ արուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Ս Վ Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի արեւա-
ռար երկար օրեր: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր եռանդ ու սրելծագործական
աւիւն, որպէսզի շարունակէք բոլորանուէր Ձեր ծառայութիւնը մատուցել արուեստին, Հայ-
րենիքին ու ժողովրդին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տօնա Կոնդակա ի 21-ն Ապրիլի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի
ընդ համարաւ 226

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. ապրիլի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատու կոնդակով

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.
Գևորգ Մանուկյան (Կանադայի հայոց թեմ)

Օրինության գիր է տրվել.

Սերժիկ Կոծիկյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

Դոդոս Դեպրոսյան (Արզենիքի հայոց թեմ)

Սարա Քոբինյանի հիշատակին (Կանադայի հայոց թեմ)

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հոգևորականաց համագումարին

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի պատգամավորական ժողովին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի պատգամավորական ժողովին

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց Միությանը

Կրոնասեր Տիկնանց Համախմբումին (Լիբանան, Բեյրութ)

Մուրր Խաչ Լկեղեցու ծխական խորհրդին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Ավագության պատիվ է տրվել.

Նարեկ քահանա Իշխանյան (Իրաքի հայոց թեմ)

ԿԱՐԳԱՈՒՅԾ ԵՆ ՀՈՉԱԿՎԵԼ Տ. ՄԱՇՏՈՑ ԱԲԵՂԱ ԺՈՌՈՅԱՆԸ ԵՎ Տ. ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱ ԱՆԱՐՈՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական փնտրիչությամբ ապրիլի 1-ից կարգադրյալ են հռչակված Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա ժողովյանը՝ հոգևոր ծառայությունն ինքնակամորեն լքելու կանոնադրական ընթացքի համար, և Տ. Նարեկ քահանա Ահարոնյանը՝ կարգադրյալ հռչակված Ղազարոս Կյուրեղյանի հերձվածին հարելու կանոնադրական ընթացքի համար:

Այսուհետք երանգ դասվում են աշխարհականների շարքը եւ կկոչվեն իրենց ավագանի անուններով՝ Մոշեղ ժողովյան եւ Գարիկ Ահարոնյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՄՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶՆ ԱՎԷՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում ենք բոլոր կանանց Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով:

Այսօր հեջում է Փրկչի աշխարհ գալու մասին մեծ ավերիվը, որն առաջինը լսեց Սուրբ Տիրամայրը և քնդունեց խոսքի ու Աստծուն սիրող սրտով: Տոն է հույսի ու հավատի նորոգության, քանզի ավերավոր հրեշտակի շուրթերով ամենքս խոսն ենք. «Տերը քեզ հեջ է»: Այս հավատով, որ Աստված մեզ հեջ է և Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ, թող որ բացվեն մեր կյանքի բոլոր առավոտները, և իրականացվեն մեր բոլոր գործերը:

Տիրամոր հավատավոր ու անբիծ կերպարը քրիստոնեական մեր կյանքում միշտ եղել է ներշնչման աղբյուր ու քարի օրինակ, և խորհրդանշական է, որ Ավետման տոնը հիշատակում ենք նաև իբրև տոն մայրության ու գեղեցկության և նվիրականացնում իբրև Օրհնության Օր՝ մայրության բերկրանքին սպասող կանանց:

Մեր աղոթքն է, որ Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն և Սուրբ Տիրամոր շնորհներով գաղղարի բոլոր տիկնանց և օրիորդաց՝ պարզևեղով նրանց երջանիկ ու արևշատ կյանք, միշտ գորաքյալ հավատ, որպեսզի կրթեն ու մեծացնեն արմատավոր զավակներ՝ աստվածասեր, եկեղեցասեր ու հայրենասեր:

Ս. Էջմիածին,

7 ապրիլի 2004 թ.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մեր սիրասուն զավակներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ Երեւանի օրհնության օրվա առիթով, որը լուսավոր ու պայծառ է Խաղկազարդի Տերունական տոնի հոգևորոգ խորհրդով:

Ինչպես ժողովուրդն ընդամառ ելավ ու ողջունեց Հիսուսին կանաչ ճյուղերով, նույնպես այսօր դուք ձեր ծնողների ու հարազատների հետ ծաղկած ճյուղեր առած, զվարթ հոգով և աղոթքը ձեր շուրթին գետմ եք եկեղեցիներ՝ սրանայու օրհնությունը Քրիստոսի՝ մեր Փրկչի ու Տիրոջ:

Արդարև, մեր Տերը շատ է սիրում երեխաներին: Աստծո ամեն գնահատելի մեծ գանձ են մանկական հոգու անմեղությունն ու բարությունը: Սուրբ Ավետարանի պատմությանց մեջ Հիսուս հաճախ է պատվիրում մեծերին՝ լինել մանուկների նման, որպեսզի աշխարհում առաջնան մաքուր հոգու բարի արգասիքները: Ձեր կյանքի բոլոր օրերում հավատացեք ու վստահեք Աստծուն, հավատարիմ եղեք աստվածատուր պատվիրաններին, բազմացրեք ձեր հոգու գանձերը, և երկնային շնորհները միշտ ուղեկից կլինեն ձեզ, ու ձեր ընթացքը՝ անսպառ:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ համայն մեր ժողովուրդը՝ մեծ ու մանուկ, միշտ բանուկ պահեն դեպի մեր սուրբ փաճարները փառող ճանապարհները, միշտ նորոգ ու գորացյալ՝ մեր հայրերի սուրբ հավատն ու ավանդները, և հայոց հողից ու հայ հոգիներից աղոթքը անդադար բարձրանա երկինք:

Սիրելի զավակներ, թող Բարին Աստված միշտ ձեզ հետ լինի, ձեր ծնողաց ու հարազատների հետ պահի ու պահպանի ձեզ Դր ամենախնամ Աջի հովանու ներքո այսօր և միշտ: Ամեն:

Ս. Էջմիածին,

4 ապրիլի 2004 թ.

ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ ԳՆԱՎԱՏՄԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐՄԱՆԻՆ՝ ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՆԱՄԱՐ

Ապրիլի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Վայոց Կաթողիկոսը նամակ է հղել Կանադայի խորհրդարանի Վաշինգտոնի պալատի խոսնակ պարոն Փիթեր Միլիքընին: Նամակում Վենափառ Վայրապետը աշխարհասփյուռ համայն հայության անունից իր նրախորհրդությունը և գնահատանքն է հայտնել խորհրդարանի կողմից ապրիլի 21-ին ընդունված որոշման համար, որով Կանադայի օրենսդիր մարմինը պաշտոնապես ճանաչում և դատապարտում է Վայոց Ցեղասպանությունը:

Դիմելով խորհրդարանականներին, Նորին Արքեպիսկոպոսն էլ մասնավորի նշում է. «Մենք հրախարաչարք ենք, որ 1915-1923 դաժան տարիներից հետո հայ ժողովուրդն ապարտության գլխով ինչպես Կանադայի օրենսդիր հողում, այնպես էլ ամբողջ աշխարհի տարբեր անկյուններում՝ արժանանալով բարեհաճ վերաբերմունքի: 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զավակները ոչ միայն փրկություն գտան իրենց նոր հանգրվաններում, այլև քաղաքականացին, զորացան և դարձան իրենց ապաստանած երկրների հավատարիմ և արժանավոր քաղաքացիները:

Ահափասիկ, մտրեճում ենք 2005 թվականին՝ Վայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցին, սակայն ցեղասպանությունը դեռևս շարունակում է մնալ մարդկության համար կարևոր խնդիր: Ցեղասպանությունը հրեք չի կարող լինել մեր ժամանակների կրոնական, ընկերային և քաղաքական հակամարտությունների լուծման ուղի: Ցեղասպանության կանխման ուղին դրա ընդունումը և ճանաչումն է: Ցեղասպանության զոհերի՝ թե՛ ողբերի և թե՛ նահապետների համար արդարության հասնելու միակ ուղին դրա դատապարտումն է: Ցեղասպանությունը հանցանք է ոչ թե մեկ ազգի, այլ ամբողջ մարդու և Աստծո հանդեպ: Այն ծանրագույն հանցանք է մարդկության հանդեպ: Աստծո առանձնակի շնորհը մարդուն կյանք պարգևելն է: Կյանքի պաշտպանությունը վստահված է խիստություններին, և յուրաքանչյուր պաշտպանված կյանք պարզ է որք մենք նվիրաբերում ենք Աստծուն: Ուստի, բոլորը պետք է գիտակցեն, որ մարդկային կյանքի դիմ որևէ ուրնագություն ի սկզբանի պետք է դատապարտվի: Մարդկության տառապանքները վերջ կգտնեն ձեզ նման խիզախ մարդկանց գործերի շնորհիվ, որոնք նպաստում են արդարության հաղթանակին»:

«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՀՔԱՆԶԱՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով անվանի երգահաններ Ալեքսանդր Նարոյությունյանի և Տիգրան Մանսուրյանի շնորհիվ է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան՝ արդի հայ երաժշտության զարգացման գործում ունեցած կարևոր ավանդի համար:

Ապրիլի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհաբանի դահլիճում, տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը շքանշաններ հանձնեց սիրված երգահաններին:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. խաչատրյանի լուսնային խոսքից հետո երաժշտագետներ Արաքս Սարյան և Աննա Արեշտական անդրադարձան Ալեքսանդր Նարոյությունյանի և Տիգրան Մանսուրյանի հարուստ և բազմաձև ստեղծագործական ուղու: Այս «Էջ Միածինն ի Տօրե» շարականի երգեցողության ներքո բերվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գույք կոնդակները, որոնք հանդիսավորապես ընթերցեցին Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոնյանը և Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն եպս. Աղամյանը:

Բարձր գնահատելով Ալ. Նարոյությունյանի և Տ. Մանսուրյանի ստեղծագործական վաստակը, Ամենայն Հայոց Հայրապետն իր սրբապատ կոնդակում առանձնացնում է նրանց նպաստը հոգևոր երաժշտության զարգացման գործում: Ալ. Նարոյությունյանի «Գթա Տէր»-ի անգուցական մշակումը հաճախ է հեղուկ Հայ Եկեղեցում՝ հոգեհանգստյան արարողության ժամանակ, իսկ Տիգրան Մանսուրյանի հոգևոր թեմաներով գրված գործերից հիշատակելի է հատկապես Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի «Հաւարով խոստովանիմ» խորագրով աղոթքների հիման վրա գրված նույնանուն երաժշտական ստեղծագործությունը:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին իրենց վաստակին տրված բարձր գնահատականի համար՝ մեծանուն արվեստագետները հավաստիացրեցին, որ այսուհետև ևս պիտի նպաստեն հայ մշակույթի առաջընթացին:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը մեկ անգամ ևս իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց երգահաններին:

«Նրանք իրենց ստեղծագործական վաստակով ոչ միայն հոջակ, անուն, պատիվ և փառք են բերել մեր ժողովրդին, հարստացրել գանձարանը հայ մշակույթի, ճանաչել տվել մեր ժողովրդին հաշտ օտարաց, այլ նաև կարևոր մի առաքելություն են իրականացրել մեր ազգի և մեր հայրենիքի կյանքում: Նրանք իրենց կարևոր նպաստն են բերել հայապահպանության սուրբ գործին: Հայրենիքից հեռու, օտարության մեջ ապրող յուրաքանչյուր հայորդի բերկրանք և գնձություն է ապրում և հպարտության զգացումով տոգորվում, երբ զանազան հոջակավոր թեմերից հեղում է հայ արվեստագետի ստեղծագործությունը: Այն երբ ոգի է փոխանցում, ում է տալիս դիմակայելու բոլոր փորձություններին, ճանապարհ է հարթում

ղեպի իր ազգային ինքնությունն ու արժեքային համակարգը և կարծես չն նրա մեջ ուխտի վերանորոգում է կատարվում».- Եւեց Նայոց Նայրապեարը:

Նանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Նոգնոր հոգևորդի անդամներ, Մ Մշակույթի և նրիտասարդության հարգերի նախարար Թամարա Պողոսյանը, գիտության և մշակույթի անվանի գործիչներ:

Նանդիսության ընթացքում հնչեցին նաև նրգահանների սրեղծագործություններից՝ Նայաստանի կամերային երգչախմբի կատարմամբ:

ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԵՐԳՉՈՒՆԻ ԻԶԱԲԵԼ ԲԱՅՐԱՔԷԱՐՅԱՆԻՆ

Մայրիկի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց «Մեփրոպոլիտեն» օպերայի մենակատար, կանադահայ ճանաչված երգչուհի Իզաբել Բայրաքդարյանին:

Վեհափառ Նայրապետն իր օրհնությունը լավեց մեծապաղանդ նրգչուհուն՝ իր գեահապանքը հաղորդելով նրան հայ եկեղեցական նրաժշտությունն աշխարհի փարրեր բնմերից հնչեցնելու համար:

«Նաճելի է փեսեն ճանաչում և հոջակ յոնեցող հայուհու, որն իր քայներն է ուղղել դեպի յոր հայրենիքը՝ իր սերն ու եվիրումը բերելով Նայաստան աշխարհին ու Մայր Եկեղեցուն՝ Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին: Դուք Ձեր գործունեությամբ և անդուլ աշխատանքի շնորհիվ գայիս եք հոջակը հավելելու մեր ազգի, պանծացնելու ինչպես Ձեր անունը, այնպես էլ մեր ազգի».- Եւեց Նորին Սրբությունը:

«Վեհափառ Տեր, հոգուս և սրտիս սնունդն է հայ հոգևոր նրաժշտությունը, քանզի անկարելի է ապրել առանց հավաքի, և այն բոլոր շնորհները, որ Աստված ինձ պարգևել է, պիտի ի սպաս դնեմ հանուն մեր հայրենիքի և մեր Սուրբ Եկեղեցու».- շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ հավաստեց Իզաբել Բայրաքդարյանը:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**

Տ. ԴԱՎԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (4 ապրիլի 2004 թ.)

«Յսևտուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հաճախացալ եւ սիրելի եղբայրներ ու բույրեր,

Մաղկազարդի առաժոյտուն Քրիստոսի հաղթական մուրթին դեպի Երուսաղեմ բազմութիւնը ամբողջ կերպով՝ ըսելով. «Օվսանեա, Դավթի Որդի, օրհնեալ է Ան, որ կուգա Տիրոջ անունով, խաղաղութիւն երկրի վրա եւ փառք բարձունքների մեջ բնակվող Աստուծո»:

Քրիստոսի աշակերտներու կողմն գրված չորս Ավետարանները այս մուրթին տարրերը դրվագները կապումեն, որոնք ամփոփումը կուգն կատարել Քրիստոսի Գալստյան այս մեծ տոնին առթիւ:

Հրեական Պատերն էր Երուսաղեմի մեջ, հրեական Զաւրիկը: Զարկական տոները, որոնք կտնեին ութ օրեր, եւ այնքոյն հաճաքված էին հրեական սփյուռքի տարածքին վրա գրեկող բազմաթիւ ուխտավորներ, ուխտավորներ եւս Գալիլիայէն եւ Պաղեստինի մյուս գաղառներէն: Հիսուս երկար ժամանակ յաջակայած էր Երուսաղեմի շրջանակէն եւ հարաւի կողմէն կողոզվեր դեպի հյուսիս, դեպի Երուսաղեմ խումբով մը աշակերտներու եւ հաճախորդներու եւ ծառայասեր փրկիներու ընկերակցութեամբ:

Երկու կույրեր Երիբովի արվարձաններու մեջ կաղաղակեն՝ ըսելով. «Հիսուս, Որդի Դավթի, թող մեր աչքերը բացվին»: Քրիստոս գթալով անոնց վրա՝ կրծշէն երկու այդ կույրերը: Ապա թափօրը կողոզվի դեպի Բեթանիա, հոն, ուր բարեկամ մը իրեն մահացած եւ պարտաւթում եւ ապա թաղված էր: Անոր Հիսուս կյանք կշնորհեւ, անշուշտ, կյանք մը, որ եեթակա էր կրկին մահվան: Եվ կշարունակեւ Իր քայլերը՝ նստած ամենապարզ կենդանիի վրա՝ մատակ ավանակի մը, եւ կողոզվի դեպի տաճար: Սակայն բարձունքին վրա կնայի պահ մը Երուսաղեմին, կնայի տաճարի գեղեցկության եւ կուլա Երուսաղեմ բաղաբի վրա՝ անդրադառնալով, գիտնալով, թե այդ բաղաբը պիտի կործանի եւ տաճարն ալ հետք միասին:

Իր խոսքը ուղղելով հրեա մողովորդի քահանաներուն՝ կըսէ. «Դուք, Երուսաղեմի մեծամեծներ, միշտ հալածեցիք մարգարէներն ու աստվածաբան մարդիկ, որոնք զրկվեցան ձեզի: Քանի անգամ ըսի ձեզի, որ չառնէք այդպիսի քայլեր»,- եւ կանդորդառեա ղարձայ բաղաբի կործանմանը: Ապա կերթա տաճար եւ տաճարէն դուրս կվարեն բոլոր այն մարդոց, որոնք Աստուծո տունը ավազակներու տան վերածած էին, եւ կցրեն ինչ որ կար այնտեղ եւ բոլոր մասնակներու հետ միասին կաղաղակեն՝ երգելով մարգարեական այն խոսքը, որ կըսեր. «Խաղաղութիւն երկրի վրա եւ փառք բարձունքներու մեջ բնակող Աստուծո: Օվսանեա, օրհնեալ ըլլա Այն, որ կուգա Տիրոջ անունով»:

Այս բանի մը խոսքերն հետո օրվա խորհրդածութիւնը հաղթական մուրթի տոնին առթիւ պնտք է ուղղել երկու գաղափարներու.

Առաջին՝ մեսիական գաղափարը: Հրեաներու մուր կակնկալվել միշտ Մեսիան, Փրկիչը, Ազատարարը: Սակայն այնպես ստրված էին այդ ժողովուրդի զավակները, որ Մեսիան՝ Աստուծո կողմն դրված Ազատարարը և Փրկիչը, միայն կապականի հրեա ժողովուրդին: Զրիստոս, սակայն, միշտ մերժեց այդ գաղափարը և Իրեն համար խորություն և փարբնություն չկար սամարացիի և հրեայի, ազադի և ծառայի, այդ մարդու և կնոջ, որովհետև բոլորն ալ, ինչպես հեթադային Պողոս առաքյալ շեշտեց, մին եւ Տիտոս Զրիստոսով: Մեսիական այդ գաղափարին հակառակ ընթանալով՝ չկրցան իրենց մարգարեններու բարոյական ըմբռնումները յուրացնել, և գործեցին մեծագույն սխալը պատմության մեջ՝ սպանելով Աստվածորդին:

Իսկ երկրորդ գաղափարը րաճարի մեջ տեղի ունեցող ծեսերն ու արարողություններն էին: Հրեաները կշիտթեին միջոցը նպատակին հետ: Իրենց համար կարևորը ծեսը և արարողությունն էր, բայց Զրիստոսի համար րաճարը պիտի ծառայեր Աստուծո փառքին, պիտի ծառայեր պարգապես բարիք սփռելու համայն մարդկության:

Մեր ժողովուրդը, սիրելի հավատագրայինը, իր պատմության ընթացքին շատ լավ կերպով ըմբռնած է մեսիական գաղափարաբանությունը և բարոյականը և լավ ըմբռնած է, թե րաճար մը ինչի կծառայ: Մեզի համար րաճարը Ս. Էջմիածինն է, Ամենայն Հայոց Հայրապետությունն է այս Տաճարը, որու հիմքերը 1700 րարիներ առաջ դրվեցան և այս Տաճարին մեջ ծառայած են մեր եռամեծար Հայրապետները՝ Լուսավորիչները, Սահակները և ալվի վերջ եկող Հայրապետները:

Հայրապետները կմարմնացնեն, գահակալները կմարմնացնեն մեր ամբողջ պատմությունը, մեր պատմության ամենափայլուն էջերը րված են մեր ժողովուրդին մեր Մայր Աթոռի գահակալները: Բնական է, մենք կհավատանք մեր ավանդություններուն, մեր ազգային և կրոնական արժեքներուն: Մեզի համար ծեսը և արարողությունը պետք է նկատենք պարգապես միջոց՝ հասնելու համար գերագույն այն նպատակին, որ մարդ էակին փրկությունն է և Աստուծո փառքին իյուսումը:

Այս հաղթական տոնին առթիվ մենք պիտի հայցենք Տիրոջմե, որ մեր հոգևոր աչքերը բանա, ինչպես բացավ աչքերը այդ երկու կույրերուն: Պիտի խնդրենք Իմն կյանքի շնորհում, ինչպես շնորհեց Ղազարոսի, պիտի խնդրենք առողջություն հոգվո և մարմնո:

Ըմբռնելով նաև բարոյականը մեր Տաճարին՝ մեր սերն ու հարգանքը միշտ պիտի րաճենք մեր սիրեցյալ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գաբրելին Երկրորդի, որ կմարմնացնեն մեր պատմության էջերը, էջեր, որոնք կշահվին գոհողությամբ և դժվարությամբ, և ուրախ ենք, որ մեր Հայրապետը այդ գոհողությունը հանձն առած է և լուսավորչյան տեսիլքով, մեթոդական ոգիով, խրիմյաեի հայրենասիրությամբ կտառջնորդեն մեր Եկեղեցին Հայաստանի և Սփյուռքի մեջ:

Կհայցենք այս հաղթական տոնին առթիվ, որպեսզի մեր Հայրապետը միշտ վառ պահեն իր մեջ այդ կորովը, հարապենելու ոգին, ազգային և եկեղեցական բարձր ըմբռնումները ի փառս Աստուծո և ի վայելումն ազգիս հայոց. ամեն:

**Տ. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՆԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՅԻՆ**

(10 ապրիլի 2004 թ.)

*«Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ
Տիարն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց
թաալիցոյց զվէմն ի դրաց անտի, եւ
նստեր ի վերայ նորա»:*

*«Եվ ահա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև
Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մտրեցավ,
դռնից վիմը մի կողմ զլորեց ու նստեց նրա վրա»:*
(Մարք. ԻԸ 2)

«Յանդուհ Տոր և՛ Որդոյ եւ Տոգոյն Սրբոյ, ամեն»:

Մարթնոս Ավետարանիչն այս սեղմ փողերով է արձանագրում նկարագրական կողմն այն եղելության, որը գայտի էր հեղաշրջելու համայն մարդկությունը ոչ միայն սոսկ պարմական առումով, այլ նաև բարոյական, հոգեբանական, մշակութային և մարդկային կյանքը բնորոշող ոլորտներով ու բնագավառներով: Սուրբ Առաքյալն այս երկու փոքրիկ փողերով է բավարարվում, քանզի ավետարանիչների համար Քրիստոսի Հրաշափառ Հարության ղեկավարը սոսկ ժամանակի մեջ կատարված պարմական իրողությունն չէր, որը պետք էր նկարագրել և բնութագրել որպես այդպիսին:

Տառապանքի սև ու փխուր օրերին, հուսահատ ու դժնդակ իրողություններից վիատված Տոգը հարցնում էր իր բարեկամներին. *«Եթե մտադրեմք մահվանից հետո նույնպես այնպիսի տալիս»* (Հմմտ. Տոր ԺԴ. 14): Ամեն անհատ, որ ապրում է այս աշխարհում, միևնույն հարցն ունի իր շուրթերին՝ արդյոք գերեզմանը կյանքի վերջին հանգրվանն է, թե՞ կյանքը շարունակվում է նաև գերեզմանից անդին: Այս մեծ հարցի պատասխանը լավագույն կերպով փվեց մարդկությանը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոս՝ Իր Հրաշալի Սուրբ Հարությամբ:

Քրիստոսի Հարությունը րեդի ունեցավ խորհրդավոր և անխմանալի կերպով՝ Աստվածային ուժի և Աստվածային զորության ներգործությամբ: Այդ սեղմ փողերի երևում թաքնված խորհուրդն այն է, որ Աստված, Ով ստեղծագործում էր ի սկզբանե և ոչնչից արարում էր ամեն ինչ, Ով բազում անգամներ այցելության եկավ ժողովրդին դեռևս Քրիստոսից առաջ, ցնցեց լեռները, ճեղքեց ծովը և փրկություն բերեց ընտրյալ ժողովրդին, այդ նույն Աստված այս անգամ ևս ցուցադրում է Իր զորությունը՝ շարժելով երկրի հիմքերը և Հիսուս Քրիստոսի միջոցով այնպեղից դուրս կորզում մահվան դատապարտվածներին՝ վերստին կյանք ու անմահություն շնորհելով: Հարությունը Ավետարանիչների համար չի մնում լոկ պարմական մի դրսևորում: Նրանց ուշադրությունը բեռված է նաև Հարությանը նախոր-

լրում է այդ սահմանափակությունը և կարողանում է ցանկացած պահին փինգերթի ցանկացած անկյունում իր իրական ենթկայությունն ապահովել: Սա այն իրողությունն է, որին հավաքում են աշխարհի համայն քրիստոնյաներն ինչպես նրեկ, այնպես էլ այսօր, նաև հավաքալու են վաղը:

Սակայն ընդամենը Քրիստոսի Հարությանն ընդունելը, հավաքալը, հասկանալը, թե ի՞նչ, հազար ինը հարյուր յոթանասուն մեկ տարի առաջ այդպիսի դեպք է պատահել, բավական չէ ճշմարիտ քրիստոնյա կոչվելու համար, քանզի Ավետարանի խոսքերով իսկ ասած, դեները նույնպես հավաքում են, բայց նրանք այդ հավաքքով չեն փրկվում:

Ըստ այդմ, որևէ մեկն իրավունք չունի մտածել և զարմանալ, թե ինչպես Հուդան, որ առաքյալներից մեկն էր, ընդունակ եղավ մատենելու իր Փրկչին, թե ինչպես այդ ամբողջը, որին նրեք տարի քարոզել էր Քրիստոս, բռնկել էր, անդամալուծների ամոռնություն էր փվել, կույրերին՝ քննողություն, համբերին՝ խոսկոտ ունակություն, կարողացավ ըմբոստանալ և բացականցել Պիղատոսի առջև, թե՛ «*Ի խաչ հասն գղա*»: Նույնքան նաև զարմանալի պնդք չէ համարել, որ առաքյալները թողնեցին ու փախան:

Այդ իրողություններն այսօր էլ յուրաքանչյուրին համար իրական ու ներկա կարող են լինել, քանզի եթե մենք, առօրյա նյութականի նրեից ընկած, մեր ժամանակի մի փոքր մասը չենք նվիրաբերում՝ քրեակոտ Քրիստոսի Հրաշափառ Հարության այս Ավետիսը, այլ շահադիտական նպատակներով մամոնա ենք դիզում, հեղեղաբար մենք նույնպես կամակից ենք լինում Հուդա իսկարիովաքոտ, որը երեսուն արծաթի համար մատենց իր Տիրոջը:

Եթե մենք շարունակում ենք մնալ որպես ամբարտապան ու գոռոզ արարածներ, չենք ցանկանում քննել այն լսվել ու բարին, որ անթեղված են մարդկային հոգում և, ի տես բարության, մեր մեջ չարություն ու նախանձ է ձևվում, մենք նույնպես կամակից ենք այն ամբողջին, որ գոռոմ էր. «*Ի խաչ հասն գղա*» (Մարկ. ԺԵ 13):

Եթե շարունակում ենք մեր մեջ պահել և չենք հրաժարվում մեր կրքերից և աղտեղի գործերից, որոնցով մարդն իրապես մնում է սոսկ մարդ, ուրեմն մենք դնեն չենք լսել Քրիստոսի Հարության Ավետիսը, և մեր հոգիներում Քրիստոս դնեն խաչված է:

Եթե մենք մեր սրտերի վրա դրել ենք ազնվի ծանր մի վեմ, քան Քրիստոսի գերեզմանի վրա դրվածն էր, և որն ուրիշ բան չէ, եթե ոչ՝ «մեղք» կոչված այն իրողությունը, որն ախտահարել է մեզ և ձեզ բոլորիդ, եթե դեն չենք նկատում մեր սրտի վրայից այս վեմը, ուրեմն մեր հոգիներում Քրիստոս դնեն թաղված է:

Սիրելիներ, ճրագալույցի այս Սուրբ Պատարագի ժամանակ ուրիշ բան չենք անելու մենք, եթե ոչ գոնե այժմ, գոնե այս պահին մեր հոգիներից ենք զգալ վավերականությունը Քրիստոսի Հրաշափառ Հարության, դառնալ իրական աշակերտներ ու առաքյալներ, նաև նախանձախնդիր քարոզիչներ:

Այլ կողմ գլորենք յուրաքանչյուրին սրտին դրված մեղքի ծանր վեմը, որպեսզի իրոք մեր հոգիներից ենք Քրիստոս Հարություն առնի Հրաշափառ Ավետիսով: Որպեսզի այսօրվից հեռանալով, գնալով մեր օջախները՝ իրոք, ամենայն անկեղծությամբ և ամենայն համոզվածությամբ, այլ ոչ թե սոսկ ազգային կամ կրոնական օրենքին տուրք տալով, մեկն մյուսին ողջունենք՝ ասելով, «*Քրիստոս յարեալ ի մեռելոց*», և ըստ արժանվույն ունկնդիրը լինենք «*Օրինալ է յարութիւնը Քրիստոսի*» օրինաբեր պատասխանին:

Ուրեմն, ականջալուր լինենք Աստվածային ձայնին, որ հրավիրում է մեռելությունից դեպի վերածնություն, դեպի՝ հարուցալ կյանքը, *ամեն*:

Տ. ԱՍՈՂԻԿ ԲԵՏԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԲԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԵՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԶԱՏԿԻ ՄԵՌԵԼՈՅԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 ապրիլի 2004 թ.)

Սիրելի բույրեր և եղբայրներ,

Նախքան մեր խորհրդածությունները, որ պիտի ներկայացնենք ձեզ, ցանկանում ենք մեր հոգու և սրբի շնորհակալությունը հայտնել Մայր Տաճարի Լուսարարապետությանը, որ բարեպալական առիթ շնորհեց մեզ այսօր՝ նրկար տարիների մեր նրազանքը իրականացած տեսնելու՝ Սուրբ ու Անմահ Պապարագ մարտիկներով Ամենայն Հայոց Մայր Տաճարում:

«Ակնկալություն քրիստոնեից՝

յարտություն մեռելոց»:

(Տերությունանոս)

«Յանուն Հոր և Որդու և Հոգույն Սրբոյ. ամեն»:

Ահա այսպիսի վկայություն է տալիս երանելի Տերությունանոս իր գրվածքներից մեկում, և սա իբրև հիմք ունի աստվածաշնչական հեղինակա ճշմարտությունը, որ է՝ առանց հարության հավատքի ընդունայն է քրիստոնեական վարդապետությունը և ընդունայն է քրիստոնեությունն ընդհանրապես (Ա Կորնթ. ԺԵ 14-17), որովհետև եթե քրիստոնեության Հիմնադիրը՝ մեր Տերը գերեզմանված մնար և հարություն չատներ, ապա քրիստոնեությունը չէր լինի կենդանի ու կենդանարար հավատք, այլ սոսկ կսահմանափակվեր իբրև բարոյական մի ուղղություն, բարոյական պատգամների մի ամբողջություն, բայց երբեք մարդու առջև չէր բացի հանդերձալի դռները, անկալ մարդուն չէր վերանորոգի և չէր վերադարձնի կորսված անմահության շնորհը, որն աստվածաստեղծ աղամորդու բնութենական անկապելի հատկանիշն էր:

Սակայն բանասերկու թշնամու պատրանքով մարդը ոչ միայն խաբվում է, այլև աստվածային շատ ու շատ պարզենների հետ կորցնում նաև իր այդ հատկությունը: Եվ երկինքն ու երկիրն իր անբարբառ լեզվով, որպես վկան տիեզերական այդ ողբերգության, հիշավի, այսպես արձանագրեց մարդկային պատմագրքի առաջին էջում. «Ո՛վ մարդ արարած, դու, որ թո Արարչի պատկերն ու նմանությունն ունեիր և թագն ու պսակն էիր արարչագործության, այժմ արդեն հակապատկերն ես թո Արարչի, բանգի երբ դրախտում սայթաքեցիր և զեղխին բախվեցիր՝ կորցրեցիր թո անկեղծն և զրկվեցիր անմահության գոհարից»:

Սակայն Արարիչը թույլ չտվեց, որ Իր ստեղծագործության թագն ու պսակն ակնագորկ մնար, ուստիև աշխարհ առաքեց Իր Միածին Որդուն, և Բանն Աստված մարդեղացավ և Իր մարդեղության տնօրինություններով՝ քար առ քար վերադարձրեց արարչագործության

թուզ ու պսակի կտրված գոհարեղենը և երան վերակերպեց մի այնպիսի շքեղությամբ, որն անպարմնելի է ու անճառելի:

Սիրելիներ, չեմ ցանկանում խոսքս ներկարել, քանի որ արդեն երկու օր է, ինչ բացառություն ու բարոգվում է հրաշալիառ հարության խորհուրդը, բայց կցանկայի անդրադառնալ մի կարևոր հանգամանքի, որ եթե քրիստոնյաներիս անկեպալությունը մեռելների հարությանն է, ուրեմն մեռյալները, որ, ավելի ճիշտ, ենթեցյալներ են, անգո չեն, և կամ անգագ վիճակում չեն և ոչ էլ անհաղորդ են մեզ: Նրանք կենդանի են և իբրև հաղթական Եկեղեցու անդամներ մեզ՝ զինվորյալ Եկեղեցու մարտիկներին են միացած և մեզ հետ հոգևոր հաղորդակցության մեջ են: Եվ նույնիսկ նրանցից շատերը Տիրոջից իրենց տրված բարեխոսության շնորհ ունեն և հանապազ բարեխոս են մեզ համար, որպեսզի այս կյանքում եղբեք ու երրեք չնահանջենք մեր հավատքից՝ բազմաթիվ փորձությունների պարճառով, այլ, ինչպես իրենք, քաջարի պատերազմ մղենք, մեր հավատքը պահենք և մեր աչքերն ի Տեր փակենք հարության հավատքով, հույսով և անկեպալությամբ:

Սիրելի քույրեր և եղբայրներ, այս կյանքում գրեթե ոչ ոք իր պարտքը լիովին չի կարողանում հատուցել, հեղափոխական մեծավ մասամբ քրիստոնյան հովիտից դուրս ենք ելնում որպես պարտապաններ: Ահա և մեր ենթեցյալներից շատերը, վստահաբար, մեզանից բաժանվեցին անպարտապահ իրենց պարտքերը չտվեցին և այս աշխարհից որպես պարտառուներ հեռացան: Եվ բնական է ու արդար, որ երանց պարտքերի վճարման պարտականությունը փոխանցվեց մեզ՝ ողջերին: Ուստի մեր Առաքելական և Սուրբ Եկեղեցին իբրև հավատքի վարդապետության ճշմարտություն համարում, ընդունում և դավանում է վասն ենթեցյալների կատարվող աղոթքը: Եվ այս անհիմն ճշմարտություն չէ: Սրա հիմքն Աստվածաշունչն է՝ մարդն ու, որտեղ բազմաթիվ վկայություններ կան, որ արդարների աղոթքը խիստ օգտակար է ոչ միայն ողջերի համար, այլև ենթեցյալների:

Այս պահին ցանկանում ենք հիշատակել այդ վկայություններից սոսկ մեկը՝ արձանագրված Մակաբայեցիների երկրորդ գրքի մեջ: Այնտեղ ասվում է, որ Հուդա Մակաբայեցին «...չորս սաւրեր արծաթ հաւաքեց և տվեց, որ տանեն, Երուսաղեմում գոհեր մատուցեն կատարված մեղքերի համար: Դա խիստ իմաստուն բայլ էր, որովհետև ինչ որ անում էր, մեռելների հարության մասին մտախոգվելով էր անում: Եթե կատարեազմում ընկածների հարության անկեպալություն չունենար, գուր կլիներ մեռելների համար աղոթք մատուցելը» (Բ Մակար. ԺԲ 43-44):

Ներնապես, սիրելի հավատացյալներ, մենք, որ հավատում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի հրաշալիառ հարությանը և նաև քրիստոսականների՝ մեզանից յուրաքանչյուրի հարությանը, չպիտի դադարենք ոչ միայն մեզ համար աղոթելուց, ոչ միայն մեր անձերի համար ողորմության գործեր անելուց, այլև նույնը պիտի կատարենք հանուն մեր ենթեցյալ հարազատների, որովհետև նրանք իրենց ժամանակավոր կայաններում, բաժանված իրենց մամիկներից, հոգավ սպասում են, թե իրենց կենսունակ հարազատները, ողջ արյունակիցներն ու մտերիմներն ինչ բարիք պիտի գործեն իրենց համար:

Վստահ եղեք, սիրելիներ, որ մեր կատարած յուրաքանչյուր աղոթք, յուրաքանչյուր բարի գործ աննպատակ ու անպարտապահ չի մնալու: Այո, ճշմարիտ է, որ մենք չգիտենք, մեր ենթեցյալները մեր աղոթքներով Արքայությունը կժառանգեն, թե՛ ոչ, քանզի դրա իմա-

գումը մեզ տրված չէ: Բայց մենք տեղյակ ենք Աստվածաշունչ մատչանից և գիտենք մեր Ամենասեր Աստծո վերաբերմունքի մասին, որ Տերն արտահայտեց Իր սիրելի ծառա Արդամենին՝ ասելով, որ մեղսալից քաղաքները չի կործանի, եթե այնտեղ լույս տալիս արդարներ գտնվեն (Իմմր. ԾՆՆդ. ԺԸ 32): Անավասիկ սուրբգրային այս վկայությունը մեզ համար գրեթե (Իմմր. ԾՆՆդ. ԺԸ 32): Անավասիկ սուրբգրային այս վկայությունը մեզ համար սթափելի երաշխիք է՝ հավատարմի աղոթք խնկարկելու և թարեզործելու վասն մեր նեղեցելու, որոնք, անշուշտ, կունենան արդարության գեթ տասը գործ, որի համար Անաչառ Դավարի ողորմությանն ու բարեգթությանը կարժանանան:

Արդ, այս համոզմունքով և այս հավատքով՝ եկեք մեկ սիրտ, մեկ հոգի և մեկ շունչ դարձած աղոթենք մեր երկնավոր Հորը, որ ընդունելի անի մեր հանապազօրյա պարարագեղությունը և քաղցր հայացքով նայի մեր նեղեցյալների հոգիներին, այցելի նրանց ու երկնի անանց արթալությանն արժանացնի:

Իսկ մեզ, որ տակավին պատերազմի մեջ ենք, թող Տերը խաղաղություն շնորհի, իմաստություն պարգևի, որպեսզի ճանաչելով ճշմարտությունը՝ հեղափոխվենք իրենց դրան, և մենք էլ մեր հերթին արժանի լինենք Տիրոջ Արթալությանը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն յարուցեալ Քրիստոսն մերոյ եղիցին ընդ մեզ ամենեւեմ ամեն ամէն»:

**Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԿՐԿՆԱԶԱՏԿԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(18 ապրիլի 2004 թ.)

*«Ես իսկ եմ հարություն և կյանք ով հավատում է
ինձ, թույլտր և մեռնի, կապրի. և ով կեղտանի է ու
ինձ հավատում է հավիպյալն չի մեռնի»:
(Նովի. ԺԱ 25-26)*

Սիրելի հավաքացյալ ժողովուրդ,

Նովիսենն Ավետարանի այս խոսքերը հոգևոր ուրախություն պարճառելով մեզ՝ կրկին հավատում են, որ Տիսուս Քրիստոս երևել և այսօր նույն է և հավիպյալն մեզ հետ է։ և տալիս մոլոր և մարերին է նրանց, ովքեր Նրա մեջ և Նրա միջոցով փնտրում են հավիպել-նական կյանք, ովքեր հավատում են Քրիստոսի Հրաշափառ Հարության խորհրդին։

Սիրելի հավաքացյալ ժողովուրդ, մեր Եկեղեցու հայրերն ինչպես Զատիկին նախորդող իխտոս օրերին ապրել են տրամություն, ինչպես նաև ապաշխարության և ինքնաքննության շրջան սահմանել նախապատրաստվելու համար քրիստոնեական ամենամեծ տոնին՝ Հա-րությանը, այնպես էլ իմաստուն կերպով Զատիկյոց հեկո նույնպես իխտոս օր են հաստատել իրեն հոգևոր ուրախության շրջան։

Այո՛, մեզանում պիտի շարունակվի Քրիստոսի հարության հոգևոր ցնծությունը, պիտի նորոգվենք հույսով և հավաքով, պիտի բաշխվեմք, որ Հարուցյալին կերպարանակից լինելու հնարավորությունն ունենանք՝ անընդհատ լույսի ճանապարհով բայելով, հոգևապես սովելի մարդկելով և կատարելագործվելով։ Հարությանը հաջորդող այս իխտոս օրերը մեր Եկեղեցվո Տոնացույցում անվանվում են Հինունք կամ Հինանց օրեր։

Ս. Զատիկին անմիջապես հաջորդող կիրակին կոչվում է Նոր Կիրակի կամ Կրկնագա-րիկ։ Մենք այսօր բոլորս Քրիստոսի Հրաշափառ Հարության ուրախությունը պիտի ունե-նանք մեր հոգիներում, պիտի կրկնվի մեր ցնծությունը, բանգի Տիսուսի հարությունն առա-ջին հերթին խորհրդանշում է նոր կյանքը՝ կենսական բարենորոգություն, նոր մտածումներ, հավաքի մեջ տալիս իմաստաբանությանը։ Պողոս առաքյալը հորդորում է հավաքացյալ-ներին. «Այժմ դուք ես թափանց աղբյուրը՝ քարկություն, զայրույթ, չարություն, հայիտյու-թյուն և խնդկարակություն ձեր ընդաներից» (Կող. Գ. 8)։

Սիրելի հավաքացյալներ, դուք ես մի՛ սրեք, հասնե՛ք ձեր վրայից ինչ մարդուն՝ իր գործնե-րով, և հագեք նորը, այն, որ նորոգված է գիտությամբ ըստ Արարչի պատկերի։ Այո՛, Տիսուս է՝ մարդկային բանական կյանքի գերագույն Վերանորոգիչը, հենց այսօրվա կիրակին վե-րանորոգության խորհուրդն ունի, Կրկնագարիկ, որովհետև այս կիրակի ես պիտի ցնծանք հարության ուրախությամբ, պիտի ըմբռնենք այն մաքրությունը, որ տրվում է Եկեղեցում Քրիստոսի Ս. Հարությունից հետո։ Բնությունը ես ամեն զարեան նորոգվում է։ Սա զար-գացման առաջընթացի բարենորոգության նախապայման է, մեր զաղափարները, համոզ-մունքները, սերը, հավաքը և այն ամենը, որոնք չեն երևում, սակայն կազմում են մեր ներ-քին կյանքը։ Ներքին մարդը հաճախ կարող է նոր լյացքերի, նոր ավիշի, նոր արևի։

«Հոուս վանքը ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականված է խաբեպարտի ցանկություններով, նորոգվեցեք ձեր մերթով և հոգով և հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծո՝ արդարությանը և ճշմարիտ սրբությանը» (Եփես. Դ 22-24): Հոուս Ինքը նորոգին է ու նոր կյանքի խորհրդանշելը: Հոուս վերանորոգեց Հին Ուխտը, որ այլևս նոր օրերի հեղ ղժվար էր քայլում. Աստված Իր նպատակների մասին մարդու հեղ խոսեց նոր օրերներով, նոր խոսքով: Հոուս նորացրեց աստվածային շնորհաշար պատ- ժառանգը, հաստատեց Նոր ուխտ՝ նոր քարոզությամբ, այն կնքեց Իր իսկ արյունով: Հոուս նորոգեց հին պատվիրանները և համայն մարդկությանը քարոզեց նոր վարդապետություն՝ շաղկապված աստվածային սիրով և հարության կենսահասարակ խորհրդով:

Սիրելի թույրեր և եղբայրներ, այսօր բոլորիս հոգիներում ճառագում է հարության խոր- հուրդը, ամենաառաջ աստվածային լույսը, իսկ մեր հայրենի երկրում զարուն է շնչում բա- ռի սպասումներով և հուսանորոգ արարումներով: Հարուցյալ Տիրոջ կենդանաբար երկա- յությանը մենք պետք է մեր կյանքից հեռու վանենք անհանգստացնող տագնապները, վա- ռանումները, պիտի նորոգվենք վերանորոգության մաքրամաքուր խորհրդով, ամբողջ կյանքենք մեր արմատներին, մեր Եկեղեցուն և միշտ հիշենք, որ Քրիստոս Իր հարությանը մեզ ապացուցեց, որ խաղվածին մահ չկա:

Ուրեմն անսահման նվիրումով երկրպագենք մեռյալներից Միակին, Ում վրա մահն իշ- խանություն չկարողացավ ունենալ, երկրպագենք ու ցնծանք, որ Հիսուս մեզ համար լուսա- վոր ճանապարհ է հարթել, որ մեզ կրանի փառագեղի հավիտենական կյանք, նոր կյանք, լույսի արքայություն: Հայրության մեջ նույնքան բացահայտ եղվում է այս մասին. «Եվ գահի վրա նստողն ինձ ասաց. - Ահա վասիկ ամեն բան նոր եմ դարձնում» (Հայտ. ԻԾ 5):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, ուրեմն հոգեպնդվենք այս կիրակի՝ Կրկնազարկի մեծ խորհրդով, ցնծանք հարության ուրախությամբ և ամեն ակնթարթ հիշենք Տիրոջ խոր- հուրդները և մեր հարաբեր աղոթքների մեջ հիշենք, որ Նա է կյանքը և միայն Նա պետք է մեզ տանի լույսի ճանապարհով և բարեխոս լինի Աստծո առաջ մեր յուրաքանչյուր զան- ցանքի համար: Ու հաստատ համոզվենք, որ բազումողորմ Աստված ներելու է մեր բոլոր մեղքերը, մաքրելու է մեզ, նորոգելու է և ամրապնդելու մեր հավատը:

Ուրեմն ուրախանանք այսօր, ուրախանանք Քրիստոսով, հարուցյալ Տիրոջը դավա- նենք, չկորցնենք մեր հույսը, հավատը և նորոգվելու մշտանորոգ նոսաղը:

Ուզում եմ ավարտել Հիսուսի հոգեկորոզից խոսքերով. «Թող ձեր սրտերը չխռովվեն, հավատացեք Աստծուն, հավատացեք և ինձ: Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան, թե չէ ես ձեզ կասեի, թե գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ հա- մար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուր ևս այնտեղ լինեք: Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը» (Հովհ. ԺՂ 1-4):

Եկեք այս համարեղ աղոթքի հանդիսավոր պահին, սիրելի հավատացյալներ, մեր սրտերի ցանկությունները և հոգու աղոթքներն առաքենք առ Աստված և ցանկանք, որ Տերը մեր սիրելի Վեհափառ Հայրապետին քաջառողջ և երկար կյանք պարգևի՝ ի մխիթարու- լուն հայ հավատացյալ ժողովրդի ի Հայաստան, Ի Արցախ և ի Սփյուռք աշխարհի: Եվ թող հարության աստվածային լույսը միշտ վառ մնա Լուսավորչի մշտավառ կանթեղի նման հայ հոգիներում, որպեսզի միշտ ամուր և անսասան մնա Հայ Առաքելական Եկեղեցին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածին իր հավատացյալ բարեպաշտ ժողովրդով այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Տ. ՄՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 89-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(24 ապրիլի 2004 թ.)

*«Որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա
բայց վա՛յ մարդոյն այնովի՝ յոյր ձեռն որդին մարդոյ
մարմնիցի լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն»:*

*«Մարդոյ Որդին կգնա այս աշխարհից, ինչպես նրա
մասին գրված է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով
կմարմնայի մարդոյ Որդին: Այնի լաւ կլինէր նրա
համար, եթէ այդ մարդը ծնված չլիներ»:
(Մատթ. ԻԶ 24)*

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Արբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ բույրեր և եղբայրներ.

Հայոց Մեծ եղեռնի ապրիլեւանջոյսյան հիշատակության այս օրը Մատթեոսի Ավետարանի ԻԶ գլխի 24-րդ համարում արձանագրված այս խոսքերն են այսօր խոսում մեր սրբերին, խոսքեր, որոնք Քրիստոս ասաց, երբ Իր աշակերտների հետ Վերնադարձը վերջին Շնորհքին էր նստած: Քրիստոս սովորաբար Իր մասին արտահայտվում էր երրորդ դեմքով՝ իբրև Անձ, Որ կողքից է դիտում և շարժ հաճախ Ինքն Իրեն անվանում էր Մարդու Որդի: Եվ ահա այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ Ինքը խոսելով Իր ամաքելության մասին, աշակերտներին մեկնելով՝ բացատրելով փակավին սպասվելիք բաները՝ հաստատում է, որ Մարդու Որդին պիտի մեկնի այս աշխարհից, պիտի մահանա, բայց վա՛յ այն անձին, որի միջոցով, որի դավադիր ձեռքով Ինքը պիտի մեկնի այս աշխարհից: Այդպիսի մարդու համար լավ կլիներ, որ նա ծնված չլիներ:

Բնական է, որ բոլոր մարդիկս այնպես, ինչպես Ս. Գրոց մեջ արձանագրված է, մեր կյանքերն անցկացնում ենք ինչպես դաշտի խոտերը և դաշտի բույսերը: Այդուհանդերձ ենք որոշ ժամանակահատված և դրանից հետո թառամելով՝ մեկնում այս աշխարհից: Ահա յուրաքանչյուրս մեզ հասանելիք կյանքը այս աշխարհի մեջ ապրելով, վաստակելով, ծառայելով, տրտմելով՝ այլևս դադարում ենք գոյություն ունենալ այս աշխարհում: Բայց վա՛յ այն անձերին, ովքեր որ բռնությամբ, վայ այն անձերին, ովքեր որ բռնադատությամբ մարդկանց հրաժարեցնում են իրենց կյանքից:

Եվ ահա այսօր վերստին այն օրն է, երբ յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր քրիստոնյա, բաղաժանկիր աշխարհի յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ձայնը պիտի բարձրացնի՝ դա-

փապարտելու այն ռճիրը, որի պատճառով շուրջ 89 փարիսներ առաջ մեկ և կես միլիոն մեր ազգակիցներ բռնությամբ զրկվեցին Աստուծոց պարգևաված իրենց կյանքերից: Իրապես այդ մարդիկ 89 փարիսներ առաջ ապրում լինելով՝ փակավիճ ունեւն երազներ, ունեւն իղձեր, ունեւն ժամանակ՝ Աստուծոց իրենց հարկացված, փակավիճ ապրելու: Բայց, այնուհանդերձ, նեւն ժամանակ՝ Աստուծոց իրենց հարկացված, միևնույն է, պետք է մեկնեւն այս աշխարհից: Բայց վա՛յ մարդիկ, լինելով մահկանացուներ, միևնույն է, պետք է մեկնեւն այս աշխարհից: Բայց վա՛յ այն անձերին, վա՛յ այն երկրին ու ժողովրդին, որը բռնությամբ, կեղեքումով, դաժանաբար զրկեց մեր ժողովրդի զավակներին ապրելու և սերնդագործելու իրավունքից:

Անցել են 89 փարիսներ Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծազույն այդ նեղեռնագործությունները հավաքաբար ամփոփող օրվաևից՝ ապրիլ 24-ից, երբ ֆիզիկապես, ուղղակիորեն ֆիզիկապես բնաջնջվեցին շուրջ մեկ և կես միլիոն հայեր՝ մասունքներ, երիտասարդներ և ծերեր, սպանվեցին անմեղ ու անզեն մարդիկ: Եվ ինչպես մարդիկ համար՝ Նրա բարերարություններն ուրացած ապերախ ու զազազած ամբոխը գոչում էր, թե՛ «Խաչը հանիր, խաչը հանիր Դրան» (Հովհ. ԺԹ-6), նույնպես և բազմաթիվ կոչվող աշխարհը լռեւայն, անձայն և անխոս թույլ փվեց ռճիրը և սպանող մի ժողովրդի նկատմամբ, որը բազում ծառայություններ ուներ քաղաքակրթություններ փնտած ժողովուրդների կյանքում և ընդհանրապես քաղաքակրթություն ձևավորելու առաքելության մեջ, մի ժողովուրդ, որ եթե նրբեք մարտաշունչ ու ռազմափնեք է նեղել, իր գրեւով ու դպրությամբ, իր մարտաներով ու մագաղաթներով է նեղել:

«Մարդու Որդին պիտի մեկնի, բայց վա՛յ նրան, ում միջոցով, ում ձեռքով Ինքը պիտի մարտնչի». անհ վերստին եք հիշում այդ խոսքը, վերստին հիշում եք Հայոց Եղեռնի անմեղ գոհերին և վերստին մեր աղոթքը բարձրացնում նրանց հոգիներին համար: Եղեռնի անմեղ գոհերը, հարկավ, փարիսներ եմք յուրաքանչյուրը, իր ժամանակի հասնելուն պես, պիտի մեկնեւն այս աշխարհից, ինչպես մեռան, ինչպես իրենց վախճանը գտան նեղեռնից մագաղաթում շար ու շար հայեր՝ ցավ ու կսկիծ, հայրենայաց կարող ու փնեւանք հոգիներում: Բայց իրապես և վերստին վա՛յ և վա՛յ այն անձերին, որոնց ձեռքով մեռան այդ մարդիկ, նահապետվեցին, սպանվեցին: Եվ իսկապես, լավ կլինեւն, որ նրանք, ձեւված չլինեւն և չմահանեւն ձեռք ու զավակ կորցրած մի ողջ ժողովրդի նեղվեւն և անեւն, ձեւված չլինեւն և չդառնային խարան մարդկության խղճին:

Միեւնի քույրեր և եղբայրներ, այսօր վերստին վերապրումի օրն է սոսկալի այդ արհավիրքի: Հայոց Հայրապետը նեղեռնականների ջքախմբով և հայրենի մեր երկրի պարական ավազանին, Հանրապետության նախագահի գլխավորությամբ, այցելում են Շիժնոնակաբերդ, ուխտավորները լինելով նեղեռնի անմեղ գոհերի շիրիմներին:

Մենք ազգովի՝ ողջ ժողովրդով ժամադրության եք այսօր Ապրիլյան Լաւապակներին հեւր, գլուխ եք խոնարհում նրանց հիշատակին, Հոգեհանգստյան պաշտամունք եք մարտում և վերստին ու վերստին հիշում խոդխոդված Լաւապակներին, առնանգված ու անարգված կույսերին, գլխավորված մարավորականներին, յաթաղանված ալեգարդ ձերունիներին ու մայրերին: Հիշում եք եւս այդ դժնի ժամանակների ժամանակակից Գարեգին Առաջին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Հովսեփյանի նկարագրությունը փարագրված հայերի մասին, որոնք Արեւմտյան Հայաստանից հրաշքով փրկվեցին և մի կերպ հասան Էջմիածին, Արարապյան աշխարհ:

«Երասխի ափերից մինչև Էջմիածին,- գրում է Հովսեփյան Կաթողիկոսը,- պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անկյունի ու ճամբարանի ռակի և պարտեզի մեջ, պարիսպների տակ փռված Լիև մուրավորապես 150 000 փախստականներ: Ծանապարհի հոգ-նածությունը, սննդի պակասությունը, համաճարակները իրենց ավերն էին գործում: Տարածվել էր ժանտախտը: Մարդիկ փոսեր Լիև փորում արդեն մահացածներին թաղելու համար»: Ահա այսպիսին էր դաժան իրողությունը:

Եվ այս ամենն ինչպե՞ս արդյոք եղևերգու չդարձնել Սիամանթոյին և չընդվզեցներ ճակատագրի դեմ, ինչպե՞ս պախտարակյ չլրար մարդկային արդարությունը և ինչպե՞ս չխենթացներ Կոմիտաս Վարդապետին, և արդյոք ինչպե՞ս մեր ողջ ժողովրդի մայրը կոչված լինելու այս հասարակություն իր պարիսպներից ներս չկրել հիշատակներ, չկրել մասունքներ այդ անմեղ զոհերի:

Տեսե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. սրբազան զաղթական հայրդղիների արյունով և մասունքներով՝ հիշատակներ ցնդասպանության: Ո՛ր կողմ քայլե՛ք՝ մասունք և հուշարձան-Կաթնաղբյուր՝ Լեոնոս վերապրած հայի արցունքով, խաչքարերի համաձուլվածք այս Տաճարի մոտ: Հուշարձաններից առավել վկայարաններ են սրանք, ուր խոսում են նահապակների հոգիները, վկայարան, որ ուխտի ենք կանգնելու և ուխտ ենք կնքելու Աստծո հետ, ուխտ՝ հավատարիմ մնալու նահապակների հիշատակին, ուխտ ենք կնքելու՝ մեր կյանքով, սրնդազորձ մեր աշխատանքով հաստատելու մեր հավատարմությունը նրանց սուրբ հիշատակին:

Լացն ու ողորդ չէ, սակայն, մեր ճամփան, աշխարհին մենք լացով, թղթե մեր շերտիով հեղաբրբիտ չենք, աշխարհին հեղաբրբիտ չենք մեր՝ իրենց եկամտամար արված նվիրվածության հավատարմագրմաներով և ոչ էլ ինքնասիրությունից ավելի՝ այլասիրությամբ, այսինքն՝ ինքնամեղձ այլասիրությամբ: Զրիսպոնությունը դա չէ, թրիսպոնությունն ինքնությունը հասարակորդ այլասիրությունն է: Այս Ս. Եկեղեցին հարյուր երեսուներկու իր Հայրապետներով երբեք ու երբեք պարտեզում փող չհնչեցրեց և չի հնչեցնելու ո՛չ այլամեղմության և ո՛չ արկություն՝ որոմներ սերմանելով իր հավատարմագրների մեջ: Եթե մի ծայն, մի պարզամ հնչել է այս Ս. Սեղանից և այս սուրբ կամարների ներքո, եղև է կոչ միաբանության, եղև է հրավեր խաղաղության:

Եվ այսօր, Ապրիլյան նահապակների ոգևոգման այս օրը, երբեք և հրավերն այդ. հրավեր հավատարմության նահապակների հիշատակին, կոչ միաբանության, հրավեր դարձի դեպի արմատները: «Յանուն Յիսուսի -Զրիսպոսի ամենայն ծուր կրկնեսցի» (Փյոյպ. Բ 10), - ասում է առաքյալը, Հիսուս -Զրիսպոսի անվան առջև թողր թող ծուրկի կզան: Խաղաղություն է Հիսուսի անունը, սեր է Նրա անունը, միաբանություն և մանավանդ կյանք է Հիսուսի անունը, և թողոր ծուր պիտի դենք միաբանության, սիրո և կյանքի փաճարներում, որպեսզի ապրենք, ապրենք հիշատակով նահապակների:

Պիտի աղոթենք նրանց աղոթքի վայրերում, պիտի սիրենք այնպես, ինչպես իրենք սիրեցին, պիտի նվիրվենք այնպես, ինչպես իրենք նվիրվեցին իրենց ազգային արժանքներին և արժանապարկությանը: Այլոց ականակուր պարմունքները մեր մարմնի բարեճն չեն, այլոց շքեղ դրակներն անհարմար են մեզ, մեր համար պարեզուր մեզ առավել սրտամուր է, դրանով ենք մենք հեղաբրբիտ այս աշխարհին, քանի որ մերն է այդ պարեզուր:

Մեր տունը դռնակ չէ, մեր տունը հյուրանոց է, խրճիթ, բայց մերն է, մերը, ուր ապրեցին, գործեցին և որին նվիրվեցին մեր նահապարակները: Մենք մեր դեմքով, մեր գույնով, մեր փնով ու փայտով ենք հեփաբրեյի աշխարհին: Եվ աշխարհի բազմազանության մեջ այդ ատանձ-նահապարակություններով է, որ մեզ մարդիկ և հանրությունները ճանաչելու են:

Արդ, սիրելի ըույրեր և եղբայրներ, սիրենք մեր տունը, մեր հայրենիքը, տունը, ուր ապրեցին Ապրիլյան նահապարակները: Եթե ոչ լալով, գեթ ցավով եղևոնի, որ ընդհանրական է միավորվեց: Ապրիլյան նահապարակների մահվանից հետո կյանքի 89-րդ այս հանգրվանին վերստին հիշենք, որ ապրում են նրանք, ովքեր պարտասուր են մեռելու, և մեռնում են նրանք, ովքեր իրենց ապրած ժամանակում արդեն իսկ մահացած են: Մահն ամենասարսափելին չէ, որ պիտի մարդու որդիների հետ պապահի, ամենից սարսափելին և ամենից երկյուղալին դա մոռացումն է, մոխրված, չօգտագործված կյանքը: Մոռացումով մոռացվում է ոչ միայն մոռացվածը, այլ նաև՝ մոռացողը:

Արդ, ապրիլ 24-ի նահապարակների հիշատակով վերստին հիշենք, որ ապրելու համար անհրաժեշտ է սովորել մեռնել, պարտավոր ենք հիշել, որ ընդհանուր շահի առջև պարտավոր ենք սովորել մոռանալ անձնական և հսական ցանկացած դրսևորում:

Ահա այս է, սիրելի ըույրեր և եղբայրներ, ապրիլ 24-ի խորհուրդը, խորհուրդ աղոթքի, խորհուրդ անդրադարձումի, խորհուրդ մտահայեցողության: Եվ այս հայեցողությամբ է, որ խնդրում ենք Տիրոջից, որ գթա Իր արարչական սիրով, ամենողորմ Իր սիրով Ապրիլյան անմեղ զոհերի հոգիները և նրանց կարգի Իր նրկնային նրանական լուսեղեն բարձունքներում:

Թող Տերը ամենագութ Իր ողորմությամբ հավիտենական Իր հարկերում լույսերի մեջ պահի և պահպանի մեր անմեղ նահապարակների հոգիները: Թող Տերը ուժ, կորով, վճռականություն պարգևի մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ զորացնելով ամենքիս մեջ կամքն ապրելու, զորացնելով ամենքիս մեջ կամքը՝ հիշելու և հավատարմություն դրսևորելու անմեղ նահապարակների հիշատակին, ապրելու և սրբազանություն, նվիրվելու և աշխատելու այնպես, ինչպես որ դա արեցին Ապրիլյան նահապարակները՝ Տիրոջից իրենց պարգևված կյանքի փարիկներին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(25 ապրիլի 2004 թ.)**

*«Ընդ անմարմնական քաղաքիսն
գ-Քրիստոս թագաւորն՝
Որ եկաւորի այսօր ի Սուրբ Եկեղեցի
Ամենայն ազինք գովեցեր
Եւ առաւել յարձր արարէր զՆա յաւիտիսն»:
(Շարակնոց)*

Սիրելի՛ քրիստոնյաներ,

Այսօր մեր Մայր Առաքելական Սուրբ Եկեղեցին, մեկ անգամ ևս հոգակելով մեր բոլորի Տեր և Փրկիչ Տիսուս Քրիստոսի հրաշալի Հարության փաստը, ոգեկոչում է հարությունակա Վերածնունդի շրջանի երրորդ, այսինքն՝ Ս. Զավակից հեփո երկրորդ կիրակին, որը կոչվում է «Աշխարհամատրան» կամ ժողովրդական իմաստավորմամբ՝ «Կանաչ կիրակի»:

Նախորդող կիրակին խորհրդանշում էր, որ Տիրոջ հարությանը սկզբնավորվում է նոր ու պայծառ կյանքը, նորոգյալ ու հուսադրող փայլերը, և այդ խորհրդի կրողը՝ «Նոր կերակի» կամ «Կրկնագարիկ» կոչվող լուսավոր օրն իր մեջ բովանդակում է մարդկային կյանքի վերանորոգության խորհուրդը:

Իսկ այսօր առավել ևս գիտակցելով վերանորոգումի կարևորությունն ու իրականությունը՝ հրավեր ենք ստանում միասնաբար Տիրոջն ընդառաջ գնալու, քանզի, ինչպես շարականագիրն է ասում, Քրիստոս Թագավորն այսօր Եկեղեցի եկավ վերանորոգյալ և հարության լույսով ողողված մեր հոգիներում բնակվելու համար:

Այո՛, սիրելի՛ հավատացյալներ, այսօր զարնանային այս գեղեցիկ (արեգակի շողերից ազդված) ձյարձակող բույսերի և ծաղիկների առինքնող բույրի ու հոտի պարուրմամբ մենք տոնախմբում ենք մեր տոնը, որ է՝ Քրիստոսի արյամբ սրբագործված Ս. Եկեղեցու տոնը, քանզի այսօր Քրիստոս Աստված ներկա է այսօր, այս նվիրական կամարների ներքո ու, մանավանդ, յուրաքանչյուրիս հոգու և մարմնի տաճարի մեջ: Ուշագրավ է այն փաստը, որ այս տոնը միայն մեզ՝ հայերիս է հատուկ, և որպես հաստատման հիմք են ծառայել երկու նվիրական իրողություններ.

Նախ, այսօր տոնն է չորրորդ դարում Մեծն Կոստանդիանոս կայսեր կողմից՝ Սուրբ Երկրում Քրիստոսի երկրային կյանքին առնչվող և փրկագործության իրականացման ընթացքի սրբագործյալ վայրերի՝ արդեն իսկ կառուցված եկեղեցիների՝ Սուրբ Մենեյան, Հարության, Համբարձման և Վերնափան, ավելի ճիշտ, թվարկված եկեղեցիների՝ Նավակատրիայի հիշատակությունն է այսօր: Պատմական վկայություններ կան, որ այս Նավակատրիայի

տարեդարձային հիշատակությունները երկար ժամանակ պահպանվել են Եկեղեցու մեջ և տարիներին ընթացքում ձուլվել եկեղեցական այս տոնախմբությունների հետ: Նավակալությանց, այսինքն՝ տաճարի բացման և օծման այս տոնն է, որ մեր մեջ «Աշխարհամատուր» անվանումով է պահպանվել և, ի վերջո, վերածվել բրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու փառաբանության տոնի:

Այսու՝ վերջինիս անմիջապես համակցված կարևորագույն հիշատակությունը Վերնատան՝ բրիստոնեական առաջին Եկեղեցու տոնն է, որը բոլոր բրիստոնյա եկեղեցիների նախադիպն ու նախօրինակն է, այսինքն՝ առաջին Աշխարհամատուրը: Մենք գիտենք, որ Վերնատունն էր այն սրբազան վայրը, որտեղ Քրիստոս իր աշակերտների հետ զարկական Վերջին Ընթրիքը կատարեց և հաստատեց Սուրբ Հաղորդության խորհուրդը: Այստեղ էր, որ առաքյալները Քրիստոսի Համարածումից հետո սովորություն ունեին հավաքվելու (Գործք Ա 13-14) ու արդեն նորադարձ բրիստոնյաների հետ հաղորդվելու և միասնական աղոթք անելու (Գործք Բ 42):

Սերևիններ, այսպիսով, «Աշխարհամատուր» անվանումը պարզաճուճ է առաջին երկու եկեղեցիներին, նախ՝ Ս. Հարության Տաճարին, որը, ըստ էության, համայն բրիստոնյա աշխարհի եկեղեցին էր, որտեղ այցելում են յազմաթիվ ուխտավորներ աշխարհի բոլոր կողմերից: Եվ առավելաբար այս րաօնմաստը լրացնում է Վերնատունը, որը, ամենայն իրավամամբ, համաշխարհային հանգամանք ունի, քանզի մեր Փրկիչ Հիսուսի կողմից՝ որպես եկեղեցի գործածված միակ վայրն է: Սա այն եկեղեցին է, որտեղ առաջին Ս. Պատարագը մատուցվեց Պատարագիչ և միաժամանակ Պատարագվող մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ հովիտներական Քահանայապետի կողմից:

Այս ամենի հետ մեկտեղ ալեհառու է նաև այն հանգամանքը, որ Վերնատան՝ առաջին եկեղեցու տոնը բնավ պատահական չի զրվել ինեց Հիևանց շրջանում, հետ՝ Հարության երկրորդ կիրակին: Անպայմանորեն գոյություն ունի իսկական կապակցություն: Այդ կապը տեսնում ենք այն իրողության մեջ, որ հարուցյալ Քրիստոսի երկու կարևոր ներումները, որոնք գրեթե ամբողջովին վերացրեցին ամեն փարակույս ու կասկած, որ ունեին առաքյալներն իրենց Ուսուցչի իրական հարության վերաբերյալ, տեղի ունեցան Վերնատանը:

Առաջին երեսմը տեղի ունեցավ Զարկյն երեկոյան, երբ Հիսուս խաղաղություն տալով՝ երեսց առաքյալներին և, հսպացույց իր հարության, երանց ցույց տվեց իր ձեռքերը և զեղադրախոց կողը: Այդ ժամանակ էր, որ Հիսուս, կրկնելով «խաղաղություն ձեզ» փրկարար խոսքերը, ավելացնում է, «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ուղարկում եմ ձեզ» (Հովհ. Ի 21), և ապա փչելով նրանց վրա՝ ավելացնում է. «Ամեն Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. Ի 22-23):

Այս դեպքին ներկա չէր Թովմաս առաքյալը, ով հետո գալով ու լսելով, բն Տերն է երեսցել, չի հավատում և ասում է, որ մինչև չտեսնի զամբրի նշանները Նրա ձեռքերի վրա և չդիպչի Նրա փրկախոց կողին, չի հավատա: Ու երբ հաջորդ կիրակյն Քրիստոս կրկին հայտնվում է նույն կերպով և նույն ողջույնի խոսքով, Թովմասը տեսավ, հավատարաց ու խոստովանեց, «Տեր իմ և Աստված իմ» (Հովհ. Ի 28): Այս պահին է, որ Հիսուս Փրկիչն արտասանում է հավաքին ամենանախնական դրսևորման բանաձևը. «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր. նրանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ. Ի 29):

Սիրելի՛ հավատացյալ բույրեր և եղբայրներ, ինչպես վերը նշեցինք, այսօր Եկեղեցու լրտես է, թեպետև չենք տեսել, բայց չմանավելու համար Թովմասին, պիտի առանց տեսնելու լիափազի հավատանք, որ իսկապես Քրիստոս չարչարվեց, յաջվեց և հարություն առավ մեզ համար, որպես Լույս ծագեց համալուսրած յաավարի մեջ:

Մեր մողովորող հետաքրքիր ընդոռում է: Եվս այս կիրակիին՝ այն անվանելով «Կանաչ կիրակի», ելակեր ունենալով զարնանային այս գեղեցիկ օրը, որը լեցուն է կանաչով՝ լինի դա ծառ, թուփ, թե ծաղիկ: Այս անվանումը երբեմն փորձում են բացատրել որպես գույր հեթանոսական ազդեցության մնացորդ, սակայն պետք է նշենք, որ բնության երևույթներով հոգեպես տպավորվելն ու ներշնչվելը նմանապես և թրիստոյային է հասու, որովհետև հեթանոսություն չէ՝ երբեք զարնան հոգեթով ու հոգեզրավ ներույթներով համակվելը կամ ուրախանալը: Այս ամենը հեթանոսություն կնկալվի միայն այն դեպքում, երբ կսկսենք արավել ու վեր ջարձրանալ այս ամենից:

Կանաչ կիրակին նման է բնության մեջ ծաղկող ու աճող կյանքին, որը կենդանություն ու թարմություն է տալիս աշխարհին և համայն մարդկությանը: Աշխարհամարտուն էլ որպես Հիսուս Քրիստոսի ցանամ սերմի առաջին կանաչ ծիլը՝ աճեց, ծլարձակեց, ծաղկեց, բազմացավ և դարձավ աշխարհում տարածված Եկեղեցին: Եվ, ի վերջո, Կանաչ կիրակին մեզ հիշեցնում է, որ կյանքը Հիսուս Քրիստոսով մշտադալար է, ինչպես թնությունն է մշտնջենական, նույնպես և կյանքը հարության հույսով մշտնջենական ու հարավար է:

Թեսլոնեյն երեկ, ապրիլի 24-ին, մենք հիշեցինք և ոգեկոչեցինք մեր բյուրավոր սահավակների հիշատակը, այսօր, սակայն, պիտի գոտեպնդվենք, որովհետև մենք գիտենք՝ մահով ամեն ինչ չի՝ ավարտվում. կարող են սպանել մեր մարմինը, սակայն ոչ երբեք մեր հոգին ու ոգին: Հարության հույսն ու լույսն է՝ մեզ առաջնորդող, ոգեշնչող ու վերանորոգող:

Սիրեցյալ հայորդյք, այսօր՝ Հինանց երրորդ կիրակին, ինչպես նշեցինք, մեզ հիշեցնում է Եկեղեցու Նավակափիքը, այսինքն՝ սկզբնավորությունը: Իսկապես, Եկեղեցու հիմնական հատկանիշը՝ լինի այն շենք կամ կենդանի հավաքականություն, այն է, որ լր մեջ հայտնվի, երևա ու ներկա գտնվի հերք՝ Քրիստոս:

Վեր լարձրացրեք ձեր աչքերը և տեսեք, մանավանդ այսօր Քրիստոս ներկա է՝ ձեր հոգու տաճարում, և՛ այս սրբազան քարեղեն Տաճարում: Եկե՛ք՝ աղոթք լարձրացնենք առ Բարձրյալն Աստված, որ շենանա ու բազմապարկվի նորանոր հավատացյալներով մեր Ս. Եկեղեցին, որ մեր հավարքը գորանա առանց կյուրեղեն տեսության փափազի՝ արժանանալու համար Տիրոջ երանությանը, որ ասում է. «Երանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ. Ի 29):

Աղոթենք նաև, որ Ընդհանրական Եկեղեցու բոլոր մյուս անդամները՝ բույր Եկեղեցիները, տպածառանա և լեցվեն այն ոգով, որ ունեն Վերնավան առաջին Եկեղեցին: Մեր աղոթքի մեջ չենք կարող մոռանալ ավանդական Եկեղեցուց շեղված ու մոլորյալ մեր բարեկամներին, որոնք բոլորից շատ կարիք ունեն մեր աղոթքի, մանավանդ այս շրջանում, որ Հարուցյալ Տերը հաճեցավ այցի գալ: Ուստի մեր աղոթքն ու աղերսն է առ Փրկիչ Տերը, որ Իր անպարտիկ գործությամբ կյանք տա նրանց յաավար ու մոլոր մարբերին ու հոգիներին:

Ապա ուրեմն, բոլոր՝ ազգեր, եկեք հրեշտակների բազմության հետ Քրիստոս Թագավորին, որ այսօր եկավ Ս. Եկեղեցի, զովարանենք և առավել փառաբանենք Նրան, որ օրինյալ է Հոր և Սուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից. ամեն:

**Տ. ՇԱՀԱՆ ԲԱՇԱՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ԲԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(4 ապրիլի 2004 թ.)

*«Պատրաստ եմ սիրելի իմ, Աստուած,
պատրաստ եմ սիրելի օրհնելու և սաղմոս առնել քեզ փառք խնովք»:*

*«Պատրաստ եմ սիրելի իմ, Աստուած, պատրաստ եմ սիրելի իմ
օրհնելու և սաղմոսեր գրելու քեզ իմ փառաբանությամբ»:
(Սաղմ. ԺԷ 2)*

«Ցանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ.

Մինչ բուն բարոգիս անցնելը՝ ցանկանում եմ փառք և գոհություն մատուցել առ Աստված այն քաղցր և վսեմ կոչման համար, որին Բարձրալի ողորմածությամբ արժանացանք ես և օծակից եղբայրս, սրանից դեռ քառասուն օրեր առաջ՝ անցնելով քահանայից եպիսկոպոս և սուրբ դասը: Այս առիթով իմ որդիական երախտագիտությունն ու հավատարմությունն եմ հայտնում ազգիս աստվածընտիր և առաքելաշավիղ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Սրբազնագույն Կաթողիկոսին բոլոր այն հայրական դասերի ու խրապների համար, որոնք էլ՝ ավելի ամրակողն են մեր մեջ եղած աստվածաշարությունը, եկեղեցասիրությունը, հայրենասիրությունը և սերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի զավակների նկատմամբ:

Որպես հոգևոր ձևողի՝ իմ որդիական երախտագիտությունն եմ հայտնում Վերահայոց տիրախնամ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, որ սիրով հանձն առավ կատարել մեր այս ձեռնադրությունը՝ իր երկնառաք աղոթքներով Սուրբ Հոգու շնորհներն իջեցնելով մեզ վրա:

Այս Ս. Խորանից չեմ կարող չօգնելուց լույս հիշատակը երջանկահիշատակ Գարեգին Առաջին Հայրապետի, ում գահակալության փարիսերին էր, որ առաջին անգամ ուրք դրեցի Հոգևոր Ճեմարանի եպիսկոպոսական հարկից ներս:

Ցանկանում եմ իմ շնորհակալությունը հայտնել նաև Կոնստանդնուպոլսի և Ղազարոսյանական կազմին, որոնք ջանքերով ու հոգածությամբ հասակ առանք հոգևոր այդ դարբնոցում և Աստված ողորմությամբ արժանացանք այս բաղձալի օրվան:

Նաև իմ մասնավոր շնորհակալությունն եմ հայտնում Ս. Գայանե վանքի միաբան հոգևորականներին՝ ինչպես եկեղեցու վանահոր՝ Տ. Ներսիս արքեպիսկոպոսի, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջ միաբանությանը՝ զլիսավորությամբ Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի:

Ցանկանում եմ սրտանց շնորհավորել նաև նկեղեցու ողջ հավաքավոր ժողովրդին, բանգի, մեր անձերն Աստծուն նվիրելով, ուխտեցինք անմնացորդ կնքալով ծառայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նրա հավաքագյալ գավակներին:

Սիրելի հավաքագյալներ.

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցին փոխում է մեր Տիրոջ՝ Հիսուս Ջրսպետի՝ երուսաղեմ հաղթական մուրքի հիշատակության օրը: Սրանից երկու հազար տարիներ առաջ փնդի ունեցած այս դեպքին, որպես կարևոր և հիշարժան իրադարձության, անդրադարձել են չորս ավետարանիչներն էլ, որոնցից Ս. Մարթնոս ավետարանիչը, ներկայացնելով այն, ասում է, որ Հիսուս Ջափկի փոնից առաջ իր աշակերտների հետ մտնում է Ձիթենյաց լեռան մոտ գտնվող Բեթփագենին, որտեղից պատրաստվում է շարժվել Երուսաղեմ հրեական Ջափկիք փոխելու: Իր աշակերտներից երկուսին ուղարկելով մտարկա գյուղը՝ ասում է, որ այնտեղ կապված կգտնեն մի էշ և նրա հետ մի քուռակ, և պատվիրում, որ արձակեն և բերեն դրանք:

Աշակերտները գնալով անում են այնպես, ինչպես որ պատվիրել էր իրենց Հիսուս: Եվ էշն ու քուռակը բերելով՝ զգեստներ են գցում նրանց վրա, և Հիսուս նստելով դրանց վրա իջնում է Երուսաղեմ: Մարդիկ իրենց զգեստները փռում էին նրա ոտքերի տակ, իսկ ոմանք ծառերից (արմավենու և ձիթենու) ճյուղեր էին կտրում և գցում ճանապարհին՝ աղաղակելով և ասելով. «...Օրհնյա՛լ է այդ թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնությո՛ւն բարձունքներում»:

Սիրելի՛ հավաքագյալներ, առաջին իսկ հայացքից պարզ է դառնում, որ խոսք անգամ չլինել չէր կարող Հիսուսի ներկային թագավոր լինելու մասին, և ժողովրդի բերանից հնչած «թագավոր» տիպոգրֆ վերաբերում է Աստվածորդու ներկային թագավոր լինելու հանգամանքին, որովհետև մարդկային միտքն ընդունակ չէր պարկերացնելու, որ աշխարհի ներսին կարող էր գտնվել թեկուզ մեկ ներկային թագավոր, որ թողած իր շքեղ և պերճաշուք նմուշներով լծված կառքերը՝ համաձայնեի որևէ տեղ գնալ հասարակ էշի վրա նստած: Ուրեմն այնտեղ հավաքվածներից շատ-շատերի համար այնևս գաղտնիք չէր Հիսուսի ով լինելը:

Նա, Ով շրջում էր քաղաքից քաղաք, բռնկում կաղերին, անդամալույծներին, բորոտներին և գոսացածներին, փնտրություն էր պարգևում կույրերին, խողովություն՝ խուլներին, Իր աստվածային գործությամբ փշրում էր համրերի լեզուների կապանքները, Իր փրկական և ազդու խոսքով ազատում դավաճարներին չար ոգիներից և, որ ամենագլխավորն է, հարություն էր պարգևում մեռելներին, չէր կարող չլինել մեկը, որն Աստծուց ուղարկված չլիներ: Սակայն այս բոլորին գումարովել էր մի բանի օր առաջ Հիսուսի կողմից կատարված մեկ այլ հրաշք՝ Ղազարոսի հարությունը, և, ինչպես Հովհաննես ավետարանիչն է ասում «... որա համար էլ Նրան ընդառաջ ելավ ժողովուրդը, որովհետև լսել էին, որ այդ նշաններն էր աքել» (Հովհ. ԺԲ18):

Միայն այս չէր, սակայն, պատճառը, որ ժողովուրդն ընդառաջ գնաց Նրան, այլ այն, որ ինչպես հոգին է ճանաչում իր ճշմարիտ հովվին, այնպես էլ ժողովուրդը ճանաչեց Նրան, Ով պարբրաստ էր Իր անձը դնել Իր ոչխարների համար: Ուստի որպես խոր հարգանքի և սիրո նշան՝ նրանք իրենց զգեստները փռում էին Նրա ոտքերի տակ, որպեսզի դրանց վրայով անցնեի: Մարդկանցից ոմանք էլ, չկարողանալով զսպել իրենց հիացմունքը, բարձր ձայնով «ովսանա»-ներ էին երգում և փառաբանում Բարձրյային:

Սակայն այս բոլորից բացի կա նաև օրվա խորհրդի այլաբանական իմաստը: Նախ և առաջ ասենք, որ այս ամբողջը նդավ, որպեսզի կատարվի մարգարևի խոսքը, «Ասացնք Սիոնի դստերը, ահա դեպի բեզ է գալիս Ջո թագավորը՝ հեզ և նստած էշի և էշի բուռակի վրա» (Մատթ. ԻԿ 3): Երկրորդ, Երուսաղեմը համարվում էր թագավորական բազալ՝ հռչակված Դավիթ թագավորի կողմից, իսկ Հիսուս սերում էր Դավթի արքայական ցեղից:

Ինչպես գիտենք, Երուսաղեմում մորթվեց Ջավրի գառը՝ որպես օրինակ Քրիստոսի, Ուրը պիտի «բառնար զմեզս աշխարհի» (հմմտ. Նովի. Ա 29):

Սակայն ինչ նկատի ունի մարգարեն «Սիոնի դուստր» ասելով: Այս առթիվ ուզում ենք մեջբերել մեր եռամենար վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու մեկնությունը. «Սիոնի դուստրը Երուսաղեմն է, որը թաղաք է ձևուող տվող, որովհետև այնտեղից Քրիստոս Իր երկնային խաղաղությունը բաշխեց առաքյալներին և նրանց միջոցով՝ ամբողջ տիեզերքին»:

Երկրորդ՝ Սիոնը հին ժողովարանն է, իսկ դուստրը՝ նոր Եկեղեցին, այսինքն՝ դուստր է կոչում մեր՝ բրիտանական Ընդհանրական Եկեղեցին: Դուստր է կոչում, որովհետև պարուն է Սիոնի, բանի որ Սիոնից սկիզբ առավ նոր Եկեղեցու բախանայությունը:

Եվ երրորդ՝ դուստր և ձևուող տվող է կոչում Եկեղեցին, բանի որ Նրա Սուրբ Ավագանից մարդկանց որդիները ծնվելով՝ դառնում են Աստծո որդիներ՝ «յորդեգորություն Հորն նրկնաուրի եւ ժառանգակից Քրիստոսի» (Հմմտան հաւորո, Երուսաղեմ, 1998, էջ 468):

Նովիանու Ավետարանի ԺԲ գլխում ասվում է, որ Հիսուսի՝ Երուսաղեմ մտնելիս այնտեղ են յնեում որոշ թվով հեթանոսներ, որոնք ցանկանում են Հիսուսին տեսնել: Նայկական ավանդության համաձայն, այս հեթանոսները նույնացվում են Աբգուր թագավորի կողմից ուղարկված պարզամտությունների հետ: Այս հատվածը անուղղակի կերպով կատված է մեր ժողովրդի համագային դարձի հետ, որ Հիսուսին ազգովին ընդունեցինք մեր հոգու տաճարներից ներս:

Ինչ վերաբերում է Հիսուսի ուրբերի տակ հանդերձներ ներկյուն, ապա դա խորհրդանշում է մարդկանց մեղքերի ծածկույթից ձերբազատվելը:

Զիթենու և արմավենու ճյուղերը ուրբերի տակ այսպես գցելը, որ առանձնակի հանդիսավորություն է հաղորդում այս տեսարանին, գալիս է դեռնա Հին Կտակարանից. Ղևոնցվոց գրքում կարդում ենք, թե ինչպես Լին հրեաներն անցկացնում Տաղավարահարաց տունը՝ իրենց ձեռքերում ունենալով արմավենու, ուռենու և բարդու ճյուղեր (ԻԳ 40): Զիթենին հին աշխարհում համարվում էր խաղաղության, իմաստության, փառքի և հաղթանակի խորհրդանշ: Հին հույներն օլիմպիական խաղերում հաղթանակ տարած իրենց մարզիկների կտրծը զարդարում Լին ձիթենու և դափնու պսակներով: Հիսուսի պարագային՝ ձիթենին խորհրդանշում է Նրա հաղթանակը մահվան և սատանայի հսկողնա:

Աստծո Արարչագործության կատարյալ գեղեցկությունը փառարանող այս տոնի մեջ մեր Եկեղեցու հայրերը տեսել են մեղավոր մարդու նորոգման խորհուրդը: Ինչպես որ բնությունն է նորոգվում գարնանը, այնպես էլ մեղավոր մարդը կարող է ուրբի կանգնել և նորոգվել Քրիստոսով:

Սիրելի հավատացյալներ, Մեծ պահքի այս վերջին օրերին, երբ արդեն մուտք ենք գործում Ավագ Ծաբաթ և մտք ենք դիմավորելու և մեր Տիրոջ Նրաշափառ Հարության Ս. տոնը, շատ կարևոր է, որ անդրադառնանք մեր առօրյա կյանքին. ինչքանով է այն նման և ինչքանով է հնոացած մեր Տիրոջ կյանքից:

Եթե Ճաղկազարդի տոնի մեջ խորհուրդ փնտրելու լինենք, ապա, անկասկած, դա այն հեզության ու խոնարհության օրինակն է, որ Հիսուս տալիս է մեզ Իր կյանքով և Իր պատգամով, որ ասում է. «... սովորեցնե՛ք Ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ...» (Մատթ. ԺԱ 29): Հեզության և խոնարհության պատգամներ մենք ստանում ենք նաև կարդալով Սաղմոսաց և Առակաց գրքերը, օրինակ, ինչպես Դավիթ թագավորն է ասում «Տերն ընդունում է հեզերին և մինչև զեփն խոնարհեցնում ամբարտաճաններին» (Սաղմ ճԽԶ 6), կամ «Տերը ... փառավորում է հեզերին փրկությամբ» (ՃԽԹ 4), իսկ Սողոմոն Իմաստունը հեշտայն է ասում այս առիթով. «Տերը հակառակ է ամբարտաճաններին, Նա շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. Գ 34) կամ «Ինչպիսի մեծության էլ հասնես դու, թեզ խոնարհ պահիր և դու շնորհ կգտնես Տիրոջ առջև» (Առակ ԺԶ 3): Սակայն մի՞թե այս ամենը մենք ընդունում և կիրառում ենք մեր կյանքում:

Մարդ արարածն այնպիսին է, որ եւ միշտ ձգտում է կապեր հաստատել իրենից ավելի բարձր դիրք ունեցողների հետ և արհամարհում իրենից ցածրերին, սիրում է ընթրիքների ժամանակ զբաղեցնել պարզի տեղերը և գովասանքներ ընդունել մարդկանցից, մինչդեռ Հիսուս մեզ ճիշտ հակառակն է սովորեցնում: Ինչպես առաքյալն է ասում, թե Նա, որ Աստուծո Որդին էր, և Որի միջոցով էր Նայր Աստված ստեղծել տիեզերքը, «Նա, որ լույսն էր Նրա լիառեփ և բուն պարկերը Նրա էության» (Երբ. Ա 2-3), մարմին առավ Սուրբ Կոյսից և ապրեց մեր մեղավորներին հետ:

Նրա ամբողջ կյանքը եղավ հեզության և խոնարհության կատարյալ օրինակ, ծնվեց անբան անասունների մոտում, այնուհետև Իր կյանքի օրերն անցկացրեց՝ լինելով համարյա անօթևան, սեղան ստեղծեց մեղավորների հետ՝ նրանց դարձի բերելու նպատակով, ապրեց աղքատ և կարիքավոր մարդկանց շրջանում՝ հավասարապես կիսերով նրանց հետ բոլոր գրկաբերներն ու դժվարությունները, նրանք չգրագավ օգտակար լինել նրանց և ոչ մի մեղք չունենալով՝ խոնարհաբար հանձն առավ կրել այն բոլոր չարչարանքները և անգամ մահը՝ մեր մեղքերն Իր վրա վերցնելով:

Ուրեմն մարդկային ցեղի համար շատ կարևոր առաքինություններ են հեզությունն ու խոնարհությունը, քանի որ սրանցից էլ ծնվում են մյուս բոլոր առաքինությունները, ինչպես, օրինակ, սերող մեղանից ավելի ցածրերի և տկարների նկատմամբ և այլն: Այս օրերին հարկապես կարևոր է մեզ համար մեր մերձավորների և շրջապատի մարդկանց նկատմամբ խոնարհություն ունենալը, միմյանց նկատմամբ բարությամբ լցվելը և, որ ամենակարևորն է՝ միմյանց ներելը, ինչպես որ Աստված է ներում մեզ մեր մեղքերը: Այդ, սեր ցուցաբերներ միմյանց նկատմամբ, որպեսզի կատարած լինենք Տիրավանդ պատվիրանը. «Սիրեցե՛ք միմյանց» (Ղով. ԺԵ 17):

Հուսկ, Հիսուսին դիմավորելու դուրս եկած ժողովրդի նման՝ մեր Տիրոջ առաջ փոռնք մեր մեղքերը, մերկանանք մեղքի ծանրությունից, «դեն զցենք խավարի գործերը և հազնենք լույսի գրառք... զգնստավորվենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով» (Հռոմ. ԺԳ 12-14):

«Մաքրենք մենք մեզ մարմնի և նոգու ամեն մի պղծությունից» (Բ Կորնթ. Է 1), որպեսզի կարողանանք մեր հոգու տաճարներում ընդունել մեր Փրկչին, որի շնորհներով սրբագործված պատրաստ լինենք մաքուր հոգով և առաքինի գործերով դիմավորել մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ և Հրաշափառ Հարությունը. այժմ և միշտ և հավիպյա՛նս հավիպենից:

«Շնորհ, սեր եւ աստուածային սրբաբար գործիքն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ, ամեն»:

Տ. ԿՏՐԻՃ ԲԵՆԵՃԱՆԻ ԴԵՎԵՃԱՆԻ ԱՆԴՐԱՆԻՔ ԲԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՈՒՓՄԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 ապրիլի 2004 թ.)

*«Տա Աստված, որ ես խոսեմ իրավաստիքային
և ունենամ Նրա տված շնորհներին արժանի մտածումներ,
որովհետև Նա Ինքն է իմ ապրության առաջնորդը»:*

(Իմաստ. է 15)

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալ ժողովուրդ,

Ուզում եմ շուրթերս բացել և բարբառել մեր Երկնավորը Հորը՝ ասելով. «Փա՛նք Զեզ, Աստված, փա՛նք Զեզ, ամեն ինչի համար փա՛նք Զեզ»:

Փա՛նք Զեզ, Ամենակարող Աստված, որ օտար ափերում ծնված հայորդուս սրանից 40 օրեր առաջ արժանի դարձրիր քահանայական կոչման Միանւնէշ Զո Սուրբ Տաճարում՝ հեկայսու բոյորանվեր և անսակարկ ծառայելու Զո Սուրբ Մարմնին, որի անբաժանելի մի մասն է Որդուդ իսկ ձեռքով հիմնադրված մեր մայրը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այսօր հոգիս ու սիրտս լի են նվիրական զգացումներով, ուստի գեղեցիկ և հուսառապ այս օրը ցանկանում եմ նախ իմ որդիական սերն ու երախտագիտությունը հայտնել ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Որի հայրական հոգածությամբ և օրհնությամբ կոչվեցի քահանայության այս սուրբ աստիճանին՝ ուխտելով, որ պիտի լինեմ, առաքյալի իսկ խոսքերով ասած՝ «մշակ առանց ամօթոյ» (Բ Տիմոթ. Բ 15), և Աստծո ողորմությամբ և Ձեր աղոթքների շնորհիվ Աստծո կենդանի խոսքի սերմանողն ու այն քաջ հովիվը, որ պատրաստ է իր կյանքը նվիրաբերելու իր հոգիի համար:

Ինձ համար այս բաղձալի օրը, որին սպասել եմ շատ երկար, հայրենիքից հեռու՝ հեռավոր Ամերիկայում, սակայն մայրական կաթի շնորհիվ մեր սուրբ հայրենիքի ու մեր առաքելափառ Եկեղեցու հանդեպ իմ սերը պարփակած սրտիս մեջ, ուզում եմ իմ հավատարմությունը, անհուն սերն ու նվիրումն արտահայտել հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, որ դարերի ընթացքում միշտ խնամել է մեզ, իր անխաղախ կաթով սնել, իսկ աշխարհսփյուռ հայերիս հայ է պահել՝ միշտ հիշեցնելով, որ մենք Ս. Թադեոսանիցների զավակներն ենք և երբեք իրավունք չունենք մոռացության փախու մեր Սուրբ Ավանդությունն ու պատմությունը:

Նորին Սրբությունը քահանայական ձեռնադրության արժանացրեց անարժան սպասավորիս, և ես իմ աղոթքն եմ վերառաքում առ Աստված, որպեսզի արժանավոր հովիվ դառ-

ևս՝ հավաքացյալ հոգին համար: Թող Աստծո սուրբ կամքը լինի ինձ առաջնորդողն ու ուղղորդողն իմ ողջ ծառայության ընթացքում:

Ազոթքս է, որ մեր երկնավոր Հայրը բազմաողջ երկար տարիներ, առավել իմաստութիւն և կորով պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի փառս մեր լուսավորչահաստատ Սուրբ Եկեղեցու և ի բարօրութիւն մեր ազգի: Իսկ մենք Տիրոջ կամքով երկար տարիներ վայելենք Նրա հայրական սերը և ուշադրությունը:

Ինչպես ձեռնադրության օրը, այնպես էլ այսօր պիտի խնդրեմ բոլորիդ՝ աղոթել ինձ համար, որ Ամենակալող Աստված գորացնի ինձ իմ հավաքի մեջ, Ս. Հոգու շնորհներով զարդարի և իմաստութիւն պարգևի, որպեսզի կարողանամ Տիրոջով գորացած, համբերատարությամբ ու սիրով Աստծո խոսքը փարածել՝ դիմագրավելով աշխարհիս նկրտած բոլոր մարտահրավերներին ու փորձություններին:

Ես իմ երախտագիտությունն ու զեախալտանքն եմ հայտնում նաև իմ հոգևոր ծնողին՝ Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գեորգեանի Ս. Վազգեն եպս. Միրզախանյանին, ում Օծյալ Աջով և Սուրբ Մյուռեանի հրաշագործությամբ կոչվեցի բահանայության՝ ուխտելով, որ միշտ անառար ու թաքմ պիտի պահեմ ճակատիս և ձեռքերիս ափերին Սրբազան Հոր ձեռքով դրոշմված Սրբալույս Մյուռեանը: Ազոթքս է, որ Աստված հովանի և պահապան լինի նրան՝ հաստատուն և անհողողող պահելով իր կոչման և սուրբ առաքելության մեջ:

Այս նվիրական պահին իմ անբավելի սերն եմ ուզում հայտնել ծնողներիս, երեցկնոջս և բոլոր այն մարդկանց, ովքեր ինձ առաջնորդեցին դեպի մեր Սուրբ Եկեղեցին և ինձ դրեցին ճշմարիտ ճանապարհի վրա: Նրանց շնորհիվ ես առավել սիրեցի մեր հայրենիքն ու մեր անցին Եկեղեցին, որին Աստծո կամքով ծառայելու ուխտս այսօր իրականություն դարձավ անդրանիկ Պատարագիս միջոցով:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում նաև Մայր Աթոռի լուսարարապետի պաշտօնակատար Ս. Արարակ վրդ. Տիգրանյանին ու բոլոր միաբաններին, իմ քահանա եղբայրներին ու պատրաստակամ սարկավազներին, ովքեր օգնեցին ինձ իրենց բարի խորհուրդներով:

Երախտագիտությունս եմ հայտնում նաև այս հոյակերպ եկեղեցու վանահայր Ս. Մարթնոս արեղա Պողոսյանին, որ մեծահոգաբար արտոնեց իմ անդրանիկ Ա. Պատարագը մատուցելու Ա. Հռիփսիմն եկեղեցու լուսավոր կամարների ներքո:

Սիրելիներ, այսօր մինչ անդրանիկ Ա. Պատարագիս մատուցումը ես ձևի եկա Ա. Հռիփսիմին գերեզմանի առջև և իմ ուխտը կնքեցի նրա հետ, ով իր ողջ կյանքը նվիրաբերեց հանուն Քրիստոսի և միշտ հավատարիմ մնաց Տիրոջն ու Նրա՝ կենդանություն պարգևող պատվիրաններին, քանզի ճաշակել և լրեսել էր, որ քաղցր է Տերը: Նրա բարեխոսությունը հայցեցի ամենքիս համար, որպեսզի մեր բոլորի աղոթքներն Աստծու առջև ընդունելի լինեն, ինչպես նաև խնդրեցի Ամենակալին, որ մեզ Ա. Հռիփսիմին աներեր հավաքեցի մի շող պարգևի: Վստահաբար ապագայում, որտեղ էլ որ Քրիստոս Աստծո մարմնի և աշխարհ խորհուրդը կատարեմ, միշտ քաղցրությամբ ու կարոտով պիտի հիշեմ այս օրը:

Ինձ համար անպարմենի ուրախություն է Ծաղկազարդի կիրակի օրը բոլորիդ հետ միասին իմ անդրանիկ Ա. Պատարագը մատուցելը: Այո՛, այսօր Հայաստաննայց Եկեղեցին փռնախմբում է Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքը Ա. Երուսաղեմ: Մի

լրոն, որ ուրախություն և ընդունակ է պարզևում մեզ, քանզի մարում ենք մի շրջան, որի ավարտին եկեղեցու զանգերի դողանքները պիտի ազդարարեն, որ մեր Տերը հարություն է առել: Իսկ այսօր ողջունում եմ ձեզ օրվա բարի ավերիսով. «Օրհնելու եկեալ անուամբ Տեան»:

Քիչ առաջ Ս. Խորանից հեչամ ընթերցվածքները նվիրված էին Քրիստոսի կյանքի վերջին իրադարձություններին, որոնք ընկած են այս մեծ տոնի հիմքում: Ավերարանից գիտենք, որ աղքատ Լազարոսին հարություն տալուց հետո Քրիստոս ավանակի վրա նըստում էրուսաղեմ մտավ: Հրեաները, որ ձգտում էին անկախության, սպասում էին իրենց երկրային թագավորին, որ պիտի ազալեր նրանց հռոմեական լծից՝ թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով: Սակայն Քրիստոս կառքով կամ մարտական եծույզով չեկավ: Երկինք ու երկիր սպեղծող Աստված խոնարհաբար մուտք գողծնց խաղաղության խորհրդանիշ համարվող ավանակով՝ ցույց տալով, որ եկել է ոչ թե երկրային, այլ երկնային թագավորություն հաստատելու: Նա չէր եկել որպես նվաճող կուսակալ, այլ որպես Թագավոր փառաց, որ պատրաստ էր հիմնել Աստծու Թագավորությունը:

Ծաղկազարդը՝ Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, խորհրդանշում է նրա երկրային կյանքի ավարտն ու մեր փրկության սկիզբը: Ծաղկազարդի օրը մենք գալիքի մի ակնթարթն ենք տեսնում միայն: Մեկ շաբաթ տևող այս կարճ ժամանակահատվածում Քրիստոս մարդկանց օրհնանքին ու մեծարմանն արժանացավ, այնուհետև անարգվեց, ձեռքակալվեց, չարաչարանքների ենթարկվեց, մերժվեց և խաչվեց:

Իր զաժան մահվանից հետո երեք օր մարդիկ վախի և ծայրահեղ հուսահատության մատնվեցին: Այնուհետև իրական հրաշագործություն կատարվեց, որին ողջ քրիստոնյա աշխարհը նախապատրաստվում է: Դա մեր Փրկչի Հրաշափառ Հարությունն է: Մեր հույսը, մեր փրկությունը, մեր ապաստարանը, մեր իսկ հարությունը, մեր հնարավորությունը հետմահու կյանքի: Քրիստոս մարմնացավ, որպեսզի մենք առավել կյանք ունենանք, խաչի վրա գամեց մարդկության մեղքերի պարտամուրհակը, իր վրա վերցրեց մեր մեղքերը, սակայն մեռելներից հարություն առնելով՝ հաղթեց մահվանը:

Սիրելի՛ հավատացյալներ, մենք այն մարդկանց ժառանգներն ենք, ովքեր սրանից 2000 տարի առաջ՝ Ծաղկազարդին, Քրիստոսին ընդունեցինք մեր երկրում: Մենք մեր զգեստները փոխեցինք Նրա առջև, արմավենու, ձիթենու ճյուղերով և ծաղկեփնջերով դիմավորեցինք Նրան: Սակայն մի քանի օրից հրես ենք թեքելու Երկնքի Արքայից, դավաճանելու ենք Նրան մի քանի արժաթ դրամի համար: Ժխտելու ենք, որ երբևէ ճանաչել ենք Նրան, թույլ ենք տալու, որպեսզի Նրան ձեռքակալեն, դառնեն ու մահվան դատապարտեն: Ամենքս էլ մասնակից ենք դառնալու Նրա խաչելությանը: Բայց ինչքան անքավ է Աստծո ողորմությունը մեր նկատմամբ: Քանզի այս ամենից հետո, երբ ուրանում ենք Նրան, ինչպես Պետրոսն ուրացավ, երբ դավաճանում ենք Նրան, ինչպես Հուդան դավաճանեց, երբ սխալ վկայություն ենք տալիս, ինչպես ռաբբիները դա արեցին, և երբ լվանում ենք մեր ձեռքերը Նրանից, ինչպես Պիղատոսը լվաց, Նա դեռ պատրաստ է մեզ համար կրելու բոլոր չարաչարանքներն ու անարգանքները, և նույնիսկ խաչի վրա մահանալիս Նա պիտի դիմի Իր Երկնավոր Հորը՝ ասելով. «Հայր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Լուկ. ԻԳ 34):

Այս է կյանքի պարզ ճշմարտությունը. **Աստված Սեր է:** Հովհաննես աստվածաբան ավերարանիչն ասում է. «Քանի որ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16):

Քիչ առաջ, քարոզին նախորդող ծածուկ աղոթքի ժամանակ, նս գոհարանություն հայտնեցի՝ ասելով. «Աստուած ճշմարտությանն և Հայր ողորմության, գոհանամք զքե՛ն, որ ի վերջուս գերանելի նահապետացն, վասն զի եղցա Աստուած կոչեցադ, իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանել զթալով»: Աստծու սերը դրսևորվում է յուրաքանչյուր արարածի մեջ: Մենք Նրա գովակներն ենք, և Նա մեզ արժանացրել է իրեն Հայր կոչելու այդ մեծ պատվին: Մենք թույլ ենք, Նա՛ ուժեղ: Մենք թերի ենք, Նա՛ կապարյալ: Մենք անարժան ենք, Նա՛ ողորմած: Մենք թերանում ենք կատարել Նրա պատգամները, Նա պաշտպանում է մեզ: Մենք տրանում ենք Նրան, Նա ընդունում է մեզ: Մենք կասկածում ենք Նրան, Նա հավատում է մեզ: Մենք անտարբեր ենք Նրա հանդեպ, Նա սիրում է մեզ: Ինչո՞ւ է այսպես՝ պիտի հարցնեք, սակայն կրկին ձեր ականջներին պիտի հնչի աստվածաշունչ խոսքը. «**Աստված Սեր է:**» (Ա. Հովհ. Դ 8):

Այսօր, սիրելի՛ հավաքագրյալներ, Ծաղկագարդի օրով եկեք հույսով լցված դուրս գանք Երուսաղեմ: Միասին ողջունենք Նրան, Ով Փրկիչն է մեր կյանքի և Պարգևոդը բազում շնորհներին: Անգլերեն լեզվով մի նրզ կա, ուր նկարագրվում է Տիրոջ մուտքը Երուսաղեմ: Այդ նրզի մի տես մեջ ասվում է. «Իմ աչքերը տեսել են Տիրոջ զալստյան փառքը... Նա հնչեցրել է շեփորը, որը նրբեք նահանջի նշանը չի ազդարարի: Թող հոգիս արագ արձագանքի Նրան, թող ցնձան ուրբերս»: Սիրելիներ, աղոթենք, որ մեր տղերքը չհոգնեն, քանի որ գնում ենք հանդիպելու Քրիստոսին:

Այսօր մենք գովներգում ենք Նրան, վաղը մաքենելու ենք: Այսօր ծաղկեպնջներով ենք դիմավորում Նրան, վաղը փշե պսակ ենք դնելու գլխին: Այսօր գոչում ենք «Օվսաննա», վաղը ուրանալու ենք Նրան: Այսօր մենք փողում ենք մեր զգեստները Նրա առջև, վաղը Նրա վերջին պատմությանի վրա վիճակ ենք գցելու: Այսօր կրկին բացվում են Հայ եկեղեցիների Ավագ խորանների վարագույրները, և մեզ նորից թույլ է տրվում մոտենալ և հաղորդվել Քրիստոսի հետ, վաղն այս վարագույրները կրկին կփակվեն: Մեր իսկ մեղքերի պատճառով մեզ Աստծուց բաժանող դարպասները բացվել են Հիսուսի ողորմությամբ:

Աստված Սեր է, և Նրա սերը բաց է արել այն դուռը, որը բաժանել է մեզ վերջին շաբաթների ընթացքում: Երեկ մենք նշեցինք Ղազարոսի հարության հրաշագործությունը: Քրիստոս հարություն տվեց Ղազարոսին, որովհետև սիրում էր նրան: Երեկվա տոնի խորհրդի մեջ մենք տեսնում ենք մեր ապագայի նախանշանը: Նույնիսկ Դ դարում այս տոնը կոչվում էր «Հարության ավետում»: Հովհաննես ավետարանիչը պատմում է Ղազարոսի մահվան ու հարության մասին և ասում. «Եվ Հիսուս արտասովեց»: Հիսուս արտասովում է իր մերձավորի մահվան համար այնպես, ինչպես արտասովում է յուրաքանչյուրիս մահվան համար, քանի որ Նա սիրում է մեզ:

Աստված Սեր է: Եվ այդ սիրտ շնորհիվ է, որ Նա մեզ արարեց Իր պատկերով: Այդ սիրտը են բխում Նրա արցունքները, ինչպես նաև Նրա հարությունը: Քրիստոս սիրում է յուրաքանչյուրիս այնպես, ինչպես սիրում էր Ղազարոսին, արդյո՞ք Նա նույնը չի անի մեզ հա-

մար: Երեկվա փոքր մեզ հաղորդում է հաջորդ կիրակիի գալստյան մասին, որը նվիրված է Քրիստոսի գերեզմանը դարձրել գրեթե ամբողջ աշխարհում: Այդ օրը թափուր գերեզմանը դարձավ ու պիտի դառնա կյանքի աղբյուր: Երեկվա օրը խորհրդանշում է Մեծ պահքի վերջը, և մենք առաջին անգամ փոխում ենք Հաղության խոստումի կապարտումը: Ինչպես ասվում է մեր շարականներից մեկում՝ «Ղազարոսի հարությունը, որով բոլոր մեռյալներին հույս տրվեց, Ադամի որդիները կենդանացան»:

Աստված Մեր է, սեր, որ հավիտյան է: Երբ Քրիստոս Ծաղկազարդին մեծ փառքով մտավ Երուսաղեմ, Սուրբ Երեմի փանդ ճանապարհին մարդկանց հոմ բազմություն էր հավաքվել՝ փոխելու համար այն մարդուն, Ով քարոզում էր խաղաղության ու արդարության հավիտենական արքայությունը: 2000 տարի է անցել Ծաղկազարդից, և Աստծու սերն է որը մեզ կրկին բերել է այսօր այսօրեղ, և Աստծու սերն է մեզ առաջնորդելու դեպի ապագան:

Այսօր մեծ ուրախությամբ մենք կարող ենք ցնծալ Քրիստոսի եաղթանակով: Բոլորս՝ ծներն ու երեխաները, տղամարդիկ ու կանայք, հարազատներն ու անձանդները, չնայած որ սկիզբն է մեր աշխարհի տարբեր ծագումով, մեկտեղվում ենք որպես մեկ ընտանիք, մեկ ազգ, որին միավորում է միասնական աղոթքը, որ դարձնի շարունակ հնչում է մեր եկեղեցում:

Մենք հույսով ու հավատով ենք փոխում մեր ապագան, քանզի Աստծու սերը փրկելու և ազատելու է մեզ: Ուստի եկե՛ք միմյանց նկատմամբ սիրո զգացումներով լցված, ինքնաբերական և Աստծո երկրորդ մասնակցությամբ Ավագ Շաբաթ՝ երբեք չմոռանալով, որ «Աստված Մեր է»: Մեր Տերը կամավոր հանձն առավ մահը մարդկանց կյանք պարգևելու համար, հեղինակաբար այնպես ապրեց, որ արժանի լինեց այդ գոհողությանը, մի գոհողություն, որ ծնվում է միայն ու միայն սիրուց:

«Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հենդ լինեն, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից ամին» (Բ Կորնթ. ԺԳ 13):

ՆԿԱՐԱԿԱՆ Ե ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՄԻՂՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՊԻԵՌ-ՔԻՅԵԱՌԸ

XIX դարի 90-ական թվականներին Օսմանյան կայսրության տարածքում համիդյան վարչակարգի սանձազերծած հայ ժողովրդի կոտորածների արձագանքները, չնայած օսմանյան իշխանությունների կողմից կաշառված ֆրանսիական մամուլի լուսկեցությամբ¹, հատել են, այդուհանդերձ, Ֆրանսիայի սահմանը: Անկողմնակալ դիրքերից համիդյան կոտորածների ընթացքն այստեղ քննարկել են քաղաքական զանազան կողմնորոշումներ ունեցող բազմաթիվ քաղաքական և կրոնական գործիչներ, գրողներ, պատմաբաններ ու լրագրողներ:

Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը լուսաբանելու, թուրք շարդարարներից խարազանելու, մեծ տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսևորած անկարեկից վերաբերմունքը մշակակելու ասպարեզում անգլատառեղի ավանդ է ներդրել Հայ դատի անմնացորդ մվիրյալ, բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Պիեռ-Քիյեառը (1864-1912), որի հետաքրքրությունը Հայկական հարցի մկատմամբ ծագել է արյունալի իրադարձությունների առաջին իսկ պահից և ընդլայնվել դրանց զարգացմանը զուգընթաց:

1893-1896 թթ. Կ. Պոլսում բնակություն հաստատած Քիյեառը ֆրանսիացի այն եզակի ժամանակակիցներից էր, որն ինչպես Վիկտոր Բերարը և Լյուդովիկոս դը Կոնտենտոնը, եղել է համիդյան կոտորածների առաջին փուլի ակամատեսը: Այստեղ մրամ աշխատանքի էր հրավիրել Բերայի Հայ կաթոլիկ լուսավորչական ուսումնարանը՝ ֆրանսերեն և լատիններից դասավանդելու համար: Կ. Պոլսում հաստատվելուց փոքր անց, նա փիլիսոփայություն և գրականության պատմություն դասավանդելու հրավեր է ստացել նաև Ղալաթիայի հայկական Կեդրոնական վարժարանի կողմից, որը բարյացակամորեն ընդունել է²: Մանկավարժական գործունեությունից զատ, Քիյեառը Կ. Պոլսում զբաղվել է նաև բանասիրական աշխատանքներով, թարգմանել հին հունական փիլիսոփայության վերջին՝ ճեռպլատոնական դպրոցի ներկայացուցիչների՝ Պորփյուրի (232-304), Յամբլիջոսի (250-330) ստեղծագործությունները, ինչպես նաև 2-3-րդ դդ. հույն գրող Կլավդիոս Էլիանոսի «Հողագործական ճամակները»³:

¹ Այդ մասին տես V. Berard, La politique du sultan, Paris, 1897, p. 290; U. Gehler, Agir nous-même // «Դրոշակ», 1900, թիվ 6, էջ 81:

² E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Allierville, 2001, p. 26.

³ Les lettres rustiques de Claudius Aelianus, Presentin. Traduites du grec en français par Pierre Quillard, Paris, 1895. Նշենք, որ հետազայում Քիյեառը թարգմանել է նաև Աոֆոկլեսի «Ֆիլոլեկտեսես» ողբերգությունը (1896), ինչպես նաև մ.թ.ա. 3-րդ դարի հույն գրող Հերոդոտի «Մեջակատարությունները» (1900): Ի դեպ, նրա՝ իբրև բանաստեղծի և թարգմանչի քարծր զնախականը տվել են ֆրանսիացի գրողներն ու գրականագետները (Ա.

Այսպես, ըստ Քիչեաթի ֆրանսիացի ժամանակակիցներից մեկի՝ Ա. Ֆերդինանդ Հեբրոլի դիպում բնորոշման. «Արևելք կատարած այցելությունը փոխել է նրա կյանքի ընթացքը»⁴։ Ֆեպետ XIX դարավերջից և XX դարասկզբին նրա քաղաքական գործունեությանը լայն ընդգրկում է ունեցել (ակտիվորեն մասնակցել է Լիանդրոնիայում ծավալված իրադարձություններին, Ռեյդֆուսի գործին, Զուլայի դատավարությանն առնչվող քննարկումներին, եղել է Մարդու իրավունքների լիգայի հիմնադիրներից, 1904 թ. ընտրվել է դրա կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1911 թ.՝ գլխավոր քարտուղար)⁵, այդուհանդերձ, Հայկական հարցը մշտապես մնացել է նրա մտորումների և գեաղումների առաջնությունը։

Հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Քիչեաթի հետաքրքրության անհիմն մեծապես նպաստել են 1894 թ. սկիզբ առած նրա բարեկամական հարաբերությունները ու սերտ համագործակցությունը Արշակ Զոպանյանի հետ, որը ընդհատվել է միայն ֆրանսիացի մտավորականի վաղաժամ մահվամբ⁶։ Հայ դատին գորավիկ լինելու առաքելությունը Քիչեաթը ստանձնել է դեռևս Կ. Պոլսում բնակվելու ժամանակաշրջանում, որը վկայում է արևմտահայությանը կործանումից փրկելու նրա անսասան հաստատականության մասին։

Առաջին անգամ ֆրանսիական հանրության ուշադրությունը հայկական կոտորածների վրա նա հրավիրել է դեռևս 1895 թ., երբ Մորիս Լեբյոր կեղծանունով⁷ հանդես է եկել 1894 թ. Սասունի դեպքերին նվիրված հոդվածով⁸։ Հեղինակը տեղի ունեցած «սարսափելի կոտորածներ», «բարբարոսական զագրելի գործողություններ» մասին, ըստ իր հավաստման, առաջին չուրեղ քաղել է անգլիական և ֆրանսիական որոշ լրագրերից։

Հենվելով մատչելի, թեև դեռևս սակավաթիվ, այդուհանդերձ, «անառարկելի արժանահավատություն» ունեցող սկզբնաղբյուրների վրա (խոսքը վերաբերում է, մասնավորապես, Սասունի կոտորածների հետաքննությունը վարած քննիչ հանձնաժողովի «Համատեղ հաղորդագրությանը»⁹ և կոտորածների երեք հայ ականատեսներից ստացված տե-

Ֆրանս, Ա. Ֆերդինան, Ա. Ֆերդինանդ Հեբրոլ)։ Տե՛ս նրանց ելույթները 1912 թ. փետրվարի 16-ին Փարիզում գումարված՝ նրա հիշատակին նվիրված միսսում։ A la mémoire de Pierre Quillard, Paris, 1912, p. 11-12, 58, 60-70, 144-145. Քիչեաթի գրական գործունեության մասին տե՛ս նաև A. Vahramian, De l'affaire Dreyfus au mouvement arménophile: Pierre Quillard et *Pro Armenie*, "Revue d'histoire de la Shoah", Le monde juif, N 177-178, janvier-avril 2003. Ailleurs, hier, autrement: connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 336-338.

⁴ A la mémoire de Pierre Quillard, p. 143.

⁵ Այս ասպարեզներում Քիչեաթի ծավալած գործունեության շուրջ տե՛ս Ֆ. ղը Պրեսմանի և այլ ժամանակակիցների՝ նրա հիշատակին նվիրված ելույթները։ Նույն տեղում, էջ 73-99, 149, 168։

⁶ Ա. Զոպանյանի արխիվում պահպանվել են Քիչեաթի՝ նրան ուղղված 18 մամուլներ՝ նրանց գործունեության պոլիսյան ժամանակաշրջանից ի վեր, որոնց, սակայն, նվիրված են երկրորդական խմբիկները։ Տե՛ս Գրականության և արվեստ թանգարան, ֆ. Ա. Զոպանյանի, քաժիժ 111, վաղ. 9455-9473: 1908 թ. Քիչեաթի առաջաքանով է լույս ընծայվել Զոպանյանի թարգմանությանը իրականացված հայ հեղինակների պոեմների ժողովածուն։ A. Tchobanian, Poèmes. (Traduction française). Préface de Pierre Quillard, Paris, 1908.

⁷ Այդ մասին տե՛ս վերը նշված՝ Քիչեաթի հիշատակին նվիրված միսսում Ա. Զոպանյանի ելույթը։ A la mémoire de Pierre Quillard, p. 35.

⁸ M. Leveyre, Les massacres des Sassounk // "Revue de Paris", livraison du 1^{er} septembre 1895.

⁹ Տե՛ս Documents diplomatiques, Affaires arméniennes, Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897, p. 111-135.

ղեկություններին), նա ձգտում է «անկողմնակալ և ստույգ շարադրանքի» միջոցով՝ շարդերի մասին տեղեկություններ հաղորդել¹⁰:

Հավանաբար, դեռևս հստակ պատկերացումներ իսկ չունենալով թե՛ Հայկական հարցի ծավալը պայմանավորած պատմական հանգամանքների և թե՛ դրա գոյության մասին, Քիլեանը, այնուամենայնիվ, հպանցիկ ձևով անդրադառնում է օսմանյան «բարբարոսական վարչություն» կողմից «ճշված ու սնանկացած» արևմտահայության կացությանը Օսմանյան կայսրությունում մինչև Բեռլինի վեհաժողովի գումարումը և իրավամբ մատնացում, որ հայերը դարձեցին շարունակ - ուժի դեմ ուժով գործելու ցանկություն չեն դրսևորել: Վերջիններս, սակայն, նրա կարծիքով, քառորդ դարից ի վեր «գիտակցել են տարրական, այդ թվում, կողոպուտին և կոտորածին դիմակայելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»¹¹: Ինչ վերաբերում է Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակների, ապա հեղինակը գտնում է, որ իրադարձությունների զարգացման ընթացքը «դաժանորեն հուսախաբել է» հայերին և ի դերն հանել քարեցորդությունների ճանապարհով «լավագույն ճակատագրի» արժանանալու նրանց հույսերը:

Օսմանյան կայսրությունում անընդմեջ տեղի ունեցող խմորումների փաստը նա մեկնաբանում է տեղական իշխանությունների կողմից գործադրվող կեղեքումների սաստկացմամբ և արդարադատության կատարյալ բացակայությամբ¹²: Այդ հենքի վրա է նա քննարկում նաև արևմտահայության նկատմամբ կիրառված զանգվածային թունությունների շարժառիթները: Ըստ նրա՝ 1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունի տարածաշրջանն արյունամերկ արած իրադարձությունների անմիջական պատճառն է դարձել այն անելանելի կացությունը, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքիչ հարկեր վճարելու անընդունակ հայերը, որոնք հարկադրված են եղել գինված ընդհարումների մեջ մտնելու իրենց անողորմաբար կողոպուտող հարստահարիչների հետ¹³:

Սասունի տարքեր գյուղերում տեղի ունեցած կոտորածների գլխավոր կատարածուներ հեղինակը համարում է ճուրղ ելուզակներին և համիդիե զորամիավորումներին՝ չանտեսելով, այդուհանդերձ, Մուշից ժամանած զորքերի չառագուշակ դերը ծավալված իրադարձությունների ընթացքում, քանզի նրանք հանդես են եկել ոչ միայն իբրև հայկական գյուղերի վրա կազմակերպված հարձակումների «անողողող» դիտորդներ, այլև ակտիվ մասնակիցներ¹⁴:

Քիլեանի ուշադրությունից չեն վրիպել նաև ջարդարարների ստոր գործելամիջոցները. «Քանի որ քնաջընումը կատարյալ չի եղել՝ այն ավարտին հասցնելու դիտավորությամբ դիմել են խորամանկության», - նշում է նա¹⁵: Ըստ այդմ՝ զենքերը վայր դնելու պայմանով հայերին ներում են խոստացել, սակայն, Անդոկ լեռան ստորոտում անձնատուր եղած վաթսուց երիտասարդների կենդանի թաղել են: Այդուհանդերձ, «ամենաճողկալի վայրա-

¹⁰ M. Lévayre, Գլխ. աշխ., էջ 74:

¹¹ Նույն տեղում, էջ 75:

¹² Նույն տեղում, էջ 76:

¹³ Նույն տեղում, էջ 79-80:

¹⁴ Նույն տեղում, էջ 83:

¹⁵ Նույն տեղում, էջ 84:

գոյությունները», ըստ մրա, «սատմասրտորեն իրականացվել» են Գեղիեզուզանում¹⁶: Ընդհանուր առմամբ, համաձայն հեղինակի հաշվարկների, Սասունի տարածաշրջանում «վայրագործեն կոտորվել» է շուրջ վեց հազար բնակիչ և «ավերվել հազար ութսունութ տնից քաղկացած քսաներկու գյուղ»¹⁷:

Իմչպես տեսնում ենք, Քիյեառը շեշտը դնում է Սասունի տարածաշրջանում արձանագրված դեպքերի թվարկման վրա և անկողմնակալորեն ուրվագծում իրադարձությունների ընդհանուր պատկերը: Այս առումով, կասկածից վեր է, որ իր առջև ծառացած թիվնական խնդիրը մա կատարել է հավուր պատշաճի: Կամպ առնենք, սակայն, մրա սակավաթիվ մեկնաբանությունների վրա ևս:

Ընդունելով, որ Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածները «սարսափելիության առումով շատ ավելի ողբերգական» են, քան լայն վայրերում արձանագրված անցքերը, մա իրավամբ եզրակացնում է. «Ամենևին հավաստի չի լինի կարծել, որ չափ ու սահման չունեցող վայրագությունից զատ, դրանք եղել են անսպասելի: Դրանք ընդամենն այն անհանդուրժելի բռնությունների կրկնությունն են, սակայն ավելի ծանր հանգամանքներում, որոնց զոհը հայերն ամբողջովն դարձել են գրեթե ամենուր և որոնք կարող են, ի դեպ, այսօր կամ վաղը հատել քարքարոսության միևնույն վերջնագիծը»¹⁸: Այս հարցում հարկ է մրան արժանիք հատուցել:

Կոտորածների պատասխանատուներին դիմագրծելու հարցում, սակայն, Քիյեառի մեկնաբանություններն ամենևին էլ սպառնիչ չեն: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Աթոլու Համիդի, օրինակ, մա զերծ է պահում մվազագույն իսկ պատասխանատվությունից և իր հետզմունքը հայտնում, որ սուլթանի ապաշնորհ խորհրդականներն ի վիճակի չեն լինի մուրեցնել «խելացիությանը» ու «թարյացականությանը» օժտված միապետին, որին կհաջողվի վերահաստատել «հանդարտությունը» և ապահովել հայ ժողովրդի «բարգավաճումը»¹⁹:

Օսմանյան կայսրության մայրաքաղաքում բնակվող՝ իրադարձությունների ժամանակակցի մեծ ղիրքորոշումը խորհրդածությունների տեղից է տալիս: Անտարակույս, այն զուցե և պայմանավորված է եղել Քիյեառի՝ խնդրո առարկա գործընթացին ոչ լրիվ իրազեկությամբ, որի հետևանքով մա դեռևս անկարող է եղել ըմբռնելու ցեղասպանության բուն էությունը և այն դիտել իրեն պետական քաղաքականության մակարդակով կյանքի կոչված իրադարձություն: Նման մեկնաբանությունը, սակայն, մեր կարծիքով համոզիչ չէ:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 86: Սասունում զոհված հայերի թվաքանակի շուրջ ստույգ տվյալներ չկան այն տատմվում է մինչ տաս հազարի սահմանում: Այդ մասին տե՛ս Հ. Մ. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), Երևան, 1985, էջ 202-203:

¹⁸ M. Leveyre, Օշվ. աշխ., էջ 86-87:

¹⁹ Նույն տեղում, էջ 91: Խմբող առարկա հարցի կապակցությամբ «Մեն եղեմք և Ֆրանսիան (1915-1918 թթ.)՝ դիկտորական ատենախոսության մեջ Ե. Գասպարյանը Օշում է, թե իբր Քիյեառն «իր հողվածն ավարտում էր սուլթան Համիդին ուղղված կոչով՝ «վերջ տալ հայկական կոտորածներին և երկրում հաստատել համզըստություն» (էջ 26): Իրականում, ոչ միայն Գասպարյանի կողմից հղված՝ Քիյեառի հողվածի համապատասխան էջում (91), այլև դրա բնագրում առհասարակ անհմար է գտնել մեծ եզրահանգում:

Մտորելով խնդրո առարկա հարցում Բիյեառի գրաված դիրքորոշման շուրջ, հարկ է չանտեսել մի շարք էական հանգամանքներ: Նախ՝ չի քաջառվում, որ սկիզբ առած կոտորածները կանխարգելելու դիտավորությամբ նա գործադրել է օսմանյան իշխանություններին սթափեցնելու ճիգեր և, հավանաբար, փորձել սուլթանին սիրաշահելու միջոցով խոչընդոտել դրանց հետագա ծավալմանը: Բացի դրանից, պատահական չէ, ամշուշտ, որ Կ. Պոլսում քնակվող օտարերկրացիներ կոտորածներին նվիրված իր առաջին հոդվածները լույս է ընծայել կեղծամուճով²⁰: Հակառակ դեպքում, նա կարող էր, ըստ Չոպանյանի վկայությամբ, հարվածի մերքո դնել ոչ միայն իրեն, այլև այն հաստատությունները, ուր աշխատում էր²¹:

Հարկ է չանտեսել նաև այն իրողությունը, որ ֆրանսիացի մտավորականը Կ. Պոլսում գտնվել է թուրքական ոստիկանության և աշխուրջ հսկողության ներքո, հանգամանք, որն, անկասկած, իր կնիքն է դրոշմել նրա չափավոր մեկնաբանությունների վրա: Նշենք, ի դեպ, որ օգտագործած կեղծամուճը չի փախտել, այդուհանդերձ, Բիյեառի՝ իբրև հոդվածագրի հանդեպ թուրքական ոստիկանության տածած կասկածները, ինչը և հանգեցրել է նրա կարճատև ձերբակալմանը²²:

1896 թ. Փարիզ վերադառնալուց հետո, Բիյեառի հայանպաստ գործունեությունը թևակոխում է նոր փուլ: XIX դարավերջին և XX դարասկզբին նա գրում է կոտորածների զանազան փուլերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, պարբերաբար հանդես գալիս ֆրանսիական մամուլում, մասնակցում Հայ դատին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին, 1897-1902 թթ. անդամակցում Արշակ Չոպանյանի նախաձեռնությամբ Փարիզում հիմնադրված «Ֆրանս-հայկական կոմիտեին», որի կազմում ընդգրկված էին նաև Հայ դատի շատ այլ բոցաշունչ պաշտպաններ, ինչպիսիք էին Վ. Բերարը, Ա. Վանդալը, Է. Լավիսը, Դ. Կոշենը, հայր Ծարմետանը և ուրիշներ²³:

Կասկածից վեր է, որ Բիյեառի հայանպաստ գործունեության ամենավաղ դրվագներն անքակտելիորեն կապված են «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի (1900-1908, 1912-1914 թթ.) հրատարակության հետ: Ստանձնելով պարբերականի գլխավոր խմբագրի պարտականությունները, նա լրագրի գրեթե յուրաքանչյուր համարում հանդես է եկել ծավալում հոդվածներով և ամենայն մանրամասնություններով լուսաբանել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, մեկնաբանել մեծ տեղությունների

²⁰ Կ. Պոլսում քնակվելու ժամանակաշրջանում Բիյեառի գրած հաջորդ և մեզ համար դեռևս անմատչելի հոդվածը ևս, որը նվիրված է Ա. Չոպանյանի աշխատասիրությամբ հրատարակված «Հայաստանի կոտորածներ» ժողովածուին (*Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896*), լույս է տեսել կեղծամուճով (*M. L. Rogre, Les massacres d'Arménie. Quelques documents et remarques en l'honneur de sultan Abdul-Hamid, de la civilisation européenne et de l'alliance franco-russe // "Mercure de France", septembre 1896*): Այդ մասին տե՛ս E. Khayatsyan, նշվ. աշխ. էջ 61; A. Vahramian, նշվ. աշխ., էջ 341:

²¹ A la mémoire de Pierre Quillard, p. 35.

²² Բիյեառն ազատ է արձակվել ֆրանսիական դեսպանության միջամտությունից հետո միայն: Տե՛ս նույն տեղում, էջ 36:

²³ E. Khayatsyan, նշվ. աշխ., էջ 75:

քաղաքականության ելևէջները²⁴։ Գործունեության այս շրջանում նրա առաջադրանքներով հրատարակվել են մասնավորապես Հայ դատին և դրան հարակից հարցերին նվիրված մի շարք գրքեր²⁵։

Փառիզում հաստատվելուն հաջորդած տարիներից հայկական կոտորածների ծավալումը և դրանց առնչվող ստույգ տեղեկատվության բացակայությունը, ինչպես նաև ծանոթությունը «թղթերի հրապարակի վրա գտնվող» Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության առիթովի՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանը վերաբերող վավերագրերը ամփոփող «Դեղին գրքի»²⁶, մեծապես նպաստել են, որ Քիլեանոյ 6իշտ ըմբռնի կատարվող իրադարձությունները։ Քիլեանոյ հայացքների ակնհայտ էվոլյուցիայի կենթեք են կրում նրա բազմապիսի ելույթները, որոնց բնորոշ են Հայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության մեկնաբանումը, այդ գործընթացի առանձնահատկությունների բացահայտումն ու մանրագծի քննությունը, Աթուլ Համիդի և նրա հանցախմբի մեղադրանքները, եվրոպական պետությունների, և մասնավորապես Ֆրանսիայի, դրսևորած անկարեկից դիրքորոշման անողորմ քննադատությունը։

Քիլեանոյ ելույթների թիրախում հառնում է Աթուլ Համիդի հայապաշտ կերպարը, որիմ նա հիմնավորապես մեղադրանքներ է իբրև հայկական կոտորածների կազմակերպիչի, անվանում է «մեծ մարդասպան», «կայսրական ավազակ», «կարմիր վազան», «մարդկային կերպարանք ունեցող հրեշավոր վազան»²⁷ և այլն։ «Սուլթանը, — գրում է նա, — կրում է անձնական պատասխանատվություն։ Աթուլ Համիդը և ստորադաս հանցագործները, որոնք նրա հպատակները լինելով իշխում են նրա վրա, հայկական տառապանքների բուն հեղինակներն են... Այդ նրա ցանկությամբ են սպանում. նրա բանագնացները կտրում-անցնում են մահաճյուղներ, իսկ կոտորածների ազդանշանը տրվում է նրա փոքրիկ սպիտակ ձեռքով»²⁸։

Ինչպես տեսնում ենք, մի քանի տարի առաջ՝ հայկական կոտորածներին Աթուլ Համիդի ունեցած մասնակցության հարցում, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով,

²⁴ Լրագրի հիմնադրման մամուլամասների, այդ ասպարեզում Քիլեանոյ մեղադրանքները լուրջ, ինչպես նաև նրա՝ իբրև գլխավոր խմբագրի գործունեության մասին տե՛ս A. Vahramian, *ՅԶՎ. աշխ.*, էջ 343-347։ Ի դեպ, Ա. Վահրամյանը Քիլեանոյ իրավաբանական գնահատում է «լրագրի ոգին»։ Նույն տեղում, էջ 345։

²⁵ L'assassinat du Père Salvatore par les soldats turcs. Témoignage d'Aghassi, un des quatre chefs de l'insurrection de Zeitoun. Avec préface de Pierre Quillard, Paris, 1897; G. Darys, Abdul-Hamid intime. Préface de Pierre Quillard, Paris, 1903; Pour l'Arménie et la Macédoine. Préface de Victor Bérard. Introduction de Pierre Quillard, Paris, 1904; Aknoum, Les plaies du Caucase. Avec préface de Francis de Pressensé et introduction de Pierre Quillard, Genève, 1905.

²⁶ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897. Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897. «Դեղին գրքի» մասին մամուլական տե՛ս Վ. Պողոսյան, Ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2004, թիվ 9, էջ 100-111։

²⁷ P. Quillard, Préface // G. Darys, Abdul-Hamid intime, p. VII, X; մույժի՝ La Quinzaine // "Pro Armenia", 10 décembre 1900; մույժի՝ La Quinzaine // "Pro Armenia", 25 septembre 1901.

²⁸ P. Quillard, Pro Armenia // "Pro Armenia", 25 novembre 1900.

դեռևս թերահավատություն դրսևորող «Իլյեառն այժմ արդեն հանդես է գալիս մրան ա-
նարզամքի սյունին զամողի դեբում: Նրա համոզմամբ» «բարեմորոգումների փոխարեն,
սուլթան Աբդուլ Համիդը մախապատրաստել է և 1893-1896 թթ. իրականացրել սարսա-
փազդու կոտորածներ, որոնք ամենամշամավոր տիրակալների գահակալության պատ-
մության ընթացքում երբևէ չեն արձանագրվել»²⁹:

«Իլյեառն ամբողջությամբ քացահայտում է Աբդուլ Համիդի՝ Օսմանյան կայսրության
տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ վարած քաղաքակա-
նության բուն էությունը, որի գոհը, ինչպես նա իրավամբ նշում է, հայերից գատ դարձել
էին շատ այլ, այդ թվում մահմեդական, ժողովուրդներ (բուլղարացիներ, հույներ, արաբ-
ներ, եզդիներ), հավաստում է, որ սուլթանը «իդարյունալի գործը պսակել է սառնասրտո-
րեն մտահոգացված և հետևողականորեն իրականացված երեք հարյուր հազար հայերի
բնաջնջմամբ»³⁰:

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած՝ ընդհանուր
բարեմորոգումների իրականացման նպատակ հետապնդող «խաղաղ ցույցի» ճնշմանը
հետևում է «մեծ կոտորածների ժամանակաշրջանը», որի ընթացքում «երեք հարյուր հա-
զար մարդիկ սպանվում են, կախվում, այրվում, մորթագերծ արվում, մասնատվում, քա-
ռատվում»³¹:

Այս ջարդերի պատասխանատվությունը «Իլյեառն բարդում է օսմանյան միապետի
շուրջ համախմբված հանցախմբի վրա, որի իշխանությունը բնորոշում է իբրև «կամայա-
կան և ահհանդուրժելի»: Ինչպես նա նշում է, «համընդհանուր անապահովության» մեռ-
լորտում խաբխափող Օսմանյան կայսրությունում գոյություն ունի «զաղտնի, կոլեկտիվ և
պատասխանատվությունից զուրկ իշխանություն, որի չարագուշակ դերը պարբերաբար
սպրդեց է մեր միջամտության անհրաժեշտությունը առաջադրող իրադարձությունների
ընթացքում»: Խոսքը վերաբերում է Պալեին, որն «ամայացրել է երկիրը և իր բռնություննե-
րով ու բռնատիրությամբ ամենուր ապստամբությունների պատճառ դարձել»³²: Ընդհա-
նուր առմամբ, հայկական կոտորածները նա դիտում է իբրև «համատեղ ջանքերով և վա-
ղուց ի վեր մախապատրաստված» ծրագրի հիման վրա իրականացվող եղելություն³³:

Չբավարարվելով, սակայն, սուկ Աբդուլ Համիդի մտահոգմամբ իրականացված՝
հայկական զանգվածային կոտորածների փաստի արձանագրմամբ, «Իլյեառն թափան-

²⁹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, *Cahiers de la quinzaine* (3^e série, 19^e année) Paris, 1902, p. 6. Ե. Գասպարյանի այն հավաստումը, ըստ որի, «Իլյեառնի նախորդ գրքերը, գրություններն ու հոդվածները «հավաքվեցին հայ ժողովրդի շահերը պաշտպանող» սույն ժողովածուի մեջ (Ե. Գասպարյան, ՉՉ, աշխ., էջ 27), չի համապատասխանում իրականությանը: Նշենք, ի դեպ, որ այս գրքի հանձնարարականը «Իլյեառնը ստացել է «Cahiers de la quinzaine» մատենաշարի հրատարակիչ Օտոլ Պեզիից: Այդ մասին տե՛ս G. Leroy, L'Arménie dans l'œuvre et la pensée de Charles Péguy, "Revue d'histoire de la Shoah", Le monde juif, N 177-178, p. 359-361.

³⁰ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 décembre 1900.

³¹ P. Quillard, Diplomatie secrète du sultan (novembre 1897 - octobre 1898) // "Revue de Paris", livraison du 15 juin 1899, p. 883.

³² P. Quillard & L. Margery, La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux, Paris, 1897, p. 27-28.

³³ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie // "Revue des revues", livraison du 15 octobre 1901, p. 115.

ցում է հայերի հաճախ վարած նրա երկդիմի քաղաքականության և ստոր գործելամիջոցների առկայության մեջ: Քիչեառն այս հարցում դրսևորում է համակողմանի մոտեցում և համոզմունք հայտնում, որ «հավանաբար, վստահություն չտածելով կառավարման իր իսկ կիրառած միջոցների արդյունավետության հանդեպ», սուլթանը վճռել է փոխել տակտիկան և երկյուղներից ձերբազատվել «մերթ դիվանագիտության, մերթ ուժի միջոցով»³⁴:

Քիչեառը վեր է հանում հայկական հեղափոխական կոմիտեների գործունեությանը քաջատեղյակ Աթոյւ Համիդի ցեղ վարձագծի էությունը, որը փորձել է Փարիզում հաստատված հայ հեղափոխականների հետ հարաբերություններ հաստատել և Վիլհելմ II-ի՝ Արևելք ուղևորվելու նախօրյակին, հնարավոր, սակայն տհաճ միջադեպերից խուսափելու դիտավորությամբ, 1897 թ. հոկտեմբերին սկսել է քանակեղ նրանց հետ: Քիչեառը համպատասխան վերլուծում է հայերին ներում շնորհող և բազմապիսի խոստումներ շռայլող՝ 1898 թ. ապրիլի 15-ին Աթոյւ Համիդի հրապարակած հրովարտակը և ընդգծում, որ սուլթանը «չի իրականացրել իր խոստումներից և ոչ մեկը»³⁵:

Այս պայմաններում, մա միանգամայն օրինաչափ է համարում հեղափոխական գործունեությունը շարունակելու ուղղությամբ հայկական կուսակցությունների ցանկությունը, քանզի Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում տիրող իրավիճակը նրանց ամենևին չէր տրամադրում «պասսիվ դիրքորոշում» որդեգրելու:

Համիդյան կոտորածների պատմության վերլուծության մեղադարձած ժամանակակիցների մեծամասնությունը ուշադրությունը կենտրոնացրել է գլխավորապես 1894-1896 և 1904 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների վրա: Ի տարբերություն այլոց, Քիչեառը բազմիցս հավաստել է Հայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը, պարբերաբար ամբողջարձել 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածներին ևս, որոնց մվիրված նրա ռաումաֆորություններն առանձնանում են ոչ միայն պատմի արժանահավատությամբ, այլև սպառնչ մեկնաբանություններով³⁶:

XIX-XX դդ. սահմանագծին «գաղտնի հետապնդումների» կարճատև ժամանակահատվածին հաջորդած՝ Մուշում և Սասունում վերսկսված թոմությունների փաստը մա «անկաստեսելի» չի համարում: Մամրամասն մկարագրելով 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանի զանազան գյուղերում ծավալված իրադարձությունները (քրդերի և կանոնավոր զորքերի կողմից գյուղերի կողոպուտ, ավերում, հրկիզում, քանկչության կոտորած և այլն), Քիչեառը Մուշի և հիթլիսի շրջակայքում տեղի ունեցած ջարդերի պատասխանատվությունը անվարանորեն քարդում է «սուլթանի կառավարության» վրա, որը երկու տարուց ի վեր որոշել էր «հաշիվները մաքրել սասունցիների հետ»³⁷:

Նշեմք, ի դեպ, որ 1901 թ. Մուշի հարթավայրում տեղի ունեցած կոտորածները մա պայմանավորում է XIX դարասկզբից ի վեր հայ քանկչության աճով³⁸: Ի վերջո, օսման-

³⁴ P. Quillard, *Diplomatie secrète du sultan*, p. 884.

³⁵ Նույն տեղում, էջ. 886:

³⁶ Տե՛ս օրինակ՝ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie: Enquêth* Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 44-50.

³⁷ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie*, p. 120.

³⁸ P. Quillard, *Pour l'Arménie. Mémoire et dossier*, p. 63.

յամ կառավարության գործադրած ջանքերի հետևանքով, իմչպես կսկիծով արձանագրում է Քիյեառը, Մուշի հարթավայրում 1901 թ. հուլիսի 23-ից ի վեր, «տիրում է կատարյալ լուրջություն՝ մահվան լուրջությունը»³⁹:

Հիրավի, համիդյան ժամանակշրջանում Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ են եղել թե՛ փուլային, անհամաչափ զարգացումը և թե՛ բնակչության ոչնչացման զանազան եղանակների կիրառումը, որը չի վրիպել Քիյեառի խորաթափանց հայացքից⁴⁰: Սուլթանը, իմչպես փաստերով ցույց է տալիս Քիյեառը, զանգվածային կոտորածների միջանկյալ ժամանակահատվածներում դիմել է արևմտահայության ոչնչացման տարատեսակ գործելամիջոցների, ինչպիսիք են անհատական սպանությունները, արհեստականորեն կազմակերպված սովը, բանտերում կիրառվող խոշտանգումները, բռնի կրոնափոխությունը և այլն: Ի վերջո, Աբդուլ Համիդի քաղաքականության բուն նպատակը, անկասկածաբար կենսագործման եղանակների զանազանությանը, Քիյեառի համոզմամբ համգում էր հայ ժողովրդի «համատարած բնաջնջմանը»⁴¹:

Հայոց ցեղասպանությունը պայմանավորելով պետական քաղաքականությամբ, Քիյեառը կտրականապես մերժել է այն իբրև կրոնական հեմքի վրա խաբսխվող իրադարձություն մեկնաբանող տեսակետը: Լուի Մարժերիի հետ մեկտեղ նա վճռականորեն հանդես է եկել այս անընդունելի մոտեցման կողմնակից Ֆրանսիայի Ալտաքիմ գործերի մասնաբաժնի Գարրիել Հանոտոյի (1853-1944) դեմ և խիստ քննադատության ենթարկել նրա թրջամետ դիրքորոշումը: Հենվելով, դիցուք, 1896 թ. Օսմանյան բանկի գրավման միջադեպին հաջորդած՝ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածների ընթացքում մայրաքաղաքում մահմեդական բնակչության կողմից հայերին ապաստան հատկացնելու փաստերի վրա, Քիյեառն ապացուցել է, որ քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա հակամարտությունը և կրոնական զանազանության հողի վրա վերջիններիս դրսևորած մոլեռանդության հանգամանքը արևմտահայության բնաջնջման գործընթացում վճռորոշ դեր չեն ունեցել⁴²:

Բանավիճելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների պատկերը խեղաթուրող հեղինակների հետ, Քիյեառը հիմնավորապես հերքել է սկզբունքային մշակակություն ունեցող մի շարք հարցերում նրանց առաջադրած թյուր տեսակետները՝ կապված, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի նվազեցման, հայկական կուսակցությունների գործունեությունից իբրև անգլիական և ռուսական «քանսարկությունների» հետևանք մեկնաբանելու, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը ժխտելու հետ: Նա ճշգրտել է կայսրության տարածքում բնակվող հայերի թիվը, որն, ըստ նրա հաշվարկների, դեռևս 1870-ական թվականներին տատան-

³⁹ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 124.

⁴⁰ Տե՛ս օրինակ՝ P. Quillard, Diplomatie secrète du sultan p. 898; *Տույնի*՝ Pro Armenia II «Pro Armenia», 25 novembre 1900; *Տույնի*՝ Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 10-36; Pour l'Arménie et la Macédoine, p. 251-255.

⁴¹ Տե՛ս 1903 թ. հոկտեմբերի 25-ի Փարիզի Սահա Բեռնար թատրոնում գումարված ճիստում նրա ունեցած ելույթը. Pour l'Arménie et la Macédoine, p. 256.

⁴² P. Quillard & L. Margery, *Ոչվ. աշխ.* էջ 17-18:

վում էր երեք միլիոնի սահմանում, վկայակոչել հայ ազգային հերոսներ Աղբյուր Սերոբի և Անդրեանի կոորդինացիայի առաջնորդ հավաստի փաստեր⁴³։

Խստագույնս նշանակելով արևմտահայության ճակատակրի հանդեպ եվրոպական պետությունների անկախելից վերաբերմունքը, Քիլեաոն ամենևին չի զլացել պարբերաբար քննադատական խոսքեր ուղղել նրանց հասցեին, բազմիցս ընդգծել է եվրոպական պետությունների մեղսակցությունը հայկական կոտորածների սանձազերծմանը։ Եվրոպային Քիլեաոն անվանել է 1894-1896 թթ.՝ «մարդկության դեմ իրականացված» պատվարյան մեջ անմասնադատ հանցափորձի՝ մեղսակից⁴⁴։ Նրա համոզմամբ, «ամենագործության մեջ անմասնադատության միջոցով» սուլթանին ներշնչել է մեծ տերությունների «ամբոջայի թողտվությունը»⁴⁵ (նշենք, որ Քիլեաոն անողոր է, մասնավորապես, Հանդուտյի նկատմամբ, որը, նրա համոզմամբ, «իրեն պատվազրկել» էր⁴⁶ և դարձել «Մարդասպանի միջոցով» նրա հանցակիցը⁴⁷)։

Եվրոպական պետությունների անգործունեությունը Քիլեաոն մասամբ մեկնաբանել է նրանց միջև առկա անհամաձայնությամբ, որը ոչ միայն ճանապարհ է հափքել զանգվածային կոտորածների իրականացման համար, այլև հուսալքել է հայերին⁴⁸ և այն համոզմունքն է հայտնել, թե սուլթանն ի գործում էր արյամբ հեղեղել և հրկիզել Բալկաններից մինչև Արարատ, Սև ծովից մինչև Պարսից ծոցն ընկած տարածքները, իսկ սոսկ իրենց շահերով առաջնորդվող քաղաքականությամբ պետությունները, այդ ամենին ի տես, մնալու էին, այդուհանդերձ, անհողողող դիտորդի դերում⁴⁹։

Ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականությանը որպես վիսավոր պատճառ նա նշում է. «կայսրության մասնատումից խուսափելու համար, *Ֆրանսիան ամառահար է լինելու՝ զոհերի և դահիճների պայքարում վերջիններիս աջակցելու պատճառով*» (ընդգծումը հեղինակիցն է — Վ. Պ.)⁵⁰։

Արևմտահայության վիճակը բարելավելու նպատակով Քիլեաոն պահանջել է Բելիցի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը։ Նշելով, որ «սուլթանի խոստումները գրեթե նույնքան անհամար են, որքան նրա զոհերը», նա համոզմունք է հայտնել, որ Օսմանյան կայսրությունում հայերի համար նախատեսված բարենորոգումներն իրականացնելու միջոցով միայն հնարավոր է փակուղուց ելնելը։ Ըստ նրա, այդ բարենորոգությունները հարկ էր սուլթանին «պարտադրել, այլ ոչ թե խոնարհաբար ներկայացնել»⁵¹ (ընդգծումը մերն է — Վ. Պ.)։ Ստեղծված անելանելի կացությունը շտկելու «միակ հնարավոր» ուղին, ըստ նրա, ոչ միայն հայկական վեց վիլայեթներում բարենորոգումների

⁴³ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 59-88.

⁴⁴ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 125.

⁴⁵ P. Quillard, Préface // Dorys, Abdul-Hamid intime, p. XI.

⁴⁶ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 janvier 1901.

⁴⁷ P. Quillard, Préface // Dorys, Abdul-Hamid intime, p. X.

⁴⁸ P. Quillard & L. Margery, Ազգ. աշխ., էջ 11, 16, 19:

⁴⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 décembre 1900.

⁵⁰ P. Quillard & L. Margery, Ազգ. աշխ., էջ 24:

⁵¹ Pour l'Arménie et la Macédoine, p. 257.

իրականացումն էր, այլև եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների հսկողությամբ ցերք գտնվող վարչակարգի հաստատումը⁵²:

Ուստի՝ օրինաչափ է, որ Քիյեառը համղես է եկել իրեն Օսմանյան կայսրության ներքին գործերին եվրոպական պետությունների միջամտության ջերմ կողմնակից և փորձել իր դիրքորոշումը հիմնավորել՝ ելնելով XX դարասկզբին եվրոպայում տիրող քաղաքական իրավիճակի առանձնահատկություններից: «Հարկադրելու համար սուլթանին վերջապես կենսագործել Բեռլինի պայմանագրի հոդվածները, — գրում է նա, — ամենևին չի ծագի եվրոպական տերությունների միասնական համաձայնությունը ապահովելու անհրաժեշտությունը: Հայ ժողովրդին կատարյալ բնաջնջումից փրկելու համար քավական կլինի նրանցից մի քանիսի միջև դաշինքի կայացումը»⁵³:

XX դարասկզբին Քիյեառի, ինչպես նաև ֆրանսիացի շատ այլ մտավորականների մարտական ելույթներն առաջ են բերել, բնականաբար, Արդուլ Համիդի երկյուղը: Վերջինս, օգտվելով Ֆրանսիայում գործող օրենքների ընձեռած հնարավորությունից, ցամկություն է դրսևորել դատական գործ հարուցել Հայ դատի ֆրանսիացի պաշտպանների դեմ: Այս առիթով «Անահիտ» խմբագրությունը Քիյեառին անվանել է ճախատեսվող դատի «գլխավոր դերակատար», որը «Թուրքիո արդի կացությունը ամենեմ մանրամասն ու ամենեմ ներքին կերպով պիտոք ֆրանսիացիներեն է»⁵⁴:

Արդուլ Համիդը թեև փոքր-ի՜նչ ուշացումով, այդուհանդերձ պիտակցել է, թե ինչպիսի հետևանքներով են իր համար հղի դատական քննության արդյունքները և հրաժարվել է իր պահանջից: Այս համզամաքը Քիյեառին հիմք է տվել ծաղրելու սուլթանին, որը «զանգատվում էր մասնավորապես այն բանի համար, որ իրեն անվանում էին «մեծ մարդասպան, մեծ մտազործ, կարմիր սուլթան, կարմիր գազան»: Երբ նա իմացել է, որ փաստն ապացուցվելու է դատական միստում, հրաժարվել է իր քողոքից՝ խոստովանելով, այսպիսով, որ ինքն արժանի է բոլոր այդ տիտղոսներից»⁵⁵:

Հայ ժողովրդին սատարելու ասպարեզում Քիյեառի ցուցաբերած մեծ հետևողականությունը պայմանավորված էր զխավորապես նրա քաղաքացիական բարձր դիմագծով, որին բնորոշ էին թե՛ ազնվությունն ու շիտակությունը և թե՛ հանուն արդարության մարտնչելու անսահմանելի ցանկությունն ու ձգտումը: Նրա ժամանակակիցներից ոմանք (Ա. Ժերար, Ա. Ֆոնտենաս) իրավամբ ընդգծել են այն համզամաքը, որ Կ. Պոլսում բնակվելու ժամանակաշրջանում նա խիզախել է վտանգի ենթարկել իր ազատությունը և նույնիսկ կյանքը հանուն հայ ժողովրդի ողբերգության հավաստի պատկերը եվրոպական համայնությանը ներկայացնելու գործի⁵⁶:

⁵² P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 97.

⁵³ Նույն տեղում, էջ 98:

⁵⁴ Սուլթանին դատը, «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 1-2, էջ 41:

⁵⁵ P. Quillard, Pro Armenia // "Pro Armenia", 25 novembre 1900. Այս առիթով, ի դեպ, «Անահիտ» խմբագրությունը սոսկ իր ցավն է հայտնել և հեղձանքով մեղել. «Այդ դատը եթե տեղի ունենար, սուլթանին կամքով կատարված միակ բարի գործը պիտի մնար, և ամբողջ խափանումը Ելզըզի մարդասպանին ամենեմ ծանրակշիռ ոճիրներին մեկը կըմանք համարիլ»: Տե՛ս Սուլթանին դատը, «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 3, էջ 79:

⁵⁶ Տե՛ս A la mémoire de Pierre Quillard, p. 44, 50.

Հետագայում, 1903 թ., Հայաստանում և Մակեդոնիայում ծավալված իրադարձությունների շուրջ՝ Վ. Բերարի և իր ցուցաբերած մեծ հետաքրքրությունը «Բիյետառ մեկնաբանել է հետևյալ կերպ. «Այնքան տեղում ծանոթացել ենք այս ժողովուրդների երկարատև մահատակությանը, հետաքրքրվել նրանցով և պատմելով այն մասին, ինչ տեսել ենք. կատարել ենք սոսկ մեր պարտքը, ասել ճշմարտությունը»⁵⁷:

Ըստ այս ամենի՝ Ֆ. դը Պրեսանսեն ունեցել է, ամտարական, թուր իրավունքները հավաստելու, որ ի դեմս «Բիյետառի» հայերը գտել էին անվեհեր մարտիկի, անխոց պաշտպանի, խելամիտ խորհրդականի»⁵⁸:

Հայ իրականության մեջ «Բիյետառի» հայանպաստ գործունեությունը թեև հավուր պատշաճի չի արժեքավորվել, այնուամենայնիվ չի շրջանցվել լուրջությամբ: Ֆրանսիական գրականության զարգացման ասպարեզում նրա վաստակի գնահատականը դեռևս 1895 թ. տվել է Ա. Չոպանյանը, որը դրա հետ մեկտեղ չի զլացել հայ ըմբերողին թարգմանաբար ներկայացնել նաև նրա որոշ ստեղծագործությունները⁵⁹: «Բիյետառի» անունը հնչել է մասնավորապես 1912 թ.՝ նրա վաղածավալված կապակցությամբ, որի թոթը ցնցել է Հայ դատի պաշտպաններին, մեծ վիշտ պատճառել հայ գործիչներին և ստավորականներին:

Ի շարք քաղաքական և հասարակական կազմակերպությունների (Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հնչակյան կուսակցություն, Թուրքիայի Հայոց պատրիարքարան, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարան), նրանցից շատերը (Անդրամիկ, Ա. Զավարյան, Ռ. Զարդարյան, Վարդգես, Գ. Զոհրապ, Սիամանթո և ուրիշներ) ցավակցական հեռագրեր են հղել «Բիյետառի» այրումը⁶⁰, հանդես եկել նրան նվիրված հոդվածներով⁶¹: Հայ Յեղափոխական Դաշնակցության պարբերականներ «Ազատամարտ» ու «Դրոշակ», որին, ի դեպ, «Բիյետառը պարբերաբար թղթակցել է»⁶², տպագրել են նրա մահախոսականները (անստորագիր)⁶³:

Գ. Զոհրապը, որին «Բիյետառի» մահվան գուժը, իր իսկ խոստովանությամբ, հարկադրել է ձնկի վալ, տվել է նրա գործունեության հետևյալ գնահատականը. «Ֆրանսայի մեջ է իր գերեզմանը. բայց իր անունը մերձ է թուրքովին: Իր հրապարակագրի կյանքը մերձ է, մեր ազգին Պատմության էն պայծառ էջերեն մեկ է. իր հիշատակը մերձ է և թովանդակ Հայությունը պիտի հսկե անոր վրա»⁶⁴: Իսկ Սիամանթոն, չբավարարվելով «Բիյետառին» նվիրված

⁵⁷ Pour l'Arménie et la Macédoine, p. 304.

⁵⁸ A la mémoire de Pierre Quillard, p. 193-194.

⁵⁹ Ա. Չոպանյան, Պիեռ Բիյետառ, «Երգիկ», 1895, թիվ 15, էջ 525-541: Այս հոդվածի մասին տես Կ. Լ. Դալյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 79-80:

⁶⁰ Տես «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի – 31-ը հունվարի/13-ը փետրվարի 1912:

⁶¹ Նույն տեղում, 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Նրանցից ոմանց հոդվածները ֆրանսերեն թարգմանությամբ գտնելվել են նաև «Բիյետառի» հիշատակին նվիրված՝ 1912 թ. Փարիզում լույս ընծայված ժողովածուի մեջ: Տես A la mémoire de Pierre Quillard, p. 215-236.

⁶² «Դրոշակ», 1906, թիվ 5, 9: 1907, թիվ 3, 5:

⁶³ «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի 1912: «Դրոշակ», 1912, թիվ 2, էջ 17-20:

⁶⁴ Գ. Զոհրապ, Հայկական սուգ, «Ազատամարտ», 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Տես նաև Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, չորս հատորով, Երևան, 2002, II, Գ, էջ 468:

հողվածի լույս ընծայմամբ⁶⁵, մրա հիշատակին է ձոնել «Հոնտորը գերիներուն» քանաստեղծությունը⁶⁶:

Նշեմք նաև, որ հայ մտավորականներից ոմամք հանդես են եկել Քիլեանի արձանը կանգնեցնելուն, Սասունում Քիլեանի ամվան վարժարան հիմնադրելուն առնչվող առաջարկություններով և, համուն այդ մտահղացումների իրականացման, սկիզբ են դրել հանգանակությունների հավաքմանը⁶⁷: Այդ մախաձեռնությունները, սակայն, չնայած առաջին դրական արձագանքներին⁶⁸, հաջողությամբ չեն պսակվել: Կ. Պոլսում, Փարիզում, Բուլղարիայի զամազան քաղաքներում հանգրվանած հայկական համայնքները Քիլեանի մահվան կապակցությամբ կազմակերպել են սզո հանդեսներ⁶⁹, իսկ թաղման արարողության ժամանակ Պեր Լաշեզ գերեզմանատանը մրա դազադը կրել են Փարիզի հայ ուսանողները՝ մրան մատուցելով հարգանքի վերջին խորին տուրքը⁷⁰:

Քիլեանի հիշատակին ցվիրված ելույթում Ա. Ահարոնյանն, ի դեպ, ուշադրությունը կենտրոնացրել է Հայկական հարցում ֆրանսիական կառավարության պաշտոնական քաղաքականության և ֆրանսիացի մտավորականների գրաված դիրքորոշման ներհակության փաստի վրա: «Պաշտոնական Ֆրանսիան ևս մեզ թողել էր մեր թագակիր դահի ողորմածությանը, այն ևս, առանց իր վեհ անցյալին վայել թողալիման, թույլատրել էր, որ մարդկության դեմ ուղղված մեծ հանցագործությունն իրականացվի: Սակայն, զոյություն ուներ մեկ այլ Ֆրանսիա՝ Վոլտերի, Լաֆայետի, Վիկտոր Հյուգոյի և Պաստորի Ֆրանսիան: Այդ վեհաշուք Ֆրանսիան կանգուն էր՝ իրեն հավերժական պահպանն այն ազնվաբարո ալամդների, որոնք միշտ եղել են և կլինեն այս երկրի վեհության ու անդիմադրելի հմայքի առհավատյան»⁷¹:

Հենց այդ «վեհաշուք» Ֆրանսիայի արժամալոր զավակն էր, ըստ Ահարոնյանի քննորոշման՝ «մեծ հայասեր», «ադդարության և ազատության մեծ ոահվիրա»⁷² Պիեռ Քիլեանը, որը Հայ դատին սատարելու ասպարեզում ի հայտ բերած ամենվիրությամբ և ամշահախընդրությամբ դարձավ իր ժողովրդի հինավուրց դեմոկրատական ալամդների անմար հուրի ջահակիրը:

⁶⁵ Սիամանթո, Քիլեան մտերիմ, Սիամանթո, Ամբողջական երկեր, Անթիպա, 1989, էջ 228-229:

⁶⁶ «Դրոշակ», 1912, թիվ 3: Տե՛ս նաև Սիամանթո, Տաղ Քիլեանի հիշատակին, Սիամանթո, Անտիպ երկերի ժողովածու, Երևան, 2002, էջ 297:

⁶⁷ Ազատամարտ, 29-ը հունվարի/1-ը փետրվարի, 17-ը փետրվարի/1-ը մարտի 1912:

⁶⁸ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁶⁹ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 4/17-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁷⁰ Նույն տեղում, 27-ը հունվարի/9-ը փետրվարի 1912:

⁷¹ A la mémoire de Pierre Quillard, p. 21-22. Նշեմք, որ մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում արևմտահայության ճակատագրի նկատմամբ Ֆրանսիայի որոնեքած պաշտոնական դիրքորոշման և ֆրանսիացի մտավորականների հայանպաստ գործունեության միջև առկա զանազանություններն Ահարոնյանից ավելի վաղ ընդգծել է Զոպանյանը: Տե՛ս Ա. Զոպանյան, Ղաբավորքի Ֆրանսան, «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 5-6, էջ 155:

⁷² A la mémoire de Pierre Quillard, p. 16.

ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՅՈՋՑԱՆ

ԿՈՄԻՏԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ
ՍՏԵՂԾՄԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պառիպանվող Կոմիտասի ձեռագրերի մեջ կամ մեծ թվով թուրքերեն երգեր՝ գրառված Կոմիտասի կողմից: Այս երգերից 4-ը տարբերվում են մյուսներից: Դրանք բազմաձայն են և պչքի են ընկնում կառուցվածքային ու մեղեդիական ոճի առանձնաբնույթով: Իմչը ակնհայտորեն առանձնացնում է այս երգերը մյուս բազմաձայնակ "շարքից"¹ և "թուրքի"ներից², որոնք Կոմիտասը գրի է առել ու հավաքել: 4 երգերից 3-ը գրված են երգչախմբի համար, իսկ չորրորդը մի մեմբրոզ է՝ դաշնամուրի ընկերակցությամբ: Այս 4 երգերը հորինել է հենց իմքը Կոմիտասը, և այս հոդվածը նվիրված է միայն այս 4 երգերին:

Խմբերգերից մեկը, "Աղանիքդեմ չըջտըլար", գտնվում է Կոմիտասի ֆոնդի 443 և 445 համարների տակ: Երգը գրի է առնված բազմաթիվ կրկնություններով, բոլորը էլ սևագրեր են, մասամբ թերի վիճակում, կարելի է ըմբռնել, որ Կոմիտասը այն հետազայում մաքրագրել է: Այդ մասին վկայում են էջերի վրա դրված մեծ «✓» նշանները: Կ. Ֆ. 443 համարի վավերագիրը մի մոտային տեղեր է: Էջերը տասը տողանի են: Երգը արձանագրված է տեղերի միայն երկու էջերի վրա: Գրված է հինգ տողի վրա, վեց ձայնի համար՝ S/A, T₁, T₂, B, և B₂: Թեև մի շարք հատվածներում սույի բանալիի կողքը դրված է ֆա կիսվեր [dies] նշանը, որը պատկանում է "սոլ մեծալար" [Sol Major] կամ "մի փոքրալար" [Mi Minor] ձայնակայքին [tonality], իշխող ձայնակայքը "դո մեծալար" է, ամանակը [metre]՝ 4/4:

Երգը ամբողջական է: Վերջում ավելացված են 6-րդ և 7-րդ տների երկու տարբերակներ: Գրված է մատիտով: Ելնելով Կոմիտասի աշխատանքից, այստեղ ներկայացված քիչ ուղղումներով մյուսը կարելի է ըմբռնել որպես վերջնական տարբերակ, որը ամենայն հավանականությամբ այս ձևի տակ էլ մաքրագրվել է՝ թերևս ամենայն փոփոխություններով: Այս երգի բազմաթիվ արձանագրությունները գտնում ենք Կ. Ֆ. 445 համարի տակ, որը բաղկացած է տարբեր չափսերի հատուկ մոտագրության համար պատրաստված առանձին թերթիկներից:

Երգի տարբերակները գրված են 3, 4 և 5 տողերի վրա, իսկ մի դեպքում ավելացված է նաև դաշնամուրի ընկերակցությունը: Համարյա բոլոր գրառումներն էլ սևագիր վիճակում են, երգը հազվադեպ է արձանագրված ամբողջովին և միայն մի դեպքում է վերջնական մաքրագրվածի տպավորությունը թողնում: Այն նվիրված է Օսմանյան պետության երկրորդ

¹ Օտքը կոչվում են այն երաժշտական ստեղծագործությունները, որոնք հորինված են մասնագետ երաժիշտների կողմից:

² Թուրքերենը ժողովրդական անունով ստեղծագործություններ են:

սահմանադրությամբ ու մասնավորապես "Շարժման Բանակ"ի³։ Երգի բանաստեղծությունը շարադրված է ժամանակակից թուրքերենով, որը եղել է Օսմանյան Թուրքիո խոսակցական լեզուն։

Երկրորդ խմբերգը, "Լ՛յ մուազզամ", նույնպես գտնվում է Կոմիտասի ֆոնդի 443 և 445 համարների տակ։ Ինչպես որ վերը տեսանք, "Սեւաճիջդեն չըքտըլար" երգի գրառումները Կ. Ֆ. 445 համարում ավելի շատ են, քան Կ. Ֆ. 443 համարում։ "Լ՛յ մուազզամ" երգի դեպքում ուղիղ հակառակ պատկերն է նկատվում։ Կ. Ֆ. 445 համարում կատարված գրառումներում այս երգը գրված է 5 տողերի վրա, Տ, Ա, Դ, Ե և Բ (Բ₁-Բ₂) ձևով, ընդամենը 3 էջ։ Ընդհանուր առմամբ ձայները թերի են արձանագրված, իսկ մի դեպքում էլ Տ/Ա-ը ցույց է տրված 3-րդ տողում։ Կ. Ֆ. 443 համարում կան երգի բազմաթիվ տարբերակներ՝ հեղեղված սրբագրություններով։

Այս գրառումներից միայն մեկն է ամբողջովին և մաքուր արձանագրված, քոլոր ձայները և երաժշտական նշանները անթերի են և, ինչը խիստ հազվադեպ է հանդիպում Կոմիտասի մոտ, գրված են առանց որևէ ուղղումների։ Այս տարբերակում երգը սկզբից գրված է 4 տողի վրա Դ, Ե, Բ₁ և Բ₂, հետո անցել է 5 տողի՝ Տ, Ա, Դ, Ե և Բ։ Գրառումներում սույն քանակի մոտ ոչ մի նշան չի դրված, ինչը նշանակում է "դո մեծալար" ձայնակայք։ Միայն երկու դեպքում գրառման սկզբում դրված է չորս կիսվեր նշաններ, որը նշանակում է "մի մեծալար"։

Վերջնական տեսք ունեցող տարբերակի մեջ էլ, ըստ երևույթին, ճիշտ նշաններն են դրված, որոնք երեք կիսվեր նշաններն են սույն քանակի մոտ, որը "լա մեծալար" ձայնակայք է նշանակում։ Այդ ձայնակայքով էլ ընթանում է այս ստեղծագործությունը։ Երգը սկսում է 4/4 ամսանկով, այնուհետև դառնում 3/4, այսպես չորս անգամ փոխարինվելուց հետո՝ վերջանում է դարձյալ 4/4-ով։ Երգը նկարված է Օսմանյան կայսրության մեծապետ փառիշահին։ Երգի բանաստեղծությունը շարադրված է օսմաներենով (հին թուրքերեն)⁴։ Փառիշահի անունը չի նշվում ուսանավորի մեջ, սակայն Կոմիտասի՝ Պոլսում գտնվելու ժամանակաշրջանում Արդուլ Համիդ II-ը արդեն զահին հետացվել էր ու փոխարենը Մեհմետ V Ռեշատը էր սուլթան նշանակվել երիտթուրքերի կողմից (27-4-1909)։ Նրա գահակալությունը տևեց մինչև իր մահը (4-7-1918)։ Բացի այդ, փառաքանության մեջ ասվում է "նեվճահ", որը նշանակում է "նոր գահակալ"։ Սուլթան Մեհմետ V Ռեշատը այս երգի ստեղծման ժամանակ իր գահակալման երեք տարին դեռ չէր բոլորել։ Այստեղից հետևում է, որ երգը կարող էր ձևված լինել միայն սուլթան Մեհմետ V Ռեշատին։

Առաջին հիշատակությունը "թուրքական երգեր"ի մասին հանդիպում ենք Կ. Պոլսում հրատարակվող "Ազատամարտ" թերթի երրորդ էջում։ "Մամը լուրեր" բաժնում թերթը հաղորդում է Կոմիտասի մասնակցության մասին իր երգչախմբով Տրիպոլիսի վերավոր զինվորների օգտին կազմակերպվող միացահանդեսին. «Կոմիտաս վարդապետը ուրախությամբ

³ Օսմանյան պետության պատմության ըմբռնում երկու անգամ է սահմանադրություն հռչակվել։ Առաջինը 23 դեկտեմբեր 1876 թվականին, իսկ երկրորդը՝ 23 հուլիս 1908-ին։ 31 մարտ 1909-ին "Շարիաթ"ի կողմնակիցների կազմակերպեցին մի հեղաշրջում, որը ճնշվեց Սեւաճիկի (Թեհադոհիկե) եկած "Շարժման Բանակ"ի կողմից։

⁴ Օսմանյան Թուրքիայի վերնախափի լեզուն, որը մի խառնուրդ էր արաբերենի ու պարսկերենի (զեռակչի ու մաշը), լեզվի մեջ 15-20% քանոն ունեին թուրքական ձագում։

յամբ ընդունած է [կարգադիր մասնախմբի - Տ.Լ.] այս հրավերը և արդեն սկսած է քանի մը թուրքերեն երգեր ալ սովորեցնել 6-8 ձայնով իր խմբին...»⁵:

Նմանօրինակ հայտարարություն թերթը տալիս է ման համերգի օրը, այսինքն 21 մարտ 1912-ին. «Զինվորական վարժարանի սրահի մեջ տեղի է ունենում Տփսիսի հիվանդ զինվորների օգտին կազմակերպված պետական մրցակցահանդեսը: Այլոց թվում հավանդ զինվորների օգտին կազմակերպված երգչախումբը՝ կատարելով մի քանի հրաշքահանգում մասնակցում է ման կոմիտասի ղեկավարած երգչախումբը՝ կատարելով մի քանի հրաշքահանգում երգեր»⁶: Վերջապես, արդեն տեղի ունեցած համերգի մասին գտնում ենք հիշատակություն թորոս Ազատյանի մոտ: «1912 մարտ 21... քանի մը թուրքերեն երգեր տրվեցուց... զինվորական վարժարանի սրահին մեջ... տեղի ունեցավ մրցակցահանդեսը: (Պոլիս)»⁷:

Նշանակալից է, որ երեք արձանագրություններում էլ խոսվում է «մի քանի» թուրքական երգերի մասին, որոնք, ըստ «Ազատամարտ» թերթի, «6-8 ձայնով» են: «Սելահինդեղեն յոջուլար»-ը պետք է այդ երգերից լինի, քանի որ իր սեպակի տարբերակների մեջ կան մասեր, որոնք մշակված են 6-7 ձայնի համար: Անկա են ման դաշմամտի ընկերակցության հետքեր: Մեր ձեռքում եղած պատահականներից կարելի է եզրակացնել, որ երգի վերջնական տարբերակը եղել է, հիրավի, 6-8 ձայնով և դաշմամտի ընկերակցությամբ: «Թուրքական երգեր»-ի մասին ավելի հստակ տեղեկություն գտնում ենք հենց կոմիտասի մոտ:

Մարգարիտ Բաբայանին ուղղված 15/28 մարտ 1912 թվակիր մամուլում հետաքրքիր քաղմիմաստ մախադասություն ունի կոմիտասը. «Երկու հատ էլ տաճկերեն երգ են գրել, մեկը Սուլթանի, միւսը սահմանադրությանը նուիրում, որպեսզի գործերնս յաջողուին, և բառական ընդարձակ շրջան անեն պալատի մեջ»⁸: Այս մի մախադասությունը լուսաբանում է միանգամից 3 հարցադրում: Առաջինը՝ ճշվում է երգերի քանակը, որոնք երկուսն են: Երկրորդը՝ ակնարկում է ման երգերի հասցեատերը. «մեկը Սուլթանի, միւսը սահմանադրությանը նուիրում»: Երրորդը՝ ի՞նչ մալատակով են հորինվել երգերը:

Այսպիսով, կարող ենք վստահորեն ասել, թե մեր ձեռքում եղած երկու երգերը՝ մեկը Սուլթանին նվիրված (է՛լ մուազզալ), իսկ մյուսը սահմանադրությանը (Սելահինդեղեն յոջուլար) հենց այն երգերն են, որոնց մասին խոսվում է «Ազատամարտ» թերթում և կոմիտասի մամուլում: Բարեբախտաբար կա ման 8 ապրիլ 1912 թվականի համերգի ազդարարությունը հույն «Ազատամարտ» թերթի էջերում, որտեղ տրված է ման օրվա հայտագիրը⁹: Բացի երգերի անուններից, հայտնի է դառնում ման երգի խոսքերի հեղինակներից մեկի անունը՝ դա պոլսահայ մտավորական Գեորգ Սիմեջյանն է, իսկ «Շարժման բանակ»-ի ձոնված երգի դեմ ճշված է «Ազատությանը երգերն են»:

Արդյո՞ք կարելի է հետևություն անել, թե կոմիտասը մեկից ավելի «ազատության երգ» է հորինել: Համեմատողապես, կոմիտասի ձեռագրերի մեջ այդպիսիք չկան, բացի 444 ֆոնդային համարի տակ գտնվող մի հայտատա թուրքերեն խմբերգի, դժբախտաբար այն աստիճան անընթեռնելի վիճակում, որ ամենար է լիովին վերծանել, սակայն ակնհայտ է, որ

⁵ «Կոմիտասի հետ», Հ. Ը. Սիրումի, «Էջմիածին», 1966, Ը, էջ 21:

⁶ «Ազատամարտ», 1912, մո. 822, էջ 3:

⁷ «Կոմիտաս վարդապետ», Թ. Ազատյան, էջ 134:

⁸ «Նամակներ», Գ.Ա.Թ., Երևան, 2000, էջ 28-30, մո.13:

⁹ «Ազատամարտ», 1912, մո. 866, էջ 4:

դա մույճպես մի գովերգ է: Այն ուղղված է փառիշատակի «Ռայկական դպրոց»-ի կողմից և ոչ մի դեպքում չի կարող դասվել «ազատության երգեր»-ի շարքում: Հայտնի չէ, թե ո՞ր դպրոցի համար է Ռոբինել Կոմիտասը այդ երգը և ի՞նչ առիթով: Գրված է 30 տողաձի մեծ մոտային թղթերի վրա, քաղկացած է երկու էջից: Մի մասը գրված է 4, իսկ մնացածը 2 տողի վրա 4 ձայնի համար՝ S, T₁, T₂, B և S/A, T/B: Առաջին և երկրորդ տմերի բառերի միջև եղած վանկերի տարբերության պատճառով մույճ եղանակը փոքր-ինչ տարբերություններով երկու անգամ է արձանագրված (սուսը վերաբերում է 4 տողի վրա գրվածներին): Ամբողջ ստեղծագործությունը ըմբռնում է «դո մեծալար» ձայնակայքի մեջ: Առաջին տումը սկսվում է 9/4 ու շարունակվում 25/8 ամանակով, իսկ երկրորդ տումն ըմբռնում է 9/4 ու հետո 11/8 ամանակով: Երկուական տողի վրա գրվածները երգի տարբերակներ են և առանց բառերի:

Այս երգերի հետ կապված մի «ականատեսի վկայություն» գոյություն ունի: Կոմիտասի ֆոնդի 74 համարի տակ գտնվում են Ռուշեր Կոմիտասի մասին: Հուշերը գրի է առել Ստեփան Միքայելյանը «Գուսան» երգչախմբի անդամ քարիտոն Արամ Աստվածատրյանից, Երևանում, 1950 թվականի հունվար ամսվա մեջ: Աստվածատրյանն ի միջի այլոց տալիս է ման շահեկան տեղեկություններ՝ կապված 1912 թվականի ապրիլի 8-ի համերգի ու վերոհիշյալ թուրքական երգերի իմաստի մասին: Միայն 1912-ի փոխարեն մա մշում է 1913 թվականը: Ամենեկն էլ զարմամալի չէ, եթե ի մկատի առնենք, որ հիշված իրադարձություններից անցել էիմ շուրջ 40 երկար տարիներ: Ահա թե ինչ է գրում Արամ Աստվածատրյանը. «1913 թվիմ պոլիտում, Մեհիտ խալիֆան, Կոմիտասի մասին գնահատելի տեղեկություններ էր ստացել՝ որպես տաղանդավոր գեղարվեստագետ և դրա համար շատ էր սիրում:

Մի քանի անգամներ ամձամբ խալիֆան, Կոմիտասից խմդրել է թուրքական երգչախումբին դեկավարման պաշտոն ստանձնելու: Սակայն Կոմիտասը մի շարք հարգելի և օրինավոր պատճառներով մերժում է: Այս մերժումի վրա խալիֆան Կոմիտասից խմդրում է գոնե մի օր Գուսան երգչախումբի համերգին ներկա գտնվել: Խալիֆային խմդրամքը ըմդումվում է Կոմիտասից:

Կոմիտաս՝ ըստ իր ցուցակին, ալվեացնում է ման երկու հատ թուրքական եղանակներ, դաշնավորելով երգչախումբին սովորեցնում է:

Գալիս է խալիֆայի և Կոմիտասի ժամադրության պանձալի օրը: Գուսան երգչախումբը, կազմ ու պատրաստ սպասում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ քաղմությունը հավաքվել էր արդեն, քայց խալիֆան դեռ չէր եկել:

Համերգը պիտի սկսեր Ռայկական մոր ժամադրությամբ կեսօրվա ճիշտ ժամը երկուսին: Կոմիտասը սույն ժամադրությունից տասը րոպե պակաս հասնում է երգչախումբի զլխին: Լինում է ժամը երկուսը, դեռ խալիֆան չէր երևում. համերգը պետք է սկսվեր թուրքական երգով: Կոմիտաս՝ հրամայում է քանալ վարագույրը. սակայն երգչախումբից քացազամշում են -խալիֆան դեռ չէ՝ եկած... -թող՝ մի սուրճ պակաս խմի: Նորից հրամայում է և վարագույրը արդեն քացվում է. Կոմիտաս՝ հանդիսականներին դառնալով ողջունում է և բուռն ձափահարությունից հետո սկսում է երգչախումբը երգել թուրքական առաջին երգը:

Էլ Մու...

Երգի վերջավորության հասնում է խալիֆան իր մի քանի հետևորդների հետ. երգը վերջանում է. Կոմիտասն էլ դառնում ժողովրդին ողջունելու... Կոմիտասի և խալիֆայի աչքերը իրար զուգընթաց գալով, խալիֆան ուղղակի խոնարհական՝ ողջունում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ բազմությունը բոտմ կերպով ծափահարում են և երեք անգամ ուռու բացազանչություններով թնդացնում են ամբողջ սրահը. երգչախումբը խնդրում է Կոմիտասից մորից կրկնելու առաջին երգը. -երկրորդը: Ասում է Կոմիտաս և սկսում են:

Սեղա՛նիկոնեմ...

Հետո Գուսան երգչախումբը սկսում է մի շատ [շարք - Տ.Լ.] հայկական ժողովրդական երգեր. և վերջացնում են Միփամա քաջեր՝ ու: Ինչպես ասում է Գուսան երգչախումբի սլարիթուն՝ ընկ. Արամ Աստվածատուրյան՝ ամբողջ սրահը Միփամա քաջերի՝ երգով և բոտմ ծափահարություններով կարծես հիմնահատակ թնդացնում էր:

Խալիֆան դուրս ելած պահում դրսում՝ Կոմիտասին հանդիպելով՝ հրճվանքից, մույմ-իսկ ձեռքը համբուրելու աստիճան խոնարհական ողջունում է իր սիրելի Արվեստագետին:

Կոմիտասի հետ կապված այս բացառիկ աշխատվոր դրվագը պարունակում է մահ անճշտություններ: Համերգը կայացել էր ոչ թե 1913-ին, այլ 1912-ին, ինչպես արդեն ասվեց: Հագիվ թե իշխան Մեջիդը առաջին անգամ պիտի ունկնդրեր Կոմիտասին, քանզի մա ծանոթացել էր մրա արվեստին դեռևս 1911-ին: Վերջապես՝ իշխանը դժվար թե խնդրանքով դիմեր Կոմիտասին համերգին մերկա գտնվելու համար: Մյուս կողմից հուշերը պարունակում են հետաքրքրական տեղեկություններ, որոնց չենք հանդիպում ոչ մի ուրիշ տեղ: Այն վկայում է մահ Կոմիտասի սկզբունքայնության և իշխանի խոնարհության մասին:

"Դեպքը", որի մկարագրումը հասել է մեզ Արամ Աստվածատուրյանի միջոցով, ավարտվում է հետևյալ ձևով.

«Կոմիտաս ի պատիվ Գուսան երգչախումբի՝ որոշ ժամանակ հետո հավաքույթ է կազմակերպում "պէլխոգ" [Բեյքոգ - Տ.Լ.] զբոսավայրը:

Վոսֆորում [Բոսֆոր - Տ.Լ.] սպասարկող մարդատար շոգենավով գնում են "պէլխոգ" զբոսավայրը. մինչև իրիկուն ուրախ զբոսնելուց հետո, իրիկվա դեմին վերադառնում են...:

Շոգենավը սլանում էր ծովի վրայով. կապույտ ալիքները մեկդի հրելով. խալիֆայի սերայը ծովի եզերքում էր և շոգենավը "սէրայ"ին մոտից էր անցնում. Կոմիտաս կանգնեցնում է շոգենավը և երգչախումբին դառնալով ասում է -հիմա կրկնեցեք այդ առաջին թուրքական երգը. և երգչախումբը սկսում է երգել (էլ Մուազզամ և այլն...) խալիֆայի "սէրայ"ի փակ պատումները բոլորն էլ առանց խտրության բացվում են և ունկնդրում են երկնային երգեցողությունը"¹⁰:

Կոմիտասի Մ. Բաբայանին ուղղված մամակից երևում է այս խմբերգերը գրելու մպատակը՝ "որպեսզի գործերնին հաջողի": Դժվար ժամանակներ էին, ամբողջ աշխարհի զխալներում կախված էր պատերազմի վտանգը, Հայկական հարցը օրակարգի վրա էր

¹⁰ Ընդ որ հիմնական է քմագրին հավատարիմ մնալով, առանց որևէ ուղղումների: Տպագրվում է առաջին անգամ (մասնակի):

դրված, ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրի ներսում: Սկզբնական շրջանի ոգևորությունը "թուրք և հայ ժողովուրդների եղբայրության" առիթով սկսել էր հետզհետե մարել: Փողոցներում հայի և թուրքի գրկախառնությունից ու արցունքախառն "մեծք այլևս եղբայր ենք" կոչերից հետո Ռուսաստանություն էր առաջացել հայկական շրջանակներում:

Հակադարձ ամփատախություն էր տիրում երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ: Նման պարագաների ներքո ամհավանական չէ, որ իշխանությանը երգի միջոցով գովաբանելու մտահղացումը պոլսահայ համայնքին պատկաներ, որպես տուրք պետությանը, որպես հավատարմության հավաստիք, որպես հայ-թուրք բարեկամությանը ներդրված լուծա: Նույնը կարելի է ասել "Տրիպոլսի հիվանդ զինվորների օգտին համերգ"ի մասին, որը իրենց "առաջարկվել էր" և մա չէր կարող մերժել:

Հարկ է Զել, որ Օսմանյան և հետագայում էլ թուրքական պետության պետական վերահսկման (մասնավորապես միապետին), ռազմական ուժերին, սահմանադրությանը, խալիֆային և պետությանը ուղղված փառաբանություններ, գովաբանություններ, ծոցերգեր և քայերգ հորինվել են հայ երաժիշտների կողմից Կոմիտասից առաջ է: Այս առիթով կարելի է հիշատակել առաջին հերթին Հեքիմյանի, Սամթուրեչյանի, Սիմանյանի, Հյուրմյուզյանի, Մերեչյանի և Համեսյանի անունները: Նույն շարքի մեջ է մտնում Չուխաջյանի անունը, որի մի տեղեմագործության¹¹ բառերը, ուր հույնապես փառաբանվում է փատիշահը մի հայկական դպրոցի կողմից, այնքան մեծ են Կ. Ֆ. 444 համարի տակ գտնվող երգի բառերին, կարծես նրա մի տարբերակը չլինեն:

Կոմիտասի գրչին պատկանող չորրորդ թուրքերեն երգը ամփոփված է Կոմիտասյան ֆոնդի 522 և 523 համարների տակ: Սա մի մեներգ է դաշնամուրի ընկերակցությամբ: 523 ֆոնդային համարով նյութը բնագիր է: Գրված է թանաքով, մաքուր, ինչը վկայում է մաքրագրված մի տարբերակի մասին: Այնուամենայնիվ, Կոմիտասը, սովորության համաձայն, այս մաքրագրված տարբերակի վրա էլ կատարել է բազմաթիվ մշտմներ: Այսպիսով, մայր եղանակը սկզբից մինչև վերջ նորից է գրառվում մատիտով, արդեն երկու ձայն իջեցրած ձևով ու փոփոխություններով: Զբաղարարվելով մշված ուղղումներով, Կոմիտասը երգի համարյա 1/3 մասը ներթափանցում է նոր ուղղումների, դարձյալ մատիտով, բայց այս անգամ Համարածության ձայնամիջերով: Ամսակը 5/8 է: Երգի բառերը չեն արձանագրված:

Գրված է "մի փոքրալար" [Mi Minor] ձայնակայքի մեջ, Գերմանական, Breiskopf & Haniel ֆիրմայի նոտագրության հատուկ թղթերի վրա: Ընդամենը 5 էջ: Առաջին էջի վերևի ձախ անկյունում գրված է ընթացքը [tempo], արաբատառ (օսմաներեն - հիմ թուրքերեն)¹²: Կ. Ֆ. 522 համարում գտնում ենք նույն երգը, գրված ուրիշի ձեռքով: Այստեղ ձայնակայքը իջեցրած է մեկ ձայնով՝ "ոն փոքրալար": Գրված է նոտագրության հատուկ թղթերի վրա, այս դեպքում Գերմանական J. F. & Co. ֆիրմայի: Բաղկացած է 5 էջից:

Ահալայտ ընդօրինակողը որքան էլ մեծ բժախնդրություն ցուցաբերած չլինի ձայնամիջերը կարելի եղածին չափ զեղեցիկ գրելու մեջ, կատարած բազմաթիվ պարզագույն սխալները մատնում են իր երաժշտության մեջ անհրազեկ չլինելը: Ունենալով այս երգի Կո-

¹¹ ԳԱԹ, Չուխաջյանի ձեռնդ, մ. 98:

¹² Օսմանյան պետության մեջ օգտագործվում էր արաբերեն այբուբենը՝ հարմարեցված թուրքական Ռոջու-մարանությանը:

միտապես բնագիր տարբերակը, կարելի է 522 համարի տակ գտնվող մյուսի երաժշտական մասը ընդհանրապես ի նկատի չառնել: Սակայն այս մյուսը պարունակում է ուրիշ, ակնհայտ տեղեկություններ: Զայնամիշերի տակ տեղադրված են երգի թառերը, որոնք վերջի կարևոր տեղեկություններ: Զայնամիշերի տակ տեղադրված են երգի թառերը, որոնք պակասում են 523 համարի տակ եղող մյուսի մեջ, բացի այդ, արձանագրված են երաժշտությունը հորինողի և բանաստեղծի անունները, առաջին էջի վերևի աջ ու ձախ անկյուններում: Առանց 522 համար վավերագրի ներքե չէր պարզվի, թե 523 համարի տակ գտնվող երգը ի՞նչ է իրենից ներկայացնում:

Բանաստեղծությունը գրված է արաբատառ (օսմաներեն - ղիմ թուրքերեն): Բարեբախտաբար հաջողվեց ձեռք բերել այդ բանաստեղծության թուրքերենի վերածված ամբողջական տարբերակը: Բանաստեղծության վերնագիրն է "Է՛յ իյնեմ, տիջ" (Ո՛վ ասեղս, կարի՛ր): Հեղինակը, անվանի թուրք բանաստեղծ, քաղաքական գործիչ և "թուրքականության" գաղափարի պարագլուխներից Մեհմեդ Էմինը է¹³: Ի՞նչ կապ կարող էր լինել թուրքական գաղափարախոսության առաջատարներից մեկի և Կոմիտասի միջև: Այս հարցի պատասխանը սպառնիչ կերպով տալիս է Սիրունին, երբ գրում է. թե "Ան թյուրք օջաղըն - Տ.Լ.] հույս դրած էր Կոմիտասին վրա ալ՝ թուրք հարազատ երաժշտություն մը ստեղծելու ճիգերուն մեջ"¹⁴:

Ընշտ այդ պատճառով էլ թուրք ազգային գործիչներ ու անվանի արվեստագետներ ելք ու վտար էին անում Կոմիտասի բնակարանը, իրեն հրավիրում ինչպես եղույթ ունենալու համար, այնպես էլ իրենց տան մտերմական հավաքույթներին: Զինվորական վարժարանում կայանալիք համերգի "հրավերը Կոմիտասը ընդունած էր": 1912-ն էր: Եղած տվյալների համաձայն Կոմիտասի հանդեպ եղած հետաքրքրությունը թուրք շրջանակներում այդ թվականից է սկսվում: Ըստ Հալիտե Հտիսի¹⁵, այդ տարիներից Կոմիտասի «անձնավորությամբ էին հետաքրքրվում ու զինքը լսելու գալիս» Յուսուֆ Աքչուրան¹⁶, որը «մղված իր երաժշտասիրութենն, բայց կհայտարարեր թե Կոմիտաս մեծ վնաս պատճառած է թուրքին, գողնալով անոր մշակույթը երաժշտության և նրգերու ձևով»¹⁷:

Բանաստեղծներ Յահյա Քեմալը¹⁸ և Մեհմեդ Էմինը մուսուլման «կհետաքրքրվեին իր անձնավորությամբ և կու գային լսելու զինքը»¹⁹: Վերջինս, ինչպես վերը նշվեց, թուրք-թուրքական գաղափարախոսության կրակոտ ջատագույններից էր և այդ նպատակով ծայր աստիճան ազգայնամոլ բանաստեղծություններ էր գրում: Ըստ երևույթին որոշել էր մասնաձևապես օգտվել Կոմիտասի տաղանդից ու առաջարկել էր եղանակավորել իր մի բանաստեղծությունը, գրված 2 սեպտեմբեր 1913 թվականին²⁰:

¹³ Բանաստեղծ և քաղաքական գործիչ Մեհմեդ Էմինը հետագայում ընդունել է Յուսուֆույ (ազգի ծառա) ազգանունը:

¹⁴ "Կոմիտասին հետ", Հ. Ը. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 45:

¹⁵ Առաջին կին թուրք գրող:

¹⁶ Թուրք ազգայնամուլների պարագլուխներից, "Թյուրք օջաղը"ի հիմնադիրներից:

¹⁷ "Կոմիտասին հետ", Հ. Ը. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:

¹⁸ Բանաստեղծ Յահյա Քեմալը հետագայում ընդունել է Բեյաթը ազգանունը:

¹⁹ "Կոմիտասին հետ", Հ. Ը. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:

²⁰ "Mehmet Emin Yurdakul'un eserleri-I", İstanbul, 1989:

Չկարողանալով մեղքել այդ առաջարկը, Կոմիտասը սակայն օգտվել է ձայնավորման մասը ընտրելու իր իրավունքից: Զարմանք է առաջացնում, թե ինչպե՞ս էր վարդապետը 24 տներից բաղկացած արձագանքային քվեարկությունից ընտրել այն տները, որոնք առանձին վերցրած միանգամայն ուրիշ տպավորություն են թողնում: Սովորաբար գրվում է մի եղանակ, որը կրկնվում է այնքան, որքան տներ կան երգում: Կոմիտասի Ռորինանը կրկնվող մի եղանակ չէ, այլ երկու տների վրա տարածվող մի երաժշտական կտավ: Բառերը գրված են ձգված ի տակ, վերջում, սակայն, ձգվածների վերևում ավելացված է երկու տող: Դա ողջ բանաստեղծության եզրափակիչ տողերն են, ուր խտացված է թուրանական գաղափարախոսության հիմնական միտքը:

Մեզ թվում է, թե երանք ավելացված եմ այդ տողերից զմայլված հեղինակի (Մ. Էմինի) կողմից: Բանաստեղծությունը տպագրվել էր "Թյուրք յուրտու" (թուրքի հայրենիք) ամսագրում և "Թան սեպերի" (այգածայներ) կոչվող Մեհմեդ Էմինի բանաստեղծությունների զրքուկում, որի երկրորդ տպագրությունը կատարվել էր արդեն Կոմիտասի Ռորինան երգի մոտաներով: Այս փաստը կարելի է համարել որպես Կոմիտասի ստեղծագործություններից մեկի առաջին տպագրությունը Թուրքիայում, ինչը ցայմ հայտնի չի եղել Կոմիտասագիտությանը²¹:

Հատկանշական է, որ "Թյուրք օջաղը"²² իր դեկավարների՝ Համտուլա Սուլիթի²³, Հալիտե Էտիփի, Մեհմեդ Էմինի և մյուսների միջոցով հրավիրում էր Կոմիտասին բանաստեղծությունների ու համերգների, մեծարում էր իրեն և զովասանքներ շռայլում հայ ժողովրդի հասցեի²⁴: 1914-ին Կոմիտասին հրավիրել էին ճոր կազմավորվող թուրքական երաժշտանոցում դասավանդելու: Չոպանյանին հասցեագրված իր նամակում Կոմիտասը նշում է. «...տաճիկ երաժշտարանը քացուելու է, և կա՛յ մոյնպես երաժշտական բաժին: Ընմիլ փաշան է հարցրել ինձ՝ քացակայությանս և խնդրել է զայս իրեն յայտնեն, թուի, թե ինձ ևս պաշտոն եմ առաջարկելու...»²⁵:

Երվանդ Հակոբյանին ուղղված մի ուրիշ նամակում Կոմիտասը խոսում է արդեն ստանձնած դասերի մասին: «Բաղաքապետությունը հիմել դնելու վերայ է երաժշտարանի մը, որի պաշտոնեաներեն մեկն այլ զիս կարգեցին. չը մեղծեցի, քայց միայն մեղադրանակութեան դասերն ստանձնեցի, որ ծայնս խմայեմ ու խմամեմ»²⁶: Նամակից երևում է, որ Կոմիտասի պարտականությունները շատ ավելի մեծ պիտի լինեին ստեղծվող երաժշտանոցում, սակայն նա հրաժարվում է պաշտոնավարությունից՝ ստանձնելով միայն մի դաս:

Ի՞նչն էր պատճառը, որ ազգային և կուսակցական գործունեությունից գերմ մնացող երաժիշտ-հոգևորականը, որի անհրաժեշտությունը զգացվում էր թուրքական երաժշտանոցը կազմավորելու գործում, այնուամենայնիվ չխուսափեց աջտորից: Արդյո՞ք դա Աքչու-

²¹ "Mehmet Emin Yurdakul'un eserleri-I", İstanbul, 1989:

²² "Թյուրք օջաղը" կոչվող թուրքական ազգայնամոլների կազմակերպությունը հիմնվել է 25-3-1912 թվականին:

²³ Բանաստեղծ Համտուլա Սուլիթին հետագայում ընդունել է Թամերլոյլեր (Աստված փառաբանող) ազգանունը:

²⁴ "Կոմիտասին հետ", Հ. Ժ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ. էջ 46:

²⁵ "Նամակներ", ԳԱԹ, Երևան, 2000, էջ 158, մո.31:

²⁶ "Նամակներ", ԳԱԹ, Երևան, 2000, էջ 118-119, մո.1:

քաների և իր մնացորդների մախանձն էր. թե՛ հասկացել էին, որ Կոմիտասը թուրքական երաժշտությունն չի «ստեղծելու», մեքեն թեքելով հայկական երաժշտությունից: Վտանգավոր էր: Հակոտե Լուսինի հուշերում թաքցված են հետաքրքիր ակնարկներ: «...մեն ատաղձորդ մը կ'համարվեր հայոց մեք» և «հայ ազգայնական մըն էր ամ...»²⁷:

Կոմիտասով հիացող ու ճիշդից օգտվողներից էր Մեհմեդ Լեմինը, որի մասին Կարո Ուշագլույնը գրում է. «...քանի մը անգամ տեսած էի վարդապետին մոտ, երբ եկած էր իր մեկ չափածո գրությունը եղանակավորել տալու»²⁸, ստանալով Ուշագլույնից վարդապետի ձեռնարկված լուրը և ազատելու համար միջնորդության խնդրանքը, հետևյալ կերպով է պատասխանում. «էֆենտիմ, ասիկա կատարական գործ է, չենք կրնար որևէ միջամտություն կատարել. չեմ կարծեր որ ծամը պարագա մը կ'ենա. թերևս [I - Տ.Լ.] ազատ կարձակենք» ու դուռն է ընկալուչը²⁹: Ուշագլույնից մաս տեղեկանում ենք, թե ինչպես է Մեհմեդ Լեմինը ծանոթացել Կոմիտասի հետ. «Իսկ Մեհմեդ Լեմինը, ավելի կամուկեն ճանաչեցած էինք մենք զայն, երբ Ազատամարտ կ'համախել իր քերթվածները կարդալու մեզի...»³⁰ մենք էինք որ Կոմիտասի մեկ համերգին տարած էինք զայն առաջին անգամ»³¹:

Ներկայացվող վերոհիշյալ չորս թուրքերեն ստեղծագործությունները, որոնք բացառապես Կոմիտաս վարդապետի գրչին են պատկանում, չեն կրում իր մեջ թուրքական երաժշտական ոճի կմիջը: Թուրքական երգերը գրելիս Կոմիտասը չի առաջնորդվել թուրքական ժողովրդական երաժշտության հատկություններով, ինչպես որ դա արել էր հայկական երաժշտությունը քաղվածայնելիս: Այսօր դժվար է ասել, ցանկանում էր արդյոք Կոմիտասը թուրքական դասական երաժշտության ոճ ստեղծել: Եթե այո, ուրեմն ի՞նչ հիմունքների վրա էր այն կատարելու: Ունենալով ձեռքի տակ միայն այս չորս երգերը, առանց որևէ ուրիշ տվյալների, անկարելի է այսօր այդ հարցերին պատասխանել:

Մյուս հարցը, որը կարող է ծագել թուրքական երգերի առիթով, հետևյալն է. արժե՞ արդյոք այդ երգերով զբաղվելը, գուցե և հրատարակելը: Միանշանակ՝ այո: Այնտեղ կա Կոմիտասի աշխատանքը, վաստակը և ճիշտ ստեղծագործական ոգին: Այս երգերը Կոմիտասի ժառանգության մասն են կազմում, ուստի մենք միայն այդ մասին հողվածներ գրելով չենք սահմանափակվել, այլ պատրաստել ենք տպագրության համար 100 միավորից ավելի կազմող Կոմիտասի թուրքական ժառանգությունը, որը ամտարակույս պիտի ամբողջացնի իր պատկերը՝ մեն հետաքրքրություն առաջացնելով ինչպես հայ և թուրք, այնպես էլ աշխարհի տարբեր երաժիշտների ու երաժշտության երկրպագուների մեջ: Բացի այդ, Կոմիտասի բեռնից մեզ շրջանը տառայակ անտիպ ստեղծագործություններով մուսուկան կարող է հարստացնել մեր պատկերացումները մենք Կոմիտասի մասին, ուստի մենք ուսումնասիրել ենք մաս իր գերմաներեն երգերը, վերծանել վերջիններս և մուսուկան պատրաստել հրատարակության:

²⁷ «Կոմիտասիմ հետ», Լ. Մ. Սիրումի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:

²⁸ Նույնը, Գ, էջ 30:

²⁹ Նույնը:

³⁰ «Ազատամարտ»-ը Հայ Յեղափոխական Դաշնակցության օրգանն էր:

³¹ «Կոմիտասիմ հետ», Լ. Մ. Սիրումի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 30:

ՆՐԱԶԾԱ ԱՇՈՏԻ ԱՍՄԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ ՄԻՋԱԹԵԼ ՎԱՐԱՆԴՅԱՆԻ «ԲՈՂՈՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԳՈՐԾՈՒՄ

Միջայել Վարանդյանը (1860-1934 թթ.) Հայ Եեղափոխական Դաշնակցության ճշա-
նավոր տեսաբաններից էր: Եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության ղյուլապատոսը
Խտալիայում:

Նա գրել է մի շարք պատմա-փիլիսոփայական աշխատություններ, որոնցից մեծ մասը
Քրատարակվել է արտասահմանում: Դրանցից կարելի է հիշատակել 1. Համաժողովրդա-
կան բանակ, ԺՆԸ, 1909, 2. Վերածնվող Հայրենիքը և Մեր դերը, ԺՆԸ, 1910, 3. Հոսանքներ,
ԺՆԸ, 1910, 4. Հոսանքներ, ԺՆԸ, 1910, 5. Հայկական շարժման պատմություն (երկու հա-
տորով), ԺՆԸ, 1912-1913, 6. Հայ Եեղափոխական Դաշնակցության պատմություն (երկու
հատորով), Փարիզ, 1932: Երևանում 1992-ից այն վերահրատարակվեց մի գրքով:

Մենք այս հոդվածում կանդրադառնանք նրա «Բողոքը նորագույն պատմության մեջ»
ԺՆԸ, 1911 թ. գրած աշխատության այն հատվածին, որը վերաբերում է Խտալիային:

Մ. Վարանդյանը «Բողոքը նորագույն պատմության մեջ» աշխատության նախաբանում
ճշում է, թե ի՞նչ նպատակով է գրել այդ գործը, որը սկսվելով ֆրանսիական 18-րդ դարա-
վերջի՝ 1789-1794 թթ. բուրժուական հեղափոխությունից, հասցվում է մինչև իտալական ա-
զատամարտի ավարտը (1870 թ. սեպտեմբերի 20), երբ Խտալիան վերջնականապես ազա-
տագրվեց և ստեղծվեց աճկախ ու միասնական իտալական պետությունը: Հեղինակը ներ-
կայացրել է «քաղաքական ու սոցիալական պայքարի գուգահեռ ընթացքը» և աշխատել է
դասեր քաղել դրանից հայ ժողովրդի համար: Տեսաբանը ներկայացնում է Խտալիայի
վերջին հարյուրամյակի պատմությունը, որը լի է հերոսական դրվագներով:

Ըստ Վարանդյանի, հեղափոխությունները (բողոքը) ընդհանրապես հասարակության
շարժիչ ուժերն են և առաջադիմական բնույթ ունեն: Հեղափոխությունները բաժանվում են
երկու խմբի. 1. Հասարակական կարգերը փոփոխության են ենթարկվում իշխանությունը
գրավելու համար ապստամբությունների միջոցով: 2. Հեղափոխություններ, որոնք կա-
տարվում են աստիճանական ընթացքով (Էվոլյուցիոն ճանապարհով):

Առաջինի համար Մ. Վարանդյանը բերում է ֆրանսիական բուրժուական մեծ հեղա-
փոխության օրինակը, երբ դրանից հետո ընկած ժամանակաշրջանում ամբողջ Եվրոպա-
յում և աշխարհի տարբեր մասերում հաղթանակ տարան կապիտալիստական արտադրա-
հարաբերությունները:

Պաղամեծուսական աստիճանական գարգացման ուղու կողմնակիցն էր Միք. Վա-
րանդյանը: Նա իր աշխատության բնաբան է ընտրել ճշանավոր բանաստեղծ Վիրգիլիոսի
«Խտալիա... Խտալիա...» խոսքերը:

Միջ. վարամեղային հոսանքներն ազատամարտի մասին գրելիս նկատի է առել այն համագաղափարը, որ 19-րդ դարի առաջին կեսի իտալիան իր մասնատվածությամբ և բաժանվածությամբ, պատմական ճակատագրի քերուժով քավականին ընդհանրություններ չունեն չայաստանի ու հայ ժողովրդի հետ: Իտալական ժողովուրդը (19-րդ դարում) Ապենինյան թերակղզում պայքար էր մղում թուրքիկ ու օսմանի լուծը և միասնական ազգային պետություն ստեղծելու համար: Միայն միավորումից հետո հնարավոր կլիներ իտալացիների իղձերի իրականացումը: Իտալիայի մասնատվածությունը արգելակում էր արտադրողական ուժերի զարգացմանը, արդյունագործությունը ևս ցածր մակարդակի վրա էր գտնվում: Բացակայում էր ազգային միասնական շուկան, ծանր մաքսային հարկերը էլ ավելի դժվարություններ էին ստեղծում դրա համար:

Միջ. վարամեղային վկայակոչում է այն փաստը, որ իտալիայում Նապոլեոնյան ժամանակներից սկսած մի մոր թարմ հոսանք է նկատվում ազգային-ազատագրական շարժման անդաստանում: Սակայն, չնայած դրան, իտալիան բաժան-բաժան քառասյին վիճակում էր, որով նվաճվում էր «եվրոպական Հայաստանի»: Իտալիան բաժանվել էր տարբեր երկրների՝ Պիեմոնտ, Տոսկանիա, Սիցիլիա, Սարդինիա, Կորսիկա, Պապական (Եկեղեցական) պետություն, Լոմբարդո-Վենետիկ, Մոնակո, Սան-Մարտինո, Պարմա, Մոդենա և այլն: Իտալիայի վրա հարձակումներ էին գործում մեծ զերմանացիները, մեծ Ֆրանսիացիները, իսպանացիներն ու ավստրիացիները:

Եվ ահա թե՛ իտալացիների և թե՛ հայերի մոտ այդ մույն ժամանակաշրջանում արթնացում էր ազգային գիտակցությունը: Բայց ի տարբերություն իտալիայի, որը գտնվում էր եվրոպայում, Հայաստանը ենթարկվում էր քարքարոս ցեղերի հարձակմանը: Իտալիայի այս վիճակը համեմատելով Հայաստանի հետ, վարամեղային գրում է. «Դա մույն, քնական, տրամաբանական *volte face*-ն, որ արել են հայկական ճակատագրի վերաբերմամբ Թուրքիան ու Ռուսաստանը: Թե՛ մեկ և թե՛ մյուս բռնակալական կայսրության մեջ հայությունն ունեցել է իր, այսպես կոչված, «ոսկե շրջանը», վայելել է մի որոշ ժամանակ տիրող օտար ուժիմի հովանավորությունը, զարկ է տվել իր ազգային կուլտուրային, իր դպրոցին ու գրականությանը ...» (էջ 254):

Իտալացիները, լինելով հին հեղափոխականներ, օրինակ են տվել «բոլոր մեծ ու փոքր ազգերին», կոչել են և կոչում են օսմանի լծի դեմ և արյուն են թափում հեղափոխության հաղթանակի համար:

Միջ. վարամեղային մշտն էր, որ «բռնակալությամբ» հիմնահարցը դառնում է առանցքը Վ. Ալֆիերիի «քաղաքական խոհերի համար»: Հատկանշական է, որ հեղինակը վկայակոչում է իտալացի մշանավոր քանաստեղծներ Ալֆիերիին (1749-1803), Ֆոսկոլոյին (1777-1827), Լեոպարդիին և այլոց, որոնց իրենց ստեղծագործություններում հանդես էին գալիս օտար բռնակալության դեմ և իրենց հերոսների միջոցով ոգեկոչում և արթնացնում էին պայքարի եղելու ժամանակի «թմրած երիտասարդությանը»: Միջ. վարամեղային այս մտքերը պատահական չէ, քանի որ մա և իրենից առաջ հայ դեմոկրատ մշանավոր մտածողները՝ Միքայել Նալբանդյանը, Հարություն Սվանյանը, Սերովքե Թազկոչյանը, Բաֆֆին, Գրիգոր Արծրունին, Ռափայել Պատկանյանը և ուրիշներ, ամբողջովին հույսները կապում էին այդ սերնդի գործունեության հետ, աշխատում էին երիտասարդ սերնդին ու-

քի կանգնեցնել թուրքական բռնակալության դեմ, իսկ այդ դեպքում նրանց օրինակ էին ծառայում իտալական ազատագրական շարժումները:

Միջ. Վարանդյանը շեշտում է մի կարևոր հանգամանք ևս, որը քննարկում է բռնության հետևանքները թուրք երկրների վրա ընդհանրապես: «Բողոքը բռնության դեմ առաձգնապես կատաղի էր. - գրում է նա. - երբ բռնավորը ու իշխող ցեղն օտար են, դրսեմ գոռով ներմուծված, հարկահարված: Իտալիան ամենամեծն է և ամենակիրթը այն երկրներից, ուր վաղուց. դարերից ի վեր բույն էին դրել այդ օտար բռնակալները» (էջ 246): Այդ էր պատճառը, որ Իտալիան թուրքից վաղ սկսեց պայքարն օտարի լծի դեմ: Մի ազգ (նկատի ունի իտալացիներին), որ տվել է գեղարվեստի ու գրականության վիթխարի կոթողներ, երբ Եվրոպան թաղված էր տգիտության ու բարբարոսության մեջ, այժմ հռչակվում է օտար վեհապետների կողմից:

18-րդ դարում իսպանացիները գրավել էին Իտալիայից՝ Նապոլից ու Սիցիլիան, այնուհետև այս մասներում կարճատև ավստրիական տիրապետությունից հետո հաստատվեց ֆրանսիական Բոլորքոնների իշխանությունը, որն ավելի քան կտրված էր եվրոպական քաղաքակրթությունից: Դա է՛լ ավելի ծանր եղավ Իտալիայի համար: 1773-ից ապստամբեց սովալլունկ ժողովուրդը: Վարանդյանը գտնում էր, որ «Այդպիսի պարագաներում հայրենիքը մի հրաքույն է, որ վաղ թե ուշ պիտի ժայթքի սասանեցուցիչ որոտումներով» (էջ 249):

Նրա կարծիքով, կարթոնարիզմը որպես շարժում ծագել է ո՛չ թե Ֆրանսիայում, այլ նրա հայրենիքը Իտալիան է: Նա քաջատրում է, որ կարթոնարի իտալերեն նշանակում է ամխազործ, որը հետո չէ փայտաճառությունից: Դրանք գաղտնի դավադրական կազմակերպություններ էին, որոնք առաջ եկան գաղտնի հավաքներում, երբեմն անտառներում փայտաճառների ու ամխաճառների կողմից, և իրենց առջև խնդիր էին դրել ատելությունը դեպի օտարի լուծն ու բռնությունը: Միմյն Միջ. Վարանդյանի այս տեսակետը, ընդունված էր այն կարծիքը (Վ. Ֆ. Միզիանո, Վ. Ա. Բոնդարչուկ, Վ. Ե. Նևկեր, Ն. Ա. Երոֆեև և ուրիշներ), որ այդ դավադրական կազմակերպությունները, որոնք ժակոթիների ապստամբական տենդի մեջ էին հայրենիքի և ազատության պայքարի համար, առաջ էին եկել Ֆրանսիայի հարավում:

Այս ընկերության անդամներն առաջ քաշեցին իտալացի նշանավոր բանաստեղծ Պետրարկայի հայտնի խոսքերը. «...դուք քշել օտարների», որն ավելի ուշ օգտագործեց Զուգեպպե Մաննիգին: Այնուհետև նա անդրադարձնում է Վիտորիո Ալֆիերիի թատերական գրվածքներին, որի ստեղծագործությունների գլխավոր թեման էր բռնակալության դեմ պայքարը: Այս բոլորը գրելիս Միջ. Վարանդյանն օգտագործել է իտալական և ֆրանսիական աղբյուրներ, ճշգրտումներ է կատարել նրանցում և այն եզրակացությանն է եկել, որ այս ամենը մեծ դեր է ունեցել իտալական ազատագրական շարժման և մասնավորապես 1820 թ. Նեապոլի հեղափոխության ժամանակ, երբ երկրում հաստատվեց սահմանադրություն, որը սահմանափակեց միապետների միանձնյա իշխանությունը: Այս դավադրական շարժումն իր արժանի տեղը գտավ Իտալիայի հարավում, որտեղից էլ տարածվեց մյուս վայրերը:

Երբ Իտալիայի հյուսիսային մասն ընկավ ավստրիական տիրապետության տակ, ամեն ինչ եմքարկվեց «մի զարհուրելի օստրակիզմի», «բռնապետական ուրազամը» հողմա-

ցրիվ արեց ամեն ինչ՝ չխնայելով ո՛չ հեղափոխությունը և ո՛չ էլ ազգերի Վերածնությունը ու անկախությունը:

Հետաքրքրական է, որ կարթոմարիզմի շարժման ծագումը նա համարում է 12-15-րդ դարերը: Իսկ ավելի ուշ՝ 18-ից 19-րդ դարերում կարթոմարիզմը, նրա կարծիքով, դարձել է դադարեցրած և հեղափոխական աղամոլ: Հեղինակը բացատրում է, որ նրանց հավաքա-տեղի՝ գաղտնի ժողովի տեղը կոչվում էր խրճիթ, ժողովի վայրը՝ ծնակ, իսկ ժողովի պալ-մանական անունը՝ վաճառք: Կարթոմարիզմը ստեղծել էր իր պայմանական լեզուն, հա-մաձայն որի՝ «մաքոել անտառը գայլերից»՝ մշահակում էր ազատել երկիրը բռնակալմե-րից (էջ 261):

Ընկերության կանոնադրության համաձայն, մահով էին պատժվում դավաճաններն ու մատնիչները, ուստի ապստամբական գործը պահանջում էր զաղսմատափություն: Ուշա-գրավ է, որ Միք. Վարանդյանը կարթոմարիի հետ է համեմատում հայ ֆիդայիին: «Հայ դավադիրը, տետրիստը, հայ ֆեդային - մահավաճող շարժման սկզբներում - եղել է «կար-թոմարի», առանց երբեք այդ անունը լսած լինելու...» (էջ 262): Համաձայն ի՞ր տված երդ-ման, լինելով «եղբայրներ», կարթոմարիին պետք է լինե՞ր ազնիվ, մաքուր և անխաղախ, որպեսզի դառնար նրանց աճյալը: Վարանդյանն այսպես է ներկայացնում նրանց եռաս-տիճան հիերարխիան՝ «մեծամասնությունը աշակերտներ էին (քարզաֆ-արբոմ), ապա գալիս էին վարպետները և նրանց բոլորին ղեկավարում էր Մեծ Վարպետը (Grati master)» (էջ 264):

Մեծ Վարպետը հավաքույթի մասնակիցներին քացատրում էր կարթոմարիզմի խոր-հույդը, ծագումն ու նպատակը, թե ինչպես բնությունը մարդուն ծնել է ազատ ու երջանիկ, բայց ամեն տեղ նա գտնվում է բռնակալական շղթաների տակ, ամեն տեղ՝ «մարդը մար-դուն գալլ է» և այլն (էջ 264): Եվ այնուհետև քացատրում էր կարթոմարիզմի խորհրդանիշ-ները. «...կոիվը գոհ է պահանջում, խաչը՝ մշահն է նահատակության, ջուրը՝ հոգիների ժանգը մաքրելու համար է» և այլն և այլն: Մինչ այդ, Իտալիայի պատմության հարցերով զբաղվող պատմաբաններն այսպիսի տեսակետ չեն ունեցել դավադրական այս կազմա-կերպության մասին գրելիս:

Ջ. Մաձձիմիի, Կոմս Կավուրի ու Ջ. Գարիբալդիի վերաբերյալ դավատաճի խոսքեր է ուղղում: Ջ. Մաձձիմիին համարում է իտալական Ռիսորջիմենտոյի (Վերածնության - Հ. Ա.) «ռաֆվիդներից մեկը», «դավադրության ու տերրորի հավիտենական ոգին», իսկ Ջ. Գարիբալդուն այսպես է բնորոշում. «...համաշխարհային, լեզենդական թիավորն է, ազա-տության ու կովի անզուգական ասպետը»: Կ. Կավուրին ներկայացնում է որպես ժամանա-կի խռոշորագույն թաղաքագետներից մեկը: Հեղինակն իրավացի էր, երբ գտնում էր, որ Ի-տալիան Ազգային միությունն ու Անկախությունը կնքում էր այս անհատների ջանքերով և շատ դժվարին ժամանակներում:

Այնուամենայնիվ, Միք. Վարանդյանի մոտ քացակալում է քննադատական խոսքը ի-տալացի հերոսների հանդեպ: Ջ. Գարիբալդին, նրա կարծիքով, օժտված էր «Հայդուկի քրիստոսանման կերպարանքով»: Նրան «Մեծ կալանավոր», «Մարդկության ասպետ» և այլ նման բնորոշումներ է տալիս: Վարանդյանը մշում է, որ Ջուզեպպե Գարիբալդին

1864-իմ, լիցելով Լոնդոնում, ծանոթանում է ռուս և ֆրանսիացի ժառանգորդ հեղափոխականներ Հերցենի, Լուի-Բլանի, Ռեդյու-Ռոլլենի հետ:

Ալեքսանդր Հերցենը Լոնդոնի իր քնակարանում ճաշի հրավիրեց երկու «մեծ իտալացիներին»։ Բաժակաճառի ժամանակ ելույթ ունենալով Ջ. Մանձինի գնահատեց իտալական ազատագրական շարժումը և Ջ. Գարիբալդու «այսպիսի խոսքերով»։ «Իմ բաժակը նվիրում եմ ազգերի ազատության, համերաշխության, նվիրում եմ այն մարդուն, որ իր սխազործություններով կենդանի մարմնացումն է այդ գաղափարների»,- Զուգեպպե Գարիբալդին... Նվիրում եմ, վերջապես, Պարոքի սրբազան կրոնին, հանում որի մեքը պիտի կովենք մինչև սրբազան գերեզման» (Էջ 327):

Պատասխան խոսքում Գարիբալդին իր հերթին բնութագրեց Ջ. Մանձինի ծառայությունը իր հայրենիքի հանդեպ. «Այստեղ կա մի մարդ,- ասաց Զուգեպպե Գարիբալդին,- որ ամենամեծ ծառայություններն է մատուցել իմ երկրին և ազատության դատին: Երբ ես տականվիմ երիտասարդ էի և ապրում էի սոսկ երազներով - փնտրում էի մի մարդ, որ ղեկավարեր ու խորհուրդներ տար ինձ: Ես այն փնտրում էի, ինչպես ծառայել՝ ջուր: Այդ մարդուն ես գտա: Նա միակն էր, որ արթուն էր մնում այն ժամանակ, երբ ամենքը քնած էին: Նա մնաց միշտ իմ բարեկամը, լի սիրով ու անձնագոհությամբ դեպի իր հայրենիքը և ազատության դատը: Այդ մարդն է Մանձինին: Իմ վարպետի կենցաղ» (Էջ 328):

Ճաշկերույթի ժամանակ այս երկու ելույթներն անաչառ ձևով բնութագրում են երկու մեծ իտալացիների կարծիքները իրար և իտալական ազատագրական շարժման հանդեպ:

Կարծում ենք, որ Միք. Վարանդյանը ճիշտ ձևով չի գնահատում Նապոլեոն 3-րդի դերը իտալական դատի պաշտպանության հարցում, որտեղ չափազանցություններ կան, և դա կործանարար էր իտալիայի համար: Իբր թե մա՛ վեցետիկը «շնորհեց Վիքտոր-Էմմանուելին», սոռաճալով Ավստրո-պրուսական պատերազմում Ավստրիայի պարտությունը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց իտալիային՝ վեցետիկի միավորման համար: Իրավացի չէր Վարանդյանը, երբ գրում էր, որ Նապոլեոն 3-րդը ֆրանս-պրուսական պատերազմից հետո «եռ կոչեց իր զորքերը Հոմից»: 1870 թ. սեպտեմբերի 20-ին Վիկտոր-Էմմանուելը իր զորքով, որի շարքերում կոպում էր Ջ. Գարիբալդու զինակից Նիկո Բիքսոնի հրամանատարությամբ զորոհող զորքը, մտան Հոմ և «հավիտենական քաղաքը» ազատագրեցին:

Ի վերջո, իտալիայում հաստատվեց Ազատության և Միության գաղափարը, որի իրագործման համար ջանք ու եռանդ չէին խնայել Դանթեից մինչև Գարիբալդին:

Այսպիսով, Միք. Վարանդյանը բարձր է գնահատում «իտալական ազատամարտը», որպես մորազույց պատմության բողոքի ազդակ, և որի պայքարի էջերը կարող են լավ դաս հանդիսանալ մյուս ազգերի Ազատության և միասնության համար:

Միք. Վարանդյանի «Բողոքը մորազույց պատմության մեջ» շատ արդիական ու եզակի աշխատություն է: Այն ուսանելի է ո՛չ միայն պատմաբանների, այլև ընթերցող լայն հասարակության համար: Եվ սա է պատճառը, որ մեր օրերում գիրքը ցանկալի կլինեք տեսնել վերահրատարակված, որ մերօրյա ընթերցողը ևս ծանոթանա մրանում արտահայտված մտքերին և գաղափարներին:

ԵՎԳԵՆԻԱ ԶԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Նոգեքանական գիտությունների թեկնածու

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒԲԸ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՆՈԳՈՒ ՆՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարդկային հոգեբանության հետաքրքիր և չքացահայտված խնդիրներից է մահվան համդեպ վերաբերմունքը:

Տարբեր ժամանակաշրջաններում մարդկային միտքն անդրադարձել է մահվան ընկալմանն ու դրա հետ կապված խնդիրներին: Հետաքրքիրն այն է, որ թե՛ անհատները, թե՛ հասարակությունները և թե՛ քաղաքակրթություններն այս հարցին անդրադառնում են հատկապես անկայուն վիճակներում՝ պատերազմների և համաճարակների ժամանակ, մերջին անբավարարվածության կամ մերժվածության զգացողության և համամանն պարագաներում:

Առաջին անգամ քրիստոնեական Եվրոպան վախճանաբանական (եսխատոլոգիական) ցնցում ապրեց 7-րդ դարում, իսկ Հայաստանը՝ 10-րդ դարից սկսած: Եվ դա պատահական չէր: Կապված 666-ի թվային խորհրդանշի հետ՝ քաղաքի վավերիչ պատերազմներից հոգեմած և ուժասպառ Եվրոպան հենց այդ թվականին սպասում էր մարդկության վերջին և Քրիստոսի երկրորդ Գալստյանը, իսկ հետագայում, չարդարացված սպասելիքները կրկին ուժի մեջ մտան 999 թ.՝ 666-ի հայելային արտացոլման ընթոնմամբ, որոնք իրենց անդրադարձն ունեցան մահ 1666, ապա և 1999 թվականներին: Թերևս դրանով են քացատրվում վերջին 40-50 տարիների ընթացքում մահվանն ու համդեռձյալ կյանքի ընկալման խնդիրներին նվիրված քաղաքի վ ուսումնասիրություններն ու դրանց նկատմամբ հասարակության աշխույժ հետաքրքրությունը: Այսօր էլ մեր անհատական ու հավաքական վարքագիծն ու մեր հմարավոր հետևանքներն էապես կախված են այն բանից, թե ինչպես ենք մենք ընկալում մահը և ինչպես ենք տեսնում մեր հոգու փրկության հնարավորությունները:

Խոշոր հաշվով մարդկությունն անցել է մահվան ընկալման հինգ հիմնական փուլ: «Վարժեցված» մահվան շրջանում, որ վերաբերում է հին մշակույթների՝ Հնդկաստանին, Եգիպտոսին, մասամբ Հույաստանին ու Հռոմին, մարդը չէր սարսափում իր վախճանից, քանի որ հավատում էր հոգու վերամարմնավորմանը: Քրիստոնեության ընդունումից հետո բնականաբար փոխվեց և վերաբերմունքը մահվան նկատմամբ, վերջինս ընկալվեց որպես «իմ մահ» կամ անձնական մահ, համաձայն որի մարդն ազատ է Աստծո առաջ և, որքան պարկեշտ կյանք վարի, այնքան ավելի մեծ է երկնային երանությանն արժանանալու հավանականությունը:

Երրորդ փուլը երկրորդի կատարելագործված տարբերակն է և բնութագրվում է որպես «աստվածային մահ»: Դա էր պատճառը, որ միջնադարյան մարդը, ապրելով «մահվան

հետ», չուներ վախի և սարսափի զգացում (վախը միայն մտահոգությունն էր հոգու հետագա «վիճակի» մասին), և ըստ տարբեր աղբյուրների վկայության՝ սիրահարները հաճախ համոզիկալում էին գիշերով, գերեզմանոցում: Այս անմիջական կապը համգուցյալների և անդորշիրիմյան կյանքի հետ ոչ մեկին չէր վախեցնում, և հաճախ թաղումներն էլ կատարվում էին տեղում, տամ բակերում (մեր օրերում դա կընկալվի որպես անպատկերացելի երևույթ, անգամ սրբապաշտություն): Չորրորդ փուլը քնության փուլում է որպես «քո մահ», երբ մերձավորի մահն ավելի սարսափելի է ազդում, քան սեփական մահվան պատկերացումը: Բավական է Քիշեղ օրինակներ գրականությունից՝ թեկուզ «Ռոմեոյի և Ջուլիետի» պատմությունը: Եվ, վերջապես, Քիզգեորդ փուլն այսօրվա մարդու մոտեցումն է մահվանը, որ հաճախ գտրվ է ընկալումից՝ առանձնապես «քաղաքակրթված» հասարակություններում, ուր մահվանը երբեմն վերաբերվում են սոսկ որպես վիճակագրական, «բժշկական» իրողություն:

Միաժամանակ, ընդունելով մահը որպես ի վերուստ տրված անխուսափելիություն՝ մարդու գիտակցությունը շարունակ ընդդիմանում է, որի արդյունքում՝ հասարակության ողջ պատմության ընթացքում ձևավորվել է հակադրության ընդամենը երկու եղանակ. մահվան իդեալականացում (որը բնորոշ է գրեթե բոլոր կրոններից սերված առանձին աղանդներին) և մահվան մերժում կամ անտեսում:

Բննելով մահը որպես հոգեբարոյական երևույթ՝ հարկ է անդրադառնալ այս խնդրում երկու կարևորագույն հասկացության՝ ժամանակի և տարածության ընկալմանը:

Համաձայն տարածված կարծիքի՝ մահը կրում է հավերժության իմաստ, այդուհանդերձ ծավալվելով միայն ժամանակի մեջ: Այդպիսով, «ամսահություն» բառը կարող է ամհեթեթ թվալ, քանզի ժխտում է իր մահվան փաստը: Մահը գոյության ամենաէական չափանիշն է, որը կարևորում է կյանքի իմաստը: Եթե չկա վերջ, ապա իմաստագրվում է հավերժության գաղափարը, որ ընկալվում է մերփակ աշխարհի սահմաններից դուրս և, քնականաբար, ենթադրում է ավարտ իրական աշխարհում: Մահն ամիմաստ ժամանակից դեպի հավերժություն դուրս գալու միակ ելքն է:

Մահվան ամհրաժեշտությունը կարելի է պատճառաբանել՝ ժամանակն ու տարածությունն ամբողջությամբ կենտրոնացնելու ամհնարիճությամբ: Երբ ժամանակի մեջ մենք կորցնում ենք մերձավորներին, կամ տարածության մեջ հեռանում հարազատ դարձած նյութական երևույթներից՝ դա արդեն մահվան զգացողություն է, մահվան փորձ՝ այս կյանքի սահմաններում: Իսկ մահվան նկատմամբ մարդկային վախը վկայում է, որ մենք գտնվում կամ ապրում ենք միաժամանակ և՛ ժամանակի, և՛ հավերժության մեջ: Եվ վիշտը, որ պատճառում է մեզ հարազատի կորուստը, ժամանակի և հավերժության միջև ամդունդի խորացումն ու ընդարձակումն է: Միաժամանակ, մահը ոչ միայն սարսափ է, այլ նաև հույս:

Այլ խոսքով՝ ժամանակի մեջ անհնար է հավերժության պատկերացումը, իսկ ժամանակի մեջ ավարտի բացակայությունը լիակատար ամիմաստություն է: Այդպիսով, քանի որ իմաստը բացահայտվում է հավերժության, այլ ոչ թե անսահման ժամանակի մեջ, ապա մահը կարելի է համարել հիմնաքար կամ կապակցող օղակ՝ ժամանակավոր կյանքի և հավերժական կյանքի միջև:

Մահվան հիմնավորման նման սկզբունքները երևան եկան քրիստոնեության հետ և ձևավորվեցին ու հատատվեցին քրիստոնեական գաղափարախոսության քյոթեղացմանը զուգընթաց:

Միջնադարյան մարդն ապրում էր միաժամանակ երկու ժամանակահատվածում՝ անօդիկ կյանքի և ընդլայնված ժամանակի, որը սկսվում էր Արարչագործությանը և ավարտվելու էր Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ: Պատահական չէ, որ հին տարեգրություններում խոսքը զուգորդվում է մե'րթ ժամանակակից փաստերով, մե'րթ՝ թոհյքաձև վերադառնում է ուղյան տապանի պատմությանը և Ադամի ծնունդին, իսկ երբեմն էլ շարադրաբան ավարտվում է ապագա Ահեղ դատաստանի դրվագներով:

Ավելին, միջնադարյան գրականության մեջ հաճախ ներկայացվում է կենդանի մարդկանց շփումը հանգուցյալների հետ: Նույնը կարելի է ասել նաև կերպարվեստի մասին, ուր մի հարթության վրա տեղադրվում են իրարից անկախ ժամանակային իրադարձություններ, կամ միևնույն պատկերում գործող անձը պատկերվում է մի քանի անգամ: Այստեղ մարդը ոչ թե առանձին պատմական անձ է, այլ անցյալի և ապագայի միջև կապող օղակ: Ընդ որում, այդ կապը ոչ թե հաջորդական բնույթ ունի, այլ՝ նույնժամանակյա:

Հանդերձյալ աշխարհին երկակի մոտեցումը բացատրվում է հակասության նկատմամբ անտարբերությամբ, պարադոքսի հանդեպ վախի բացակայությամբ և ժամանակի ու հավերժության նույնացմամբ, ուր լիովին անտեսվում է ժամանակը, իսկ անցյալի և ապագայի միջև սահմանների աղոտությունը որակվում է որպես միջնադարյան մարդու հոգեբանության մեջ ժամանակի մերժում:

Միջնադարում ընդունված Երրորդության գաղափարը դարձավ աշխարհընկալման յուրատեսակ մոդել, որը թույլ էր տալիս բացահայտել զգայական և մտավոր տարբեր տարրեր: Տվյալ դեպքում էպիկական Երրորդությունը վերաբերվում է նաև ժամանակին. կար ժամանակի երեք ձև. բնական, որ Աստծո ստեղծածն էր և բնականաբար եթերակա չէր քննության, և երկու եկեղեցական՝ ուղղափառաց և ւարույրաձև: Առաջին եկեղեցական ժամանակը թաժանում էր պատմությունը երկու խոշոր մասի՝ մինչև Քրիստոսի ծնունդը և հետո: Այդ ուղղագին ժամանակը, որ սկսվում էր Ադամի ստեղծմամբ և ձգվում մինչև Ահեղ դատաստան, զուգորդվում էր պարույրաձև ժամանակով, որ տարեցտարի կրկնվում էր եկեղեցական Տոնացույցներում՝ Ծնունդից մինչև Նաչեղություն:

Այդուհանդերձ, հավերժությունը, որ ընկած էր Արարումից առաջ և Ահեղ դատաստանից հետո, նույնպես ժամանակ էր, միայն ուրիշ՝ անիրական, հավիտենական աշխարհի չափումների մեջ:

Միջնադարյան մարդը սիմվոլիկ մտածելակերպով միավորում էր ժամանակը մի ընդհանուր հասկացության մեջ, որ չկան սահմաններ ոչ միայն անցյալ-ներկա-ապագա հատվածում, այլ նաև նույն հասկացության իրական և տիեզերական կյանքի միջև: Աստիճանաբար հաղթահարվում էր անջրպետը, որ թաժանում էր նյութականն ու հոգևորը, անհետանում էր սահմանն իրականի և հանդերձյալի միջև:

Ինչ վերաբերում է ծավալատարածական ըմկալմանը՝ Տիեզերքը թաժանվում էր երկու մասի՝ երկնքի ու երկրի: Միաժամանակ, Աշխարհը միասնություն էր, քանզի աղարված էր միակ Աստծո կողմից, և այն ամենը, ինչ շրջապատում էր մարդուն, դրվում էր հիերար-

խիստին համակարգի մեջ, որ կարևորը քննարկվում էր Աստծուն մոտ լինելու աստիճանով: Իրականությունում ընկալվում էր ոչ որպես առանձին միավորների կապ, այլ առանձին կտորներով՝ այն թեկոթներով, որ առավելապես ժկատելի էին և կարևորված: Բանի որ աշխարհն արդեն տրված իրականություն էր, այն դառնում էր վերջինի միավորման կենտրոն:

Առանձնապես հետաքրքիր է այս գաղափարների արտացոլումն արվեստում: Զևա-վորվել և տարածում է գտել այն թուր կարծիքը, թե միջնադարյան ստեղծագործողը զուրկ էր հեռանկարի տարրական ընթացումից և այդ իսկ պատճառով իր պատկերներում կիրառում էր ժամանակակից աչքին անսովոր մոտեցումներ: Որ միջնադարյան պատկերը չունի հարթությունների դասական բաժանում՝ գալիս է դարաշրջանի գեղագիտական պատկերացումներից և քրիստոնեական գաղափարախոսությունից:

Համեմատելով մույմ երկրաչափական պատկերը միջնադարյան մշակույթում և վերածնունդով պայմանավորված ժամանակակից կերպարային մտածողության մեջ՝ համոզվում ենք, որ երկրորդ տարբերակն ընկալվում է որպես սոսկ արվեստի ստեղծագործություն: Ինչպես թատրոնում է՝ դերասան-վարագույր-հանդիսատես, այստեղ հետևում է պատկեր-շրջանակ-դիտող հաջորդականությունը: Միջնադարյան հակադարձ հեռանկարի դեպքում զգալիորեն փոխվում է շրջանակի գաղափարը, և դիտողը դառնում է ոչ միայն արտաքին հանդիսատես, այլև տեսողական էֆեկտի շնորհիվ՝ համագործակից, պատկերի համամասնակից:

Բնականաբար, տեսանքն ավելի ուժեղ է տպավորվում, քան լսածը: Նկատի ունենալով միջնադարյան մարդու հոգեբանությունն ու ենթարկվածությունը՝ դժվար չէ պատկերացնել այն տպավորությունը, որ կարող էին թողնել մույմ Ահել դատաստանի պատկերները: Նման մոտեցումն ավելի անհատական է և ենթադրում է արվեստների ընկալման ավելի մուրք ձև:

Վախճանաբանական խնդրում տարածությունը, ինչպես և ժամանակը, ընկալվում էր եռակի: Հանդերձյալ կյանքի «աշխարհագրությունն» ընդգրկում էր երեք ոլորտ. դրախտ, դժոխք, իսկ հետագայում՝ մահ քավարան: Դրախտ ընկնում էին ըմտրյալները, քավարանում «մաքրվում», ազատվում էին մեղքերից, իսկ դժոխք իջնում էին անդառնալի մեղսագործները:

Դժոխքի իմաստն ավելի ջուտ կապվում է անձի և ըմտության իրավունքի հետ, քան արդարության և հատուցման: Այն մարդկային հոգու և կամքի ազատության բարոյական կանխադրույթ է: Մարդ դժոխքի «ըմտության» հարցում լիակատար ազատություն ունի:

Դժոխքի մկատմամբ տաժվող վախի ու սարսափի զգացումը կարող է սառանել հավատն Աստծո մկատմամբ: Պետք է անմնացորդ մվիրումով հավատալ Աստծուն, այլ ոչ թե վախենալ դժոխքից, այլապես սերմ առ Արարիչ մարում է:

Փորձենք քննել դժոխքը երկու տեսանկյունով՝ Աստծո և մարդու: Եթե ողջը ստեղծված է Նրա կողմից, ինչպե՞ս Նա կարող է հանդուրժել հավերժական տանջանքները: Դա կարող է դիտվել իբրև Արարչագործության թերություն և այս պարագայում հակասում է իր կերպարով և իր մեծությանը ստեղծվածի հանդեպ ողորմածության վեհ գաղափարին: Ուրեմն՝ դժոխքի մյութականացված պատկերացումն ինքնին հակասափառային է:

Պատկերը, սակայն, փոխվում է, երբ դժոխքին մոտենում ես անհատի տեսանկյունից։
Դժոխքը պայմանավորված է միայն մարդկային կենսափորձով, երբ այն առարկայաճան
և հաստատվում է Աստծուց դեպի Աստված անցման ճանապարհում, այլ ոչ թե՝ մարդուց
դեպի մարդ։ Դժոխքը ոչ թե առարկայական, այլ եմթականական էություն է. իսկ քանի որ
մարդը ներփակված է իր մեջ, նա չի կարող անցնել հավերժության սահմանը։ Այսպիսով,
դժոխքը ոչ թե հավերժություն է, այլ ժամանակի մեջ անվերջ շարունակելիություն. քանի
չկա այլ հավերժություն, քան Աստծո Արքայությունն է։ Դժոխքում միայն մրանք են, ովքեր
զրկվում են նեղ անձնական սահմաններում և անկարող են անցնել Աստծո առարկայա-
կան ոլորտը։ Դժոխային տառապանքները հավերժության մեջ չեն, այլ երկարատև՝ մար-
դու կողմից հավերժության հետ մոլորացվող ժամանակահատվածում։

Մարական սարսափը վերջինը չէ, դրան հետևում է դժոխքի սարսափը: Մարական սարսափը կյանքի այս կողմում է, քանի որ մահը հենց կյանքի ամենադաժան փորձությունն է, իսկ դժոխային տառապանքների դեմ հաղթանակը կարող է իրականացալ միայն Քրիստոսին հավատալով, այլ պարագայում այն կա՛մ անհավատություն է, կա՛մ ծառայություն սատանային:

ԿԻՒԻԿՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

ՄԻՍԱԶ Շ ԾԵՎԱԾԻՐԾԱՆ

ԳՌՆԵՐԻ ՎԱՆՔԸ

ԺԳ-ԺԴ դարերում Կիլիկիայի Հայկական պետության մշամավոր վանքերից մեկն էր Գոմերը: Այն ճամաչված էր որպես զրչության մշամավոր կենտրոն և մամրամկարչության ուրույն դպրոց: Ունեցել է կազմակերպված զրչատուն և հարակից կառույցներ: Գոմեր վանքի գործունեությանը մեծապես մպաստել են Հեթում Ա թագավորի եղբայր Հովհաննես արքաները¹: Նրա վամահայրության տարիներին է, որ Գոմերը ճամաչում էր գտել որպես զրչության, մամրակարչության և կազմարարության արվեստի հայտնի կենտրոն:

Գոմերի մամրակարչության արվեստի ոճը սերտորեն առնչվել է շրջակա զրչօջախների՝ Ակմեր վանքի և Բարձրբերդի արվեստի ոճերի հետ: Իբրև արվեստասեր, մատենագիր, գրիչ, մամրակարիչ և բարերար, Հովհաննես արքաներայրը, իր արքունական ազդեցիկ դիրքի շնորհիվ, Գոմեր վանքի բարգավաճման համար ստեղծել էր լայն հմարավորություններ, կալվածքներով և այլ տեսակի եկամուտներով ապահովել էր վանքի նյութական բարօրությունը, վանքը օժտել շնորհալի գրիչներով, մամրակարիչներով, փիլիսոփաներով² և ձեռագիր մատյաններ կազմող արհեստավորներով: Իմքը ևս ամձամբ մասնակցել էր ձեռագիր մատյանների պատրաստման գործին, բազմաթիվ ձեռագրերի համար եղել պատվիրատու:

Հովհաննես արքաները համար գրած և մկարագարդված տարբեր թվանդակությանմբ ձեռագիր մատյաններից չորսը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում³: Դրանք գրվել ու մկարագարդվել են Կիլիկիայի Բարձրբերդ գավառի Տիրոջ գյուղում, Ակմեր և գուցե Գոմեր վանքերում: Հիշյալ և մերձակա վայրերում աշխատող գրիչներին էլ պատվիրել և ապա ստացել է բազմաթիվ ձեռագրեր: Դրանից յոթը նույնպես պահպանվում են Մատենադարանում⁴:

¹ Հովհաննես արքայեղբայրը (1220/30-1289 թթ.) եղել է. «...եպիսկոպոս մահանգաց աստուածապահ դղեկիմ Մալեւանի եւ մասիւն ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հոշակելի տորթ ռոխտին Գոմերոյ»: Նրա թեմի առաջնորդամիտն է եղել Գոմեր վանքը: 1286 թ. նա արդեն արքեպիսկոպոս էր: Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց ամձնամուրների քաղարամ, Երևան, 1946, հտ. Գ, էջ 598: Ղ. Ալիշան, Սիսուան, Վնձնեկ, 1885, էջ 144-147: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 4119, թերթ 2ա:

² «Փլիխտփամբը» ոչ միայն երաժշտության, այլև գեղարվեստի մյուս նյութերի, այդ թվում՝ մամրամկարչության, մկարչության, ջանդակագործության և արվեստի այլ գործերի - կոմպոզիցիաները՝ կազմող ներք էին:

³ Ձեռ. հմր. 197, 1315, 3710, 5525:

⁴ Ձեռ. հմր. հմր. 195, 196, 345, 470, 4119, 4243, 4947:

Գոմերում գրված բազմաթիվ ձեռագրերից առնվազն չորսը պահվում է Մատենադարանում⁵։ Այդպիսիք կան նաև Վաշինգտոնում՝ Ֆրիքի ժողովածոում, Մյունխենի Արքունի Մատենադարանում⁶, Վենետիկի Ա. Ղազարի Մխիթարյան միաբանության մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում⁷, Երուսաղեմում⁸ և այլ վայրերում։

Հովհաննես արքաներայրը ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնք անվանի են դառնել գրչության, մանրանկարչության և գրքի կազմաբարդության արվեստում։ Նրանց թվում են Ստեփանոս Վահկացի և ընդամենը մանրանկարիչ Սարգիս քն. Պիծակի հայր Գոհգոր Պիծակ մանրանկարիչները, Կոստանդին գրիչը⁹, Վարդան Բարձրբերդցի (Փոքր) մատենագիրը¹⁰ և ուրիշներ։ Բոլորն էլ եղել են ԺԳ դարի չորրորդ քառորդի արվեստագետներ։ Արվեստի ոճական առանձնահատկությունների տեսանկյունից ելնելով, կարելի է ասել, որ Գոմերի վանքի գրչատունը գրչությամբ և մանրանկարչությամբ զբաղվողների ևս պետք է համարել Հովհաննես արքաների աշակերտներ։

Գոմերի վանքը կոչվել է նաև «ամապատ», «սուրբ ուխտ» կամ «հռչակելի սուրբ ուխտ Գոմերոյ»։ ԺԳ դարի վերջին քառորդում կիլիկիայի Հայկական թագավորության կարևորագույն վանքերից մեկն էր։ Ըստ աշխարհագիր Վարդան վարդապետի տված տեղեկության. «Կիլիկիե, որ է Սիս, ՚ի մէջ կայ Ասորոց եւ Գամրաց։ Ունի... եւ զվանորայս զԴրազարկ, զԱրքակաղծին, զԱլեւտի, եւ զԳոմերու սուրբ ուխտ»¹¹։

Գոմեր վանքից են նաև Մխիթար Ա Գոմերցի կամ Հոռմնցի (կրդ. 1341-1355 թթ.) կաթողիկոսը (մինչ այդ նա Գոմերի վանքի վանահայրն էր), որի ժամանակ է եղել 1343 թ. Սսի եկեղեցական ժողովը՝ Կաթողիկ եկեղեցու հետ միաբանության խնդիրը քննարկելու համար։

Գոմեր վանքը կառուցված էր վանքապատկան մույնանում գյուղում։ Վանքապատկան կալվածքներից մեկն էլ Տիրոջ գյուղն էր։ Այդ մասին հետևյալն է վկայում գրիչ Կոստանդին Ավդղու գրած և մանրանկարիչ Ստեփանոս Վահկացու ու Գրիգոր Պիծակի¹² ծաղկած «Մատուցն Նոր Կտակարանի» ձեռագրի հիշատակարանը, որում ասվում է. «Գրեցաւ սուրբ տառս մորակերտ տաճարին, որ յանում Աստուածասուրբ Հոգոյն կանգնեցաւ ՚ի

⁵ Զեռ. Ռմր. Ռմր. 195, 196, 345, 182։

⁶ Յուզակ հայերեն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ՚ի Մյունխեն, կազմեց Գրիգորիս վրդ. Գալեմքեարեան, Վիեննա, 1892, էջ 7։

⁷ Է. Յակոբոս Տաշեան, Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ՚ի Վիեննա, 1895, Ռտ. Ա, գիրք Բ, էջ 634-635, ձեռ. Ռմր. 245։

⁸ Նորայր եպս. Պողարեան, Մայր Յուզակ հայերեն ձեռագրաց Սրբոց Ծակոբեանց մատենադարանին, Ռտ. Զ, Երուսաղեմ, 1972, էջ 262-263, Ռմր. 1864։

⁹ Տե՛ս Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1964, էջ 77, 78։

¹⁰ Ղ. Այիշաճ, Ոջվ. աշխ., էջ 147։ Է. Աճառյան, Ոջվ. աշխ., Ռտ. Ե, էջ 92։

¹¹ «Աշխարհացոյց վարդապետ վարդապետի», հատմատեց Հայկ Պէրպէրեան, Փարիզ, 1960, էջ 24, տող 232-237 և էջ 50, տող 320-324։

¹² Այս երեքն էլ Հովհաննես արքաների աշակերտներն են։

գնալուց Տիրոջ, որ է սեփական ժառանգությունը սուրբ անապատին Գոմերոյն, որոց Տէր հովանացի. ամէն»¹³:

Հիշատակարանի յովանդակությունից պարզվում է, որ Հովհաննես արքանդրայրն իր աշակերտներին պատրաստել տված հիշյալ ձեռագիր մատյանը նվիրել է Տիրոջ գյուղի նորակառույց Աստվածասուրբ Հոգի տաճարին: Նախքան վերջինիս հիմնադրվումը, ճա 1272 թ. Տիրոջ գյուղում իր անձնական միջոցներով Ս. Հովհաննես Ավետարանչի անունով մի մատուռ էր կառուցել՝ կատարելով և նրա ներքին հարդարանքը:

Այդ մասին են վկայում 1286 թ. Հովհաննես արքանդրոյ գրած Ավետարանի հիշատակարանի տողերը¹⁴:

Հիշատակարաններից հայտնի է դառնում, որ Տիրոջ գյուղը որպես կալված Գոմեր վանքին պարգևողը եղել է Մեծմ Լևոն Ա (1187-1219 թթ.) թագավորը: Սմբատ սպարապետը կազմել էր Լևոն Ա-ի թագադրության հանդիսավոր արարողության մասնակիցների ցուցակը, ուր նշված է Բարձրբերդի տեր՝ «իշխանն Բարձրբերդոյ Գեորգ»-ը¹⁵: Վերջինս Ռուբինյան պարոն Մլեհ (1170-1175 թթ.) իշխանաց իշխանի որդին էր և Բարձրբերդին տիրում էր հորից մնացած ժառանգության հիմունքներով: Սակայն՝ Կիլիկիայի Հայկական պետությունում ընդունված կարգ էր, համաձայն որի Բարձրբերդը ամրոցը պատկանելու էր տիրակալին կամ նրա կամքով տրվելու էր արքունի ընտանիքից վստահելի և հավատարմի մի իշխանի:

Բարձրբերդն առաջին անգամ բյուզանդացիներից իր զինու զորությամբ գրավել էր Ռուբինյան պարոն Թորոս Ա-ն: Ուստի այն համարվում էր Ռուբինյան տոհմի անձեռնմխելի սեփականությունը և իշխանության տիրակալի տիրույթը: Որպես ավատատիրական իրավունք, Բարձրբերդի տիրոջն էր պատկանում նաև Բարձրբերդի իշխանության սահմաններն ընդգրկող գավառը: Դժվարամատչելի և իշխանամիստ այս ամրոցում էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության արքունի գանձատունը և բանտը: Բարձրբերդում ընդհանրապես բանտարկվում էին ապստամբությամբ, դավաճանությամբ և քաղաքական այլ հանցանքներով մեղադրվող իշխանները:

Մինչ Լևոն Մեծագործի թագադրվելը, Բարձրբերդը թողնվել էր Մլեհի որդուն՝ Գեորգ իշխանին: Թագադրվելուց մի որոշ ժամանակ հետո Լևոն Ա-ն հոգուտ արքունիքի է գրավում Բարձրբերդի իշխանության տիրույթը¹⁶: 1208 թ. այն տրվում է Լևոն Ա-ի քեռու որդի Կոստանդին մեծ իշխանին, ապագա թագավոր Հեթում Ա-ի հորը: Լևոն Ա-ի՝ Ակներ վան-

¹³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. 1, Երևան, 1984, էջ 843, ձեռ. հմր. 196, քննարկ թերթ՝ 76ր:

¹⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Եր. Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 107-108: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 5525, թերթ 225ր-226ա: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դ., կազմեց Արտ. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 592-593:

¹⁵ Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 210:

¹⁶ 1208 թ. թագավորի ղեմ դավադրություն մյութելու և զահի Զկատամար հավակնություններ տաճելու ամբաստանությամբ ձերբակալվում և Սիսի քերդում քանտարկվում է Գևորգ իշխանը: Վերջինիս բանտում կուրացնելուց հետո ազատ են արձակում (1214 թ.): Դրանից հետո մա քաղվում է հոր կառուցած Մեծքարի վանքը և ապրում մեծակյացի կյանքով: Նա Լևոն Ա-ի հորեղբորորդին էր: Թաղված է Մեծքար վանքի գավթում, հոր պեղզմամի կողքին:

քն կառուցելու (1198-1203 թթ.)¹⁷ և Գոմեր վանքին Տիրոջ գյուղը նվիրելու թվականները համընկնում են 1198-1208 թթ. միջև: Այդ ժամանակահատվածում էր, որ Լևոն Ա թագավորը Բարձրբերդի իր սեփական տիրույթից կալվածքներ էր նվիրել Ռիշյալ վանքերին:

Առայժմ պարզված չէ Գոմեր վանքի կառուցման թվականը: Այն ունեցել է եկեղեցի «...ի գառառիս կիլիկիոյ ՚ի սուրբ անապատն Գոմեր կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եւ աստուածակիր մշանին կայսեցի կոչեցեալ, եւ Սրբոյն Սիաւմի մարտմեր, որ է մերձ յաստուածապահ դղեակն Բերդ Բարձր կոչեցեալ»¹⁸:

Գոմերում եղել էր տոհմական դամբարանատուն, որը հավաստվում է 1248 թ. Հոռմկլայում, Կյուրակոս գրչի գրած Ավետարանի Ռիշատակարամից: Պարզվում է, որ ձեռագիր մատյանը ստացող Հովհաննես Գոմերցի եպիսկոպոսը այն կտակել է Գոմերի վանքին, ուր թաղված էին մյա ազգականներից շատերը¹⁹:

Գոմեր վանքի դիրքի մասին ցարդ չկային ստույգ տեղեկություններ: Դ. Ալիշանը տեղյակ չի եղել Ակների, Գոմերի, Մոլևոնի, Մյուռնի, Բարձրբերդի և դրա շրջակա այլ բնակավայրերի տեղագրությունը²⁰:

Հայկական Հանրագիտարանում սխալմամբ վանքը տեղադրվել է Մոլևոն գավառում, որը ոչ մի աշխարհագրական առնչություն չունի Գոմեր վանքի հետ²¹: Այդ սխալի պատճառն է համոզիսացել Հովհաննես արքաներորդ Մոլևոնի գավառի և Բարձրբերդ գավառի մի մասի հոգևոր առաջնորդ լինելու համոզմանը: Այդ են վկայում Կիրակոս վարդապետի գրած «Մեկնութիւն գործոց Առաքելոց. Համառօտ ժողովումն մեկնութեան Ս. մարգարէին Եսայեայ» ձեռագիր մատյանի Ռիշատակարամի հետևյալ տողերը. «Առ խնդրողն համառօտիս տէր Յոհաննէս Արքայեղբայր եւ եւ մահամզաց աստուածապահ դղեկին Մոլևոնի և մասին իմ Յարձրբերդոյ եւ մոյն տեսուչ հոչակելի սուրբ ուխտին Գոմերոյ...»²²:

Հիշատակարանի այս տեղեկությունը հանգեցրել է այն սխալ եզրակացության, որ թեմի առաջնորդարան Գոմերի վանքը գտնվել է Մոլևոն գավառում: Դ. Ալիշանի մեկ այլ վրիպումն է Մոլևոնը Մյուռնի հետ մոլանացնելը²³: Մոլևոնը՝ Կիլիկյան Տափրոսներում լեռնային ամրոց էր: Բյուզանդական կայսրության ժամանակ Մոլևոնը համարվում էր բերդաքաղաք: Կիլիկիայի Հայկական պետության ժամանակ իշխանամհիստ բերդ էր: Հսկողութ-

¹⁷ Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Ակների գրչության դպրոցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմր. 3, էջ 144: Մ. Հ. Ընեվաթիբյան, Կիլիկիայի Ակներ վանքի տեղադրությունը, «Պատմա-քանասիրական հանդես», 1982, հմր. 3, էջ 126:

¹⁸ Դ. Ալիշան, Ոջվ. աշխ. էջ 144; 1236 թ. Գոմերում Հովհաննես արքաներորդ պատվերով գրված Ավետարանի Ռիշատակարամ: Տես Ֆրիդի Բալդաշնու, A. Sargisjan, A catalogue of medieval Armenian manuscripts the United States, Los Angeles-London, 1976, էջ 737: Հայերեն ձեռագրերի Ռիշատակարամներ, ԺԳ դ., էջ 332:

¹⁹ Հայերեն ձեռագրերի Ռիշատակարամներ, ԺԳ դ., էջ 241: Գարեգին Կթդ. Յովսեփեան, Ռիշատակարամն ձեռագրաց, հտ. Ա. Ամբիփյան, 1951, էջ 984:

²⁰ Դ. Ալիշան, Ուրյմ տեղում:

²¹ Հայկական Սովետական Հանրագիտարան, հտ. 3, 1977, էջ 183:

²² Յուզակ ձեռագրաց խաչիկ վարդապետի Դաղեան, Յակոբ Յ. Թովմեան, Մասն Ա, վարդաքաղաք, 1894, էջ 59, քմագրի թերթ 7:

²³ Դ. Ալիշան, Ոջվ. աշխ., էջ 142:

յամ տակ էր պահում Կուկլակի կիրճի արևելյան կողմից անցնող արահետները: Այժմ կոչվում է Միլվան կայե և գտնվում ճուլմանում գյուղի մոտ:

Մլուճ՝ Կիլիկիայի Հայկական պետության Միջերկրականի ծովամերձ թերթերից մեկն էր: Գտնվում էր Ռաշտայից Կիլիկիայի հարավային մասում: Հիմ ղեկավարը, Ռոմանյեցիները և քյուզանդացիները այն անվանում էին Մալլուս կամ Մալլուն, իսկ արաբները՝ Մլուն: Կիլիկիայի հայերը գործածել են տեղանվան արաբական Մլուն ձևը: Մոլևոնի և Մլունի միջև (ուղիղ չափումով) հեռավորությունը 83 կմ է:

Հայկական Հանրապետության և, առաջնորդվելով Ղ. Ալիշանի տեղորոշմամբ, կրկնել է ճուլմ սխալը և երկու (Մոլևոն և Մլուն) տեղանունների մասին գոյություն ունեցող տեղեկությունների խառնուրդից ստացվել է «Մոլևոն» հոդվածը: Մլունի մասին հայտնի տեղեկությունները վերագրվել են Մոլևոնին: Հոդվածում Մոլևոնը տեղադրվել է Համբրոն թերթից արևմուտք, որը սխալ է²⁴: Այսպիսի սխալ տեղեկությունների առկայության պայմաններում, Գոմերի տեղը դժվար է որոշել: Սակայն, գոյություն ունի Գոմեր վանքի դիրքը ճշող գրավոր տեղեկություն, ըստ որի այն եղել է Բարձրթերթի մոտ, Կարմիր լեռան միջավայրում:

1303 թ. Գոմեր վանքում Մարտիրոս վարդապետի ընդօրինակած հիշատակարանի հետևյալ տողերում ճշված է գրչության վայրը. «... գրեցի զսա ի վանքս հռչակելի, որ Գրոներ կոչի, մերձ ի Բարձր կոչեցեալ Բերդ, ի մեծ թուականիս Հայոց ՉԽԲ (1303), ի յամսեանց Մայիս...»²⁵:

Բարձրթերթի մոտ և Կարմիր լեռան միջավայրում եղել է նաև Կիլիկիայի Լիսանկա անապատը, որը կառուցել էր ճուլմ թագավորաճայր Կոստանդին մեծ իշխանը: 1270 թ. Բասիլ գրչի գրած Անետարանի հիշատակարանում հետևյալ տողերով է նկարագրված զբոսության վայրը. «Արդ, գրեցաւ սա ի լեռոնս Կարմիր, մերձ յանառիկ դղեակն Բարձր Բերդ, ի վանքս Լիսոնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնից և Սուրբ Նշանին»²⁶:

1278 թ. Հովհաննես արքանդոթոր Գոմեր վանքում գրել տված «Լուծմունք գրոցն Եւագրի Պոնտացոյ» ձեռագրի հիշատակարանում հետևյալն է ճշված Գոմերի տեղագրության մասին. «... ի թուականիս Հայոց ՉիԷ (1278), ի լեռոն Կարմիր, ի սուրբ հրեշտակաբնակ անապատն Գոմեր»²⁷:

Այս տեղեկություններից պարզվում է, որ Գոմեր և Լիսանկա վանքերը եղել են Բարձրթերդ գավառում, ճուլմանում ամրոցի մոտակայքում և Կարմիր լեռան միջավայրում:

Հովհաննես արքանդոթոր 1280 թ. Գոմերում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում ճշված է, որ Գոմեր վանքը կամ անապատը գտնվել է «... ի զահս Կիլիկիոյ, ի զաւառն Բերդին Բարձր ասացելոյ, այսինքն՝ Լեոնայից Կիլիկիայի Բարձրթերդ գավառում: Նույն հիշատակարանում կամ այլ հետաքրքիր տեղեկություններ. «... ձեռամբ իմով գրեցի

²⁴ Հ. Ս. Հանրապետյան, հտ. 7, Երևան, 1981, էջ 689:

²⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, էջ 751, ձեռ. հմր. 182, քննարկ թերթ 205ա: Հ. Ս. Խաչիկյան, ԺԳ Գ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 16:

²⁶ Ղեւոնդ Փիրղալեմեան, Նշխարը պատմութեան հայոց, հտ. Բ, էջ 39-40: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 4515: Հայ. ձեռ. հիշ. ԺԳ Գ., էջ 397:

²⁷ Ղևոնդ Փիրղալեմեան, ԶԳ. աշխ., հտ. Ա, էջ 44-46: (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 4515, 1884 թ., վաճ): Հայ. ձեռ. հիշ. ԺԳ Գ., ԶԳ. աշխ., էջ 486:

տակ» կոչանք գետակից: Ուրեմն՝ Կոստանդնուցը պիտի գտնվեր Բարձրաբերդ գավառում Ռոստոկ Կարմիր գետակի ավազանում, Կարմիր լեռան շրջանում:

Գոմեր վանքի աշխարհագրական դիրքի տեղադրության անունով ուշագրավ է նրա անվան ստուգաբանությունը: Գոմեր տեղանունը կազմված է «գոտ» գոյականից ու «ներ» հոգնակի մասնիկից՝ Գոտ + ներ

«Գոտ» բառն ունի քաղմաթիվ հոմանիշներ: Դրանց թվում՝

Գոտ = թեմ, հորդ:

Գոտ = 1. Զրավագան – ջրկուր, ջրաման, կուր (թուրք. Oluk), մատակ:

2. Հեծան ա) Առագաստ: ք) Մզարան: մզանոց, գոտ, մզոց, կոխարան, շիրտտուն, չաքազ, գաթաս, տալք:

3. Զրորդան = Զրիկ, ճուլտրակ (տանիքի), չրփող, շոճատակ, կուտջրվան, գոտ, չոիկ, ճավղան:

Գոտ բառի քաղմաթիվ իմաստներից պետք է ընդունել «ջրորդան»-ը: Նրան համապատասխանող թուրքերեն «օլուք» (oluk) բառն ունի երկու նշանակություն.

1. Տանիքի վրայի ջրուղի, ջրորդան:

2. Գետակով կամ առվակով ձոր:

Այս վերջինս համապատասխանում է Լեոնայից Կիլիկիայում, Գոմեր վանքի գտնված միջավայրի աշխարհագրական քերդ-ռելիեֆի մկարագրությամբ: Բազմաթիվ խորը ձորերով և գետակներով կտրատված լեռնային միջավայրում գտնվող Գոմեր վանքի ամունը պետք է ընկալել իբր «Գետակով ձորերի վանք» ձևով: Հետևաբար՝ այն պիտի գտնվեր մի գետակի կամ ձորագետի եզրին, ինչպիսին եղել էր Կոստանդնուց գյուղաքաղաքը Կարմիր գետակի ավազանում³²:

Խնդրո առարկա միջնադարյան Կիլիկիայի Հայոց Գոմեր և Լիսոնկա վանքերը, Կոստանդնուց գյուղաքաղաք, Տիրոջ գյուղ, Կայտեն կամ Կատենա քերդ, Պողոսական անապատ, Կարմիր գետակ և Կարմիր լեռ վայրերը գտնվում են Լեոնայից Կիլիկիայի արդի Կարսանոլ (Karsanöl) կոչվող գավառակում (ճահիե): Վերոհիշյալ տեղանուններից պահ-

³² Գոտ բառի հոմանիշներից են «հորդ» և «թեմ» բառերը: Դրանց համապատասխանող թուրքերեն կըզզըմ (kizgirm) բառով կազմված և Կըզզըմ-տերն (Kizgirmclere) կոչվող գետակի անունը կա Լեոնայից Կիլիկիայի Ռիշյալ միջավայրում: Կըզզըմ-տերն գետակի անվան հայերենը գուցե համապատասխանում է Գոմերին: Գոտ բառի հոմանիշներից «ջրավագան»-ը եթե հասկանանք որպես քաղմաթիվ գետակների կազմած ցանցի ընդգրկված միջավայրը՝ ջրավազան իմաստով, ապա դա կհամապատասխանի Գոմեր վանքի գտնված Կարմիր լեռան շրջանի Կարմիր-գետակի ջրավազանին, որը այժմ կոչվում է Կուլ Պյունիկ-տերն: Դրա մեջ է թափվում Կըզզըմ-տերն գետակը:

Գուցե պատահականությամբ արդյունք չլինի «գոտ» բառի հոմանիշներից «գաթաս» և տալք՝ քառերի համադրումից կազմված թուրքերեն Կաթասաքալ քաղդ քառը, որը միաժամանակ թե՛ տեղանուն է և թե՛ վերոհիշյալ աշխարհագրական շրջանում այժմ գոյություն ունեցող երկու գյուղերի անունն է: Թուրքերեն «կաթասաքալ» նշանակում է «խոշոր մորուք», որն առիաստրակ փրծանվում էր եկեղեցական կառույցներ ունեցող Ռին բնակավայրերի համար: Կիլիկիայում այժմ կամ Կաթասաքալ անունով քաղմաթիվ բնակավայրեր:

ա) Սսի Ռյուսիս-արևմտյան կողմը և Ամոդոլ քերդից արևմուտք գտնվում է Փոսթ-Կաթասաքալ կոչվող արևմտական ըլուրը և գյուղը:

բ) Աղամա ըաղաքի Ռյուսիս-արևմտյան կողմը, Բախուտ գետի մոտ Կաթասաքալ անունով գյուղ:

գ) Սսի արևելյան կողմը և Արքակաղնի վանքից հարավ, Կաթասաքալ անունով վայր:

պահվել են մասամբ փոփոխության ենթարկված երեք բնակավայրերի ամուճմբ: Դրանցից մեկը Տիրոջ գյուղի ամուճմբ է, որին թուրքերը քիչ աղավաղելով և վերափոխադարձություն իրենց լեզվով, ճախ կոչել են Դիրլիկ (Dirlik, Տիրլիք): Դա կազմվել է Տիրոջ տեղամասում առաջին «տիր» մասից և թուրքերեն «լիկ» մասնիկից, որը համապատասխանում է հայերեն «նոց կամ ամոց»-ին: Երկուսի համադրումից առաջացել է գյուղի *Դիրլիկ* անունը: Միջնադարյան Տիրոջ գյուղը այժմ կոչվում է *Դարբլիկ* (Darilik): Գյուղը գտնվում է Կարսամուտից դեպի հյուսիս-արևելք 6-7 կմ հեռու: Դարբլիկից արևելք, այս բնակավայրի և Պառատիս (Այնթապ) գետի միջև կամ Կըզըլ-տամ և Կյավուր-քյուլի ամուճով գյուղեր:

Մասամբ փոփոխության ենթարկված վերոհիշյալ տեղամուճներից երկրորդը Կոստանդնոց գյուղաքաղաքի ամուճմբ է, որն այժմ կոչվում է *Կարսանոց*: Կոչվել է մահ *Կարսանոդլու* տոհմական ձևով³³:

Կարսամուտից արևմուտք 5 կմ և դեպի հյուսիս-արևմուտք 8 կմ հեռու, կամ Կարսաաքալ ամուճով երկու գյուղակնբ: Կարսամուտի հյուսիսի կողմը 2-3 կմ հեռու, Կըզըլ-տերե (Կիլիկիայի Հայոց *Կարմիր*) գետակը մի կիսաշրջան կազմելուց հետո, մեղ ձորերով հոսում է դեպի հարավ-արևելք և Ակներից հյուսիս՝ 10 կմ հեռու մի վայրում խառնվում է Պառատիս գետի ջրերին: Կարսամուտից հյուսիս՝ Կըզըլ-տերեյի աջ եզրին, *Կըզըլ-տաղ* (Կիլիկիայի Հայոց *Կարմիր լեռ*) վայրում պահպանվել է այժմ *Կարսանոց կայեսի* ամուճով միջնադարյան ավերված մի ամրոց: Սա՝ Կոստանդնոց գյուղաքաղաքի հետ հիշատակվող *հարձրերդն* է:

Նրա դիմաց Կըզըլ-տերեյիմ է միանում Կըզըլմ-տերեի, Աճըմամ-սուի և Հայ-հայ տերեի ջրերից առաջացած գետակը, Ակինեկ տաղ (2056 մ) լեռան կողերից և Կարսաաքալ գյուղից հոսող գետակները և երկրորդ Կարսաաքալ գյուղից հոսող Ջիյարեթ-չայ գետակը: Թուրքերեն «գիյարեթ» նշանակում է «ուխտատեղի, այց», ուստի Ջիյարեթ-չայ գետակի թարգմանությունը կլինի «ուխտատեղիի կամ ուխտավայրի ձորի գետակ»:

Կարսամուտից արևմուտք 4 կմ հեռու, Ջիյարեթ-չայ և Կըզըլ-տերե գետակների իրար միախառնման վայրի մոտ գտնվող այս *Կարսաաքալ* գյուղում էր Հայոց եկեղեցական կամ վանական կարևոր մի հաստատություն, որի համար էլ այդ կոչումին պատշաճ անուններ են տրվել գյուղին և գետակին:

Քիչ փոփոխության ենթարկված տեղամուճներից երրորդը, Կարմիր լեռան *Լիսանկալու* կամ *Լիսոնկալու* անունն է: Դա հիշատակվել է որպես վանքի անուն, 1270 թ. Լիսան-

³³ Այդ տեղանունը թուրքերը կազմել են թերևս Կարս և Կոստանդնու անունների համադրումից: Ավերի-Կարս- մասը գալիս է նույնանուն քաղաքից, որի մի հատվածում միջև ժեղարք թնակվել են Կիլիկյան ճակրոս լեռներում ապրող թուրքմենները: Իսկ վերջի «ամուտ» մասնիկը Կոստանդնու ամուճի վերջին մասն է: Կիլիկիայում եղել են Կարս անունով քաղաքի վրանակալները: Դրանցից զվարճվում է Կարսապալարին: Նրա սկզբնական անունն էր Կարս-Ջյուզկադրիյե: Այժմ կոչվում է Կադիլի: 1468 թ. Դաշտային և Լեռնային Կիլիկիային և Հյուսիսային Ասորիքի բնակավայրերին տիրացած Տյուզկադրիյու Շահսուվար թոհապետի եղբայր Հասան թեյը, դեպի Վրաստան կատարած արշավանքից վերադարձին, Կարսում թնակություն հաստատած թուրքմենների մի մասին իր հետ Կիլիկիա քերելով բնակեցրել էր այնտեղ: Ինչպես երևում է, Կարսամուտը բնակավայրում և Ադամա քաղաքից հյուսիս, 10 կմ հեռու Կարսը գյուղում ապրող թուրքմենների ճախները Կիլիկիա են եկել Կարսից:

կա վանքում Բասիլ գրչի ընդօրինակած վերոհիշյալ Ավետարանի Ռիշատակարանում³⁴։ Թուրքերը վանքի ամուցն աղավաղելով, այն վերածափել են իրենց լեզվին՝ Բարմար արտաբերմամբ։ Լիսանկա վանքի գտնված գյուղն այժմ կոչվում է Ուզուն-կույու (Uzunkuysu)։ Ակնեքից հյուսիս՝ 8 կմ, Բարձրբերդից՝ հարավ-արևելք՝ 12 կմ և Կոստանդնուքից հարավ արևելք՝ 9 կմ հեռու։

Լիսանկա վանքի կառուցման մասին հետևյալով է գրել Սամուել Ամեցին. «ՌՄԿԵ. Ի 2ԺԲ (1263) թվին... Ի սոյմ ամի փոխեցաւ առ Քրիստոս Կոստանդին անագ պարոմն և թագաւորաբայրն՝ ալեոքեալ քարոջ ծերութեամբ և լի աւուրքք։ Շինեաց գաւորք ուխտն խորին. և առնըթոյն ցմին զՄիսկեցերն ցան զԼիսանկան»³⁵։

Այժմ Լեոնային Կիլիկիայում այլևս չկան քրիստոնյա հայեր։ Հանգամանքների բերումով անցյալում մորաց մի մասը դավանափոխ է եղել և ընդունել մահմեդականություն։ Արդի *Միփանտերն* (Հիմ Հայոց *Սուրբ Անդրե*) գյուղի բնակիչներն անցյալում ամբողջ գյուղով միասին դավանափոխ եղած հայերի հետնորդներն են։ Նույնը կարելի է ասել նաև *Թափան գյուղի* արդի բնակիչների մասին։ Ամհաշվելի է Լեոնային Կիլիկիայի անցյալում դավանափոխ եղած հայերի թիվը։ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, դարերի ընթացքում Բարձրբերդ զավառի տեղամասերը հարմարվել կամ հարմարեցվել են թուրքերենին և այդ ձևով պահպանվել մինչև մեր օրերը։ Այս գործին իրենց մասնակցությունն են բերել տեղի դավանափոխ հայերը։

Անունը քիչ փոփոխության ենթարկված վայրերից մեկն էլ Լեոնային Կիլիկիայի Գոմե-րի ամրոց-վանքն էր։ Մինչև վերջին տարիներն ազն կոչվում էր Գիրե-կալե (Gire kale), այժմ՝ *Ենիքեո կալեսի* (Yenikkoy kalesi) և գտնվում է *Կարսանտրից* հարավ-արևելք և *Մազլիլի* (Mazilik) գյուղից հյուսիս, *Կրզլ-գեդիկ* (Kizilgedik) գյուղաքաղաքի մոտ։ Պարստիս գետի աջակողմյան ժամդակներից Գոդան-սու (Dogan su) գետակը Բարձրբերդի առաջ Կարմիր գետակի հետ միանալուց հետո, այստեղ՝ մեղ, խորը և ահագնատեսիլ ժայռերով դարձնարձիկ մի ձորի միջով հոսում է դեպի հարավ-արևելք և միանում Պարստիս գետին։

³⁴ Տե՛ս նաև. 26։

³⁵ Սամուել Երանյանի Ամեցույ Հաղաքումը ի գրոց պատմագրաց, Կաղաքապատ, 1893, էջ 151։

Վանքի Լիսանկա կամ Լիսոնկա անունը -լուսնակա- բառի զավառաբառացանքին ձևն է։ Լուսնակայի և լուսնի Ռոմանիշներից մեկն է «Տիկիմ երկնից»-ը։ Դա համարվել է Աստվածամոր կամ Աստվածածնի խորհրդանշաններից մեկը։ Թագավորաբայր Կոստանդին մեծ իշխանի կառուցած կամ վերակառուցած երեք վանքերի ղեկավարների թվում, անպատճառ առաջին տեղում էր զբաղում Ս. Աստվածածինը։ Ուստի՝ պատահական չպետք է համարել Լիսանկա վանքի անվան առաջնությունն Աստվածածնի հետ։ Պետք է ավելացնել, որ Կոստանդին մեծ իշխանի կառուցած վանքերի թուրք ղեկավարները -լուսավորիչներ- կամ -լուսատուներ- են եղել։ Դրանք թվում Միակեցեր ուխտից՝ Ս. Աստվածածին, Ս. Գրիգոր և Քրիստոս Աստուծոյ մերոյ։ Խորին ամապատինը՝ Ս. Աստվածածին, Ս. Գրիգոր և Ս. Նշան։ 1269 թ. երկրաշարժի հետևանքով ավերվելուց և վերամոտրոգվելուց հետո մնում են միայն Ս. Կարապետ և Ս. Նշան՝ եկեղեցիները։

Բարձրբերդի իշխանության տիրույթներում գտնվող Գոմեր Ակներ, Պողոսական և այլ վանքերի ղեկավարների թվում Ս. Աստվածածին անունը զբաղել է առաջին տեղը։ Միակեցեր ուխտի ղեկավարն էր։ Այն կազմված էր Ս. Աստվածածնից, Ս. Հովհաննու Կարապետից և Հիսուս Քրիստոսից։ Պարստիս գետից արևմուտք 3 կմ հեռու գտնվող Ուզունկույու գյուղում դեռ պահպանվել են ավերված Լիսանկա վանքի և մի քանի մնացորդները։

Բարձրքերդում, Գոմերում և Տիրոջ գյուղերում մկարագարդված ձեռագիր մատյանների մանրանկարներում, ժայռոտ լեռան լանջերի տեսարանները բնական են և մկարված են կարմիր գետակի ձորի քարափների բնանկարից: Երկաթի հանքաքարով շատ հարուստ է Բարձրքերդի գավառը: Այդ է պատճառը, որ «կարմիր» են ժայռերն ու քարերը: Ուշագրավ են Ավետիք ծաղկողի մկարագարդած «Սմբատ Գումդստապլի Աւետարանի»³⁶ մանրանկարներից «Ղազարոսի յարութիւնը»:

Մանրանկարում Ղազարոսի հարությունն ասես կատարվում է Կիլիկիայի կարմիր գետի գետանցքի լանջերի քարափներում: Մանրանկարում ժայռերը գունավորված են «կարմիր գույնով», որը պատահական չէ: Բարձրքերդի գավառում, հատկապես Տիրոջ գյուղի և Գոմերի գտնված շրջանը լի է անհամար «գոմեր»-ով: Տեղանվան «*Գոմեր*» հընչյունը, *Գոմերի* աղավաղված ձևն էր և թուրքերենում դա չուցի ոչ մի իմաստ:

Լեոնադի Կիլիկիայում, հատկապես Բարձրքերդի գավառում էր հիմնված Ռուբինյան իշխանությունը: Միմյե կերպ էլ այստեղ էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության կորիզը: Այդ էր պատճառը, որ Կիլիկիայի Հայկական հերալդիկայում միայն Հայ աղքատների գիմանշաններին էր մեմաշնորհված «կարմիր և ոսկու» գույները:

³⁶ Մեսրոպ Մաշտոցի ամվամ Մատենադարան, ձեռ. հմր. 7644, 1260-1270 թթ.:

ՏՐԱԴԱՐԱԿՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՆԱԿՈՐԱՅԱՆ

Բաևաախրական գիրությունների թեկնածու

ԱՂԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԿԱՅԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Երվանդ Օտյան, «Անիծյալ տարիներ»)

Երվանդ Օտյանի հուշագրության մեջ («Արյունոտ հիշատակներ», «Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Գրական հիշատակներ», «Վերհիշումներ», «Տասնվեց տարի ետքը») առանձնահատուկ է Եղեռնից Եվրոպա՝ «Անիծյալ տարիներ» վավերագրություն-վկայագրությունը:

Այս ծավալուն հուշագրությունը բացառիկ է Եղեռնի փաստավավերագրական, գեղարվեստական վկայություններում (Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալլաքյան՝ «Հայ Գողգոթան», Վահան Միրամխոբյան՝ «1915 թվականը. արհավիրքի օրեր», Արամ Անտոնյան՝ «Այն սև օրերուն», «Մեծ ոճիրը», Կարապետ Գաթիկյան՝ «Եղեռնապատում», Սալթի՝ «Մեր խաչը» և այլն) ընդգրկություններ, մանրամասների առատությամբ, աղետի և տառագրության համապատկերային վերաներկայացումով:

Շուրջ հինգ հարյուր էջանոց հուշագրություն-վկայությունն ընդգրկում է Առաջին աշխարհամարտի սկզբից, 1915-ի ապրիլ 24-ի չարաշուք գիշերից մինչև Հայոց Գողգոթայի գրեթե քուր վայրերի՝ Գոմիա և Տարսոն, Համա և Էլ Պուսերա, արարական անապատներ և Դեբ-Ջոր, փոքր ու մեծ, քիչ թե շատ նշանակալի և երկրորդական դեպքերի թագում մանրամասներ:

«Անիծյալ տարիներ»-ի պարզ շարադրանքը, սրընթաց պատումը, անպաճույճ ոճն առավելագույնս ընդգծում է այս հուշ-վկայագրության արժեքը: Հավելենք, որ Օտյանը միակ դասական վերապրող գրողն էր, որ ստեղծեց աքսորի և տառագրության պարունակների ամբողջական պատկերը:

Տասներեք գլխից ու վերջաբանից բաղկացած հուշագրությունը XX դարի հայոց պատմամշակութային կյանքի համգուցային հուշարձաններից է:

Ցավ ի սիրտ, Օտյանի այս հույժ արժեքավոր և կարևոր վկայագրությունը ցարդ գրեթե անմատչելի է եղել ոչ միայն արդի հանրությանը, այլև, առանց դույզն ինչ չափազանցության, ընթերցողին և մասնագետներին: Բանն այն է, որ հանգամանքների բերումով Կոստանդնուպոլսի «Ժամանակ» օրաթերթի 1919-ի միակ գրեթե ամբողջական հավաքածուն քայքայված վիճակում պահպանվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում և առարկայական պատճառներով անմատչելի է մասնագետներին:

Ավստրիայի հայ համայնքի վարչության ճախագահ Գեորգ Անտոնյանի սիրահոժար ջանքերով և աջակցությամբ հաջողվեց ձեռք բերել այս բացառիկ հուշարձանի պատճենը և հուշագրությունը հրատարակության պատրաստել: Օգտվելով առիթից, ցանկանում ենք

մեր շնորհակալությունը և խորին երախտագիտությունը հայտնել թե՛ Ավստրիայի հայ հասարակության և թե՛ պարոն Գեորգ Ամտոմյանին:

Երեքուկես տարվա աքսորից հետո, 1919-ին, Պոլիս վերադառնալուց պես Օտյամը սկսում է գրել «Անիծյալ տարիները», որն իբրև թերթում լույս է տեսնում Պոլսի «Ժամանակ» օրաթերթում 1919 թ. փետրվարի 6-ից մինչև սեպտեմբեր 25-ը:

«Անիծյալ տարիները» առկեսում է Ադնտի ճահատակների և աքսորի, տարագրության պարունակներով ամացած քաղմաթիվ դեմքերի վկայագրություններով: Բնականաբար Հայոց Գողգոթայի ականատես Օտյամը հանդիպել է և իր հուշերում վավերագրել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու քաղմաթիվ ներկայացուցիչների կենսապատումը Ադնտի դժոխքում:

Հայ հոգևորականը մեր պատմության այս ամենաողբերգական և ճակատագրական ժամանակաշրջանում էլ եղել է իր ժողովրդի առաջամարտիկը, հովիվը, որ աքսորի և մահվան հաճախմքում ամերևակայելի զոհողություններով սատարել, ամոքել և ամենակարևոր՝ իսկական փրկագործությամբ պահպանել է իր հոտի ազգային, քաղաքական նկարագիրը, պատմեջել ոգին ոչնչացումից: Ասվածի պերճախոս վկայություններից են, օրինակ, Նիկոմեդիայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Հովակիմյանի, Գոմիայի առաջնորդ Գարեգին վարդապետ խաչատուրյանի, Սուլթանիեի հոգևոր հովիվ Ռավիյո քահանա Ռաիդյանի, շուրջ երկու տասնյակ մյուս հոգևորականների օտյամական վկայագրությունները:

Ստորև «Էջմիածին» համդեսի ընթերցողին ենք ներկայացնում մի քանի փոքրիկ հատված Երվանդ Օտյանի այս հուշագրությունից:

Հավելեմք, որ աքսորի ճանապարհին Օտյամը որոշ ժամանակ, ստույգ մահվանից խուսափելու համար, հանդես է եկել իբրև Գարեգին վարդապետի հորեղբայր՝ Երվանդ խաչատուրյան անունով: Վարդապետը մի քանի անգամ ինչպես շատերին, այնպես էլ Օտյանին փրկել է քանտարկությունից, տաժանակիր աշխատանքից, երևակայության թուր սահմաններն անցնող առավել վատթար դժոխային իրավիճակներում հայտնվելուց:

Ռանթեական դժոխքից անհամեմատ սարսաղեցիկ Հայոց Գողգոթայի գրողի բնութագրմամբ «ահռելի տեսարաններ»-ից մեկ-երկուսը մույմպես գետեղել ենք ստորև, ինչը, կարծում ենք, մինչև գրքի տպագրությունը կօգնի հանդեսի ընթերցողին փոքր-ինչ պատկերացում կազմելու Օտյանի սույն հուշագրության մասին:

ԵՐԿԱՆԴ ՕՏՅԱԼ

ԱՆԻԾԹԱԼ ՏԱՐԻՆԵՐ

1914-1919

ԱՆՃՆԱԿԱՆ ԵՐԶԱՎՐԱԿՆԵՐ

(հատված)

Տասը օրի չափ մնացին Ծամաին: Թեոդյ կառքով ճամբայ եղանց դեպի Իսլաֆիէ որ երկու օրուան հեռավորություն ունի:

Այս ճամբուն վրայ տեսանց տարագիրներու կարաւաններուն անակարագրելի խեղճութիւնը: Հազարատու կիներ, աղջիկներ, տղաք, իրենց բեռներուն տակ կցած ոգեսպառ ու ցաւատանց կը քայեն ու կը քայեն ելեւջատու քարոտ ու ցեխոտ ճամբաներէ, ողոր ու կոծի աղաղակներ բարձրացնելով: Գիակներ թոս ու հոն, զիշատիչ թռչուններէ, շուններէ ու քորեմներէ յօշոտուած: Հիւանդներ, որոնց ծառերու տակ կը հեծեծեն անօգնական: Նորածիւններ լքուած, որոնց կը ճուստ անօթի: Ափ յափոյ, գէշ թաղուած մեռելայներ որոնց սրունքը կամ թեր դուրս մնացած է... դժոխային ահռելի տեսարան գոր ո՛չ մէկ Տամդէ կրցած է երևակայել:

Մանուկներ, կոքոսուած կամ լքուած, որոնց «մայրի՛կ, մայրի՛կ» կը պոռան լալաֆառայ և որոնց ո՛չ ոք պատասխան կուտայ:

Ու այդ անհմարին աղէտքը, այդ ահռելի արհաւիրքը կը տեսնէինց առանց օգնութիւն մը կարենալ ընելու, առանց միութարութիւն մը կարենալ տալու:

Իրիկունը հասանց Հասան Պէլլի, ուր պիտի գիշերէինց: Հոն ալ քանի մը հարիւր գաղթականի վրաններ կային:

Գարեգին վարդապետ ծանօթներ ալ գտաւ, որոնց եկան խանը, ուր իջեւանած էինց ու տեղեկութիւն տուին իրենց վիճակին վրայ:

Հետեւեալ առտու երբ կը պատրաստուէինց մեկնիլ, եկաւ զիս գտաւ Հայկ Կօշկարեանը, գրավաճառ և «Կիկօ»¹-ի հրատարակիչ:

Ինց պատերազմին սկիզբը, իբրև գինուոր դրկուած էր Չաթալճայի կողմերը, ուրկէ խոյս տալով՝ ապաստանած էր Ռոտոսթո, ուր ծածկուած կը մնար:

- Հոս ի՞նչ բան ունիս,- հարցուցի:

- Ռոտոսթոցիներուն հետ ես ալ մուհաճիր² եղայ,- պատասխանեց:

Եւ պատմեց թէ քաւական ճեղութիւն կրելէ ետքը հասած էին Հասան Պէլլի, ուր կը մնային առայժմ, ոստիկանները կաշառելով:

Նոյնմթերի վերջերն էր և ցուրտը սկսած էր այդ կողմերը: Բաց կառքերուն մէջ դողդողալով ճամբանիս շարունակեցիմը, հետզհետէ դեպի վեր ելլելով: Հանդիպեցանց բացուոր հայ զինուորներու, որոնց ճամբու շինութեան կ'աշխատէին ամենախեղճ վիճակի

¹ - Կիկօ - երգիծաբեր, լույս է տեսել Կ. Պոլսում 1909-1911 թվականներին, խմբագիր՝ Գրիգոր Թորոսյան:

² Մուհաճիր - գաղթական:

մէջ: Իրենց մէջ կը գտնուէին «Ժամանակ»³-ի երկու ցախկին զրաշարներ. որոնք զիս ճանչնալով եկան կառքին քով:

- Օրը տասը ժամ, այս ցուրտին, կ'աշխատինք չոր հացի մը փոխարէն,- ըսին:
- Բայց այստեղ տունը չկայ, վրան չկայ,- դիտել տուի,- զիջերը ո՞ր կը պատկիք:
- Հոս, քացօթեայ կը պատկինք,- պատասխանեցին:
- Հիւանդ չե՞ք ըլլար...
- Հարկաւ կ'ըլլամք:

Ու քացատրեցին թէ ութը հարիւր հոգիէն հազիւ 160 հոգի ողջ մնացած էին իրենց մէջէն:

Միւսն Իսլահիէ հանդիպեցամք հազարաւոր տարագիրներու միշտ մոյճ ամուլիօրէն խղճալի վիճակին մէջ:

Ուշ ատեն հասամք Իսլահիէ ու իջամք պամդուկ մը որուն տէրը յոյն էր ու հաճեցաւ մեզի հիւրընկալել:

Իսլահիէ մոյճ միջոցին 10 հազարի մօտ տարագիրներ կային վրաններու տակ: Բաղքին օդը վատառողջ ու տեճալիւ է: Գրեթէ ամէն վրանի մէջ մէկ հիւանդ կար:

Հոն կրկին հանդիպեցայ Հրամոտ Մկրեանին որ մորէն պահապանի ու մեռելաբարդի պաշտօն կը կատարէր:

- Օրական 100-150 հոգի կը մեռնի կոր,- ըսաւ,- ո՛չ բժիշկ ունինք, ո՛չ դեղ:
- Բայց լսեցի որ Ռոս հիւանդանոց մը կայ եղբր:
- Այո՞, գիտութեամբ հիւանդանոց մը, մեզի օգուտ չունի... մոյճ իսկ բժիշկը օր մը չեկաւ հիւանդները աչքէ անցնելու:

Իսլահիէի մէջ հանդիպեցայ Մովսէս Էֆէնտի Պաղըքճեանի որ փայտի միլթահիտ եղած էր ու այսպէս յաջողած էր իր պարագաներով ու ըմտանքը հոն հաստատուիլ:

Օր մըն ալ մեր սեճեակէն ներս մտաւ Հրամոտ Սամուէլը զոր Գոմիայի մէջ տեսած էի:

Ռարձեալ իր յիսնապետի համազգեստը կը կրէր:

- Միշտ պաշտօնի վրա՞յ ես,- հարցուցի:
- Չէ,- պատասխանեց,- աստիճան առին վրայէս, հիմա պարզ գիտութիւն եմ և ամէլէ թապուրի⁴ իմ կը պատկանիմ:

- Բայց համազգե՞ստդ...

- Սուրս առիմ, սակայն համազգեստս թողուցին:

- Ո՞ր կ'երթաս այսպէս:

- Տակաւիճ որոշ չեմ գիտեր, քայց կարծեմ միւսն Պիրսապա պիտի դրկեն, առայժմ Հալէպ կ'երթանք կոր:

- Բանի՞ հոգի էք:

- Ուրսուն հոգի, մեծ մասը հայ և յոյն:

³ «Ժամանակ» - օրաթերթ, լույս է տեսել 1908-1920 թվականներին, ապա՝ 1924-ից: Հիմնադիր - խմբագիր՝ Բասիմ (Միսաք Գոշումյան):

⁴ Ամէլէ թապուրի - քանկորների խումբ, աշխատախումբ:

Հետևեալ օրը մեկնեցաւ շոգեկառքով: Այլ անկէ ետքը զինքը չտեսայ, բայց իմացայ որ իրացնէ միջև Պիրսապա գացեր ու յետոյ յաջողեւ է Երուսաղէմ դառնալ ու հոգ մնալ իրեն հիւանդանոցի պաշտօնեայ:

Իսլահիէ գտնուող տարագիրներուն միակ բաղձամբը, սկեռում նպատակն էր ինքզինքն-
ցին նախ Հալէպ ու անկէ Սուրիա նետել:

Գիտէինք որ Սուրիա գացողները բաղդատաբար Քանգիստ էին միմչդեռ դէպի Տէր-
Ջօր գացողներուն՝ անխուսափելի մահն էր որ կը սպասէր:

Գառնիկ Մազմանեանը որուն ճամբան հանդիպած էի երբ երկրագործական մեքենայ
մը Ատամայէն Գոնիա կը փոխադրէր, ըսած էր ինձի:

- Նայէ՛ որ Հալէպ երթաւ, ամէն ջանք թափէ՛ ասոր համար:

- Բայց ասոր միջոցը ի՞նչ է:

- Իսլահիէն շոգեկառք նստիլ ու Հալէպ իջնել, չըլլայ որ Ռահիօ կամ Քաթմա իջնես:

Խորհուրդը լաւ էր ամշուշտ, բայց գործադրութիւնը, ափսո՛ս, դժուար:

Բացարձակապէս արգիլուած էր հայերուն տոմսակ տալ Հալէպի համար: Ծածկաբար
երթալն ալ անհնարին էր որովհետեւ թէ՛ շոգեկառքին մէջ, գրեթէ ամէն կայարան ամենա-
խիստ խուզարկութիւններ կը կատարուէին և թէ՛ Հալէպի կայարանը:

Նոյն իսկ շա՛տ դժուար էր շոգեկառքով Ռահիօ կամ Քաթմա երթալ:

Հայ տարագիրները պարտաւոր էին ոտքով կամ կառքով ճամբորդել, քաղաքներու մէջ
չքնակիլ: Պանդոկներուն արգիլուած էր հայ ընդունիլ:

Եթէ մենք յաջողած էինք Օսմանիէի մէջ քաղաքը բնակիլ ու իսլահիէ պանդոկ մը իջ-
նել, ասիկա երկու հեռագիրներու շնորհիւ էր զոր Գարեգին վարդապետ մասունքի մը պէս
կը պահէր գրպանը:

Այդ երկու հեռագիրները պատերազմական նախարար Էնվէր փաշայի կողմէ ուղ-
ղուած էին իրեն հետևեալ պարագաներու տակ:

Էնվէր փաշա Կովկասեան ճակատը այցելելէ ետքը, վերադարձին Գոնիայէ կ'անցնի:
Կայարանին մէջ ընդունելութիւն կ'ըլլայ իրեն: Սակայն Գարեգին վարդապետ լուր չունե-
մար, այնպէս որ չկրնար ներկայ գտնուիլ: Այս բացակայութիւնը դարձանելու համար հե-
ռագրով իր ցաւը կը յայտնէ կայարան գտնուած չըլլալուն և միևնոյն ատեն մէկ քանի փա-
ղաքական թառեր կ'ուղղէ Էնվէրի հասցեէին: Առաջին հեռագիրը ատոր պատասխանն էր
և շնորհակալութեան խօսքեր կը պարունակէր:

Երկրորդ անգամ, երբ Գոնիայի հայերը տարագիր կ'ըլլային իրենց առաջնորդին հետ,
Գարեգին վարդապետ Էրեյլիէն հեռագիր մը կ'ուղղէ Էնվէրին խնդրելով որ Գոնիայի մա-
հանգը գտնուող հայերը տարագիր չըլլան: Էնվէր ասոր ալ կը պատասխանէ երկդիմի ո-
ճով մը:

Այդ երկու հեռագիրներուն շնորհիւ էր որ քիչ մը աչք կը զոցէին մեզի ու թոյլ կուտային
քաղաքին ու պանդոկին մէջ կենալու քանի մը օր:

Այդ միջոցին Էնվէրի ստորագրութեամբ գրպանին մէջ երկու հեռագիր ունենալը բաւա-
կան մեծ բան կը նկատուէր:

Այսուհանդերձ օր մը ժամտարմա քօմամտամ⁵իմ եկաւ մեր սենեակը և.

- Դուք տակաւիմ Բո՞ւս էք.- պոռպով սկսաւ մախատել Գարեգին վարդապետը և նոյն իսկ վօրոյցէն քաշքշել:

Յետոյ, իրեն ընկերացող ոտտիկամիմ Բրամայեց որ ամենքս ալ,- կիներէն զատ,- իսկոյն կառավարչատուն տամի:

Մամբայ եղանք: Քօմամտանը միշտ մախատիմք ու սպառնալիք տեղալով կուգար մեզի հետ: Պա՛ր մը լսեցի որ ոտտիկամիմ կ'ըսէր.

- Քեզի քամի ծեծէ՛ ըսեմ մէ՛ առնմայ պիտի ծեծես, գիտցած ըլլաս...:

Մտմտութիւն առաւ մեզի: Բարեքախտաբար տեղոյն զայմագամի փոխանորդը, որ մախապէս Թարսուս կը գտնուէր, ծամօթ էր Գարեգին վարդապետին: Միայն թէ պիտի կրնայի՞մք զիմքը տեսնել:

Քօմաք⁶ հասնելուս՝ ոտտիկամը Բրամայեց որ քակը կենամք. միմչ քօմամտանը զմաց իր սենեակը:

Գարեգին վարդապետ յաջողեցաւ սակայն սանդուխէն վեր սպրդիլ ու մտնել զայմագամի փոխանորդիմ քով ու խնդիրը քացատրել իրեն:

Գայմագամը Բրամայեց որ մեզ ազատ արձակեն: Ու այսպէսով օձիքմիս ազատեցիմք: Մէկ երկու օր ետքը այդ մարդոմ քարեացակամութեամբը յաջողեցանք Հալէպի համար տօմսակ ձեռք ձգել և շոգեկառք մտիլ, իմչ որ մեծ յաջողութիւն մըն էր մեզի համար:

Սէպիլ Հալէպի արևելեան կողմը ըմդարձակ դաշտ մըն է, քաղքէն ոտքով մէկ ծամ հեռատրութեամբ: Տէր-Ջօր երթալիք տարագիրները հոն կը դրկուէին, վրամներու ներքև:

Սէպիլ դժոխքի կայարամն էր հայերուն համար:

Արևը մարը մտնելու վրայ էր երբ հասայ Սէպիլ:

Հագարաւոր վրամներ ցցուած էին ամէն կողմ: Բաւական փմտոտութեմեր ետքը վերջապէս գտայ մերիմները, ծամօթի մը վրամիմ մէջ:

Թէև մեմք ալ վրամ մը ումէիմք հետերմիս, քայց չէիմք տմկած:

- Այս գիշեր այսպէս անցըմեմք մեր քարեկամիմ վրամիմ ներքև,- ըսաւ Գառմիկ Պօտուրեան,- վաղը մեր վրամը կը տմկեմք յարմար տեղ մը:

Ըմդհանրապէս պարտիզակցիներ, ատաքագարցիներ, ոտտութեցիներ ու էտիրմեցիներ էիմ այդ միջոցիմ Սէպիլ գտնուողները: Կայիմ մակ փոքր թիտով աֆիօմգարաֆիսարցիներ, խարթերոցիներ ու տիգրամակերտոցիներ:

Այն վրամը ուր մեզ հիւրըմկալեցիմ՝ պարտիզակցի ըմտամիքի մը կը պատկանէր:

- Մեմք Սուրիա պիտի երթամք,- ըսաւ ըմտամիքի պետը,- իմչպէս մակ մեզի հետ 300-ի չափ ըմտամիքմեր:

- Բաղց իմչպէ՞ս յաջողեցաք...

⁵ Ժամտարմա քօմամտան - ոտտիկամապետ:

⁶ Քօմաք - պստեղ՝ ոտտիկամատուն:

- ԸՇՎԱյ փաշա հրաման ըրած է որ արհեստատրոները զատուիմ ու Շամ ղրկուիմ, մեք ալ իբրև արհեստատրո հոմ պիտի երթանք ու կառավարական գործարաններու մէջ պիտի աշխատինք: Մասնատրապէս կը փնտռեմ կոր դերձակները, կօշկակարները, երկաթագործները, ատաղձագործները, ոստայնաները:

- Այդ երեք հարիր ընտանիքներմ ալ արհեստատրո՞ր են:

- Մեծամասնութիւնը արհեստատրո է, քայց կայ մէջերցիմ մաս մը որ ու է արհեստ չուցի, քայց յաջողած է իբրև արհեստատրո արձանագրուիլ:

- Ի՞նչպէս...:

- Կաշառքով կամ խաբէրայութեամբ:

Արդարև շատ էրիկմարդիկ որոնք իբրև դերձակ արձանագրուած էին, ատտուրնէ միջև իրիկուն իրեմք վրաններում մերքև նստած, իրեքց կիներէն թելը ասելիմ ամցնել, կար կարել կը սորվէին:

Պարտիզակցիմ խոստացաւ աշխատիլ մեզի ալ արհեստատրոի մէջ մէկ վէսիքա⁷ ձեռք ձգելու համար:

Իրա՛ւ ալ հետևեալ օրը կրցաւ ձեռք ձգել մեռած մարդերու երկու վէսիքա որոնք գնած էր մէջ մէկ ոսկիի: Այս վէսիքաներէմ միմ Գառնիկ Պատուրեանը առաւ, իսկ միւսը Միհրանը:

Ես քացը մնացի:

- Հոգ մի՛ ըներ, քեզի ալ ճար մը կը գտնամք,- յուսադրեց պարտիզակցիմ:

Եւ իրիկուան դէմ կէս ոսկիի փոխարէն, ձեռք ձգեց մոյմ օրը վրաններում մէջ մեռած պարտիզակցիի մը նուֆուս թէքերէսից⁸ որում մէջ հանգուցեալիմ արհեստը մշամակուած էր: Մեծողը տիրկէր⁹ է եղեր, ես ալ ստիպուեցայ իր աճումն ու արհեստը ըմդումիլ և եղայ պարտիզակցի տիրկէր Ասատուր, 52 տարեկան, ամուսնացած և երկու զաւակներ ու հայր:

Ասիկա թէև վէսիքա չէր, քայց վերջապէս արհեստատրո ըլլալս հաստատող պաշտօնական թուղթ մըն էր:



Տիգրանդըրիմ սարսափելի շարդ կ'ըմէր Սէպիլի վրաններում մէջ: Դեկտեմբերը հասած էր, անձրևը կը տեղար: Յուրտը ամտամելի էր մանաւանդ գիշերները: Բարակ կտաւէ շինուած պատահատում, խարխիլի վրանները անբաւական էին օդիմ դժմակութեան դէմ պաշտպանելու համար մէջը գտնուողները: Աւելցուցէք ասոնց վրայ սմունդի անբաւականութիւնը և կրնաք երևակայել թէ որքա՛ն հիւսնդներ պառկած էին վրաններում տակ:

Ատտուրնէ միջև իրիկուն աղքի կառք մը, որ իբրև մեռելակառք կը ծառայէր, կ'երթար կուգար մեռեալ փոխադրելով: Ամէն անգամ ութը տասը հատ կը դիգէին կառքիմ մէջ ու այնպէս կը տանէին (...)

⁷ Վէսիքա - փաստաթուղթ:

⁸ Նուֆուս թէքերէսի - անձնագիր:

⁹ Տիրկէր - հիւսն:

Առաջին անգամ Սեպիլի վրանցներում մեջ տեսայ տղայ վաճառելու զարմուրդի ու սրտաճմլիկ գործողությունը:

Հալեպեն կուզային՝ կառքերով՝ արաբ. թուրք. հրեայ կիներ ու կ'սկսեին շրջիլ մեկ վրանեն միայն:

- Սաթլըն չոճուք վա՞ր մը ¹⁰, - հարցնելով:

Այն ծոռոցները որոնք ունևոր էին՝ սոսկումով ճամբու կը դնեին այդ կիները, իսկ խեղճերը, անթոթները կը վարանեին:

Այդ վարամուտը թաւ էր սակարկութեամ սկսելու համար:

- Տանք երթայ,- կ'ըսէր էրիկը իր տղուն ձեռքէն բռնած:

- Կը մեռնիմ՝ զաւկէս չեմ քաժնուիր,- կը գոչէր կիճը լալով:

Եւ ահա զմորդ կիները կը միջամտէին:

- Դուք արդէն մեռնելու կ'երթաք կոր, գոճէ սա տղան ազատեցէք: Մենք թարիք ընելու համար է որ առնել կ'ուզենք: Մեզի զաւակ պիտի ընենք... Եթէ ողջ մնաք ու ետ դառնաք մորէն ձեր զաւակը ձեզի կուտանք:

Ու աչսպէս հազար ու մէկ համոզիչ խօսքեր: Ու մայրը որ իր զաւկին անթոթ ըլլալը զիտէ և միջոց ալ չունի կեդակրելու, վերջապէս յուսահատ տեղի կուտայ:

Կիները մէկ երկու մեճիտ կը դնեն մարդուն ձեռքը և մամուկը կառք դնելով կը մեկնին:

Ու ահա՛ ողբ ու կոծը կը սկսի: Հիմա հայր ու մայր երկուքն ալ կուլան, կը գլջան իրենց ըրածին վրայ, կառքին նստին վազել կ'ուզեն, քայք ան արդէն հեռացած է...:

Տեսայ կին մը որ իր երկու զաւակները վաճառելէ քանի մը ժամ ետքը խենդեցաւ:

Ուրիշներ, տեսակ մը թմրութեամ, ապուշութեամ մեջ կ'իյնային, լուռ, ակնարկը սևեռում, ժամերով գետիցը նստած կը մնային: Ա՛յ կարծես զգացումը, գիտակցութիւնը մեռած էր իրենց մէջ, անասնացած էին...

Սեպիլի մէջ, այսպէս, հազարաւոր հայ տղաք ու աղջիկներ ծախսուած են հալեպցի աւրարներու, թուրքերու և հրեաներու: Ընդհանրապէս փոքր տղաքը յարգի էին, 7-10 տարեկան, մանաւանդ աղջիկները:

Մանուկներու վաճառումը տեղաբնակութեան ահեղի եղեռնին ամենէն զաւանդեցնող դրոշմներէն մէկն է: Երբեք կարելի չէ մարդկութեան անելի մեծ նուաստացում մը երևակայել:

Նրապարակումը պարտասարեց՝

ԳՐԻԳՈՐ ՆԱԿՈՐԱՅԱՆԸ

¹⁰ Սաթլըն չոճուք վա՞ր մը - ճախու մամուկ կա՞:

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՎՈՎԵՍՅԱՆ

ԳԱՌՋՈՒՆ ԻՐ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Ինչպես մի շարք ցկարիչներ, Գառզուն Գույնպես ուրույն կարծիք ունի իր արվեստի վերաբերյալ: Վկայակոչելով մի քանի արվեստաբանների ու լրագրողների հետ ունեցած նրա զրույցներից հատվածներ, որոնք Ռուստարակվել են մամուլում, փորձենք ներկայացնել ցկարիչի մտածելով իր իսկ ստեղծագործության հանդեպ:

Իմ հետապնդած ճամփան, եթե լավ մտածենք, ինձի չափազանց պարզ կերևի: Ես հաճախ կգարմանամ, երբ կհարցնեն, թե ինչու այս կերպ կնկարեմ. և ոչ՝ ուրիշ: Կըսեմ՝ ատիկա քարոզ քան մը չէ: Պարզապես դեմ առ դեմ նստած եմ բնության առջև, կուզեմ հասկանալ այն, մտնել մեջը ու զգացածս հանձնել թղթին, կտավին: Երբ օրինակի համար, Արարատը կնկարեմ, անոր հետ է, որ կընամ ուղղակի հաղորդակցվի: Ինչպես, երբ տաճարի մեջ, Աստծո հետ կխոսիս, քահանայի պետքը չունիս: Բնությունը ինչ հույզ որ ինձի կուտա, ան ալ կհանձնեմ նկարին՝ ռեալիստ կերպով: Միակ միջոցը այդ հույզը անխառն զգալու՝ հույզով կույսի պես մաքուր ըլլալն է: Կարծես թե առաջին մարդն եմ և աշխարհն առաջին անգամ կգծեմ և այնքան պիտի գծեմ, մինչև Արարատը ելնեմ, Գույնանամ հետը, հասկանամ բնությունը հրաշքը: Նկարելուց առաջ ես չեմ մտածեր, թե ահապասիկ այսօր այս կերպ պիտի նկարեմ: Նկարն կըլլա, չըլլար հարցը ինձ չեմ տար: Որովհետև գիտեմ, թե ծառը ինչպես որ կա բնության մեջ, քուն նմանությամբ անկարելի է նկարել: Արտաքին երևույթը տակավին ծառը չէ. ծառի դիմակն է: Ուրեմն, եթե իրավ նկարիչ ես, ծառը պիտի զգաս և քո ծառը նկարես¹:

Գառզուն այստեղ արտահայտում է հետևյալ միտքը. «...Բնությունը ինչ հույզ որ ինձի կուտա, ան ալ կհանձնեմ նկարին՝ ռեալիստ կերպով»:

Այստեղ ռեալիստ քառը օգտագործվում է՝ նկատի ունենալով ստեղծագործության մեջ ոչ թե արտաքին աշխարհի սոսկ ֆիզիկական նմանակում, այլ նրա իրական իմաստի, էության արտահայտում... որը հաստատվում է հաջորդող խոսքերով:

- Արվեստը կրկնություն չի սիրել: Հեղափոխություն կսիրե՞:

- Ժամանակակից ուղղություններից ոչ մեկին չեմ պատկանում: Նկարչությունը սլոժ շատերի մոտ առևտրական գործարքի է վերածվել. դա վիրավորական է արվեստագետի համար: Ումանք մոտ ձեռն ինքնանպատակ է, ուրիշների մոտ էլ թուվանդակություն է մերկ, զուրկ արտահայտչական գեղեցիկ ձևերից²:

¹ Արժվիմ Գրիգորյան, Էմանուել Մանուկյան, Գառզուն «Հայկական ուսուցիչ», «Սովետական արվեստ»,

թիվ 1, 1967 թ.:

² Նույն տեղում:

³ Մելիքն Մանուկյան, Գառզուն... նա ինքը՝ Գառզուն Զուլումյան, «Սովետական արվեստ», թիվ 7, 1961 թ.:

Գաղափարի այս խոսքերը ցույց են տալիս, որ նա չմամանակելով ժամանակակից արվեստի ուղղություններին, գտնում է իր ասելիքը՝ նոր լուսիս տակ դիտելով մարդ և աշխարհի հարաբերությունները դեմ առ դեմ, այս կերպ արտահայտելով աշխարհի քուժ էությունը արվեստում:

- Ոչ մեկ մամանկումով չի կրճա ստեղծել արվեստի գործ, ոչ միայն նկարչի, այլև բնության մամանկումը, որը փանտաստիկորեն հարուստ, հագեցած է կերպարներով: Ընդմարիտ նորարարության ակունքներն արվեստի մեջ չեն: Անոնց կուգան բնութեն, բնորդե: Արարատը պատկերելու համար նկարիչը պետք է մոռանա կերպարվեստին մեջ գոյություն ունեցող «Արարատներու» բոլոր պատկերումները, պետք է կրճա ի հայտ բերել այն գաղտնիքը, որ ամբիջականորեն կպարունակե Արարատը, և եթե ան կրճա դրան զուտաբոլ նաև իր զգացումները, և եթե ինքը տաղանդավոր նկարիչ է՝ կծնվե արվեստի ստեղծագործություն: Ան կըլլա իր նախորդներին չնմանվող Արարատ, ոչ բնօրինակի պատճենահանումը, այլ նրա կերպարի հաղորդումը նկարչի հոգու միջոցով: Ան կըլլա գործ մը, ուր կմիախառնվեն նկարիչ և բնորդ մեկ ամբողջության մեջ՝ առանց որևէ միջնորդի: Չէ որ բնությունը երբեք չի ծնե միատիպ առարկաներ, միատիպ զգացողություններ: Չարմանալի է, թե ինչպե՞ս որոշ նկարիչներ ձգտեն նման ըլլալ ինչ-որ մեկին: Հավանաբար մարդու թուլությունը հենց այն է, որ նա կձգտե իր ստապաշարով անել այն, ինչի դեմ կապստամբե բնությունը: - ինձի առաջիկ մոտ են դասականները: Ժամանակակից նկարիչներն իրենց կհակադրեն բնությանը»:

Գաղափարի այս խոսքերը ուղղված են ոչ թե ազատ ստեղծագործող նկարչության դեմ, այլ՝ հորինված, իրեն չարդարացնող, այսպես կոչված՝ կեղծ, մտացածիմ մորարարության նկարչության:

Շարունակելով ասում է.

- Անցյալի վարպետները մշտապես կխորհրդակցեն բնության հետ և խորապես սովորելով բնությունն, թափանցելով անոր մեջ՝ կստեղծեն աստվածային, պայմանական արվեստ, երբեք չպատճենահանելով բնությունը⁴:

Այս միտքը պարզում է, որ արվեստը չի հորինվում իմյ-որ մորարարության համար, այլ այն արտահայտում է նկարչի մերաշխարհը, բնության, աշխարհի հանդեպ ունեցած իր վերաբերմունքը:

- Ես հաստատ համոզված եմ, որ բնությունից հեռանալով, մենք հեռանում ենք ճշմարտությունից: Գոյություն ունի տարբերություն ոգու և նյութի միջև...

- Ես ակադեմիական ոճի նկարիչ եմ. և շատ հնարավոր է, որ սկզբնական շրջանում շատերն ինձ հնացած, ուշացած էին համարում: Բայց ես ձեռքս մատիտ չէի առել մարդկանց ջլացնելու համար: Միշտ կրկնում եմ, որ ժամանակակից շատ նկարիչների ողբերգությունը ստեղծվածներին հավասարվել ուզելու ահավոր հավակնության մեջ է: Ուղղակի ես ունեմ իմ ասելիքը ու պիտի ասեմ իմ ձևով: Կարևորը սեփական «ես»-ին չդավաճանելը, ներքին ձայնին միշտ հավատարիմ մնալն է⁵:

⁴ Հ. Իգիթյան, Հայկական հողի մասին, «Հայրենիքի ձայն», 7.12.1983 թ.:

⁵ Գրիգոր Զամիկյան, Կարևորը ներքին ձայնին հավատարիմ մնալն է, «Գարուն», թիվ 2, 1985 թ.:

Գաղզում խոսելով իր արվեստում մեծ տեղ գտած «Ապոկալիպսիս» թեմայի մասին, ասում է.

- Այո, 1957 թ. մոյեմբերին «Ապոկալիպսիս»-ի հիսուն կտավներ ցուցադրեցի: «Ապոկալիպսիս»-ում իմ մտքերն են արտահայտել մեր դարի մասին...

Հիանում եմ ժամանակի խոշոր գյուտերով, սակայն դրանք ինձ վախեցնում են: Մեկի ձեռքին դրանք երջանկություն կապետեն, մեկ ուրիշի ձեռքին՝ կործանում: Եվ հետո շուրջս շատ տառապողներ եմ տեսնում և քիչ երջանիկներ⁶: - Հակառակ իմ ցանկությանս, ինձի համառորեն կհետապնդեն ամայացած հողի պատկերներ: Անոնք երևակայության կամ ձևաճակատ ակամա արտահայտություններ չեն, ես ճշգրտորեն կհաղորդեմ այն ամենը, ինչ կտեսնեմ և կզգամ:

Այստեղ կարելի է նշել, որ ցկարիչը ոչ թե պայքարել է ընդդեմ պատերազմի կարգախոսային ձևերով, ինչպես նշում են որոշ արվեստարաններ, այլ տվյալ պատերազմը նա ընկալում է որպես կյանքի դաժան անբաժանելի մասը, կյանքի լավատեսական իրադարձությունների հետ միասին: Այդ իսկ պատճառով նրա ցկարներում հաճախ հանդիպող լքված դաշտ, գյուղատնտեսական գործիքներ, կործանված փլատակներ, հրաճոթներ պատկերները, շերտ առ շերտ հավաքվելով իրար վրա, ստեղծում են պատկերացում կյանքի ընդհանուր էության մասին:

- Եվ իրականում կտեսնեմ ու կզգամ այն ամենը, ինչով լեցուն է իմ ստեղծագործությունը, դաշտում լքված գյուղ, գործիքներ, հրաճոթից կործանված փլատակներ: Կերևա, այդ ամենը իմ մանկությանս ու պատանեկությանս հիշողություններն են, պատերազմի ու ցարդ-թի հիշողությունները⁷:

- Ինձ համար վերդենը Հիրոսիմայի մայակարապետն է, վերդենի ճակատամարտի ժամանակ ես ընդամենը տասը տարեկան էի, սակայն մտքիցս չեն հեռանում ամայացած հողի պատկերները: Ես հաճախ եմ վախ զգում մարդկության ապագայի համար: Երևակայությունս զննարում է կործանված քաղաքներ, անապատի վերածված մեր մոլորակը: Իմ ցկարները մարդկանց զգուշացնում են ամենասարսափելիի մասին, որ կարող է քաժին հասնել՝ միջուկային աղետի մասին: Իմ ապրած երկար կյանքի ընթացքում ինձ վիճակվել է երկու անգամ Համաշխարհային պատերազմներ տեսնել, իսկ թե մեկն էլ լինի՝ դա մարդկության վերջն է նշանակելու⁸:

Բայց այետք է չմոռանալ, որ ցկարիչն այդ Ռոնտեսական ընկալման կողքին ստեղծում է նաև «Երկրային դրախտ» ցկարաշարը, որի վերաբերյալ ասում է.

- «Ապոկալիպսիս»-ից հետո ես «Երկրային դրախտ» թեմայով ցկարների ցուցահանդես կազմակերպեցի: Շուրջ տալով, որ հավատարիմ եմ մարդուն, որ լավատես եմ ու համոզված, թե կյանքի վերափոխումը մարդկանց ձեռքում է⁹:

⁶ Մելիքեն Մանուշյան, Գաղզու... նա ինքը՝ Գառնիկ Զուլուպյան, «Առվետական արվեստ», թիվ 7, 1961 թ.:

⁷ Հ. Ի գիթյան, Հավերժության դրոշմով, «Հայրենիքի ծայն», 27.06.1984 թ.:

⁸ Յուրի Կովալենկո, Գաղզուի արվեստագետ, «Հայրենիքի ծայն», 22.10.1986 թ.:

⁹ Մելիքեն Մանուշյան, Գաղզու... նա ինքը, Գառնիկ Զուլուպյան, «Առվետական արվեստ», թիվ 7, 1961 թ.:

- Ինչքան էլ որ դեպի երկինք խոյանան հրթիռները և մոլեզվեն չար ուժերը, հաղթանակեմու է քարին, որովհետև տեսնե՞ք, հրակարմիր է հորիզոնը և մոտ է խաղաղ արևածագը¹⁰։

Բեմանկարչական արվեստի մեջ մեծ հաջողությունների հասած նկարիչը դեկորացիաների մասին ասում է.

- Բեմ զարդարելը, հաճելի գույներ գտնելը կարծես թե գործի պրիմիտիվ երևույթը ըլլալու է Զևափորումը միայն այնքան համար չէ։ Պարադոքս մը ըսեմ. դեկորացիան դեկորատիվ չի պիտի ըլլա։ Ան շլացնելու չէ։ Ակրեցնելու է։ Դեկորացիան դրամատիկ պիտի ըլլա¹¹։

Գառզուն առանձնակի մոտեցում ունի գրքի նկարազարդմանը, որի մասին ասում է.

- Իմ կարծիքով, նկարազարդումը գրքի բովանդակությանը ոչինչ չի ավելացնում։ Գիրք նկարազարդել, նշանակում է ստեղծագործությանը նայել նկարչի այնքանով։ Իսկ դա այլ նայվածք է, ճիշտը՝ իրականը պրոդիցն է։ Այդպես է նաև թարգմանության ժամանակ։ Ուրեմն՝ ձևավորումը տալիս է միայն նկարչի գագուսը, ընկալումը, սակայն ոչինչ չի հաղորդում գրքի բովանդակությունը։ Նկարվածը կոնկրետություն է, գրվածքը՝ երևակայություն, և պարտադիր չէ, որ ամեն ընթերցող գրողին ընկալի նկարչի այնքանով։ Ուրիշ են հմատիկ գրքերի նկարազարդումները։ Դրանք իսկական գլուխգործոցներ են, որովհետև այդ գրքերում գրերն ու նկարը միասնական են, ամբողջական¹²։

Գառզուն գտնում է, որ գիրք նկարազարդել ներկայացված գործողությունների թեմաներով, նշանակում է կրկնել գրված պլոտները, մինչդեռ, ըստ նրա, նկարազարդումը պետք է արտահայտի շարադրանքի էությունն ու աշխարհը։

Նկարչի ստեղծագործությունների մեծ մասը կազմում են փորագրանկարները, որոնց մասին նա գրում է.

- Հիստորիան դարձել է իմ իսկական կիրքը, ինձ հաճույք է պատճառում քարի վրա իմպրովիզներ անել և մինչև վերջին գիծը մշակել, հղկել¹³։

Իսկ իր արվեստի տարրեր փուլերում օգտագործած գույների մասին ասում է.

- Իմ գործերում մեջ տիրապետող գույներ եղած են։ Սկիզբը սևն էր, կքերն այդ շրջանի իր գործերն են կնոջ դիմանկարը, - ապա կանաչի անցա, գորշ կապույտին, կապույտ կանաչին անցնելն առաջ։ Հիմա նարնջակույնն ալ կգործածեմ։

Ինչ վերաբերում է ժամանակակից արվեստի մասին Գառզունի արտահայտած կարծիքին, այն յուրօրինակ է և ինքնատիպ։

- Տարօրինակ վիճակ մը կապրի համաշխարհային նկարչությունը։ Վերջին հիսուն տարիներում այնքան ընդլայնված են անոր սահմանները, որ այլևս նկարչական իր բնույթն ունի ունի եղած է ան։

Նկարչության մասին մեր այսօրվա ըմբռնումը կրճա փոխվիլ քաղցանկության զարգացման զուգընթաց։ Բայց կարևոր է հաստատել, որ նկարիչը չի կրճար ծառայել դոգմա-

¹⁰ Ս. Վարսյան, Աշխարհաճաշակ նկարիչը, «Գրական թերթ», թիվ 11, 14. 10.1966 թ.։

¹¹ Արեվիկ Գրիգորյան, Էմանվել Մամուկյան, Գառզուն, հայկական ռասսոդիա, «Սովետական արվեստ», թիվ 1, 1967 թ.։

¹² «Գրքերի աշխարհ», «Գառզուն Հայաստանում», «Ես սիրում եմ հայոց գրքերը...», թիվ 7, 1984 թ.։

¹³ Վ. Վարդանյան, «Սովետական Հայաստան», թիվ 4, 1983 թ.։



ՄՈՂՈՐԱԿԱԲԵՂԻՉՆԵՐԻ ՇԱՐՇԻՉ
1956 թ., ԿՏԱԿ (ՅՈՒՐԱՆԵՐԿ)



ԿԵՆԵՏԻԿ, ԴՈԺՄԱՆԱ
1977 թ., ԹՈՒՐԻ (ՏՐԱՆԵՐԿ)





Ի ԲԻՇԱՏԱՆԿ ՆԿԱՐԻՉ ՄԻՆԵԻ
1976 թ., ԿՏԱԿ (ՅՈՒՂԱՆԵՐԿ)



ՆԱԿԱՐԱՆԳԻՍ
1959 թ., ՎԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԼԻՏՈԳՐԱՖԻԱ)

ներու, նկարիչը կծառայէ իր ներքին ծայնին: Թե՛ն երբ շատ է ազատությունը, այդտեղ ազատությունը կաշկանդված կըլլա: Այդպիսով կրճաճ քանդել մեր պաշտածը, և այդ արդյունքը կըլլա անիշխանական վիճակ. և այդ վիճակը ոչ միայն նկարչության, այլև ընկերության փուլզման կրքեր: Նկարչությունը պետք է ձգտի պաստառել մարդու հոգին, մարդու ներքին տիեզերքը¹⁴:

- Անձամբ ես չեմ սնվել ժամանակակիցներու ստեղծագործություններն: Ես շատ բան կստանամ վեցետիկցի Կառպաչչիչե, Միլեյե և Վատոյե, որոնք ինձի ավելի մոտ են, քան ըսենք՝ Բրակը: Ես շատ կհարգեմ Պիկասոն, բայց իր արվեստը չի կրճա ինձի համար ոգևորության աղբյուր ըլլալ: Միջնադարու հայ ճարտարապետության գլուխգործոցներու առջև ես ավելի ուժ կառնիմ¹⁵:

- Մարդիկ չեն հասկանում, որ ես ոչ այնքան Պիկասոյի եմ դեմ, որքան պիկասոյականությանը, այսինքն՝ ընդօրինակմանն այսպիսի մի սրբազան բնագավառում, ինչպիսին արվեստն է¹⁶:

Գառգուն այնքան խորն է ընկալում արվեստը, որ, խոսելով Պիկասոյի մասին և հարցելով նրան որպես մեծ նկարչի, զգուշացնում է թուրքին արվեստի մեջ ամեն տեսակի ընդօրինակումներից զերծ մնալ, քանզի ընդօրինակությունը նկարչի սրտի և բնության էություն մեծախոսությունը չէ, կապ չէ նկարչի և բնության միջև, այլ մեկ ուրիշի գործերի մակերեսային կրկնողություն է:

- Արվեստը, ըստ իս, ոչ թե աշխարհը ժխտելու, այլ ավելի լավ ըմբռնելու, ինչո՞ւ չէ, մա՛ն սիրելու միջոց պիտի լինի: Ես չեմ ուզում, որ պարզ, միա՛միտ մարդկանց թուրքիմացության մեջ զգեն այն գեղանկարիչները, որոնք կերպարվեստում հեղափոխություն են կատարում հանուն հեղափոխության, մորարարություն՝ հանուն մորարարության, փնտրությունը՝ հանուն փնտրտուքի¹⁷:

- Ինձ թվում է, թե գեղանկարչության «աստեղնային ժամը» վաղուց է անցել: Ծավոք նկարիչների մեծ մասն արդեն մեր դարաշրջանի տարեգիրները չեն: Նախկինում գեղանկարիչն այնքան անհրաժեշտ էր մարդկանց, ինչպես, ասենք որմնադիրը, հյուսնը, կոշկակարը կամ հացթուխը: Այսօր նրա հասարակական դերը, իմ կարծիքով, դարձել է պակաս նշանակալի: Ինձ թվում է, թե Արևմուտքում տեղի է ունենում գեղանկարչության անկում: Արվեստը մարդկանց պետք է ինչ-որ բան տա, նրանց դարձնի առավել երջանիկ: Բայց ներկայի արևմտյան արվեստը կտրված է իրականությունից: Գեղանկարչությունը վերածվում է խաղի, որն անհասկանալի է լայն շրջաններին: Այն փոխակերպվել է անձնական արվեստի, դարձել լուկ ինքնաարտահայտման միջոց: Այսօրվա նկարներից շատերն ի վիճակի են հասկանալու սոսկ դրանց հեղինակները: Նկարիչներ կան, որոնք ամբողջ կյանքում նկարում են տարբեր զուգորդումներով, սև և կարմիր խորանարդներ: Կարելի՞ է արդյոք նկարը կտալ կոչել, եթե այն ծածկված է ցեխամոխրապույնով, վրան տար-

¹⁴ Թ. Թորամյան, Հայաստանի կարոտով..., «Գարուն», թիվ 3, 1967 թ.:

¹⁵ Է. Իզիլյան, Հայկական Ռոդի մասին, «Հայրենիքի ծայն», 07.12.1983 թ.:

¹⁶ Գ. Զահիկյան, Կարևորը ներքին ծայնիմ հավատարիմ մնալն է, «Գարուն», թիվ 2, 1985 թ.:

¹⁷ Նույն տեղում:

քեր գոյնի մի քանի շերտեր են քաշված, և քանդակ համարել քամուց օրորվող երեք-չորս խաշված երկաթի կտորները, որ կոչվում են «մորիլ» (այսինքն՝ շարժում): Նկարչի և դիտողի միջև անդունդը գնալով խորանում է: Նմանօրինակ արվեստի լեզուն այլևս անհասկանալի է...¹⁸:

Ինչպես մի շարք սփյուռքահայ նկարիչներ, Գառզուն ևս ջանքեր է գործադրում ազգային իր ակունքներին հավատարիմ ընդհանուր եզրեր գտնել հայ մշակույթի հետ:

- Իբրև նկարիչ կպատկանեմ ֆրանսական արվեստին, սակայն իմ բոլոր գործերուս մեջ անշուշտ հայ կմնամ: Չէ որ մենք ամենքս մեր ժողովրդի բնկորներն ենք: Երազանքները պատկերներուս մեջ՝ բախտի քամահաղթով աշխարհի չորս անկյունները նետված հայերու նկիրական իղձերու արտահայտությունն է: ...Մարդը դրամատիկական մեծ քաղաքի մեջ միայնակ է: Կթվի, ամեն ինչ ունի, սակայն իրականության մեջ ունեցածը միայն մեությունն է¹⁹:

- Էությունը, աշխարհագրությունը ես հայ նկարիչ եմ, ես իմ տառապած ժողովրդի մեկ բնկորն եմ, նրա տաղանդի մի փոքրիկ փայլատակումը, հպարտ պիտի զգամ ես ինձ, եթե հայրենիքում սիրեն և գնահատեն իմ արվեստը²⁰:

- Երիտասարդ հայ նկարիչներու մեջ կտեսնեմ հայ նկարչության բնույթի ինքնուրույն որոնումներ. շատ կհրապուրվեն միջնադարյան մանրանկարչությանը, հայկական տաճարներու բյուրեղացած ձևերով: Ազդեցություններ կան նաև դուրսեն. բոլորը հիմա Մատիս, Սեզան, Վան Գոգ կնային: Այս ալ լավ է: Սակայն հիմեն եկած հաստատունով հիանալ կարելի է, իսկ ընդօրինակել՝ քնալ: Նկարչության մեջ ուրիշի ելած քարձրույթը նվաճելը պարապ ժամապաճառություն է: Կարծես թե սեփականի ստեղծումը ժխտման հանգամանքն ունի իր մեջ: Հակառակ պարագային շարժում դեպի առաջ չըլլար: Եվ դժվար պիտի լիլա այլևս խոսիլ այն մասին, թե ինչպես պիտի ազգային նկարչությունը քայլն համաշխարհային նկարչության գետնի վրա: Բարդ է խնդիրը: Կարծես թե, ազգային նկարչությունը իր ֆոլկլորային բնույթն մեկնելով, կամաց-կամաց համաշխարհային ծավալ, հնչելություն ունեցող նկարչական որոշ ընդհանուր գծի մը պետք է ձգտի: Հակասական շարժումն է այս. ազգային՝ նկարչությունը պնդան ուժեղ պետք է լիլա, որպեսզի հաղթահարի իր մեծության առաջին աստիճանը, որոնց սահմաններն ի վերջո անձուկ պիտի դառնան, և դուրս ելլա երկրորդ աստիճանը, դառնա աշխարհինը: Ուրիշ խոսքով՝ ազգային նկարչի ոտքի տակի հողն է: Բայց քալել և շնչել անկարելի է: Ընչեղու օդը աշխարհինն է²¹:

Գառզուն համարում է, որ ազգային նկարչությունը հասնելով իր քարձույթին, կարող է հասնել համաշխարհային միայն բուն ազգային ակունքներից բխած արվեստով:

¹⁸ Թ. Կովալենկո, Գառզուի արվեստագիտություն, «Հայրենիքի ձայն», 22.10.1986 թ.:

¹⁹ Թ. Խաչատրյան, Երազանքի ու գեղեցկության նկարիչը, «Հայրենիքի ձայն» 13.01.1982 թ.:

²⁰ Թ. Վարսյան, Աշխարհաճոյանի նկարիչը, «Հայրենիքի ձայն», 16.10.1966 թ.:

²¹ Ա. Գրիգորյան, Է. Մամուկյան, Գառզուն. հայկական ուսպոսոյի, «Սովետական արվեստ», թիվ 1, 1967 թ.:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՊԱՐՈՒԹՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

«ՊԱՏՃԷՆ ՏՈՒՄԱՐԻ» (Է-ԺԵ ԴԱՐԵՐ)

ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ ՎՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տոմարական հաշվարկումների կարևորությունը հայագիտության համար վաղուց համընդհանուր ճանաչում ունեցող իրողություն է, ուստի պատմաբան-բանասեր առանձին հեղինակություններ երկար ժամանակ հարկադրված էին թողնել իրենց բուն աշխատանքը և զբաղվել ժամանակագրելու հետ կապված խնդիրների քննությամբ: Նման առիթով են գրվել Հ. Մկրտիչ Ավետրյանի, Հ. Ղևոնդ Ալիշանի, ակադ. Հովսեփ Օրբելու, Լևոն Խաչիկյանի, պրոֆ. Ա. Աբրահամյանի և այլոց տոմարագիտական արձարծումբերը: Ժամանակագրելու համար քիչ կարողություն չի ծախսել «Ազգապատումի» հանրաճանաչ հեղինակ Մադաթիա արքեպս. Օրմանյանը:

Տասնամյակներ առաջ տոմարագիտության հարցերը զործնականության հիմքի վրա դրվեցին՝ ոմանք համապատասխանության աղյուսակներ կազմելով (Հ. Բադալյան, Բ. Թումանյան, Ա. Աբրահամյան), ոմանք հայսմավուրքային ու ծիսական հիմ ու հոր տոներ համաձայնեցնելով (զերազանցապես եկեղեցական աստիճանավոր սպասավորներ): Սակայն կար մի մատենագրական թնազավառ՝ տոմարական թնագրերի գիտական հրատարակություն, որին անդամագրվելու կամ ավելի ստույգ՝ որի լծի տակ մտնելու համար աստղագետ-տոմարագետի և պատմաբան-բանասերի կրկնավորած պատրաստություն պետք էր ունենալ: Եվ ահա, հանգամանքների բերումով, հայագիտության մոր դպրոցի ուսուցչապետերից Լ. Խաչիկյանի տեսադաշտում հայտնվեց աստղաֆիզիկայի պատրաստություն ունեցող և թնագրագիտությանը հմտանալու պատրաստակամ տիկին Զուլիխա Էլնաթյանը:

Հայագիտական-տոմարագիտական ժառանգությանը մասնագիտորեն ծանոթանալուց հետո, մույց Լ. Խաչիկյանի խնամածու վերադիտության պարագաներում, եա ձեռնամուխ եղավ XIV-XV դարերի ահմանագծում ապրած ու գործած Հակոբ Ղրիմեցու տոմարագիտական հիմն աշխատությունների համեմատական թնագրերի հրապարակմանը (գիրքը լույս է տեսել Երևանում 1987 թ.): Հետաքրքիր է արձանագրել, որ այդ թնագրերից մի քանիսը Ղրիմեցին մախապես իբրև դասընթաց կարդացել է Երզնկայի ու Մեծփի դպրոցներում, ապա գրառել իբրև միջնադարյան ձեռնարկ: Աշխատասիրողը չի գոհացել սոսկ թնագիրն ընդօրինակելով և ծավալուն պրպատումներ է կատարել Ղրիմեցու գործածած աղբյուրները պարզելու և ըստ այնմ հեղինակային արձարծումբերը գնահատելու համար:

Ուստի Զ. Էյնաթյանի մերածությունը (123 էջ) տոմարագիտության պատմության մի տեսակի համառոտում է. բնագավառին հմտամալու ուսանելի ընթացք:

Տասնամյակներ առաջ 17-18-րդ դարերի հայ բնագիտական միտքն ուրվագծելիս Լ. խաչիկյանն ափսոսանք էր հայտնում, որ Հ. Ղրիմեցու կրտսեր ժամանակակից Նսայի Ղրիմեցու աշխատությունները մասնագիտական ուշադրության չեն արժանացել: Հակոբ Ղրիմեցու բնագրագիտական ու հաշվարկային դժվարությունները հաջողությամբ հաղթահարած Զ. Էյնաթյանը երկմտելու առիթ չունեւ, թե հաջորդ գործը Ե. Ղրիմեցու «Տոմար արեգական և լուսնի» խորագրի տակ հավաքված աղյուսակների մեկնաբանյալ հրատարակությունը պիտի լինի (այն լույս տեսավ 1990 թ.):

Այս ամենը, կարելի է ասել, մի տեսակ մասնագիտական մախապատրաստություն էր՝ ծավալով ու հարցերի ընդգրկումով շատ ավելի քարդություններ ունեցող «Պատճեն տոմարի» խորագրով պահպանված միջնադարյան բնագրի գիտական հրատարակության և քննության համար, այս անգամ արդեն մեր Գործընդհանուր միջնադարագետներից իր ստուգադրելու հետևությամբ ու մասնագիտական-կատարողական պահանջկոտությամբ հայագիտական շրջաններին հայտնի Գեորգ Տեր-Վարդանյանի աշխատակցությամբ ու խմբագրությամբ:

«Պատճեն տոմարի» երկը փաստորեն ավտոմատ է միջնադարյան աստղագիտության արմատական խնդրի՝ ժամանակագրության կարգավորման ձեռքբերումները, կողք կողքի մերկայացնելով տարբեր ժողովուրդների ու մատենագրությունների օրացուցային իմացությունները:

Այս բնագիրը դրված է եղել հայկական տոմարական մեկնությունների հիմքում, ուստի Երա գիտական ուսումնասիրությունը, աղբյուրագիտական հետաքրքրությունից բացի, խիստ գործնական-կիրառական նշանակություն ունի, մանավանդ որ մեր վաճական դպրոցների համար հիմնական ձեռնարկ է ծառայել. ձեռագրական համեմատությունների ճանապարհով աշխատաւիրողները պարզել են, որ «Պատճեն»-ները միմյանցից տարբերվում են ոչ միայն ծավալով, այլև ճշգրիտ տահմանումների շարադրանքով:

«Եվ քանի որ դրանից մաթեմատիկական հաշվումների էությունը չի փոխվում, ուստի ընտրեցինք և ամֆրածեշտ մերածությամբ օժտելով այստեղ հրատարակում ենք Հովհաննես Սարկավազի և Հակոբ Ղրիմեցու խմբագրած տարբերակների հնագույն, ընդարձակ և ամբողջական մեկական օրինակ, որոնց հիմնական միջուկը Անանիա Օիրակացու պատրաստած «Պատճեն տոմարի»-ն է: Առանձին մերկայացրել ենք մահ «Տոմար արեգական» փոքրիկ աշխատությունը, որ առկա է «Պատճեն»-ի ոչ բոլոր օրինակներում» (էջ 8):

Ընդարձակ «Ներածությունը» (էջ 10-139) այլ կերպ կարելի է խորագրել «Տոմարագիտական գիտելիքների պատմություն»: Բնականաբար այդ ընդգրկումը մպատակ ունի պարզելու հայոց օրացուցային, աստղագիտական և մաթեմատիկական գիտելիքների առնչությունը Հին աշխարհի և միջնադարի քաղաքակրթություններին՝ ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու հավասար ձգտումով: Չէի ասի, թե այս դրվագում այլ մասնագիտությունների մերկայացուցիչներին կատարելից չի մնացել. պարսից, վրաց, ադվանից և մի քանի այլ մատենագրություններում գործածություն գտած տոմարական համակարգերի, եզրերի, ամսանունների ու օրանունների ստույգ գրությունը

ճշտելու, գործածության շրջանակները որոշելու, մշակութային միջավայրը և անցումները սահմանելու համար հրապարակվող քննարկումն ծով մյուս կա: Առհասարակ աստղագիտական-տոմարական քննարկները կարող են անսպասելի աղբյուրագիտական մյուս ընձեռել հայագետ-արեելագետին: Այդ առումով, օրինակ, բացառիկ արժեք ու հետաքրքրություն է ներկայացնում քաբելական սեպագրով գրված սելեկյան աստղագիտական այն օրացույցումը, որի հաղորդման հիման վրա Տիգրան Երկրորդի ժամանակների հետ կապված դիմաստիական ճշգրտում կատարեց հանգուցյալ ակադ. Գալիկ Սարգսյանը (տես ՊԲՀ, 1991, N 2): Ուրեմն՝ կարևոր է ոչ միայն հայերենով պահպանված տոմարական քննարկների քննությունն ու հրատարակությունը, այլև օտար աղբյուրներում նդած հայագիտական հետաքրքրություն ներկայացնող հաղորդումների պրպտումը:

Ուրախությամբ պիտի արձանագրել, որ աշխատասիրողները պատշաճ ուշադրություն և հետևողական քննարկատական սկզբունք են ցուցաբերել հրատարակվող ու նաև չհրատարակվող ձեռագրերի նկարագրության հանդեպ, ստույգ ու սրբագրել են գրչական և հնչական հիմքի վրա կատարված աղավաղումները, ի նորո հաշվարկել բազմաթիվ թվական միավորներ (կողքին ճշելով ստույգը՝ փակագծված), կազմել օգտագործած աղբյուրների ու գրականության (ձեռագիր կամ տպագիր) պատկանելի մատենագիտություն (ԻԸ+116): Դասական մատենագիտական աշխատանքների օրինակով նրանք չեն գոհացել «Բովանդակության» ավանդական թվարկումով և գիրքը օժտել են «Հրատարակվող քննարկների վերնագրերի և ենթավերնագրերի» ցանկով (Էջ 98-119), որը մեծապես դյուրացնում է պահանջվող մյուսի որոնումը:

Ամփոփելուց առաջ վերստին հիշենք, որ Ծիրակացու ստեղծած «Պատճեն տումարի» աշխատությունը ձեռագրերում առանձին չի պահպանվել, ուստի հրատարակիչներն այն ներկայացրել են Սարկավապի խմբագրած և հարստացրած օրինակով, ըստ 1999 ձեռագրի՝ խուսափելով այլ ձեռագրերից լրացումներ կատարելուց: Եվ ապա՝ «Ջ. Էյնաթյանը օժանդակ նյութերով և տոմարական հաշվումներով ստույգել է ԾԼԲ [532] ամաց աղյուսակի բոլոր տվյալները թվական, վերադիր, յոթնորեակ, տանուներ, հայտնություն, առաջավորաց, քանիք, բուն բարեկենդան, միջոց] և պարզել, որ այստեղ կան երբեմն ամսանունների, առավել շատ թվատառերի գրչական վրիպակներ, որոնց մի մասը օրինաչափ և հատկանշական են մեր գրչության... համար» (Էջ 97):

«Պատճեն տումարի» գրքի հրատարակությունը Ջուլիետ Էյնաթյանի աշխատասիրության և Գեորգ Տեր-Վարդանյանի աշխատակցության և խմբագրության, մատնացուցելի գիտական քարեխղճությունից բացի՝ նրկու հմուտ մասնագետների համատեղ գործելու մեզանում հազվադեպ կատարվող շնորհակալ աշխատանք է:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

**ԳԻՏԱԺՈՂՈՎ «ՄԻԱԾՆԻ ԻԶՄԱՆ ՎԱՅՐԸ.
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ» ԹԵՄԱՅԻՆՈՎ**
(ԱՄՆ, ԱՆՆ Արթուր, 1-3 ապրիլի 2004 թ.)

Վերջին տարիների ընթացքում հայագիտության մեջ նկատվում է հետաքրքրությունների կտրուկ բարձրացում Հայոց Եկեղեցու պատմության խնդիրների նկատմամբ: Թե՛ Հայաստանում և թե՛ աշխարհի տարբեր երկրներում տեղի են ունենում բազմաթիվ գիտաժողովներ, հրապարակվում հետազոտություններ՝ նվիրված Հայոց Եկեղեցու պատմության, դավանանքի ու ծեսի խնդիրներին: Հայոց Եկեղեցու սպասավորների կողմից ես մեծ աշխուժացում է նկատվում եկեղեցագիտական խնդիրների նկատմամբ, որի այսպահայտություններից էր 2004 թ. ապրիլի 1-3-ը Միջիգանի համալսարանում տեղի ունեցած գիտաժողովը, որը նվիրված էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակին: Գիտաժողովի հրավիրման մեկնեալներն էին Միկե և Շիրոյն Գոջայանները, Ալեք և Մարի Մանուկյան հիմնադրամը: Գիտաժողովի աշխատանքների կազմակերպիչը և ոգին Միջիգանի համալսարանի պրոֆ. Գևորգ Բարդակյանն էր:

Նա կարդացվելիք զեկուցումները գեպիղել էր հետևյալ առանձին նիստերում. «Սկզբնավորություն», «Անկախ Հայաստան», «Միջազգային թաղերաբնմի վրա», «Մեծ Հայք», «Արևելք և Արևմուտք», «Նոր Ժամանակներ»: Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ, որոնք եկել էին Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներից, Հայաստանից, Անգլիայից, Ավստրիայից, Գերմանիայից, Իսրայելից, Կանադայից, Կիպրոսից, Նիդեռլանդներից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից:

Յուրաքանչյուր զեկուցման համար հատկացվել էր 20 րոպե: Ցավոք, հարց ու պատասխանների և քննարկումների համար ժամանակ չէր նախատեսված, չէին հրապարակվել նաև զեկուցումների թեզերը: Այդ իսկ պարճառով, գիտաժողովի ընդգրկված նյութերին Էջմիածնի ընթերցողներին ծանոթացնելու համար հիմք ենք ընդունել հրապարակված ծրագիրը և մեր ներկայությունը՝ գիտակցելով, որ հիշողությունն ամուր հիմք չի կարող լինել զեկուցումների մեջ արտահայտված կարծիքներն արտացոլելու համար:

Բացման խոսքից հետո, որին մասնակցում էին Միջիգանի համալսարանի ղեկավարները, գիտաժողովի «Սկզբնավորություն» բաժնում «Տրդատի դարձը» վերնագրով զեկուցում ընթերցեց Ռոբերտ Նյուսընը (ԱՄՆ): Այդ թեման իր «Հայաստանի դարձը» զեկուցումով ավելի խորացրեց Ռոբերտ Թոմսոնը (Անգլիա): «Աստվածաշնչի թարգմանությունը» թեմային անդրադարձավ Կլոդ Կոքսը (Կանադա), որը տարիներ շարունակ զբաղված է Ս. Գրքի հայերեն բնագրի հետազոտությամբ: «Հին հայկական մարտնչությունը, Համապարկեր» զեկուցումով երկրորդ անգամ հանդես եկավ Ռ. Թոմսոնը՝ ներկայացնելով իր բազմամյա աշխատանքի արդյունքներն այդ բնագավառում: Վալենտինա Կալցուարիի (Շվեյցարիա) զեկուցման թեման էր «Հայկական պարականոն գրականությունը», որն արդյունք

է ժենի համալսարանում գիտնականի այս թեմայով հետևողական աշխատանքի: «Նոր Կրակարանի հայկական պարականոնները, համապատկեր» զեկուցումով հանդես եկավ Հայոց Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի սպասավոր Վսիան վարդապետը Հովհաննիսյանը:

Գիրաժողովի «Անկախ Հայաստան» բաժինը «Դեմի Գ ժողովի պատմագրության ուղիսկանը, Հայոց և Արևելյան Վրաց Եկեղեցու փոխհարաբերությունները Է դարում» զեկուցումով բացեց Ստեփան Ռապը (ԱՄՆ): Տիմոթեոս Գրիկովը (Անգլիա) հանդես եկավ «Եկեղեցին և դարում» թեմայով տեղորոշատեանով դարաշրջանի եկեղեցաբաղադրական խնդիրներին, դավանաբանական հիմնական վեճերին: Ժան-Պիեռ Մահի (Ֆրանսիա) զեկուցումը նվիրված էր «Հովհաննես Օմեկյան և պաշարն ընդդեմ այլախոհների» թեմային, որ հեղինակն անդրադարձավ աղանդավորների և այլախոհների նկատմամբ Հայոց Եկեղեցու վերաբերմունքին:

«Դասական հայերեն լորն գաղտնի իմաստների կրող» թեմայով զեկուցում ընթերցեց Հովսեփ Վալերենբերգը (Հոլանդիա): Հանս-Յուրգեն Ֆոյսերի (Ավստրիա) զեկուցումը նվիրված էր «Հայկական ծիսական ավանդույթի զարգացումը, Աստվածային ծես – Ս. Պատարագ» թեմային, որի ընթացքում հեղինակն անդրադարձավ Հայոց Եկեղեցու ծիսագիտական խնդիրներին:

Արրահամ Տեղյան իր զեկուցումն անվանել էր «Վարդապետության զարգացումը», որ հեղինակը ներկայացրեց Հայոց Եկեղեցու դավանաբանության հիմքերն ամրագրող երկերը: Նույն օրվա ներկայան Միշիգանի համալսարանի ուսանողների առջև հանդես եկավ Ռ. Ռոմսոնը՝ դասախոսության լյուր զարձակելով «Աստվածաշնչային մեկնությունների հայկական ավանդույթը» թեման, պատասխանելով նաև տրված հարցերին:

«Միջազգային թատերարժեքի վրա» բաժնում ընթերցվեց Ջեյմս Ռասսելի (ԱՄՆ) «Հնագույն նախաքրիստոնեական ավանդությունները» զեկուցումը: Կարեն Յուրգենյանը (Ռուսաստան) հանդես եկավ «Եկեղեցին Իսլամի տիրապետության տակ» զեկուցումով, որ ներկայացրեց արաբական տիրապետության դարաշրջանում եկեղեցու որդեգրած իզոլացիոն քաղաքական ուղեգիծը: Այս նիստում ներկրող անգամ հանդես եկավ Ժ.-Պ. Մահին և ընթերցեց «Կաթողիկոսի դերը» անվանումը կրող զեկուցումը, որի հիմնական դրույթները ըխում են Զ-ԺԱ դդ. Հայոց ազգային կյանքում եկեղեցու խաղաղած դերի ընկալումից:

Ազատ Բոգոյանը (Հայաստան) «Հայոց Եկեղեցին և Կոմունիստները» զեկուցման մեջ անդրադարձավ ԺԱ-ԺԲ դարերում ազգային եկեղեցու նկատմամբ բյուզանդական կառավարող ընտանիքի որդեգրած բաղադրականությանը: Կլոդ Մուրաֆյանը (Ֆրանսիա) հանդես եկավ «Նիկիիայի փոխհարաբերությունները խաչակիրների հետ» զեկուցմամբ, որի ընթացքում ներկայացրեց խաչակրաց արքունիքների հետ հայկական իշխանությունների փոխհարաբերությունները: Պիտեր Հալֆտերի (Գերմանիա) թեման էր «Հայ-Պապական փոխհարաբերությունները», որ հեղինակը զեկուցման նյութ էր դարձրել ԺԲ-ԺԳ դդ. վավերագրերը: Ռոբերտա Էրվինի (ԱՄՆ) զեկուցման թեման էր «Հայերը Սուրբ Երկրում», որի ընթացքում ներկայացվեցին Երուսաղեմում Հայոց Եկեղեցու սրբավայրերը: Թեո վան Լին-տի (Անգլիա) զեկուցման նյութն էր «Դարոցների զարգացումը, Մեկնություններ, Իրավունք,

Փոխստփայություն», ուր հեղինակն անդրադարձավ Հայաստանում միջևդարյան գիտությունների կարևորագույն ձեռքբերումներին:

Գիտաժողովի «Մեծ Հայք» բաժնում Սեբեդի Լա Պորտան (Իսրայել) «Վանական Մեծ եկեղեցուների զարգացումը» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ Հայաստանի հոգևոր դպրոցների խաղաղամբ դերին: «Տոները Հայսմավուքում» թեման էր զեկուցման կյուր ընտրել: Արմեն Տեր-Սյունիսիանը (Հայաստան)՝ ներկայացնելով եկեղեցական տոնական տարվա կարգավորման հետ կապված մի շարք խնդիրներ: Տիգրան Գույումճյանի (ԱՄՆ) զեկուցումը նվիրված էր «Հայկական մանրանկար ձեռագրեր»-ին, որի ընթացքում հեղինակը տեսողական հարուստ կյուրի ցուցադրումով հավաստեց հայկական մանրանկարչական դպրոցների բազմազանությունը:

Դեվիդ Բանդին (Անգլիա) զեկուցեց «Եկեղեցին և մոնղոլները» թեմայով՝ ընդարձակելով թաթարական տիրապետության շրջանում Հայոց եկեղեցու նկատմամբ վարվող քաղաքականության վերաբերյալ մեր տեսնած գիտելիքները: Պիտեր Զաուի (ԱՄՆ) զեկուցումը նվիրված էր «Կաթոլիկ միսիոներները և հակակաթոլիկ երկերը» թեմային, որ դասախոսն անդրադարձավ Տաթևի դպրոցի ներկայացուցիչների կողմից ունիթորական շարժման գաղափարախոսական մեքենային հասցրած հակահարվածին:

Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի (Ավստրիա) զեկուցումն էր «Վերադարձն Էջմիածին», ուր հեղինակը պահպանված վկայությունների հիման վրա ներկայացրեց 1441 թ. Վաղարշապատի ժողովի և Հայոց Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնում վերահաստատման պատմությունը: «Հայկական գաղութները Մեֆեդյան Իրանում և նրանց փոխհարաբերությունները Էջմիածնի Մայր Աթոռի հետ» թեմայով զեկուցում կարդաց Վազգեն Ղուկասյանը (ԱՄՆ)՝ անդրադառնալով ԺԷ դարի իրանահայության պատմության մի շարք դրվագներին: Նդկաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Բայբուրդյանը զեկուցեց «Նդկաստանի գաղութը և նրա փոխհարաբերությունները Էջմիածնի հետ» թեմայով՝ ունկնդիրների ուշադրությունը հրավիրելով գաղթօջախի հոգևոր կյանքի կազմակերպման խնդիրների վրա:

«Արևելք և Արևմուտք» բաժինն իր «Կոստանդնուպոլսի պարբերությունը» զեկուցումով բացեց գիտաժողովի կազմակերպիչ Գևորգ Բարդաղյանը (ԱՄՆ)՝ ցույց տալով հիշյալ Նվիրապետական Աթոռի դերը ժամանակի հայ մշակույթի զարգացման գործում: «Հայկական համայնքները Փոքր Ասիայում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Թովմաս Սինկլերը (Կիպրոս)՝ ներկայացնելով թուրքական նվաճումներից հետո Անատոլիայի էքսոդական կյանքի իրավիճակը: Ժորժ Բուռնոյանը զեկուցեց «Հայոց եկեղեցին և Ռուսաստանը 1700-1914 թթ.» թեմայով:

Ռայմոնդ Գևորգյանի (Ֆրանսիա) «Հայկական տպագրությունը» զեկուցումը նվիրված էր հայ մշակույթի այն նոր վերելքին, որը պայմանավորված էր հայկական գաղթօջախներում հրատարակչական գործի զարգացմամբ: «ԺԸ դար» անվանված զեկուցումով ներկորդ անգամ յսարանին դիմեց Գ. Բարդաղյանը՝ ներկայացնելով հիշյալ դարաշրջանի մարտնչական արդյունքները: «Կապեր Նվրոպայի հետ. Եկեղեցին և ազատագրության վաղապես փորձերը» թեմայով յսարանին ներկորդ անգամ դիմեց Ռ. Գևորգյանը՝ հրապարակելով մի շարք նգակի վավերագրեր, որոնցում խոսվում է Հայոց ազատագրական շարժման

ներկայացուցիչների և Ֆրանսիայի պետական գործիչների համագործակցության մասին: «Հայապատ թուրքերեն հակաճառական գրականությունը» թեմայով զեկուցում ընթերցեց Ն. Սյունիսյանը (Հայաստան)՝ ամփոփելով թեմային վերաբերող վերջերս հրապարակված իր մեկնադրությունը: Բարբարա Մերկերյանը (ԱՄՆ) զեկուցեց «Հայ բողոքականների համայնքը» թեմայով:

«Նոր ժամանակներ» բաժնում զեկուցումով հանդես եկավ Սոկրատես Բոյաջյանը (ԱՄՆ)՝ «Ի դարի հայկական հոգևոր երաժշտությունը. DOA» թեմայով՝ ներկայացնելով այդ բնագավառում սփյուռքահայ երաժշտագետների ջանքերը: Բերթ Վոն (ԱՄՆ) զեկուցեց «Լեզուն և կրոնը ժամանակակից հայկական ինքնագիտակցության կառուցվածքում» թեմայով՝ հրապարակելով սեփական սոցիոլոգիական հարցումների նյութերը: Լսարանին երկրորդ անգամ դիմելով, Կ. Կոքսը հանդես եկավ «Հայկական Աստվածաշնչի բնական բնագրի կազմմանն ուղղված ջանքեր» թեմայով՝ անդրադառնալով վերջին տասնամյակներում Աստվածաշնչի հրապարակված գրքերին:

Ժիրայր Լիպարիդյանը (ԱՄՆ) հանդես եկավ «Եկեղեցին և քաղաքական կուսակցությունները» զեկուցումով՝ նորովի յուսաբանելով եկեղեցու դերը Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում: Տաճար քահանա Դավիդյանը (ԱՄՆ-Հայաստան) հանդես եկավ «Եկեղեցին 1990-ից այսօր» զեկուցումով՝ ներկայացնելով վերջին տարիների եկեղեցական գործունեության նշանակությունը Հայաստանի Հանրապետության կյանքում: Երկրորդ անգամ հանդես գալով, Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը զեկուցեց «Եկեղեցին և Էկումենիզմը» թեմայով՝ ընդհանրացնելով միջազգային սմանադիպ շարժումների դերը Հայոց եկեղեցու կյանքում:


Ապրիլի 4-ին գիտաժողովի մասնակիցները Դեպրոյտի հայոց եկեղեցում ներկա եղան Ս. Պապարագի արարողությանը: Այնուհետև այցելեցին Ալեք Մանուկյան թանգարան և իրենց հարգանքի փութը մատուցեցին Եղեմնի խորհրդանիշ դարձած Կոմիտասին, ում արձանը գտնվում է Դեպրոյտի կենտրոնում:

Գիտաժողովին իրենց զեկուցումներն էին ուղարկել, սակայն չէին կարողացել ներկա լինել Վիադա Արուսյունովա-Ֆիդանյանը (Ռուսաստան), Նինա Գարսոյանը (ԱՄՆ-Ֆրանսիա), Զրիստինա Մարանցին (ԱՄՆ) և Էդվարդ Մաթոյսը (ԱՄՆ), Ջեյմս Ռասսելը (ԱՄՆ), Լեոն Զնեփյանը (Իտալիա): Իր վաղածած մահից առաջ զեկուցման իր փնթստն էր ուղարկել Բելգիացի գիտնական Միշել վան Էսթրուկը: Բացակայողների զեկուցումները չընթերցվեցին (բացի Զ. Ռասսելի դասախոսությունից), սակայն հավաստվեց, որ դրանք, մյուս զեկուցումների հետ միասին, շուտով հրապարակվելու են գիտաժողովի նյութերի ժողովածուում: Ասենք, որ գիտաժողովի բոլոր զեկուցումներին ներկա էր ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան, պատմական գիտությունների թեկնածու Սրման Կիրակոսյանը, որը հանդես եկավ բացման խոսքով:

Այսպիսով, Միջգանի համալսարանի կամարների ներքո փնթի ունեցավ մի համեստ գիտաժողով, ուր փիրում էր փոխըմբռնման ոգին:

ԱՋԱՏ ԲՈՋՈՑԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր



ՎԵՐԱԾԾՎԵՅ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ ՄԱՐԳԱՆՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Ապրիլի 17-ին Գուգարաց թեմում, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջանի, կալարվեց Մարգահովիտ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերածման արարողությունը: Ձևումը Սրբազան Հոր և մասնակցությամբ թեմի ողջ հոգևոր դասի՝ վերածվեց եկեղեցու Սուրբ Սեղանը, խորանը և Մկրտության ավազանը:

Մարգահովիտը Հայաստանի հին ու մեծ գյուղերից մեկն է, որը հիշվում է բրոնզեդարից: Եվ այսօր էլ այն ամենամեծ գյուղերի շարքում է իր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցով, որը կառուցվել է 10-րդ դարում այդ ժամանակ Դսեղից վերաբնակվածների ուժերով, և այնուհետև հիմնովին վերակառուցվել է 1872 թվականին, որի համար որոշ աղյուրներում այն հիշատակվում է որպես կառուցման թվական: Դսեղցիները կառուցելով նոր եկեղեցին գյուղի նախկին ավերակ Ս. Կարապետ եկեղեցու կողքին, այն անվանել են Ս. Գրիգոր Լուսավորիչ, ինչը հիշողությունն էր Դսեղի Ս. Գրիգոր Բարձրաբաշ վանքի անվան:

Մարգահովիտի Ս. Գրիգոր եկեղեցու ներսում, կենտրոնում, տեղադրված են հին եկեղեցու մի քանի խաչաքանդակ քարեր, որոնք ենթադրելի է, որ տեղադրվել են 10-րդ դարում եկեղեցին կառուցելու ժամանակ: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվեց գոմի, պահեստի, հարդանոցի՝ բախտակից դարձնելով նրան համանման մյուս եկեղեցիներին:

19-րդ դարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դռները նրկար տարիներ իբրև աղոթատուն փակ են մնացել հավաքազյալ մարգահովիտցիների առջև: Եվ, վերջապես, վերածվեց ու սրբազորվեց եկեղեցին, որը վերանորոգվել է ծնունդով մարգահովիտցի, ռուսաստանաբնակ Սերժիկ Կոնիկյանի բարերարությամբ, որին ի խորին գնահատանք՝ թեմակալ առաջնորդը հանձնեց Ամենայն Հայոց Գարեգին Նրկորդ Հայրապետի օրհնության զիրը: Վերածված եկեղեցուն Վեհափառ Հայրապետը եվիրել էր Ս. Հաղորդության սկիհ, որից մեր Տիրոջ մարմնին ու արյանը կհաղորդվեն եկեղեցու հավաքազյալները: Թեմակալ առաջնորդը նորոգած եկեղեցուն նվիրեց Սուրբ Սեղանի խաչ:

Հազարավոր մարգահովիտցիներ էին եկել՝ մասնակից դառնալու եկեղեցու վերածման արարողությանը: Եկեղեցու վերածման առիթով Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջանն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին. «Աղոթքի փուն ենք օրհնում և վերածում՝ բացելով այս եկեղեցու դռները, և փառք ենք տալիս Բարձրալին, որ այս օրն արժանացրեց մեզ այս գյուղի տաճարում աղոթքի կանգնելու համար: Սիրով ու միակամությամբ աչքի լույսի պես պահենք Աստծո տունն ու մեր հայրերի սուրբ հավաքը»:

Վերասրբված ու նորածն եկեղեցու Սուրբ Սեդակին անդրանիկ Ս. Պատարագ մալու-
ցեց Մարգահովիտ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորանշանակ հոգևոր հովիվ Տ.
Սողոմոն քին, Ավետիսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Հայաս-
տանի Ազգային ժողովի պատգամավորներ, մարզային և քաղաքային իշխանությունների
ներկայացուցիչներ, մրավորականներ, բազմաթիվ ուխտավորներ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ԼՈՒՐԵՐ ՀՈՒԱՆՏԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԷՆ

Շաբաթ 24 ապրիլ ժամը 10.30-ին սկսան դժգոհանքի Այմլոյի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցույ գանգերը: Օրուայ պատարագիչն էր հայրապետական պատվիրակի փոխանորդ Հայր Տաթև վրդ. Մուրադեան: Պատարագի վերջաւորութեան տեղի ունեցաւ հոգեհանգիստ 1915 թ. Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերի յիշատակին:

Եկեղեցական թափօրը միասնաբար ժողովուրդի հետ յորտա գալով եկեղեցին՝ ուղղունցաւ դեպի մեր նահապետներու յիշատակի խաչքարը: Ներկայ էին հարիւրաւոր հայորդիներ Հոլանտայի փարբեր վայրերէն, ներկայ էր նաև շրջանի հեռուստատեսութիւնը, ծայնասփիտը եւ թերթի թղթակիցներ: Խաչքարը ծածկուած էր սպիտակ սաւսնով: Այմլոյի Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւորները իրենց համագգեստներով կանգնած էին խաչքարի երկու կողմը: Խաչքարի նուիրաւոր Ռուբեն Կալիճի բացաւ խաչքարը եւ Հայր Սուրբն ու քահանայ Հայրը սկսան օրհնել զայն դարաց դասի երգեցողութեամբ: Խաչքարի օրհնութենէն ետք Հայր Տաթև վրդ. Մուրադեանը փոխանցեց իր խօսքը ներկաներուն շեշելով. «Սիրենք՝ միմեանց, եղէք հեզ ու ներողամիտ: Կը հաւաքամ, որ այս նորակառոյց եկեղեցիի կողքին ապագային անպայման հայկական դպրոց մը պիտի կառուցուի, որը հայապահպանման ամենամեծ երաշխիքն է. ժամանակին հայ մայրերը արաբական անապատի առաջներուն վրայ իրենց գաւակներուն սորվեցուցին հայոց Այբ ու Բենը»:

Օրուայ պատգամէն ետք Այմլոյի մէջ գրեւորաւ փարբեր միութիւններու ներկայացուցիչները զետեղեցին ծաղկեպսակներ խաչքարի առջեւ: Այս բոլորէն ետք սկաւորները սկսան երգել Հայաստանի քայլերգը:

Եկեղեցույ կողքի Գալուստ Կոլուպէնկեան սրահը մութ էր. գերեզի հաւաքին շարուած էին մոմերը եւ լուսին կը փրկէր: Մեղմ երաժշտութեան ներքոյ ներս մտան սկաւորները եւ աղօթեցին «Հայր Մերը», անկէ ետք պրն Համբարձում Համբարձումեանը սկսաւ ասմունքել «Այդեղի Զանգակատունը»: Ան կարողացաւ իր ասմունքով փոխադրել մեզի դէպի անցեալը: Պրն Համբարձումեանի ասմունքի ժամանակ անբեղմէ կը լսուէին շարականներ, ինչպէս «Սուրբ Սուրբը» եւ «Տէր ողորմեան»: Յակոբ Ղազար երգեց «Տղէ Նամանը» իր ամբողջ սրտով եւ իր ազդեցուցիչ կատարումով յուզեց բոլոր ներկաներու սրտերը:

Յանկարծ յուսարողունցաւ սրահը եւ սկաւորները սկսան երգել «Հայ գիտորի երգը»՝ ծածանելով Հայաստանի եւ Հոլանտայի դրօշակները: Ծրագրի աւարտին Այմլոյի համայնքի անունով հանդէս եկաւ պրն Յարութիւն Պօղոսեանը: Ան խօսեց մեր այսօրուայ ընկիւններու մասին, թէ ամէն մէկ հայ իր կենսեցին մէջ պէտք է մշակի դեր ունենայ: Ինչպէս մշակը կը գործուրայ եւ կը հոգայ իր ցանած սերմին համար, որ լաւ հունձք ստանայ, այնպէս ալ մենք պէտք է հոգանք մեր մանուկներու դաստիարակութեամբ, որպէսզի ապագային լաւ արդիւնք ստանանք: Պրն Պօղոսեանը իր խօսքը աւարտեց ըսելով. «Պիտի շարունակենք պայքարիլ մինչեւ ճշմարտութիւնն ու արդարութիւնը յաղթանակէ»:

Այմլոյի եկեղեցույ հոգեւոր հովիւ Տէր Խաչատուր առաջ քահանայ Ֆրանկեան յուզուած օրուայ ծրագիրէն սկսաւ երգել «Կիլիկիա» երգը եւ աղոթքով աւարտեց նահապետներուն նուիրուած միջոցառումը:

Յ. ՊՈՂՈՍԵԱՆ

Հանրակայի Արևելական թևմեն հերոս

ԱՄԱԳ ՀԱՐԹ-ՈՒՄՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՈՒՐԲ ՎԱՐԴՄՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵԶ

Պաղկազարդ

Կիրակի, Ապրիլ 4, 2004, Յիսուս Ջրիսպոսի Երուսաղեմ յաղթական մուրքը խորհրդանշող Մաղկազարդի փոսին առիթով՝ Ս. Վարդան Մայր Տաճարին մեջ պատարագեց եւ բարոզեց Մայր Տաճարի լուսարարական Արժ. Տ. Մարտիրոս քեյ. Չեւեան: Ս. Պատարագէն եւրբ փնդի ունեցաւ «Դոնրացէք»ի արարողութիւնը:

Յաւարդ արարողութեան հաւաքացեալներուն բաժնուցան ձիթնիի եւ արմաւենիի ճիւղեր, որոցմով Յիսուս դիմադրուեցաւ Երուսաղեմի մէջ:

Ասագ Հնգշարթի

Հնգշարթի, Ապրիլ 8, 2004, առաւօրեան ժամը 11.00-ին, լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քեյ. Չեւեան մարոյց Ս. Պատարագը, որ կը խորհրդանշէ վերնափան մէջ Վերջին Ընթրիքը եւ Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատումը:

Իսկ երեկոյեան ժամը 7.00-ին առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան կապարեց «Որկնայա»ի արարողութիւնը: Այս փարի առաջնորդ Արքազան Հայրը լուաց ուրբերը իր կողմէ՝ ձնոնադրուած 12 սարկաւազներու, կիսասարկաւազներու եւ դպիրներու:

Առաջնորդ Արքազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ, որ այս 12 երկրասարդները սիրով եւ նուիրումով կը ծառայեն Ս. Խորանին: Անոնք իրապէս օրինակ կը հանդիսանան ուրիշներուն՝ թէ եկեղեցւոյ միջոցաւ ինչպէ՛ն կարելի է ծառայել նաեւ համայնքին: Համեստութեան առաքելութեան մասին Արքազանն ըսաւ, որ Յիսուս Իր փրումը պարզամտները Ինքն իսկ գործադրեց: «Անգամ մը եւս մեզի ցոյց փրութեան օրինակը, երբ լուաց իր 12 առաքելներուն ուրբերը, ցոյց փալով, թէ ինչպէս պէտք է յարգենք զիրար եւ ինչպէս պէտք է օգնենք իրարու՝ որպէս արարածները մեր Երկնաւոր Հօր»:

«Որկնայա»ի արարողութենէն եւրբ փնդի ունեցաւ «Խաւարման» արարողութիւնը:

Ասագ Ուրբարթ

Ուրբարթ, Ապրիլ 9, 2004, կէսօրուան ժամը 12.00-ին, փնդի ունեցաւ «Խաչելութեան Կարգը», իսկ երեկոյեան ժամը 7.30-ին՝ «Թաղման Կարգը»՝ հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեանի:

Ասագ Զարարթ

Զարարթ, Ապրիլ 10, 2004, Ս. Զարկի Ծրագալոյցի առիթով երեկոյեան ժամը 7.00-ին Ս. Պատարագ մարոյց Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան: Ս. Պատարագէն առաջ Ս. Գրա-

